

Группы

Группы в

группы переезда

в. группа

491.99-8

7-99

1883 p



491-99-8

1005-10

7-99 ԵՂԻՇԷ ՎԱՐԴԱՊԵՏ ԴՈՒՐԵԱՆ

349

ԸՆԹԱՑՔ

756


Ի Գ Ր Ո Յ Բ Ա Ր Բ Ա Ռ

Բ. Տ Ա Ր Ի

Հ Ա Ի Ա Ք Ա Ծ Ո Յ Ք

Ի Ն Ա Խ Ն Ե Ա Յ Ե Ի Յ Ա Ր Դ Ե Ա Յ

ՀԱՆԴԵՐՁ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԲԱՑԱՏՐՈՒԹԵԱՄԲԲ



Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԱՄԵԱՆ

1883

8323

4 APR 2013

ՀՆԹԱՅԻ Ի ԳՐՈՅ ԲԱՐԲՍՈ

Բ. ՏԱՐԻ




ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

(Ի ՆԱԽՆԵԱՅ)



57153-66



Աւել № 2007/55

ԼԷ  
ՔՐԱՑԻՐԱՆ

Յ Ա Ռ Ս Չ Ա Ր Ս Ն



ԸՆԹՈՅՔ Ի ԴՐՈՑ ԲԱՐՍԵՍԻ Դասագրքիս Ա. Տարւոյ զսաճ ընդունե-  
լուքեկէն իւրախուսեալ կը համարձակիմ Բ. Տարին եւս ի լոյս ածել :

Ոչչափ յիմում կարի էր, դասակարգութիւն մի պահելու համար  
ջանացի զետել յարմար հասուածներ, ուրեք ուրեք քաղղասութեան  
եզր մի ընծայելով արձակ եւ չափաւ փերուածոց, եւ աւանդելով  
փեռականական այն կանոններն՝ որոց անտեղեակ մնաց ուսանողն Ա.  
Տարւոյ ԵՐՉԱՆԻՆ մէջ :

Ինչպէս յայտնի է գործոյս բովանդակութեկէն, իմ նպատակն է  
ճանօթ առնել զուսանողս ո՛չ միայն *նախկեաց* մասեկագրութեան  
կամ լեզուին, այլ եւ գրուածոց *արդի* քարգմանչաց կամ հեղի-  
նակաց՝ զորս կ'ընդունիմք իբրեւ հարազատ հետեւողք նախկեաց եւ  
փրացած՝ Հայ լեզուի զանազանակ նոխութեանց : Արդ, որովհե-  
տե ոչ միայն քս իմ խոհարն կարծեաց, այլ եւ քս այժմեան նշա-  
նաւոր գրագիտաց Ազգիս՝ որք միանգամ հմտագոյնք եւն նախկեաց  
լեզուին՝ իբրեւ *դասական* մասեկագիր համարելի են Հ. Արսէն Բագ-  
րասունի եւ Հ. Ն. Հիւրմիզեան, որոց քարգմանածոյ եւ ինքնագիր  
ներուածք կ'ընթերցուին յանախ ախորժանօք եւ հիացմամբ, վասն  
որոյ եւ ես, գործոյս Բ. Տարւոյ ԵՐՉԱՆԻՆ մէջ *յարդեաց* ընտելի  
զՀիւրմիզ, ոյր լեզուի ներդաշնակ եւ պարզ ոնն եւ հարազատ հայ-  
կաբանութիւնն արդարեւ ուսանողաց հանելի եւ դիւրիմաց լինելու  
առաւելութիւնն ունին : Իսկ՝ ինչպէս ի մասին ՆԱԻՆՆԱՑ նոյնպէս  
եւ ի մասին ԱՐԿԵՆԱՑ դասակարգութիւն մի պահելու առաջադրու-  
թեամբ, մտադիր եմ գործոյս Գ. Տարւոյ ԵՐՉԱՆԻՆ մէջ իրուածքք ըն-  
դարձակ տեղի քողով Հ. Արսէնի Բագրասունցոյ՝ որոյ պարզ փե-  
րուածներէն զովանս միայն յեռի սոյն Բ. Տարւոյ ԵՐՉԱՆԻՆ մէջ :

ԼԷ  
ՔՐԱՑԻՐԱՆ

Առաջիկայ գործոյ Բ. մասին մէջ դրուած արձակ կտորներն գաղիացի Գոթէն Տիկնոջ «Ախորհակեմի Սիպերիա» անուն գրուածոյն, եւ Պերնարսէն Տր Սէն-Բիէրի «Պոյ եւ Վիրգիլիա» գողտրիկ Վիպիկ գրեթէ համառօտութիւնն կը կազմեն: Սոյն կրկին վիպաց ընթերցումն՝ որք քարգմանուած են ի ձեռն Հ. Ե. Հիւրմիւզի, ամենեւիմք օգտակար եւ ակործելի լինել կը համարիմ ուսանողաց:

Ակն ունիմք նաեւ՝ թէ սոյն մէքոսով գրաբարի ուսման պարապող առակեթք պիտի չունենան երբէք այն նախապաշարումն՝ թէ գրաբար ուսանելու համար նախնեաց մասնագրութիւններէ զոս ուրիշ ո եւ է յաջողակ եւ նարսար նոր գրչի քարգմանութիւն կամ գործ աւելորդ կամ անօգուտ է ընթեռնուլ, եւ կամ թէ՛ ի հակառակէն՝ միայն Արդեաց քարգմանութիւնք բաւական են յուսումն. Հայ լեզուի: Մեք կուզեմք բարեխառնութիւն պահել. Հայերէն լեզու ուսանելու համար հաւասարապէս պէ՛տ է ընթեռնուլ զՆԱԽՆԻՍ եւ զՍՐԳԻՍ, եւ սոյն անուտք ընտրանաւ:

23 յունիս 1883

Պարտիզակ

Ե. Վ. ԳՈՒՐԵԱՆ

# ԸՆԹԱՑԳ

## Ի ԳՐՈՅ ԲԱՐԲԱՌ

ԵՐԿՐՈՐԳ ՏԱՐԻ

ՄԱՍՆ ԱՌԱԶԻՆ

(Ի ՆԱԽՆԵԱՑ)

1

ՅԱԿՈՐ ԵՒ ԼԱԲԱՆ



Գտանել շնորհս, «Երեւել շաւու  
 Հմայել, քրքշտէ գեղեցիկ իմանալ  
 Յոսիմ իւմ, քո գաւառի ամբոյր  
 Խայտախարիւ (աւազակ)  
 Գործ, մաք գոյն անեցող  
 Համակ, (ամ.) «Եւսէ Տերմալ (գոյն)  
 Պիտակ, (պիտեւել)  
 Ուրոյն, զար

Գաղ, արտաշ  
 Շէր, (գարս քիւնիւն) ճարին Տեւոն  
 Սօսի, Տերմալ կալմանի  
 Քերտուլ, կեղեւել (եւնամբ)  
 Ջկծիլ ի խառնս, զարգաւորութեան հա-  
 Օղիք, հօր ուխտաց [մար զերտնուլ դատանալ  
 Որոջ, եթ գաւառի  
 Մախի, եթ ուխտ

Եւ եղեւ իրբեւ ծնաւ Ռաքէլ զՅովնէփ, ասէ Յակոբ ցԼաբան. Արձակեա զիս զի երթայց ՚ի տեղի իմ եւ յերկիր իմ. եւ սուր զկանայս եւ զմանկունս իմ, վասն որոց ծառայեցի թեզ, զի գնացից. զի դու ինքնին իսկ զիտես զճառայութիւնն զոր ծառայեցի թեզ (1): Ստէ ցնա Լաբան. Եթէ գտի չնորհս առաջի քո, հմայեցի զի օրհնեաց զիս Աստուած յոտին քում: Եւ ասէ Լաբան. Յայտարա զվարձս քո յինէն, եւ տաց: Ստէ ցնա Յակոբ. Դու զիտես որչափ ինչ ծառայեցի թեզ, եւ որչափ խաչն էր քո առ իս, սակաւիկ ինչ էր յառաջ քան զիս եւ աճեաց ՚ի բազմութիւն. եւ օրհնեաց զթեզ տէր Աստուած յոտին իմում, եւ արդ ես ե՞րբ առնիցեմ ինձ տուն: Եւ ասէ ցնա Լաբան. Ձի՛նչ տաց թեզ: Եւ ասէ ցնա

(1) Շոս բայեր գործիականի տեղ հայցական կ'առնուն իրենց բայաճառներն կամ ուրիշ նոյն եւ նման նշանակութիւն ունեցող բառերն, նաեւ զանոնք յարաբերող «բարաբերական» դերանունք. ուստի այս խօսքին մէջ «բարաբերական» դրուած է «բար» տեղ, փոխանակ բնիւր, Ձճառայութիւնն «բար» ծառայեցի թեզ:

Յակորբ . Մի ինչ տար ինձ , բայց զայս եւեթ բանս արասցես ինձ : Դարձեալ արածեցից զխաշինս քո եւ պահեցից , եւ անցցեն ոչսոր ամենայն խաշինքդ առաջի քո , եւ զատո՞ր ՚ի միմեանց զամենայն ոչխար զխայտախարիւ եւ զգորջ , եւ զամենայն արօտական զհամակն յօդեաց : Եւ ամենայն խայտախարիւն յօդեաց եւ պիսակն յայծեաց եղիցին վարձք . եւ երեւեսցի արդարութիւն իմ ի վաղիւ օր՝ (²) թէ դոն իմ վարձք առաջի քո , ամենայն որ ոչ իցէ խայտ եւ պիսակ յայծեաց , եւ գորջախայտ յօդեաց , ի գողօնս (³) համարեալ լիցի ինձ : Եւ ասէ ցնա Լաբան . եղիցի ըստ բանի քում : Եւ զատոյց յառուր յայնմիկ գբազս կապոյտս եւ զպիսակս , եւ զամենայն այծս կապոյտս եւ զպիսակս , եւ զամենայն սպիտակս ՚ի նոցանէ եւ զամենայն համակս յօդեաց : Ետ ՚ի ձեռս որդւոցն իւրոց , եւ մեկնեցոյց ճանապարհն (⁴) երից առուրց՝ ընդ մէջ նոցա եւ ընդ մէջ Յակորայ . եւ Յակոր արածէր զխաշինսն Լաբանու զընացեալս : Եւ առ Յակոր գաւազան՝ շէր գալար եւ ընդուզի եւ սուււոյ , եւ կեղեւեաց զնոսա Յակոր , եւ եղեւ սպիտակ . եւ եքերծ զգալարն ՚ի գաւազանաց անտի , եւ երեւէր ՚ի գաւազանսն սպիտակն զոր քերծոյր՝ նկարէն : Եւ դնէր զգաւազանսն զոր քերծոյր՝ յաւազանս ջրարբից ջրոյն , զի իբրեւ գայցեն խաշինքն ըմպել ջուր՝ հանդէպ գաւազանացն զկծիցին :

Եւ զկծէին խաշինքն ՚ի գաւազանսն (ըստ գաւազանացն) , եւ ծնանէին խաշինքն գորջախայտս եւ պիսակս եւ խայտախարիւս . եւ զորոջն ուրոյն զատանէր Յակոր , եւ կացուցանէր յանդիման մաքեացն , եւ զխոյ կապոյտ եւ զամենայն գորջախայտն յօդեաց եւ զատանէր իւր հօտս առանձինն , եւ ոչ խառնէր զնոսա ՚ի խաշինս Լաբանու : Եւ լինէր յորժամ զկծէին խաշինքն ՚ի խառնսն եւ յղանային , դնէր Յակոր զգաւազանսն յանդիման խաշանցն յաւազանսն , առ ի զկծելոյ ցոցս (⁵) ըստ գաւա-

(2) Հոս ևս ևս մակբայն անակաճար գործածուած է օր բառին քով , զի մակբայի իբրեւ անական կրճակ գործածուիլ , ինչպէս եւ անականի իբրեւ մակբայ :

(3) Յայի մը ստորոգելին կրճակ է նախդիւ անորոն հայցական դրուիլ իբրեւ պարզ ուղղական . ըստ այսմ է քիչն ստորոգելին իսն — քիչն :

(4) Հոս համարահ բառն հայցական հոլով բնութեան խնդիր է : Պէտք է յիշել համբայ , չեւ , ևս , ևս , ևս , ևս ցուցող բառից վերաբերեալ կանոնը :

(5) Սովորաբար հոլովեալ անորոն դերբայի քով սերբային յակցուցիչն ձեռով սեռական կը դրուի , ուստի — ի պիտեցի նոցա — խօսիին մէջ նոցա — սերբայի է , փոխանակ ըսելու զի պիտեցի նոցա եւլն : Կրճակն նաեւ սեռական սերբայի կանոնով լուծել զայս ձեւ :

զանացն . եւ յորժամ ծնանէին խաշինքն՝ ոչ դնէր : Եւ լինէր աննշանն Լաբանու , եւ նշանաւորն Յակորայ . եւ մեծացաւ այրն յոյժ յոյժ , եւ եղեւ նորա ոչխար եւ արջառ յոյժ , ծառայք եւ ազախնայք , ուղտք եւ էջք :

ԾՆՆՂ . Լ . 25—43

### ՍԱՍՓՍՈՆ ԵՒ ԴԱԼԻԱ

Հեղեղաս , Լաբանայ	Կար , Լաբան (էէ)
Երանել առ (ոմ) (էէս — էէ) երբու	Անկանել , հեւել
Ջիլ , արջառ (էէս — էէ)	Ազբն , (սալ — է)
Չվստեալ Լաբանիս , արջառ , Լաբան	Գերծուլ , արջառ
Գուր , Բարան Լաբան (էէս — էէ)	Միսնգամայն , արջառ
Վարսալիւրայ , արջառ	Թօսելիլ , Լաբան , արջառ
Ազախն , արջառ	Ուր , արջառ

Եւ եղեւ յետ այսորիկ սիրեաց կին մի առ եղբոր հեղեղատին Ովրեկայ , եւ անուն նորա Դալիլա (¹) : Եւ ելին առ նախարարք այլազգեացն եւ ասեն . Պատրեա զնա եւ տես՝ ի՛նչ զօրութիւն նորա մեծ , եւ կամ ի՛նչ կարասցուք նա հնար գտանել եւ կապել զնա առ ՚ի տկարացուցանել զնա . եւ մեք տացուք քեզ այր իւրաքանչիւր հազար եւ հարիւր արծարոյ (²) : Եւ ասէ Դալիլա ցՍամիսոն . Պատմեա ինձ՝ ի՛նչ զօրութիւն քո մեծ , եւ ի՛նչ կապիցիս առ ՚ի տկարացուցանելոյ զքեզ : Եւ ասէ ցնա Սամիսոն . Եթէ կապիցեն զիս եօթն ջլօք գալարովք չվստելովք (³) , տկարացայ եւ եղէց իբրեւ զմի ՚ի մարդկանէ : Եւ բերին առ նա նախարարք այլազգեացն եօթն ջիլս գալարս անվտիտս , եւ նա կապեաց զնա նորօք . եւ դարան նստէր նա (անոր դարանի կեցողներ կային) ՚ի շտեմարանի . եւ ասէ ցնա . Այլազգիք հասեալ են ՚ի վերայ քո , Սամիսոն : Եւ խղեաց զջիլսն՝ զոր օրինակ խղցիլ քու ՚ի թօթալիկոյ յորժամ ՚ի հուր հոտոտիցի . եւ ոչ ծանուցաւ

(1) Այս խօսիին մէջ լուեկայն կ'իմացուի էր Էական բայն :

(2) Երբեմն գոյականին հոլովն կ'առնուն պարզ կամ բուական անականի եւ գոյականի սեռական կը դրուի յակցուցիչ պէս , ուստի հաւաք եւ հարկ եւ արջառ ըսելով՝ պարս է իմանալ հաւաք եւ հարկ եւ արջառ :

(3) Գրաւորական եւ չեզոք բայերու անցեալ դերբայներն կը գործածուին իբրեւ պարզ անականներ , եւ երբեմն իբրեւ գոյական :





Եւ 'ի խօսեւ անդ՝ բարկութեամբն իսկ իւրով  
 Արկանէ բուռն 'ի նոսա ահ եւ խրուով:  
 Ես 'ի Սիոն լեռուն կացի թագաւոր,  
 Ի լեռուն սուրբ իւր նա նըստոյց զիս յաթու,  
 Լինել (3) քարոզ եւ վրէժխընդիր օրինաց,  
 Պատմել հանուրց ըզպատուիրանս իւր ազգաց:  
 Դու ես որդի իմ Տէր ասաց ցիս, դու ես (4),  
 Եւ ես այսօր 'ի յարգանդէ ծընայ զքեզ:  
 Խընդրեան յինէն եւ տաց քեզ զազգս ի ստացուած (5),  
 Եւ ծագք երկրի լիցին քեզ ծագք սահմանաց.  
 Հովուել զնոսա գաւազանաւ երկաթի (6),  
 Եւ խորտակել որպէս զանօթ ինչ բըրտի:  
 Ձայս թագաւորք, 'ի միտ առէք արդ պատգամ (7).  
 Եւ ոյք դատիք զերկիր, խըրատ զայս ձեզ տամ.  
 Ծառայեցէք Տեառն երկիրդիւ հանապազ,  
 Ձըւարձախառն զողութեամբ կալ 'ի սպաս:  
 Հայրագորով լերուք խրատուն իւր հնազանդք,  
 Ձի մի ցամանն նորին ըզձեօք անկցին շանթք,  
 Եւ ցըուեսցիք հալածականք (8) ընդ երկիր,  
 Յարդարութեան ճանապարհէն տարագիր:  
 Ո՛հ, երանի՛ ոյք (9) յուսացեալ են 'ի Տէր,  
 Ի բորբքել ցամանն Նորա ընդգէմ ձեր:

(Վերոյիշեալ ոտանաւորին բնագիր Արձակն հոս կը զնեմք բաղդատուծեան համար:

Ընդէ՞ր խօսվեցան հեթանոսք, եւ ժողովուրդք խորհեցան 'ի

(3) Այս տողի մէջ գտնուող լեռն ին եւ անմիջապէս վարի տողի պարփակին տեղաւորուած ինքնապէս լեռն ին կամ պարփակին (զեւ եւէջ):  
 (4) Կրկնուած է բառն Ես, խօսիմն ոյք կամ քաղցրութիւն տալու համար:  
 (5) Տես (Ա. դաս 3. կանոն):  
 (6) Ածականն պատէր համաձայնիւ, ինչպէս կը տեսնուի այն կտորին Արձակին մէջ բայց (Տես 1 կանոն այն դասին մէջ):  
 (7) Յուցականն անպակն շատ անգամ կը հետաձայն իրենց գոյականէն, այտէ կ'աղղալ. քաղաւոք, 'ի միտ առէք զայս պատգամ կամ զպատգամն զայս:  
 (8) Էական կամ չէզոք բայտուն տեղաւորի ստորագրիմն բունով կը համաձայնի տեղաւորի:  
 (9) Հոս լեռնայն կ'իմացուի անպակն կամ անմիջապէս, ինչպէս Արձակին մէջ կ'տեսնուի:

սնտախ: Յանդիման եղին թագաւորք երկրի, եւ իշխանք ժողովեցան  
 'ի միասին վասն Տեառն եւ վասն Օծելոյ նորա: Խղեսցուք զկա-  
 սանս նոցա, եւ ընկեսցուք 'ի մէնջ զլուծ նոցա: Բնակեալն յեր-  
 կինս ծիծաղեցի զնոքօք, եւ Տէր արհամարհեցէ զնոսա: Յայն-  
 ժամ խօսեցի ընդ նոսա բարկութեամբ իւրով, եւ սրտմտու-  
 թեամբ իւրով խռովեցուցէ զնոսա: Ես կացի թագաւոր 'ի նմանէ,  
 'ի վերայ Սիոնի լերին սրբոյ նորա՝ պատմել ինձ զհրամանս Տեառն:  
 Տէր ասաց ցիս՝ որդի իմ ես դու, ես այսօր ծնայ զքեզ: Խընդրեա  
 յինէն եւ տաց քեզ զհեթանոսս 'ի ժառանգութիւն, եւ իշխանու-  
 թիւն քեզ զամենայն ծագս երկրի: Հովուեսցես զնոսա դաւազա-  
 նաւ երկաթեաւ, որպէս զանօթ բրտի վըրեսցես զնոսա: Արդ  
 թագաւորք, զայս 'ի միտ առէք, խրատեցարուք ամենեքեան ոյք  
 դատիք զերկիր: Ծառայեցէք Տեառն երկիրդիւ, եւ ցնծացէք ա-  
 ռաջի նորա դողութեամբ: Ընկալարուք զխրատ նորա՝ զի մի բար-  
 կացի Տէր, [եւ կորնչիցիք 'ի ճանապարհացն արդարութեան: Ի  
 ժամանակի որպէս բորբքեցի բարկութիւն նորա: Երանի ամե-  
 նեցուն՝ ոյք յուսացեալ են 'ի Տէր:

Սաղմոս Բ.

ՔՐՄԱՅՆ ԲԵԼԱՅ ԽԱԲԵՆԻԹԻՒՆ ԵՒ ԿՈՏՈՐԱԾ

Յաւելու առ հարս, Գեորգի	Մար, Լո՛ւ Էն (Գեորգի Գեորգի)
Նաեիւն, Բորգի Գեորգի	Խառնել, Գեորգի Գեորգի (Ընդելել)
Արդու, Լո՛ւ Էն (Գեորգի Գեորգի)	Մանկի, Գեորգի Գեորգի
Ծախել, Գեորգի Գեորգի	Կեանց կցորդ, Գեորգի Գեորգի

Եւ թագաւորն Աստիագէս յաւելաւ առ հարս իւր, եւ առ կիւ-  
 րոս պարսից զթագաւորութիւնն նորա. եւ Դանիէլ էր կենաց կը-  
 ցորդ թագաւորին, եւ իրաւաւոր քան զամենայն բարեկամս նորա:  
 Եւ էին կուռք մի (1) բարեկացոց անուն Բէլ, եւ ելանէր նմա  
 ոտձիկ աւուր միով նաշիհ՝ երկոսասան արդու (2), եւ քառասուն  
 ոչխար, եւ զինի վեց մար, եւ թագաւորն պաշտէր զնա, եւ եր-  
 թայր հանապազ երկիր պազանէր նմա: Բայց Դանիէլ պազանէր  
 երկիր Աստուծոյ իւրոյ. եւ ասէ ցնա թագաւորն. Դու ընդէ՞ր ոչ

(1) Անեզական տեղաւորիին քով բայն յանախ յոգնակի կը դրուի:  
 (2) Արդու չափ ցուցնող հայցականն քով է՝ գործիականի տեղ դրուած, փոխա-  
 ցակ բնուի, երբեք անպակն (Տես Ա. դաս 4 կանոն):

երկիր պագանեսս Բելայ: Եւ նա ասէ. Քանցի ոչ պաշտեմ զկուռս ձեռագործս, այլ զԱստուած կենդանի՝ գաւարիչն երկնի եւ երկրի<sup>(3)</sup>, որ ունի ի թխանութիւն ամենայն մարմնոյ<sup>(4)</sup>: Եւ ասէ ցնա թագաւորն. Իսկ Բէլ ոչ թուի քեզ թէ իցէ Աստուած կենդանի. Եթէ ոչ տեսանիցես՝ որչափ ուտէ եւ ըմպէ հանապաղ: Եւ ասէ Դանիէլ ծիծաղելով. Մի խարիր, արքայ, զի դա է՝ ի ներքոյ կաւեայ, եւ արտաքոյ պղնձի. ոչ կերեալ դորա երբէք եւ ոչ արբեալ: Եւ բարկացեալ թագաւորն՝ կոչեաց զքուրմնն նորա, եւ ասէ ցնոսա թագաւորն. Եթէ ոչ ասիցէք ինձ, ս՛վ ուտէ զսեղանն զայն, մահու մեռանիցիք. ապա եթէ յայտ առնիցէք՝ թէ զայն ամենայն Բէլ ուտէ, մեռանիցի Դանիէլ՝ զի հայհոյեաց զԲէլ: Եւ ասէ Դանիէլ ցթագաւորն. Եղիցի ըստ բանի քում: Եւ էին քուրմք Բելայ եօթանասուն, թող զկանայս եւ զմանկտի: Եւ եկն թագաւորն Դանիելու հանդերձ ՚ի սուռն Բելայ, եւ ասեն քուրմք Բելայ. Ահաւասիկ մեք արտաքս ելցուք, եւ դու, արքայ, դիր առաջի դորա զկերակուրոյ, եւ զգինիդ՝<sup>(5)</sup> խառնեալ դիցես. եւ փակեա զքուրմոք եւ կնքեա մատանեաւ քով. եւ եկեալ ընդ առաւօտս, եթէ ոչ գտցի այդ ամենայն կերեալ ի Բելայ<sup>(6)</sup>, մեռցուք մեք. ապա թէ ոչ Դանիէլ որ սուտ խօսեցաւ զմէնջ: Եւ նոքա վառահ էին, զի արարեալ էին ընդ սեղանոյն մուտ անյայտ, եւ ընդ այն մտանէին հանապաղ եւ ուտէին զայն: Եւ եղև իբրեւ ելին արտաքս, եւ թագաւորն եղ զկերակուրան առաջի Բելայ: Եւ հրաման ետ Դանիէլ իւրում մանկաւոյ, եւ բերին մոխիր, եւ ցանեցին ընդ ամենայն մեհեանն առաջի թագաւորին միայնոյ. եւ ելեալ արտաքս՝ փակեցին զդուռնն, եւ կնքեցին մատանեաւ թագաւորին եւ զնացին: Եւ քուրմքն մտին զլչերի ըստ սովորութեան իւրեանց՝ կանամբք եւ սրղւովք իւրեանց, կերան

(3) Բացայայտ է բացայայտեալ մի եւ նոյն հոլովով դրուած են:

(4) Հայցական հոլով յախացեալ մը սովորաբար աննախդիր (առանց քի) կը դրուուի, երբ իւր յախացուցիչն դիմորո յօդ, ցուցական անական եւ կամ դերանուն յախացուցիչ մը չունենայ: Հակառակ պարագայի մէջ եւս կրնայ աննախդիր դրուուիլ, երբ բառն որո հանգամանք մի չունի, ինչպէս է այս իստիկն մէջ:

(5) «. ք. զիմորո յօդ իբրեւ այ, այդ, այն, այն, այն, այն, այն ցուցական անական կը գործածուի անէն հոլովներու մէջ:

(6) Կաւորական բայերու հոլ զսնուած բացառական հոլովն այն ատեն սեփական է, երբ բայն գործիականի փոխուելով՝ կաւորականի տեսիլն անգործականին մէջ սեփականի լինի եւ սեփականի (բացառականն) տեսիլն:

զամենայն եւ արբին, եւ ոչ ինչ թողին: Եւ կանխեաց թագաւորն ընդ առաւօտն Դանիելու հանդերձ, եւ ասէ. Ո՞ղջ են կնիքդ, Դանիէլ: Եւ նա ասէ. Ողջ են, արքայ: Եւ եղև ընդ բանալ դըրանցն՝ հայեցաւ թագաւորն ՚ի սեղանն, ՚ի ձայն մեծ աղաղակեաց եւ ասէ. Մեծ ես, Բէլ, եւ ոչ դոյ. նեղութիւն ի քեզ եւ ոչ մի<sup>(7)</sup>: Եւ ծիծաղեցաւ Դանիէլ. եւ կալաւ զթագաւորն զի մի մտցէ ՚ի ներքս, եւ ասէ. Աղէ հայեաց ընդ յատակոյ, եւ տես մտցէ ՚ի ներքս այդ: Եւ ասէ թագաւորն. Տեսանեմ հետ արանց՝ կանանց իւ մանկաւոյ<sup>(8)</sup>: Յայնժամ բարկացեալ թագաւորն կալաւ զքուրմնն եւ զկանայս եւ զորդիս նոցա. եւ ցուցին նմա ըզգալանի դուրսն՝ ընդ որ մտանէին եւ ծախէին զսեղանն. եւ կորտորեաց զնոսա թագաւորն, զԲէլ ետ ՚ի ձեռս Դանիելի, եւ կործանեաց զնա եւ զմեհեանն նորա:

Դան. Ժ. 1 — 22

5

ԻՍԱՀԱԿ ԵՒ ՌԵԲԵԿԱ

Ձրուոր, Գործարար  
 Կաստիլ զխօսս, Խօսքն Լեզուանէլ  
 Գինդ, Օղ  
 Ապարանջան, (պէտքէն)

Տոմս, ցեղ  
 Նաժիք, արեւի  
 Խնդալ, արեւի  
 Արկանել զիւրեւ (զանձս) Լեզուանէլ

Եւ Արրահամ ծերացեալ էր եւ անցեալ զաւուրք: Եւ ասէ Արրահամ ցծառայն իւր, ցերէց տան իւրոյ. Մի առցես կին որդւոյ իմում իսահակայ ՚ի դստերաց Քանանացւոյ՝ յորոց միջի<sup>(1)</sup> ես բընակեմ. այլ յերկիրն իմ՝ ուսի<sup>(2)</sup> եղեալ եմ, երթիցես, եւ ՚ի սուռն իմ, եւ առցես դու անտի կին որդւոյ իմում իսահակայ: Եւ սա ծառայն տասն ուղտ յուղտուց տեառն իւրոյ եւ զնաց ՚ի Միջագետս, ՚ի քաղաքն Նաքովոյ, եւ նստոյց զուղտն արտաքոյ

(7) Ու քի կրիկն բառն կը գործածուի իբրեւ միջակ անական:  
 (8) Տես 4 կանոն տոյն դասին մէջ:  
 (1) Երբեմն իրենց սկիզբն նախդիր կրող նախադրութիւնք իրենցմէ նախադաս եղող խնդրոյն կուտան իրենց այդ նախդիրը:  
 (2) Ուսի բառն կը գործածուի երբեմն «կամ» միջակ անուան բացառականին տեղ:

քաղաքին առ ջրհորոյ ջրոցն ընդ երեկս՝ յորժամ ջրուորն ելանէր: Եւ ասէ. Տէր Աստուած տեսուն իմոյ Աբրահամու, աւասիկ դըստերք բնակչաց քաղաքիս ելանեն հանել ջուր, եւ եղիցի կոյս մի՝ որում ես ասացից, թէ խոնարհեցո զսափորդ քո, զի արբից. եւ ասէ ցիս՝ Արբ, եւ ուղտուցդ քոց եւս արբուցից, զայն պատրաստեցեր ծառային քում իսահակայ: Եւ մինչչեւ կատարեալ էր նորա զխօսանն ՚ի մտի իւրում, եւ ահա Ռեբեկա եկն ել, եւ ունէր սափոր յուս իւր: Էջ յաղբիւրն եւ ելից զսափորն իւր եւ ել: Ընթացաւ ծառայն ընդ առաջ նորա եւ ասէ. Արբո ինձ սակաւ մի ջուր ՚ի սափորոյ այտի: Եւ նա ասէ, Արբ, տէր, եւ արբոյց նմա: Եւ ասէ. Եւ ուղտուց քոց հանից ջուր: Եւ այրն միտ դնէր նմա: Եւ իրբեւ դադարեցին ամենայն ուղտքն յըմպելոյ, եւ առ այրն դինդս ոսկիս եւ երկուս ասպարանջանս ՚ի ձեռս նորա (5) եւ եհարց զնա, Ո՞ր դուստր ես դու, պատմեա ինձ թէ իցէ՞ ՚ի տան քում մեզ տեղի իջավանաց: Եւ ասէ ցնա. Դուստր Բաթուելի եմ ես, եւ յարդ եւ խոտ չատ է մեր եւ տեղի իջավանաց: Խնդաց այրն եւ երկիր ետադ Աստուծոյ: Եւ ընթացաւ աղջիկն, պատմեաց ՚ի տան մօր իւրոյ ըստ բանիցն այնոցիկ:

Եւ Ռեբեկայ էր եղբայր՝ որում անունն էր Լաբան: Եւ ընթացաւ Լաբան առ այրն եւ ասէ ցնա. Եկ մուտ ՚ի տուն, օրհնեալ տեսուն (4): Եմուտ այրն ՚ի տուն անդր, եւ ասէ. Ծառայ Աբրահամու եմ ես: Եւ երդմեացոյց զիս տէր իմ եւ ասէ. Ի տուն հօր իմոյ երթիցես եւ ՚ի տոհմ իմ, եւ առցես անտի կին որդւոյ իմում: Արդ եթէ առնէք դուք շնորհս եւ արդարութիւն առ Տէրն իմ, պատմեցէք ինձ: Պատասխանի ետուն Լաբան եւ Բաթուել եւ ասեն. Ի Տեսունէ ել իրդ այդ, ահաւասիկ Ռեբեկա առաջի քո, առ եւ զնա, եւ եղիցի կին որդւոյ տեսուն քո: Եւ իրբեւ լուաւ ծառայն Աբրահամու զբանս նոցա, երկիր ետադ Տեսուն, եւ եհան անօրս ոսկւոյ եւ անօրս արծաթոյ (5) եւ հանդերձս եւ ետ Ռե-

(3) Եւ դեռանունն զայն անգամ կրեայ գործածուիլ Բեթ, էւր էական դեռանունն սեղ, ինչպէս նաեւ էւրն փոխանակ Եւր. հոս է Եւրո նորա գրուած է, փոխանակ Եւրո է Եւրո էւր:

(4) Կրօնական բայերն երբեմն սեռական կամ սրական սեռի խնդիր կ'առնուն մանաւանդ երբ անցեալ դերբայ լինին:

(5) Շատ անգամ ամականի սեղ գոյական մը սեռական կը դրուի՝ յակագուցչի ձեռով:

բեկայ. եւ ետ ընծայս եղբարց նորա եւ մօրն: Կերան եւ արբին նա եւ արբն՝ որ ընդ նմա էին, եւ ննջեցին: Եւ յարուցեալ ՚ի վաղորդայն անդր, ասէ. Արծակեցէք զիս, զի երթայց առ տէր իմ: Կոչեցին զՌեբեկա եւ ասեն ցնա. Երթա՛ս ընդ առնա ընդ այսմիկ: Եւ նա ասէ. Երթամ: Եւ յուղարկեցին զՌեբեկա եւ զինչս նորա: Յարուցեալ Ռեբեկա եւ նաթիչտք իւր, ելին յուղտուն եւ զնացին ընդ առնն: Եւ իսահակ յանապատի անդ առ ջրհորովն տեսլեան ընակէր: Եւ ել զբօսանիլ ՚ի դաշտին ընդ երեկս: Ամբարձ զաչս իւր եւ ետես զի գային ուղտք տասն: Ամբարձեալ զաչս իւր եւ Ռեբեկայ՝ ետես զիսահակ, էջ վաղվաղակի յուղտուէ անտի, եւ ասէ ցծառայն. Ո՞վ է այրն՝ որ գայ ՚ի դաշտին ընդ առաջ մեր: Եւ ասէ ծառայն. Նա է տէրն իմ: Եւ նորա առեալ ձործս արկաւ զիւրեւ (6): Եւ պատմեաց ծառայն իսահակայ զամենայն զխօսանն՝ զոր արար: Եւ եմուտ իսահակ ՚ի տուն Սառայի մօր իւրոյ եւ առ զՌեբեկա եւ եղեւ նորա կին:

ԾՈՒՆՈՒ. ԻՊ.

6

ՅՈՅՍ ԱՌ ԱՍՏՈՒԱԾ

Հայցուած, Ինքերք	Հարկանիլ յապատու, Գըւը
Անդր առնել, հանգիստ Դըւ	Ապստան լինիլ, Կըւընէ
Նանուրիւն, Կըւընէ	Հնձան, (Լըւը)
Կարիք, պէրք, Կըւընէ	Անեղիմիս, Կըւընէ

Ի կարգալ իմում (1) լըւար ինձ Աստուած ըստ արդարութեան զիմ առ քեզ հայցուած. (2) ինձ ՚ի նեղութեան անդորր արարեր. Լուր ինձ գըլթութեամբ, ողորմեա ինձ Տէր:

(6) Երբեմն բուն կրօնական բայերն, ներգործականի ճանաչուրեամբ կը գործածուին. Այսպէս կ'ըսուի, Դօրք ընդ մըլ էւր աշատ. Երբու զլուսն զսահայցայն ելին:

(1) Հնդկեալ անորից դերբային բով զայն անգամ՝ էական դեռանունն իրբեւ ամական կը դրուին:

(2) Այս խօսքին մէջ է՛ ստացական ամականին Գ նախդիրն հայցուած բառին. կը վերաբերի, եւ Կըւընէ լինիլ է հայցուածին:

Յերբ որդիք մարդկան, մինչեւ ցերբ անգութ, (3)  
 Սիրէք զնանրութիւն եւ խընդրէք ըզսուտ.  
 Ծաներո՛ւք զի հրաշն անա անպատում  
 Արար ինձ Բարձրեալն ընտրելոյ (4) իւրում  
 Եւ ոչ փակեացէ նա զունկն իւր առ իս,  
 Ի կարդալ խնում առ նա 'ի կարիս:  
 Բարկանայք ընդ իս, (5) այլ մի մեղանչէք.  
 Լիջիք յանկողինն ձեր սըրտաբեկ,  
 Հարեալք յապաշաւ 'ի դառնակըսկիծ  
 Յոր ինչ (6) ասիցէք 'ի խորըս սըրտից:  
 Մատուցէք նրմա զոհս արդարութեան,  
 Եւ 'ի նա յուսով լեբուք ասպատան:  
 Բազումք ասէին թէ ո՛ր ցուցցէ մեզ  
 Ըզխտստմանց նորին արդեամբ (7) ըզհանդէս.  
 Այլ դու խընդութիւն 'ի սիրտ մեր ետուր,  
 Ձերեսաց քոց լոյս ծագեալ ընդհանուր:  
 Ձեզուն նոցա անդք 'ի ցորեան ատոք,  
 Ձիթենիք 'ի միրգ, եւ հնձանք գինեօք:  
 Նընջեսցուք յանդորր աներկմիտ 'ի քուն,  
 Չարթիցուք անդորր 'ի յայտ եւ 'ի սոյն.  
 Չի դու, Տէր, միայն բարեացդ ի վայել, (8)  
 Ետուր մեզ յերկրի յուսով քո բնակել:

(3) Այս խօսքին մէջ զօրութեամբ կ'իմացուի հաւել կամ հաւել յեր:

(4) Տես Բ. դաս 3 կանոն:

(5) Կիբ այսինքն՝ բարկութիւն, ցու, երկիւղ, զարմանք, ուրախութիւն եւլն ցուցնող բայերն սովորաբար իրենց խնդիրն կ'առնուն ընդով անորո՞ւ հայցական՝ որ աշխարհաբարի մէջ ընդհանրապէս հոգի կր բարգմանուի:

(6) Երբ խօսքի մը մէջ յարաբերեալն լռելեայն իմացուի՝ ոք յարաբերականն նորա հոլովն կ'առնու, իւր պանակցած հոլովն կորուսանելով. ուրեմն հոս յարաբերութեան զբնուած ասեմ պէ՛տ էր բնական հարեւոյ յոյն՝ զոր էւն (կամ յայն ինչ գոր) ասեցե՛ք եւլն. Պէ՛տ է դիտել նաեւ, թէ յարաբերութեան հարեւոյն՝ որ կեր է ցուցնող բայ մի է, է ով անորո՞ւ հայցական խնդիր սուած է՝ սաղաչափական ազատութեամբ:

(7) Տարաչափութեան մէջ երբեմն (ՏԲ+) յոգնակի գործիական հոլովակերտից մէջէն զանց կ'առնուի ք բաղաձայնն, արտասանութեան դիրտութիւն չալու համար:

(8) Երբեմն ներգործական բայերու անորի՞ գերբային ՏԲ բայարմանն կր գործածուի է ով անորո՞ւ հայցական հոլովով, եւ դերբային հայցական սեռի խնդիրն՝ բայանունն քով կր դուրի յակացուցչի ձեւով. ուստի է հայեւ ՏԲ բարեացդ բնուած է, փոխանակ բնութի է հայեւն զբարեացդ:

(Բաղդասէ սոյն Արճակն՝ ոտանաւորին հետ:)

Ի կարդալ խնում լուար ինձ, Աստուած, ըստ արդարութեան,  
 'ի նեղութեան ինձ անդորր արարեր. ողորմեա ինձ եւ լուր աղօթից խնոց:  
 Որդիք մարդկան, մինչեւ յերբ էք խտտասիրտք, ընդէ՛ր սիրէք զնանրութիւն, եւ խնդրէք զստութիւն: Ծաներուք զի սքանչելիս արար Տէր սրբոյ իւրում. եւ Տէր լուիցէ ինձ 'ի կարդալ խնում առ նա:  
 Բարկանայք՝ եւ մի մեղանչէք. զոր ինչ ասէք 'ի սիրտս ձեր՝ յանկողինս ձեր զղջացարուք: Մատուցէք պատարագ արդարութեան, եւ յուսացարուք 'ի Տէր: Բազումք ասէին թէ ո՛ր ցուցցէ մեզ զբարութիւն Տեառն. նշանեցաւ առ մեզ լոյս երեսաց քոց, եւ ետուր ուրախութիւն սրտից մերոց:  
 Ի պտղոյ ցորեանոյ զինուոյ ձիթոյ իւրեանց լցուցեր զնոսա: Խաղաղութեամբ յայս եւ 'ի սոյն ննջեսցուք եւ զարթիցուք. զի դու, Տէր, միայն առանձինն յուսով քով բնակեցուցեր զմեզ: **Սաղմոս Գ.**

7

ՍԱՆ ԱՆՏԻՈՒՅՑ ԲՈՒՆԱԻՈՐԻՆ

Հնարել, հար ղն հարել, հարեայ հարել	Հողել յերկիր, գերելն պատկեցանել
Չգալ, իմանալ լեւել	Ետանդն, գերուլ
Կորակոր, հարեայ	Սարսոթիլ, իմար իմալ
Սեպ սագնապալ, հարեայսն իերպալ	Նեխ, իերպն հարեայսն
Մեծամեծս փեպ, հարեայսն իերպալ	Շրջալ, հարեայսն
Խիթ, հարեայսն	Ժոյժ ունել, հարեայսն
Ի հաւակերի դնել, իմարեայսն իերպալ	Կապոս կողպոս, իմարեայսն
Գազանաբել, հարեայսն իերպալ	Մարդախոնո, հարեայսն
Հասուած, հարեայսն, հարեայսն	Գերեղար առնել, հարեայսն իմարեայսն
Պաշել (զօնս), հարեայսն (հարեայսն)	Բարածեպ, հարեայսն իմարեայսն
Չօրն (նիս), հարեայսն	Գայեկորդի, հարեայսն
Երե, հարեայսն	Կարնել ի կեանց, հարեայսն

Ընդ այն ժամանակս դէպ եղեւ դառնալ Անտիոքայ մեծաւ աս

նարգանջը 'ի կողմանցն Պարսից . քանզի էր երբեայ ևա (1) 'ի քաղաքն 'ի բուն նոցա : Խորհեցաւ ձեռն արկանել զգանձինն , եւ եթէ հնարեսցի՝ զքաղաքն իսկ աւերել ջանայր : Իբրեւ զայն զգացին զօրք քաղաքին , առ հասարակ 'ի զէնս իւրեանց ընթացան . եւ զայն ուր մեծաւ սաստիւթեամբ 'ի վերայ երբեայ էր՝ (2) անարժան կորակոր յանձանց 'ի բաց մերժէին : Իբրեւ չու առնէր , խաղայր գընայր ամօթալից Անտիօքոս , ազդ լինէր նաև որ ինչ անցք անցեալ էին ընդ նա : Զմտաւ անէր զստահակութիւն քաղաքացւոցն որ զնա 'ի փախուստ դարձուցին . լցեալ սրտմտութեամբ զմտաւ անէր յերուսաղէմացիս անդ յազեցուցանել զսրտմտութիւն բարկութեան իւրոյ : Հրաման տայր կառավարին ստէպ տազնապաւ անդադար վարել՝ միտ եղեալ ճանապարհին . մեծամեծս փքայր 'ի հսկարտութիւն ամբարտաւանութեան իւրոյ , եւ ասէր անմարդի յերուսաղէմ կացուցանել : Իսկ սակնակալ Բարձրեալն եհար զնա աներեւոյթ հարուածովք : Ա.յն ինչ բանքն 'ի բերան նորա էին , անհնարին սաստիկ ցաւք սսկերաց 'ի վերայ հասանէին , եւ դառնութեան խիբք (3) 'ի փորն անկանէին : Եւ կարի յիրաւունս (իրաւամբ) . զի որ բազում նորանոր չարաչար ցաւս յայլոց մարմինս տանջանօք հասուցանէր , նոյն սաստիկութեան ցաւք զնովաւ անկեալ պաշարեալ պահէին , եւ այն որ այն ինչ կամէր 'ի վերայ ալեաց ծովու սաստել , զվերին լերանցն ներքին առնել եւ զներքին վերին , զնա ինքն յերկիր հողեալ՝ շալակաւ շրջեցուցանէին , յայտնապէս Աստուծոյ զօրութեանցն երեւեցելոց (4) , մինչեւ յաչաց անտի անօրինին եռանդն որդանց բղխեալ սոսորել , (5) եւ 'ի նեխոյն հոտոյ զօրացն

աւեհայնի (6) նեղել տազնապաւ , եւ որ յառաջն հսկարտացեալ մտօք զաստեղս երկնից ամօրովել համարէր , այսր անդր զնա շրջաշրջել ոչ ոք կարէր՝ եւ ոչ ժոյժ ունել 'ի նեխոյ հոտոյ անտի : Յայնմ վայրի բեկեալ 'ի հսկարտ յամբարտաւան խտուրթենէ անտի , սկսաւ այսպէս խօսել . Պարտ եւ պատշաճ է հնազանդ լինել Տեառն Աստուծոյ , եւ մի՛ 'ի մարմինս մահկանացուս սստուածակերպ օրինակ (7) բարձրանալ : Ուխտս դնէր զսուրբ քաղաքն մարդաշատ եւ ազատ կացուցանել , զհերբայեցիան , որոց սպառնայր ոչ պատանաց եւ ոչ թաղելոյ արժանի առնել (8) , այլ կանամբք եւ մանկըտով 'ի հաւակերի դնել զազանարեկս արարեալ , զնսաւ քաղաքակիցս իւր , հաւասարս Աթենացոց գրով մուրհակօք կացուցանել , (9) եւ զտաճարն սուրբ , զոր յառաջ սպառնայր կապուտ կողպուտ թողուլ , գեղեցիկ պատարագօք զարդարել . զգարդ եւ զսպաս որ յառաջ անտի տարեալ իցէ , բազմապատիկ անդրէն դարձուցանել , եւ 'ի վերայ այսր ամենայնի Հերբայեցի եւս լինել եւ յամենայն մարդաչէն տեղիս հասանել պատմել զզօրութիւնն մեծութեանցն Աստուծոյ : Եւ մարդախոշոյն , անօրէն հայհոյլոյն , զայս օրինակ անկեալ կործանեալ սատակամահ լինէր . յօտար լերինս չարաչար տանջանօք՝ զոր ընդ այլս անցոյց՝ կարճէր 'ի կենաց անտի : Իսկ Փիլիպպոս դայեկորդի նորա որ առեալ տանէր զմարմին նորա՝ երկեաւ յորդույ անտի , առ Պտղոմէոս յերկիրն Եգիպտացուոց հատուածով փախստեայ լինէր :

Մակարէոս եւ որ ընդ նա էին՝ յօգնականութենէ Տեառն զօրացեալ , գերեզարձ առնէին քաղաքին եւ տաճարին , ոստոս առեալ գեղեցիկս 'ի թաւ ծառոց եւ ոստոս արմաւոյ՝ ցնծութեամբ եւ ուրախութեամբ առնէին տօն զուրթ օր ըստ աւուրցն տաղաւարասհարաց , զի յուշ լիցի նոցա որպէս յառաջ զտօնս տաղաւարահա-

(1) Թէ եւ սովորաբար է՝ բայի ներկայ եւ անկասար ժամանակաց եւ ստորագրական եղանակի եզակի Գ . դեմքուն նեւ միացած անցեալ բնորոնեութեանց սերբային սեռական հոլով կը դուրի , բայց երբեմն ուղղական ալ կրնայ ըլլալ , ինչպէս հոս կը տեսնուի :  
 (2) Նոյն է ընդ վերնոյն :  
 (3) Փոխանակ բսելու , որոնք ինքն կամ ինքն որոնին (Տես 5 կանոն Ե . դաս) : Աւելորդ չէ բսել քէ այս ձեւն մեծ մասամբ տեղի կ'ունենայ որոնելու մասնկամբ անձանցեալ բառիւ :  
 (4) Անորիւ եւ անցեալ դերբայներն երբեմն իրենց սերբայիին պէս սեռական կամ սրական կը դուրի . այսպէս , այս խօսքին մէջ զօրութեանցն երեւեցելոց ըստած է , փոխանակ բսելու , զօրութեանցն երեւեալ կամ երեւելու :  
 (5) Երբեմն անորիւ եւ անցեալ բնորոնեութիւն կրնան ուղղական առնուլ իրենց սերբային :

(6) Աստուծոյ անկանն իւր գոյականէն նախադաս դուրեղու ասեն գրեթէ համաձայնիւ , իսկ յեղադաս եղած ասեն հոլովով միայն կը համաձայնի իւր գոյականին եւ ոչ քէ բուով :  
 (7) Օրէնք : բառն հայցական դրուած է փոխանակ գործիականի : Պէտ է յիշել կանոնն :  
 (8) Հնոս որոնել բային բով լռելիայն պէտք է իմանալ զորոնք դերանունն :  
 (9) Զորոնք աւելագործիւն է այս խօսքին մէջ , վասն զի վերջ դրուած զհերբայեցիան բառն ուղղակի սեռի խնդիր է կայացանել բային :

րացն 'ի լեբինս պաշտէին, յայրս եւ 'ի քարածերպս զօրէն էրէոց խոտածարակ շրջեալ: Այլ վասն Անտիոքայ երեւեալն անուանելոյ (10) մահուանն այսչափ բանք:

Բ. Մակար. Թ.—Ժ.

8

### ՆԱԻԱՐԿԵԼ ՊԱՆՂՈՍԻ ՅԻՏԱԼԻԱ

Խոնարհագոյն, Գրեց է լեբ  
 Հազիւ, Գրեց է լեբ  
 Գժպատեն, Գրեց է լեբ  
 Վասանալ, Գրեց է լեբ  
 Ընկեցիկ առնել, Գրեց է լեբ  
 Հանգրիկն, Գրեց է լեբ  
 Զգել, Գրեց է լեբ  
 Կուր, Գրեց է լեբ  
 Ի բաց առնուլ (զառագասն), Գրեց է լեբ  
 Փրծանել, Գրեց է լեբ

Զմեբել, Գրեց է լեբ  
 Հանգուրծել, Գրեց է լեբ  
 Յորմանուս, (Գրեց է լեբ)  
 Տօրի, Գրեց է լեբ  
 Գիւրկ, (Գրեց է լեբ)  
 Ըղձանալ, Գրեց է լեբ  
 Ապրիլ, Գրեց է լեբ  
 Խառնելիք, Գրեց է լեբ  
 Թիւրել, Գրեց է լեբ  
 Գոգ, Գրեց է լեբ

Իբրեւ հրամայեցաւ մեզ նաւել յիտալիա, ալիցն զՊաւղոսս եւ զայլս ոմանս կապեալս ի հարիւրապետի մի, (1) որում աւնուն էր Յոււլիոս, Սեբաստեան գեղին: Եւ ելեալ 'ի նաւ մի անդրամիտացի, որ երթալոց էր 'ի կողմանս Ասիացոց՝ գնացաք. էր ընդ մեզ Արիստարքոս մակեդոն թեաղոնիկեցի: Եւ 'ի վաղիւ անդր իջաք 'ի Սիդոն. եւ մարդասիրութիւն ցուցեալ Յուլիոսս առ Պաւղոսս, հրամայեաց առ բարեկամսն երբալ (2) եւ դարման գտանել: Եւ անտի ելեալ՝ խոնարհագոյն նաւեցաք 'ի Կիպրոս վասն հորմոյն ընդդէմ լինելոյ: Յայնժամ ընդ մէջ ծովուն Կիլիկեայ եւ Պամփիլեայ նաւեալ՝ իջաք 'ի Սալուսա Լիկիացոց, եւ անդ գտեալ հարիւրապետին նաւ մի աղեքսանդրացի՝ որ երթայր յիտալիա՝ եմոյծ զմեզ անդր: Ի բազում առուրս ծանրանաւեալք հազիւ հասաք առ

(10) Շատ անգամ գոյականի մը յօդն իրմէ նախադաս եղող անականին՝ յսկիացուցիցն, բացայայտին, խնդիրին եւ մակբային վրայ կը դրուի: Ուստի այս խօսքին մէջ անականն առած է յօդն, փոխանակ գեղու, իսկ Անտիոքայ անանելոյն երեւեալ կամ երեւել ելն:


(1) Բազում ուրեք վերջանողով եւ է նախդրի հայցականն իբրտու սեղ կը գործածուին:

(2) Պէտք է իմանալ, հրամայեաց զի երբեք որ բարեկամսն եալլն:

Կնիդեաւ. եւ 'ի չթողացուցանել մեզ հողմոյն, նաւեցաք խոնարհագոյն 'ի Կրեատէ առ Սաղմոնեաւ. հազիւ անցեալ առ նովաւ՝ եկաք 'ի տեղի ինչ՝ որ կոչէր Գեղեցիկ նաւահանգիստ, յոր հուպ էր քաղաքն Լատայ: Եւ իբրեւ բազում ժամանակք անցանէին, եւ սխալ եւս լինէր նաւելոյն, (3) սայր խրատ Պաւղոսս եւ ասէր. Արք, անտանեմ զի բազում վնասու, ոչ միայն բեռինդ եւ նաւիդ, այլ եւ անձանց մերոց լինելոց է նաւարկութիւնս: Իսկ հարիւրապետն նաւապետին եւ նաւավարին առաւել անսայր, քան բանիցն Պաւղոսի: Իբրեւ դժպատեհ իմն թուէր նաւահանգիստն առ ձմերել, բազումք խորհեցան զնալ անտի, զի թերեւս կարացեան հասանել 'ի Փիւնիկէ, ձմերել 'ի նաւահանգստին Կրեատացոց: Ի շընչել հարաւոյն՝ համարեցան ուր դիմեալն էին հասանել. եւ արկեալ՝ մտ անցանէին առ Կրեատեաւ. եւ ոչ յետ բազում ժամուց՝ անկաւ զնովաւ հողմ՝ ուռուցիկ՝ որ կոչի Եւրակիկոզմ: Ընդ յափշտակել նաւին եւ 'ի չհանդուրծեալ ընդդէմ հողմոյն, թոյլ տուեալ երթայաք եւ դայաք: Ապա 'ի կղզի ինչ դիմեալ որ կոչէր Կլաւդիա՝ հազիւ կարացաք ըմբռնել զմակեցին, զոր առեալ՝ յօգնակամութիւն կապէին ընդ նաւն, եւ երկուցեալք թէ գուցէ 'ի յորձանուտն անկանիցին, իջուցեալ զառազաստ՝ այնպէս երթային եւ դային: Ի սաստկագոյն վշտանալոյն մերոյ՝ 'ի վաղիւ անդր զկարասին ընկեցիկ առնէին, եւ յերկր առուր ընդ իւրեանց ձեռն (ձեռօք իւրեանց) զգործի նաւին ընկեցին: Իբրեւ ոչ արեւ եւ ոչ աստեղք երեւէին 'ի բազում առուրս, եւ ձմեռն ոչ սակաւ կայր 'ի վերայ, սպա բառնայր ամենայն յոյս փրկութեան մերոյ: Եւ զի բազում առուրս նօթի էին, յայնժամ Պաւղոսս կացեալ 'ի մէջ նոցա ասէ. Պարտ էր ձեզ, սվ արք, անտալ ինձ եւ ոչ ելանել 'ի Կրեատեայ, եւ շահել զվիշտս դայս եւ զվնաս. եւ արդ, խրատեմ զձեզ քաջալերել, զի վնաս անձին՝ եւ ոչ միում 'ի ձեզ լինիցի բաց 'ի նաւէդ: Իբրեւ չորեքտասաներորդ գիշեր լինէր, մինչդեռ ծիփեաք 'ի հանդրին անդունդս, 'ի մէջ գիշերին կարծէին նաւավարքն եթէ հասեալ իցեն յաշխարհ ուրեք, եւ ընկեցեալ զգունդան գտին գիրկս քսան. եւ սակաւ ինչ դադարեալ, դարձեալ ընկեցին, եւ գտին գիրկս հնդեասասն: Զահի հարեալ թէ գուցէ 'ի խրատ ինչ տեղիս անկանիցին, յետուստ կողմանէ ընկե-

57/53-66

(3) Իմն, սխալ եւս լինէր նաւելոյն, իսկ իմն իմն իմն. — Իսկ բառն որ նու գոյական մ'է, տրքայի է լեբ:



ցին խարխալսա չորս, բղձանային այգուն լինելոյ<sup>(4)</sup>: Բայց նա-  
 ւալարքն խնդրէին փախչել 'ի նաւէ անտի, եւ իջուցին զկուրն 'ի  
 ծով անդր՝ պատճառանօք որպէս թէ սուսջոյ կողմանէ խարխալս  
 ձգեւոց իցեն: Ասէ Պաւղոս ցհարկւրապետն եւ ցյօրականն. Եթէ  
 ոչ դոքա մնան 'ի նաւիս, ապրել ոչ կարէք: Յայնժամ զօրականքն  
 հատին զլարս կրին եւ 'ի բաց ընկեցին: Եւ մինչդեռ այգն կամէր  
 լինել, ազաչէր Պաւղոս զամենեսեան սունուլ կերակուր, ասէ.  
 Այս չորեքասաներորդ օր է որում ակն ունիք նօրիս<sup>(5)</sup> կատա-  
 րել, եւ չէ ինչ ճաշակեալ. վասն որոյ ազաչեմ զձեզ ճաշակել կե-  
 րակուր, զի այն խկ վասն ձերոյ փրկութեան է, զի ոչ ուրուք  
 'ի ձէնջ մազ մի 'ի գլխոյ կորիցէ: Քաջալերեցան ամենեքին եւ ա-  
 սին կերակուր: Իբրեւ յագեցան կերակրովն, թեթեւացուցին  
 զնաւն թափեալ գցորեանն 'ի ծով: Իբրեւ այգ եղեւ, զերկիրն ոչ  
 ճանաչէին, բայց զգոգ մի նշմարէին թէ ասին ծովուն իցէ, յոր  
 խորհէին, թէ հնար ինչ իցէ, զերծուցանել զնաւն: Զխարխալսն  
 հատեալ ընկեցին 'ի ծովն, թուլացուցին յստանելիս թեւոցն (ա-  
 սագաստիցն) եւ 'ի բաց սաին զասագաստն, եւ ետուն հօզմոյն  
 յափն կոյս<sup>(6)</sup> ծովուն: Անկեալ 'ի տեղի մի երկծով՝ թիւրեցին  
 զնաւն, եւ ստաջին կողմն նաւին խրեալ անշարժ մնայր, եւ յե-  
 տին կողմն քակէր 'ի բունութենէ ակեացն: Զօրականացն խորհորդ  
 արարեալ՝ զի զկապեալն սպանցեն, զի մի ոք լուղիցի եւ փախիցէ:  
 Բայց հարկւրապետն, քանզի կամեցաւ սպրեցուցանել զՊաւղոս,  
 արգել զնոսս 'ի խորհրդոցն. հրամայեաց զի որ կարողն իցեն լու-  
 ղել՝ անկանիցին եւ ի ցամաֆն ելանիցեն, զայլս՝ գոռս ի սախսակս,  
 եւ գոռս<sup>(7)</sup> յայլ ինչ կան ի նաւէ անսի. եւ այսպէս եղեւ ամենե-  
 ցուն փրծանել յերկիր:

Պործ. ԻԷ.

(4) Լէւեւ վերջառով սրական խնդիր է ւշտնայն բային, եւ այսին յասկացու-  
 ցիչ ւշտն ին, որպէս քէ գրուած լինէր, բղձանային շտնայն այգուն: Կրնամք նաեւ  
 տրբայի նանչել այսին բառն ւշտն ին, իմանալով այսպէս, ւշտնայն զէ այն  
 եւնչէ:

(5) Ինչպէս ստորոգելին ներգործական բային սեռի խնդրոյն համաձայնելով՝ յոգ-  
 նակիի մէջ « եւ + գրեմ կ'առնու, այսպէս նաեւ կրտսական եւ չեզոք բայերու  
 ֆով երբեմն + եւ երբեմն « յանգիս կը դուրի յոգնակիի մէջ:

(6) Կայ նախադրութիւնն է ով անորոշ հայցական հոլով կ'առնու իւր խնդիրն՝ որ  
 սովորաբար նախադաս կ'իցի իրմէն:

(7) Անորոշ եւ անցեալ դերբայերու ֆով առանձինն՝ երբեմն հայցական հոլով կը  
 դուրի տրբային, որ հեղեմաբանութիւն է. ուստի այս խօսքին շարադրութիւնն պէտք է  
 պարզաբանել այսպէս. Հրամայեաց զի որ կարողն իցեն լուղել՝ անկանիցին եւ ի  
 ցամաֆն ելանիցեն, այլս (անկանել եւ ի ցամաֆ ելանել) «մանչ սախսակոֆ եւ «մանչ  
 այլով իւրի կանիս, եւայլն:

### ԳՈՇՈՒԹԻՒՆ ԱՌ ԱՍՏՈՒԱԾ

Ոստիս, Բէսօփ  
 Հուպ, Ծո  
 Յօրանալ, Գրեալ, Գրեալ  
 Սաղմոս, Երբ, օրհնութիւն

Ճանաչ, Ծանօթացի  
 Գերարփին, Երեւոյն, Լուսնի  
 Զերմուլ, Ելել, Գալել հանել  
 Կենսաձիր, Կենսապարհ

Բարձր առնեմ<sup>(1)</sup> ըզքեզ Աստուած իմ եւ տէր,  
 Զի ընկալար զիս, եւ ոչ յիս զոսոխն ուրախ արարեր:  
 Կարգացի առ քեզ Փրկիչ իմ եւ յոյս,  
 Եւ ի դրժոխոց հաներ դու զանկեալ անձն իմ խորատոյգ:  
 Ի վիշտս մահու կացեալ առ իս հուպ,  
 Բժժըլեցեր զիս, ոչ լըքեալ թողեր ընդ իջեալս ի դուր:  
 Սաղմոս ասացէք Տեսուն սուրբք սըրտիւք,  
 Եւ յիշատակի սըրբութեան նորա խոստովան լերուք:  
 Ի բարկութենէ նորա արհաւիրք<sup>(2)</sup>,  
 Եւ յասուածայնոց պարգեւ ի կամաց նորին կենսաձիրք<sup>(3)</sup>.  
 Ընդ երեկս հանգիստ առնուցուն լալիք,  
 Եւ սուսուտուց լիցին ցընծութեան բարբառք բերկրալիք:  
 Եւ ի յօրանալ իմում ի բարիս,  
 Ասացի ցանձն իմ թէ ի յախտեան ոչ սասանեցիս.  
 Զի դու հաճեցար ի կամրս փոյին<sup>(4)</sup>  
 Տալ ինձ զօրութիւն եւ զեղոյ խնոյ ճաճանչ գերարփին.  
 Այլ զըտայ յանկարծ խռովեալ ես անդրէն,  
 Զի դու Տէր ի բաց զերեսս քոյին դարձուցեր յինէն:  
 Առ քեզ բոլորով սրտիւ կարգացի,  
 Եւ առ Աստուած իմ ի նուաղել իմում ազազակեցի.  
 Զինչ օգուտ է քեզ յարենէ իմմէ,

(1) Այն ամականներն որ «տէր» բային հետ իրեն մի՛ գուզրեաց կը գործածուին,  
 ստորոգելի լինելով միտ եզակի կը մնան, եթէ իրենց ենթակայն (սեռի խնդիրն)  
 յոգնակի եւ լինի այսպէս՝ կ'ըսուի, հնազանդ սուրբ զգուշանալս. սուրբ սուրբ + զա-  
 նեղ, եւ ոչ քէ հնազանդ սուրբ, սուրբ սուրբ ելլն:

(2) Սրհաւերք բառէն առաջ լռելեայն կ'իմացուի հոս Եւնչէն բայն:

(3) Կարող այսպէս. եւ պարգեւ կենսաձիր յասուածայնոց կամաց նորին.  
 լռելեայն իմանալով «այն» բայը:

(4) Է նախդրի անորոշ հայցականն դրուած է իրեն գործիական. փոխանակ  
 քնելու կամ + փոյին:

Եթէ ի յերկիր ապականութեան անձն իմ իջանէ .  
 Միթէ հող լիցի՞ առ քեզ խոստովան ,  
 Եւ կամ պատմեսցէ՞ ըզճշմարտութիւն քո զի անկենդան :  
 Լըւաւ ինձ Աստուած եւ ողորմեցաւ ,  
 Եւ յուրախութիւն ըզսուգ իմ դարձոյց եւ յանդորր ըզցաւ :  
 Ըզաղխուր յինէն եզերձ նա ըզքուրձ ,  
 Եւ ըզցընծութիւն փոխանակ սըզոյ ինձ շուրջ ըզգեցոյց :  
 Որպէս զի սաղմոս քեզ փառք իմ յաւէտ  
 Ասասցեն իսպառ մինչեւ ի յետին կենցաղոյս ի կէտ .  
 Եւ մի՛ եւս ինձ զիղջ լիցի յաւիտեան ,  
 Այլ միշտ անդադար Աստուած իմ առ քեզ եղէց խոստովան :

( Բաղդասէ սոյն արձակն՝ ոսակաւորին հետ )

Քարծր առնեմ զքեզ, Տէր, զի ընկալար զիս, եւ ոչ ուրախ ա-  
 րարեր զթշնամին իմ յիս : Տէր Աստուած իմ, կարգացի առ քեզ  
 եւ բժշկեցեր զիս . Տէր, հաներ ի դժոխոց զանձն իմ, փրկեցեր  
 զիս յայնցանէ որ իջանեն ի գուր : Սաղմոս ասացէք Տեառն սուրբ  
 նորա, խոտովան եզերուք յիշատակի սրբութեան նորա : Սըրտ-  
 մտութիւն է ի բարկութեան նորա, եւ կեանք են ի կամաց նորա :  
 Ընդ երեկոյս հանգիցեն լալիք, առաւօտու եղիցի ուրախութիւն :  
 Ես ասացի ի բարեկենդանութեան իմում, թէ ոչ սասանեցայց յա-  
 վիտեան : Տէր, ի կամս քո ետուր զեղոյ իմոյ զօրութիւն, դար-  
 ձուցեր զերեսս քո յինէն՝ եւ ես եղէ խոովեալ : Առ քեզ, Տէր,  
 կարգացի, առ Աստուած իմ աղաղակեցի . զի՞նչ օգուտ է քեզ յարե-  
 նէ իմի, թէ իջանեմ ես յապականութիւն : Միթէ հող խոստովան  
 առնիցի առ քեզ, կամ պատմեսցէ՞ ըզճշմարտութիւն քո : Լուաւ  
 ինձ Տէր եւ ողորմեցաւ, եւ Տէր եղեւ ինձ օգնական : Դարձոյց  
 գսուգ իմ յուրախութիւն, զերձ յինէն գքուրձ եւ ինձ զգեցոյց  
 զուրախութիւն : Որպէս սաղմոս ասացեն քեզ փառք իմ, եւ այլ  
 մի զըջացայց, Տէր Աստուած իմ, յաւիտեան խոստովան եղէց քեզ :

Սաղմոս ԻԹ.

Z U S S U N

Ի վերայ հասանել, հասնաւ  
 Վրիպիլ, պահել  
 Մտանել ի գիներուս, քիչէ քիչ  
 Ձի է քեզ, է՞նչ ստէն

Ի իսել, համարչալիւ  
 Բունադասել, պարտան բանաբարել  
 Պասնել, է՞նչ պալ

Եւ Տէր Աստուած մերժեաց զքուն յարքայէ (յԱրտաշիսէ) ըզ  
 գիշերն զայն . եւ ասէ ցգպրապետն իւր՝ բերել առաջի իւր զգիր  
 հրովարտակին եւ կարգալ : Եւ եզիտ նա զհրովարտակն զոր գըր-  
 եալ էր վասն Մուրթքէի, թէ որպէս պատմեաց վասն երկոցունց  
 ներքինեացն նորա, յորժամ պահէին զապարանս թագաւորին, եւ  
 կամէին սպանանել զարքայ Արտաշէս : Եւ ասէ թագաւորն . Եւ  
 զի՞նչ շնորհս եւ կամ փառս տուաք Մուրթքէի : Եւ ասեն սպո-  
 սաւորքն արքայի . Չարարեր եւ ոչ ինչ նմա՝ յորժամ հասեր ի վե-  
 րայ խնամոյ հաւատարմութեան նորա առ քեզ : Եւ ընդ առա-  
 ւօտսն եկին ի գաւիթ թագաւորին . եւ ասէ արքայ . Ո՞վ է ի դա-  
 ւիթս : Եւ Համան եկն եմուտ՝ հրաման առնուլ ի թագաւորէն, զի  
 կախեսցէ զՄուրթքէ զկայսէն (1) զոր պատրաստեաց : Եւ ասեն  
 սպասաւորքն արքայի . Ահաւասիկ Համան արտաքոյ է : Եւ ասէ  
 արքայ . Կոչեսցի ի ներքս : Եւ ասէ թագաւորն զՀաման . Ձի՞նչ ա-  
 րարից ես առնն զոր ես կամիմ փառաւորել : Եւ խորհեցաւ Համան,  
 եւ ասէ ի միտ իւր . Ձո՞վ կամի արքայ փառաւորել՝ եթէ ոչ զիս :  
 Եւ ասէ ցարքայ . Ձայրն զոր արքայ կամի փառաւորել, բերցեն  
 զպատմուճանն զարքունի, եւ զերկվարն յորում արքայ հեծանէր,  
 եւ տացեն առնն այնմիկ (2) սիրելոյն արքայի ի փառաւորաց ան-  
 աթի . եւ զգեցուցեն զպատմուճանն առնն այնմիկ զոր արքայն սի-  
 րէ, եւ հեծուցեն զնա յերկվարն արքունի, եւ քարոզ կարգաս-

(1) Պէտ է յիսել է-իւլ բայի եւ քս նմանէ Բանի մի բայերու ինդրաուրբեան մա-  
 սին եղած գիտելիքն :

(2) Շոս անգամ յարաբերեալ մը նախադաս լինելով կամ յետադաս, իւր հոլովն  
 քողով՝ յարաբերականին հոլովն կ'առնու, մտնաւանց երբ յարաբերականաւ միջանկ-  
 եալ խօսքն հետացունէ յարաբերեալն իր բայէն, բայց յանախ ետեւ կը յաւելցուի  
 դերանուն մը կամ համագոր բառ մը եւ կամ նոյն իսկ յարաբերեալն իր պահանջելի  
 հոլովովն. ուստի այս խօսքին մէջ ~~առնն~~ ~~այնմիկ~~ աւելադրուիքն է, եւ ցոյց կուտայ  
 քէ ~~զայրն~~ բառն պարտի դրուիլ տրական հոլովով, այսպէս. ~~առնն~~՝ զոր կամի... քսցեն  
 զպատմուճանն ելլն :





կիր եւ երկիր եպագ նմա: Եւ ասէ ցնա Դաւիթ. Ուստի՞ զաս դու: Եւ ասէ ցնա. Ի բանակէն իսրայելի զերծեալ եմ ես: Եւ ասէ ցնա Դաւիթ: Զինչ զրոյց է պատմեա ինձ: Եւ ասէ. Իմասեալ եաւ ժողովուրդն ի պատերազմէն եւ անկան բազումք ի ժողովորդէնէն եւ մեռան, եւ Սաուղ եւ Յոնիաթան մեռան: Եւ ասէ Դաւիթ ջգատանին որ պատմեաց նմա. Զի՞նչ զիտես եթէ մեռաւ Սաուղ եւ Յոնիաթան որդի նորա: Եւ ասէ պատանին որ պատմեաց նմա. Դիպելով զիպեցայ ի լերինն Գեղբուայ, եւ ահա Սաուղ յեցեալ կայր ի նիզակն իւր. եւ ահա կառք եւ արոյանք հեծելոց դուռնաբեցան ի նա, եւ հայեցաւ ի թիկունն իւր եւ ետես զիս, եւ կոչեաց զիս, եւ ասեմ՝ Աւասիկ եմ ես: Եւ ասէ ցիս. Ո՞վ ես դու. եւ ասեմ. Ամաղեկացի եմ ես: Եւ ասէ ցիս. Արի ի վերայ իմ եւ սպան զիս, զի կալաւ զիս մութ անհարին, մինչդեռ ամենայն շունչ իմ յիս է: Եւ յարեայ ի վերայ նորա եւ սպանի զնա. զի զիտէի թէ ոչ է արարանայ, յետ անկանելոյն նորա. եւ առ ի զթագն ի գլխոյ նորա եւ զապարանջանս ի բազկէ նորա, եւ բերի զնոսա տեառն իմում այսր: Եւ բուռն եհար Դաւիթ ըզ հանդերձից իւրոց եւ պատառեաց զնոսա. եւ ամենայն արք որք ընդ նմա պատառեցին զհանդերձս իւրեանց. եւ կոծեցան եւ պահեցին եւ լացին մինչեւ ցընդերեկս ի վերայ Սաուղայ եւ Յոնիաթանու որդւոյ նորա, եւ ի վերայ ժողովրդեանն Յուդայ, եւ ի վերայ տանն իսրայելի զի հարան սրով: Եւ ասէ Դաւիթ ջգատանին որ պատմեաց նմա. Ո՞ւստի ես դու: Եւ ասէ. Որդի առն պանդխտի ամաղեկացւոյ եմ ես: Ասէ ցնա Դաւիթ. Եւ զի՞նչ ոչ երկեար ձգել զձեռն քո արականել զօծեալն Տեառն: Եւ կոչեաց Դաւիթ զմի ի մանկուոցն եւ ասէ. Մատիր պատահեա դմա: Եւ եհար զնա եւ մեռաւ: Եւ ասէ ցնա Դաւիթ. Արիւն քո ի գլուխ քո. զի բերան քո խօսեցաւ զքէն եւ ասէ, թէ ես սպանի զօծեալն Տեառն: Եւ սղբաց Դաւիթ զողբս զայս ի վերայ Սաուղայ եւ ի վերայ Յոնիաթանու որդւոյ նորա. եւ ասաց Դաւիթ ուսուցանել որդւոցն Յուդայ աղիլնաւորութիւն (\*). եւ ահա զրեալ է ի գիրս ուղղութեան. Արձանացի իսրայել ի վերայ բլրոցն ի բար-

ձուսն քո վիրաւորաց (\*\*). զի՞նչ անկան զօրաւորքն: Մի՛ պատմէք ի Գէթ, եւ մի՛ տայք զայդ աւետիս յել Սակաղոնի, զի մի՛ երբէք ուրախ լիցին զստերք այլազգեացն, եւ մի՛ ցնծացեն զբնտերք անթլիատիցն: Լերինք Գեղբուայ, մի՛ իջէ ի ձեզ ցօղ, եւ մի՛ եկեսցէ ի վերայ ձեր անձրեւ՝ անդաստանք պաղոց. զի անդ սպականցաւ ասպար զօրաւորաց. Վահանն Սաուղայ ոչ օծաւ իւրով (\*\*\*), Յարեւել վիրաւորաց եւ ի նարայլ զօրավարաց աղեղն Յոնիաթանու ոչ զարձաւ ունայն (°) յետս, եւ սուրն Սաուղայ ոչ ամկոփեցաւ զատարկացեալ: Սաուղ եւ Յոնիաթան սիրելիք եւ զեղեցիկք եւ վայելուչք, չմեկնեալք ի կենդանութեան իւրեանց, եւ ոչ մեկնեցան ի մահուան իւրեանց. թեթեալոյնք քան զարծուիս, զօրացան առաւել քան զառիւծունս: Դատերք իսրայելի, լացէք ի վերայ Սաուղայ, լացէք ի վերայ նորա որ զգեցուցանէր ձեզ կարմիրս՝ հանդերձ զարդուն ձերով, որ արկանէր զարդասակոյ ի վերայ հանդերձից ձերոց: Զի՞նչ անկան զօրաւորքն ի մէջ պատերազմի. Յոնիաթան ի վերայ բարձանց քոց վիրաւոր: Յաւ է ինձ ի վերայ քո, եղբայր իմ Յոնիաթան. զեղեցիկացար ինձ յոյժ, զարմանալի եղեւ սէր քո ինձ քան զսէր կանանց: Զի՞նչ անկան զօրաւորքն, եւ կորեան անօթքն պատերազմականք:

Բ. Թագ. Ա.

ԽՕՍԲ ԸՆԴ ՅԻՍՈՒՍԻ

Ածել ի գոլ, արեղէն	Ստաբակ, արարաբ
Ի միս առնուլ, հասնալ	Հեսել, բեմ քեւել
Անուռն, անշար, անլաժ	Նուանել, յալել
Տանել, համբերել	Խանդակաք, երանբան, քորովալոց
Յողղող, քոփափոփ	Երկաբար, արարել հեր կայսաս
Անանց, արանցիկ երբեք	Դրդի ռազմ, պատերազմ բանալ
Պնդակազմ, արեկ պարարարարար	Անկարեկիր, անգութ
Դէս, քեղալ	Անբաձմուկ, արեկ պահպանալ

Վեղ զոհութիւն մատուցանեմ եւ ըզիտաս,

(\*) Ս. գրոց հմուտ մեկնիչ այս արեղէն արարաբ բառով Դարի հետագայ ողբերգն կ'իմանան, ի նմա յիսասկեալ Արեղ Յոնիաթանու — եւլն խօսքն առնելով: Այս նշանակութեամբ հոս արեղէն արարաբ բառն հարկ է որոշեալ հայցականով զարեղէն արարաբ գրել:

(\*\*) Այս խօսքին իմաստն աւելի կը պարզուի եթէ արեղէն արարաբ բառն ոչ թէ լոկ կէտալ բարգմանուի, այլ քեղ քեւալ, որ ասեն Ս. գրոց միս բարգմանութեանց եւս համապատասխան կ'լինի:

(\*\*\*) Խօսքին իմաստն ուղղելու համար կը բուի թէ հարցական պէտք է կարդալ այսպէս. Վահանն Սաուղայ ոչ օծաւ իւրով (միթէ չէր օծեալ. = իբր թէ չէր օծեալ):

(°) Ունայն անկանի խնդիրներն յարեւել եւ ի հարայն հետագած են իրմ:

Որ յանպատճառ հանգչիս ընդ Հօր քու՛մ ի կառս (1) .  
Որ ի չբոյն ստեղծեալ ածեր զիս ի գոյ ,  
Եւ փրկեցեր ի դժոխոց արեամբ քոյ .

Որ զիս առ քեզ ի տղայ տիղ (2) կոչեցեր ,  
Առ ի պաշտել ըզքեզ եւ կեալ ի քո սէր .  
Տուր ինձ ի վեր քան զամենայն զխտութիւն  
Չանալ ի միտ առնուլ ըզսէր քո անհուն .

Եւ սիրոյ սէր հատուցանել փոխարէն ,  
Յօծար ի մահ (3) քան թէ մեկնել առ ի քէն .  
Եւ միշտ առ սէր քոյին , ցորչալ է յիս շունչ ,  
Տանել իսպառ վըշաակութեանց անտըրտունջ .

Այլ զի յոգոցդ եմ ես անզօր եւ տըկար ,  
Կարողացո՛ւ , Տէր , դու զհոգիս իմ յօժար .  
Վառեա ըզսէր քո ի սըրտիս , որ եկիր  
Ըզհօւր սիրոյ քո արկանել ի յերկիր :

Դու միայն դու , տէր իմ Յիսուս , լեր ինձ դանձ ,  
Կեալ ինձ ի քեզ , եւ մի՛ ի սէր մեծութեանց .

Մի երկրաւոր ուսմամբ լինել գերազանց  
Այլ ուսանիլ զխնաստութիւն քո անանց :

Պահեա զիս , Տէր , յաշխարհական փորձութեանց ,  
Ուսն (4) ստամբակ խնց կըրից դընել սանձ .

Եւ զգոյութիւնս իմ թէ հետեւ ազըտամբ ,  
Տուր նըւաճել ինձ վայն քոյով զօրութեամբ :

Սմիացո՛ւ զսիրտ իմ ի սնամիտ հաճոյից ,  
Եւ յերկրաքարչ ըզձից պահեա զիս ամբիծ .  
Թէ ինձ աշխարհ մարմին եւ դեւ զըրդեն ուազմ՝  
Իեւ հակառակ նոցին կացից պընդակազմ :

Շարժեա ըզսիրտ իմ խանդակաթ ի գորով .  
Անկարեկիր սա ընդ եղբարս իմ գովով (5) .


Տուր ինձ սիրել ըզթըշնամի եւ զստիս ,  
Եւ մի՛նդ եղբարս իմ մըթերեալ պահել սիս .  
Որ առ ի սէր նոցա զարիւն քո հեղեր ,

(1) Ածական նախադաս դուրեղով հեռացած է իւր գոյականէն :  
(2) Գոյական բառեր երբեմն կը գործածուին իբրեւ ածական :  
(3) Չեղջեալ է գուլ բայն :  
(4) Լուեխայն պարս է իմանալ թէ դերանուն այս բային հով :  
(5) Գուլ իբրեւ դիմաւոր գործածուած է նոս , եւ ուղղական հոլով առած է իւր  
տերային :

Տուր ինձ առնել գէթ ընդ նոսա գուլ եւ սէր :  
Կուրացո զմիսս իմ ի պարսաւ այլոց դէս (6)

Տուր սեասնել ըզյուուութիւնս իմ եւ եթ .  
Ուսայց ի քէն հեզ գոլ սըրտիւ եւ խանարհ ,  
Չի դու թողցես , Տէր , ըզյանցանս իմ ի իսպառ :

Արա զգե՛նուլ զպատմուճանն իմ նախկին ,  
Եւ անարատ պահել շնորհօք վայն քոյին ,  
Ընդ հովանեաւ ամրածածուկ քո ձեռին  
Պահեա զհոգի իմ եւ ըզմիտս եւ զմարմին :



ՅԱՂԹԱՆԱԿԷ ԳԵԴԷՈՆ ԸՆԴԴԷՍ ՍԱՂԲԱՍՈՒ

Պարսապիլ , իեւր յագնել	Ներել , իեւր անթեւալ յարգել
Պնդել զհետ , հաւանել	Մանեակ , վեւ խեւելու զարբ
Բարկոնիմ , արեւմտեան	Սիկո , արեւմտեան (արեւմտեան)
Սուսերանել , արեւմտեան	Շոնչան , արեւմտեան զարբ (Ֆուրսուտ)
Դղբել , արեւմտեան	Մեհեանդ , արեւմտեան
Գրել , գրուլ նաչել (վեւ)	Եփուդ , վեւ , պարսեան

Եւ եկն Գեդէոն ի Յորդանան , եւ անց ինքն եւ երեք հար-  
իւր արքն որ ընդ նմա պարտասեալք եւ քաղցեալք : Եւ ասէ  
ցարսն Սոքոպիթայ . Տուք աւաղիկ հաց ի կերակուր զօրուս այս-  
միկ որ ընդ իս , զի քաղցեալ են . եւ ես պնդեցայց զհեա Չերէի  
եւ Սաղմանայ թագաւորացն Մաղիամու : Եւ ասեն իշխանքն Սոք-  
քոպիթայ . Միթէ ձե՛ռն Չերէի եւ Սաղմանայ իցէ ի ձեռին քու՛մ ,  
զի տացուք հաց զօրականիդ քու՛մ : Եւ ասէ Գեդէոն . Ոչ այդպէս ,  
այլ ի աալ Տեառն Չերէի եւ զՍաղմանայ (1) ի ձեռս իմ , եւ ես քար-

(6) Կարգա այսպէս . կուրացո զմիսս իմ արեւմտեան այլոց , (կուրացոն միսս  
որ դիտող է այլոց պարստանաց) : Շոս անուններ գոյական կամ ածական , հա-  
ղորդութիւն ունենալով բայից հետ իբրեւ անոց արմատ կամ ածանցեալ , այլ եւ  
այլ խնդիրներ կ'առնուն անոց համեմատ :

(1) Երբ յասկացեալն գործեամբ իմացուած լինի՝ յասկացուցչին վրայ կը գրուի  
յասկացեալն նախդիր . այսպէս՝ այս խօսքին մէջ Չերէի եւ Սաղմանայ յասկացուց-  
չաց վրայ դուած է յետեան իմացուող արեւմտեան յասկացեալն նախդիր . սակայն Չե-  
րէի յասկացուցչին վրայ դուելիք չ'ենալով չ'ենալով զանց առնուած է , վառնդի նախա-  
դաս յասկացուցչին կամ անոր ածականին սկզբնատուն եթէ չ'կամ , գրեմն ըլ-  
լան , չ'կամ , նախդիրներու տեղը կը բռնեն : Բաց աստի նաեւ ուրիշ պարագա-  
յից մէջ զանց կ'ընան առնուիլ չ'ենալով , նախդիրներն , երբ հոլովեալ բառն այդ գրե-  
րէն մին կամ միւսն ի բնէ սկզբնատուն ունի իրեն :

չեցից զմարմինս ձեր փշովք անապատի եւ բորկոնիմաւ : Եւ ել անտի ի Փանուէլ, եւ խօսեցաւ ընդ նոսա նոյնպէս . եւ պատասխանի արարին նմա արք Փանուէլայ՝ զոր օրինակ արարին նմա պատասխանի արք Սոքքովթայ : Եւ խօսեցաւ Գեղէոն ընդ արս Փանուէլի եւ ասէ . Ի դառնալ խմում այսրէն խաղաղութեամբ՝ կործանեցից զաշտարակդ զայդ : Զերէէ եւ Սաղմանա էին ի Կարկար , եւ բանակ նոցա ընդ նոսա , իբրեւ հնգետասան հազար այր՝ ընդ ամենայն որ մնացեալ էին յամենայն բանակէ որդւոցն արեւելից , եւ անկեալք էին հարիւր եւ քսան հազար արանց սուսերամերկաց (2) : Եւ ել Գեղէոն ընդ ճանապարհս վրանաբնակչացն յարեւելից Նաբաէի եւ հանգէս Նաբեայ , եւ եհար զբանակն . զի ահա էր բանակն յանհոգս : Եւ փախեան Զերէէ եւ Սաղմանա , եւ պնդեցաւ զհետ նոցա , եւ ձերբակալ արար զերկուս թագաւորսն Մաղիամու զԶերէէ եւ զՍաղմանա , եւ զամենայն բանակ նոցա զզրդեցոյց : Եւ զարձաւ Գեղէոն որդի Յովասու ի պատերազմն ի զառիվայրէ անտի Արեոայ : Եւ կալաւ պատանեակ մի յարանց Սոկքովթայ , եւ եհարց զնա . եւ զրեաց առ ինքն զիշխանան Սոկքովթայ , եւ ասէ ցնոսա . Ահաւասիկ Զերէէ եւ Սաղմանա , վասն որոց նախատեցէք զիս եւ ասացէք . միթէ ձեռն Զերէի եւ Սաղմանայ այժմ ի ձեռին քում իցէ , զի տացուք հաց արանց քոց նթթելոց : Եւ սա զիշխանան եւ զծերս քաղաքին եւ փուշս յանապատէ եւ զբորկոնիմն , եւ քարչեաց նոքօք զարսն Սոկքովթայ , եւ զաշտարակն Փանուէլի կործանեաց , եւ կտորեաց զարս քաղաքին : Եւ ասէ ցԶերէէ եւ ցՍաղմանա . Ո՛րք են արքն զորս կտորեցէք ի թարովր : Եւ ասեն . Որպէս դու , նոյնպէս եւ նոքա նման քեզ , եւ դու նման նոցա , իբրեւ զտեսիլ որդւոց թագաւորի : Եւ ասէ Գեղէոն . Եղբարք իմ եւ որդիք մօր իմոյ էին : Եւ երդուաւ նոցա եւ ասէ . Կենդանի է Տէր , եթէ կենդանի պահեալ էր ձեր զնոսա , ոչ սպանանէի զձեզ : Եւ ասէ ցթեր ցանդրանիկ իւր . Արի սպան զդոսա : Եւ ոչ եհան պատանեակն զսուր իւր՝ զի երկեաւ , քանզի մանուկ էր : Եւ ասեն Զերէէ եւ Սաղմանա . Արի եւ դու քեզէն պատահեա մեզ , զի ըստ առն՝ եւ զօրութիւն իւր : Եւ յարեաւ Գեղէոն եւ սպան զԶերէէ եւ զՍաղմանա , եւ սա զմանեակսն ի պարանոցաց ուղտուց նոցա : Եւ ասեն այր Իսրայելի (3) ցԳեղէոն . Իշխեա մեզ դու եւ որդի քո ,

(2) Տես 2 կանոն Բ դաս :  
 (3) Հաւատական անուանք որ եզակի ձայնի բազում ինչ կր նշանակեն , նաեւ

եւ որդի որդւոց քոյ , զի վրկեցեր զմեզ ի ձեռաց Մաղիամու : Եւ ասէ ցնոսա Գեղէոն . Ոչ իշխեցից ես ձեզ , եւ ոչ իշխեցէ ձեզ որդի իմ . այլ Տէր իշխեցէ ձեզ : Եւ ասէ ցնոսա Գեղէոն . Խընդրեցից ի ձէնջ հայցուածս ինչ , եւ տուք ինձ՝ առ այր (4) զինդ մի յաւարէ անտի , զի զինդք ոսկիք էին նոցա , քանզի իամայեւացիք էին : Եւ ասեն . Տալով տացուք : Եւ տարածեցին զհանդերձս նորա , եւ ընկեցին անդր այր իւրաքանչիւր զզինդս ոսկիս զաւարի իւրոյ : Եւ եղեւ կշիւս զնդացն ոսկեաց զոր խնդրեաց՝ հազար եւ եօթն հարիւր սիկլ ոսկւոյ , թող զչոնջանուսն եւ զմեհեւանդս եւ զպսակակալս եւ զծիրանիս , եւ որ ինչ ի քաղաւորսն Մաղիամու (5) , եւ թող զմանեակս ոսկիս պարանոցաց ուղտուց նոցա : Եւ արար զայն Գեղէոն յեփուզ (6) , եւ հաստատեաց զայն ի քաղաքի իւրում յեփրա : Եւ վանեցաւ Մաղիամ առաջի որդւոցն Իսրայելի եւ ոչ եւս յաւելին ամբառնալ զգլուխս իւրեանց , եւ դադարեաց երկիրն ամս քառասուն յաւուրս Գեղէոնի :

Պատ. Գլ. Է.

ԱՆՅՔ ԸՆԴ ԾՈՎՆ ԿԱՐՄԻՐ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՄՈՎՍԻՍԻ

Կարկասել , երբ գալ , Գանու	Բանակեղ , Բանախորդի
Ձեռն , գործ	Երկուք կալան . Զեք որդէ բանեց
Ursulapիւն , Բարսիլիս	Սպարազէն , սեռ իւրով զնստած (զնստօր)

Եւ եղեւ յառաւօտին պահուն՝ հայցեալ Տէր ի բանակն եզիպտացւոց սեամբ հրոյն եւ ամպոյ (1) , եւ խոռվեաց զբանակն եզիպտացւոցն . եւ կապեաց զանիւս կառաց նոցա , եւ վարէր զնոսա բռնութեամբ : Ասեն եզիպտացիքն . Փախիցուք յերեսաց Իսրա-

միջակ ամսկաններէն ոմանք երբ ամենր միանգամայն կ'ակնարկեն , քէ՛ եզակի եւ քէ յոգնակի անխիբ կ'առնուն իրենց բայն :  
 (4) Աստուր կր նշանակէ : Եւ զորոց համար կամ հարց գլուխ , այսպէս նաեւ որ օր կր նշանակէ : Եւ զորոց համար :  
 (5) Ձեռնեալ է գործեր կրաւորական բայն :  
 (6) Տես 3 կանոն Ա դաս :  
 (1) Տես 5 կանոն Ե դաս :



Բզէնձեալս թընամեաց եւ գերիվարս ընկէց ի ծով:  
 Օգնական ընդունելի (1) եղեւ ինձ տէր ի փրկութիւնս:  
 Սա է Աստուած իմ, օրհնեցից ըզսա եւ բարձր արարից:  
 Սա է Աստուած հօր իմոյ, երգըս սըմս նըւազեցից:  
 Տէր խորտակէ զպատերազմունս, եւ տէր է յոյս անուն նորա:  
 Ըզկառս ըզգէն եւ զգօրութիւն փարաւոնի ընկէց ի ծով:  
 Ընտիրք հեծելոց եւ սպառազէնք բըւնաւորին  
 Կորեան անդընդատոյզ, ընկըմեցան ի ծով Կարմիր:  
 Խորք ծածկեցին ըզնոսս, ընկլան յանդունդս իրրեւ ըզվէմ:  
 Աջ քո տէր, աջ քո հըզօր, փառաւորեալ է գօրութեամբ,  
 Աջ քո տէր, աջ քո հըզօր հար խորտակեաց ըզթշնամին:  
 Եւ ի ճաճանչ փառաց քոց զընդդիմամարտըս մանրեցեր:  
 Առաքեցեր ըզբարկութիւն քո, եւ եկեր ըզնոսս  
 Որպէս բոց՝ զի (2) ճարակի ծախէ զցամաք եղէգնաշամբ:  
 Եւ հողմով սըրամբտութեան քո սպատառեալ ալիք ծովուն  
 Պաղեցան որպէս սարիսպ, սրաղեցան ջուրք վիմատառեալ:  
 Ասաց թընամին. հալածեցից եւ հասից,  
 Բաժանեցից ըզկապուտ, լըցուցից զանձն իմ աւարաւ:  
 Սատակեցից սըրով իմով, տիրեցէ ձեռն իմ ի նոսս:  
 Առաքեցեր ըզհողմըն քո, եւ ծով ծածկեաց ըզթշնամին:  
 Ընկըմեցեր ըզնոսս որպէս կապար ի խորս ալեաց:  
 Ո՞վ է Աստուած իրրեւ ըզքեզ փառաւորեալդ ի մէջ սըրբոց,  
 Որ սքանչելի փառօք սաստես, եւ հնազանդին քեզ համազոյք,  
 Չըզքեցեր զաջ քո եւ եկուլ երկիր ընկըյզ ըզնոսս:  
 Աճեր արդարութեամբ ըզժողովուրդ քո զայս փըրկեալ,  
 Եւ գօրութեամբ քո սփոփեցեր ի բանակեառը սուրբ քոյլին:  
 Լըւան ազգք եւ բարկացան, երկունք կալան ըզհէթմնոսս:  
 Յայնժամ իշխանք Մովսրացւոց եւ զատաւորք Եդովմայ  
 Ահիւ մեծաւ տազնապեցան, անկաւ դողումն ի նոսս:  
 Եւ բնակիչք քանանացւոց լըքան լըւծան վըհատեցան:  
 Անկից զնոքօք ահ եւ երկիրդ, ի սաստ բազկի քո քարասցին,

(1) Ի՞նչ բայձականն յանախ կը գործածուի իբրեւ «զ» ներգործական եւ չեզոք բայից մէջ. բայ այսմ շեքանէնէ կը նշանակէ (ընդունող), Էնէ (լսող), անէնէ (ընող) շեքանէնէ (ընթացող) եւլն:  
 (2) Չէ միջակ անականն յանախ կը գործածուի իբրեւ «բ» յարաբերական դերանունն. ուստի փոխանակ քսելու, որպէս բոց «բ» հարակի, բուսած է, որպէս բոց չէ հարակի:

Մինչեւ անցցէ Տէր, ժողովուրդ քո այս աջովըզ քով փըրկեալ,  
 Մինչեւ անցցէ անվըտանդ ժողովուրդ քո զոր ըստացար:  
 Տարեալ ի լեառն անդր ըզնոսս ժառանգութեան քո տընկեցես,  
 Ուր պարսաստեալ եմ բնակուրիւնդ է (3) ի տեղւոջըն սըրբութեան,  
 Չոր ձեռք քո տէր պատրաստեցին, զոր արարեր Տէր սըրբութիւն:  
 Տէր թագաւոր յաւիտեան, եւ յաւիտեանս անդր ի յեւեւս:  
 Չի երկվարք փարաւոնի հանգերձ կառօք եւ հեծելովք  
 Եւ սպառազէնք նորա ընտիրք ընկըմեցան անդընդախոր:  
 Աճ ի վերայ նոցա Տէր ըզլեւնացեալ ջուրըս ծովուն:  
 Գնալով որդւոցն (4) Իսրայելի ցամաքաթիւ եւ ի մէջ ալեաց:  
 (Տաղաչափեալ)  
 Ի Զ. Ե. Հիւրմիտեանն

Հ Ո Ռ Ի Թ

Օն եւ օն սոնել,	անի անանի շեւէ (---	Չգուել, Կեւէլ, Կանշել
Թանալ, Բեւէլ	[ Կեթեթե Յեււլ	Վալսնանել, Էնցանեւ
Պատկառեցուցանել,	անցանեւ	Եղանիլ, Կան, Կեւուլ (տեղւլ)

Եւ եղեւ յետ այսորիկ յաւուրս դատելոյ դատաւորացն՝ եկն սով յերկիրն: Եւ գնաց այր ի Բեթղեհէմէ Յուդայ սրանդխտանալ յազարակին Մովսրայ, ինքն եւ կին իւր եւ երկու որդիք իւր: Եւ անուն առնն Ելիմէլք, եւ անուն կնոջ նորա Նոոմին, եւ անուն երկուց որդւոց նորա՝ Մաալոն եւ Բեւլոն, եփրաթացիք ի ցեղէ Յուդայ, չոզան յազարակին Մովսրու. եւ անդ էին: Եւ մեռաւ Ելիմէլք այրն Նոոմինայ, եւ մնաց կինն եւ երկու որդիք նորա. եւ առին իւրեանց կանայս մովսրացիս. անուն միումնն Որփա, եւ անուն երկորդին Հուլթ. եւ բնակեցին անդ իրրեւ ամս տասն: Եւ մեռան անդ երկոքին՝ Մաալոն եւ Բեւլոն, եւ մնաց կինն միայն յառնէ իւրմէ եւ յորդոց իւրոց (1): Եւ յարեաւ ինքն եւ երկոքին նուանք նորա (2), եւ դարձան յազարակն Մովսրայ. զի լուան եթէ այց արար Աստուած ժողովրդեան իւրում տալ նո-

(3) Կարգն. «բ» պարսաստեւէ է Բեւլոն-Բեւլոն «-»:  
 (4) Տես 5 կանոն Ա դաս:  
 (1) Մեւսի ամականն բացառական նովով խնդիր կ'առնու: եւ կը նշանակէ «բ»:  
 (2) Տես 3 կանոն Ե դաս:

ցա (3) հաց: Եւ ել ի տեղւոջն ուր էր, եւ երկօքին նուանք նորա ընդ նմա, եւ գնացին ճանապարհ՝ դառնալ յերկիրն Յուդայ: Եւ ասէ Նոոմին ցերկօսին նուանս իւր. Երթայք դարձաբուէ իւրախանչիւր ի տու հօր իւրոյ (4). Եւ արասցէ ձեզ Տէր ողորմութիւն: Եւ համբուրեաց զնոսա: Ամբարձին զձայնս իւրեանց եւ լացին, եւ համբուրեաց Որդիս զսկեսուր իւր, եւ դարձաւ ի ժողովուրդ իւր, բայց Հոութ զնաց զինի նորա: Եւ ասէ Նոոմին ցՀոութ. Ահա նէր քո դարձաւ ի ժողովուրդ իւր եւ առ աստուածս իւր, դարձիր եւ դու զհետ նիրին քոյ: Եւ ասէ Հոութ. Մի՛ պատահեսցէ ինձ թողուլ զքեզ եւ դառնալ ի քէն. զի ուր դու երթայցես՝ երթայց, եւ ուր հանգչիցիս՝ հանգեայց, ժողովուրդ քո՝ ժողովուրդ իմ, եւ Աստուած քո՝ Աստուած իմ, եւ ուր մեռանիցիս՝ մեռայց, եւ անդ թաղեցայց օն եւ օն արասցէ ինձ Տէր եւ օն եւ օն յաւելցէ, բայց եթէ մահ մեկնեսցէ ընդ իս եւ ընդ քեզ: Եւ իրբեւ ետես Նոոմին եթէ պնդեալ է երթալ նա ընդ նմա, դադարեաց այնուհետեւ ի խօսելոյ ընդ նմա. եւ գնացին երկօքին մինչեւ զալ նոցա ի Բեթղեհէմ ի սկզբան հնձոց գարւոյ: Եւ անդ էր այր ծանօթ առնն Նոոմիայ, եւ այրն հզօր զօրութեամբ, եւ անուն նորա Բոոս. եւ ետ Նոոմիայ տուն այրութեան բնակելոյ ի նմա: Եւ ասէ Հոութ մովաբացի ցՆոոմին. Երթայց յանդ եւ քաղցիցից հասկս զհետ ուրուք: Եւ ասէ ցնա. Երթ, դուստր: Եւ գնաց. եւ երթեալ քաղէր հասկ յանդի զհետ հնձողացն, եւ զիպելով զիպեցաւ վիճակի անդին Բոոսայ: Եւ ահա Բոոս եկն ի Բեթղեհէմէ, եւ ասէ ցպատանին իւր որ կայր ի վերայ հնձողացն. Ո՛յր է աղջիկդ այդ: Պատասխանի ետ պատանին եւ ասէ. Մովաբացի աղջիկն է՝ որ դարձաւ ընդ Նոոմիայ յագարակէն Մովաբայ: Եւ ասէ Բոոս ցՀոութ. Լուսոր, դուստր. մի՛ այլ ուրեք երթիցես քաղել հասկ յայլոց անդի, եւ մի բնաւ ուրեք գնացես աստի. այլ աստէն իսկ յարեաց յաղջիւունս իմ. եւ աչք քո յանդիս ուր եւ հնձեսցեն, եւ երթիցես զհետ նո-

(3) Փոխանակ ըսելու համար, բնական է հաց: Գերանուն յոգնակի դրուած է Բոոս-ի համար հաւանական բառին տեղ, որոյ իմաստն յոգնակի է:  
 (4) Եթէ, աս, քեր, ներ, էրբ քէ իբրեւ դերանուն եւ քէ իբրեւ անակամ՝ էրբտանու էր, էրբտանուէր ու միջակ անունէն ետեւ բային դէմին համեմատ եզակի կամ յոգնակի կը դրուին. բայց երբ բայն յոգնակի առաջին կամ երկրորդ դէմ է՝ յանախ եզակի երրորդ դէմ դերանուն (էրբ) կը գործածուի, ինչպէս որ այս օրինակէն կ'երեւի:

ցա. ո՞չ սպարէն պատուէր ետու մանկուոյ խնամ չմերձենալ ի քեզ. եւ եթէ ծարաւեսցիս, երթիցես յամանսն եւ արբցես՝ ուստի հանիցեն ջուր մանկտիդ: Ահա ժամ է ճաշոյ, մատիւր այսր եւ կեր ի հացեդ, եւ թացցես զպատառ քո ի քացախիդ: Եւ նստաւ Հոութ ի կողմանէ հնձողացն, եւ խառնեաց նմա (5) Բոոս փոխիւնդ. եւ եկեր եւ յագեցաւ, եւ եթող նշխար, եւ յարեաւ քաղել հասկ: Եւ պատուիրեաց Բոոս մանկուոյ իւրում, եւ ասէ, Այլ եւ ի մէջ որայոցն քաղեսցէ, եւ մի՛ պատահեսցուցանէք զնա, այլ եւ բառնալով բարձուսջիք, եւ արկանելով արկջիք առաջի նորա ի փոխընդացն խառնելոց, եւ թոյլ տաջիք նմա եւ կերիցէ՝ եւ քաղիցէ հասկ, եւ մի՛ ինչ (6) զլուրիցէք զնա: Եւ քաղեաց յանդին մինչեւ ցերեկոյ. եւ ծեծեաց զոր քաղեացն, եւ եղեւ արդու մի գարւոյ, եւ առ եւ եմուտ ի քաղաքն: Իրբեւ ետես սկեսուրն նորա զոր քաղեացն, եւ եհան Հոութ ետ նմա ի նշխարէն՝ յորոյ (7) յագեցաւ: Ասէ ցնա սկեսուրն իւր. Ո՛ւր ժողովեցեր այսօր, եւ կամ ո՞ւր եղեր: Եւ պատմեաց Հոութ սկեսրին իւրոյ զանուն առնն առ որում եղեւ այն օր՝ թէ Բոոս է: Ասէ Նոոմին ցնու իւր. Մերձ է այրն ի մեզ, ի մերձաւորաց մերոց է: Եւ ասէ Հոութ ցսկեսուրն իւր. Իրաւ է. ասաց զիս թէ յաղջիւունսդ իմ յարեաց, մինչեւ վախճանեսցեն զհունձադ՝ որչափ իցեն իմ: Եւ յարեցաւ Հոութ յաղջիւունսն Բոոսայ քաղել հասկ մինչեւ վախճանել հնձոցն գարեաց եւ հնձոց ցորենոյ. եւ նստաւ առ սկեսրի իւրում:

Հոուր Ա. — Բ.

(5) Նմա, իմն. Համար: Վերջանով սրականն զուս անգամ Համար նախադրութեամբ սեռականի գործիքն կ'ունենայ:  
 (7) Ինչ, էն սեպ գարու կամ ազդուութեան համար կրնան գործածուիլ ասեն բառի բով, մանաւանդ զ՝ մակբային հետ, իսկ ուրի հետ զուս կամ կից դրուելով ասակոյքին մը կուսան, իբր քէ գրուած լինէր. էնէ, քնն, երբէք:  
 (8) Երբեմն յարաբերական իր հողովը փոխելով յարաբերակին հողովն կ'առնու. ուստի այս օրինակին մէջ բնական է. Ես նմա է համարէն յորոյ (յորմէ) յագեցաւ, փոխանակ ըսելու, որով յագեցաւ: Սակայն կրնամք նաեւ հոս յորոյ բացատրական բնութիւնը իւր բուն հողովովն դրուած համարիլ:

### ՄԱՅ ՀՈՂՈՓԵՌՆԵԱՏ

Չուել, համբայ ելնել  
 Կալ առաջի, հեմ հեմել  
 Լուցանել, վառել  
 Հեհեակ, սրահար (պրտ)  
 Տալ ձեռն, օգնել  
 Կորով, հարստիկան  
 Խարան, հրապար  
 Հարաղակ, (պրտ)  
 Սուակ, (շէն)  
 Կար, հարստիկան

Խնդրակ, հարստ, վարստ  
 Սպարո, գլխա-հար  
 Բայո, (հարստիկ)  
 Ընդիլուգեալ, Բանաստ  
 Գորեսպահագ, գլխա-պար  
 Պաղաւսիս, ար Բանաստ  
 Հագարապիս, հարստ  
 Քանուն, երեսն Բանաստ  
 Ակն, հարստ (տար)  
 Ծորձոր, (տար)

Եւ ի վազիւ անդր պատուիրեաց Հոգոյիեան զօրաց իւրոց չուել զնալ ի Բեախուզա, եւ ի վերայ ելից լեռնակողմանն, եւ հասանել տալ պատերազմ ընդ որդիան իսրայելի: Եւ բանակեցան նոքա ի հովտին որ մերձ էր ի Բեախուզա ի վերայ աղբերն, եւ որդիքն իսրայելի իրբեւ տեսին պայնչափ բազմութիւն, խռովեցան յոյժ, եւ ասեմ այր ցընկեր իւր<sup>(1)</sup>: Այժմ լիզուն նոքա զամենայն երեսս երկրի, եւ ոչ լերինք բարձունք եւ ոչ ձորք եւ բլուրք կարացեն կալ առաջի զօրութեան դոցա: Եւ առին որդիքն իսրայելի այր իւրախանչիւր զգէն իւր<sup>(2)</sup>, եւ լուցանէին ջահա ի վերայ աշտարակաց քաղաքին, եւ կային եւ պահէին զամենայն գիշերն զայն: Եւ լուաւ Յուզիթ, դուստր Մերարեայ որ նստէր այր ի տան իւրում ան երիս եւ ամիսս չորս, եւ էր արկեալ զիւրեւ հանդերձ այրութեան, եւ պահէր նա զամենայն առուրս այրութեան իւրոյ: Եւ էր նա գեղեցիկ յոյժ, եւ եթող նմա Մանասէ այր նորա ոսկի եւ արծաթ, ծառայս եւ ազախնայս եւ անդս եւ ազարակս եւ անասուն. ինքն Յուզիթ զարմանէր զնոսս, եւ ոչ ոք ասէր վասն նորա բան չարութեան, զի երկիւզած էր նա յոյժ ի Տեառնէ: Եւ առաքեաց զնաժիշտն իւր որ էր ի վերայ ամենայն ընչից իւրոց, եւ կոչեաց զՈզիա եւ զամենայն ծերս քաղաքին իւրոյ եւ ասէ ցնտա. Լուարուք դուք ինձ. արարից ես իրս մի որ

(1) Երբ այր բառն գործածուի իբրեւ այր երեստեղէր, վն վն այր, բայն յոգնակի կր լինի, եւ եզակի երոզդ զիսով զեառուն (իւր) կը գրուի:  
 (2) Նոյն է ընդ վերեայն: — Հոս Այր երեստեղէր բացայայտ է որդիք բառին:

պատմեսցի ազգաց մինչեւ յազգս, եւ որդոց մինչեւ յորդիս<sup>(3)</sup>: Դուք կացջիք առ դրան քաղաքիս զգիշերս զայս, եւ ելից ես նաժեսաւս իմով<sup>(4)</sup>. Եւ դուք մի քննէք զգործն զոր գործելոց եմ, քանզի ոչ իսկ ասացից ձեզ մինչեւ կատարեսցի այն զոր եան առնեմ: Եւ ասէ Ոզիա իշխանօքն հանդերձ ցնա. Գնա դու ի խազաղութիւն: Եւ նոքա դարձան ի տաղաւարէ անտի Յուզիթայ յիւրաքանչիւր անդիս: Եւ անկաւ Յուզիթ ի վերայ երեսաց իւրոց, եւ ի բաց սո. զբուրձն զոր զգեցեալ էր, եւ ցանեաց մոխիր ի վերայ զլիտոյ իւրոյ, եւ կարգաց նա ձայնիւ մեծաւ առ Տէր Աստուած, եւ ասէ. Տէր Աստուած իմ, լուր ձայնի աղախնոյ քոյ. եւ նայեաց ի խնդրուածս այլույս<sup>(5)</sup>: Ահաւասիկ Ասորեստանայն ելից զօրք իւրովք զերկիրս, եւ բարձրացաւ հեծելովք երկվարացն, եւ հպարտացեալ մեծամտեաց ի բազուկ նեհեակացն բազմաբեան<sup>(6)</sup>, եւ յուսացաւ ի նիզակս եւ ի սպառազինութիւնս եւ ի կորովս աղեղնաւորացն եւ պարսաւորաց եւ ոչ գիտաց թէ դու ես որ խորտակես զպատերազմունս: Տուր ձեան աղախնոյ քում, եւ հար կործանես զծառայն խաբանօք շրթանց իմոց, եւ խորտակես զսաստիկութիւն նոցա ի ձեան կնոջս. զի ոչ եթէ ի բազմութենէ է քո զօրութիւնդ, եւ ոչ կարդ քո յայնս է որ հզօրքն են, այլ խոնարհաց ես Տէր Աստուած, եւ կարօտելոց ես օղնական, տկարաց ես ընդունելութիւն, կարօտելոց ես խնդրակ, անյուսից ես փրկիչ: Եւ իրբեւ դադարեաց Յուզիթ յաղօթից իւրոց, յոտն եկաց, եւ կօչեաց զնաժիշտն եւ էջ ի տուն իւր: Մերկացաւ յիւրմէ զբուրձն զոր զգեցեալն էր, եւ ի բաց եհան զհանդերձ այրութեան իւրոյ, եւ լուաց զմարմինս իւր ջրով, եւ օծաւ իւզով անուշիւ, եւ եհիւս զհեր զլիտոյ իւրոյ, եւ կապեաց զապարօշն ի ճակատ իւր, եւ զգեցաւ զհանդերձ ուրախութեան իւրոյ զոր զգենայր առ կենդանութեամբ<sup>(7)</sup> առն իւրոյ, եւ ազանէր կօ

(3) Երբ միեւնոյն բառն կրկնուի նոյն հոլովով՝ առաջինն միայն նախիր կ'առնու, իսկ երբ մին բացառական եւ միւսն է ով անորոշ հայցական հոլով լինի, ետք դուռով միայն նախիր կ'առնու, իսկ երբ առաջ դուռով բացառական լինի կրկնայ երբեմն նախիրն ինքն առնու:  
 (4) Շահ անգամ լուելայն պէտ է իմանալ հարստեք նախադուրիւնն այն գործիական բառերու հոլ՝ որք պարզ գործիք մը չեն լինիր:  
 (5) Տես 2 կանոն ժՊ դաս:  
 (6) Կարդա, է Բազմութեան Գեղեցականացն:  
 (7) Առ նախիրն գործիականով կը նշանակէ երբեմն արտիս, իմանալ:



չիկա ոսկեզօծս, եւ արկանէր ապարանջանս ի ձեռս իւր, եւ արկանէր քայուս յականց պատուականաց ընդելուզեալս մարգարտով ի պարանոց իւր, եւ մատանիս ի մատունս իւր եւ գորշապահանգս ի գլուխս իւր, եւ յօրինէր կազմէր ամենայն զարդու իւրով, եւ պայծառանայր առաւել յոյժ: Եւ ետ ցաղախին իւր զմխաղն, եւ ելից զնա պաղատուօք եւ հացիւք սրբովք, եւ զհաղաղակն զինւոյ եւ զսրուակն իւրոյ, եւ սրբէր կազմէր զամենայն ըստ օրինի իւրեանց եւ տայր ցաղախին իւր: Եւ ել Յուզիթինքն եւ աղախին իւր ընդ նմա, եւ միտ զնէին նմա արք քաղաքին յերթալն նորա, մինչեւ եղեւ նա ընդ լեւամբն, մինչեւ անց նա ընդ ծործոր հովտին, եւ ապա ոչ եւս տեսին զնա: Եւ երթային նոքա ընդ ծործոր հովտին ուղիւ ընդ ճանապարհն, եւ պատահեցին նոցա պահապանքն Ասորեստանեաց եւ կալան զնոսա եւ տարան զնոսա ի խորանն: Եւ Հողոփեռն նստէր ի գահոյան իւր, եւ էր փակեալ զնա վարագուրօք շուրջանակի, զորս էր ընդելուզեալ ոսկեով եւ մարգարտով եւ ախմբք պատուականօք: Եւ իբրեւ լուսա նա զՅուզիթայ, ել նա արտաքս ի սրահ խորանին ջահիւք եւ լապտերօք արծաթեօք, քանզի գիշեր էր. եւ իբրեւ ետես զնա Հողոփեռնէս, զարմացաւ ընդ տեսիլ զեղոյ նորա: Եւ եղեւ յաւուրն չորրորդի արար Հողոփեռնէս կոչուես ծառայից իւրոց միայն: Եւ ասէ ցֆազուցներքինին որ էր հազարապետ հաւատարիմ ի վերայ ամենայն ընչից նորա. Երթ, հաւանեցո դու, ասէ, զկինն Հերթայեցի որ է առ քեզ, սւտել եւ ըմպել ընդ մեզ: Եւ ել Բագու յերեսաց Հողոփեռնեայ, եւ եմուտ առ Յուզիթ եւ ասէ ցնա. Մի դանդաղեսցի աղախինդ զեղեցիկ դալ առ տէր իմ եւ փառաւորել ի նմանէ (8), եւ ըմպել ընդ նմա զքինի ուրախութեան մեօք հանդերձ: Եւ ասէ ցնա Յուզիթ. Եւ ո՞վ ոք եմ ես որ ընդդէմ դառնամ տեսան իմում: Եւ յարեաւ զարդարեցաւ, եւ զնաց առ Հողոփեռն, եւ մատեաւ նաժիշտ նորա եւ արկ նմա բազմական ի գետնի դէմ յանդիման Հողոփեռնեայ զակումբն (9) մաշկեայ զոր առ նա ի Բագուայ ի հանասպաղորդ սպաս նմա. եւ բազմեցաւ Յուզիթ ի վերայ նորա: Եւ ուրախ եղեւ Հողոփեռնէս ի վերայ նորա, եւ արք նա գինի սաստիկ յոյժ որչափ ոչ էր արբեալ նորա յօրէ ձննդեակ իւրմէ (10): Եւ իբրեւ երեկոյ եղեւ, փութա-

(8) (Տես 6 կանոն Գ դաս :)  
 (9) Բագուայն բառն որ հոս նորոշան կը նշանակէ: usproqeli է գլխաձեռն ին :  
 (10) Փոխանակ քսելու. Յօրէ քննութեան իւրոյ. (Տես 5 կանոն ԺԳ. դաս) :

ցոյց զծառայս իւր գնալ արտաքս. եւ Բագու փակեաց զգուրս խորանին, եւ զնացին նոքա յիւրաքանչիւր անկողինս իւրեանց արտաքոյ քան զխորանն, քանզի էին ամենեքեան խոնջք եւ վաստակք ի բազում գինեբրուաց սնտի, եւ մնացին Յուզիթ եւ Հողոփեռնէս միայն ի խորանին: Եւ Հողոփեռնէս մտեալ ի գահոյս իւր ի քուն եղեւ, եւ էր թմբեալ յոյժ ի գինւոյ անտի: Եւ ասէ Յուզիթ ցաղախին իւր զի կացցէ արտաքոյ խորանին եւ սպասեսցէ նմա: Եւ մատեաւ Յուզիթ առ քանուն գահոյիցն որ էր ընդ սնարսն Հողոփեռնեայ, եւ եհան զղաչոյն նորա յազգերէ նորա եւ ասէ. Զորացո զիս, Աստուած իսրայելի, յաւուրս յայսմիկ: Եւ եհար ի պարանոցի նորա երկիցս զօրութեամբ իւրով, եւ հատեալ եբարձ զգլուխ նորա, եւ թաւալեցոյց ընկէց զմարմին նորա ի գահոյից անտի: Եւ յետ ծամու միօջ ել եւ ետ նաժտին իւրում զգլուխն Հողոփեռնեայ, եւ ընկէց ի մխաղ կերակրոյն իւրոյ: Եւ ելին երկուքին ի մխաղն ըստ սովորութեան իւրեանց, եւ անցին նոքա ըստ բանակն, եւ շրջեցան եկին ընդ ձորն, եւ ելին նոքա ի լեւանն Բեթիւղայ, եւ եկին նոքա ի զրուես քաղաքին: Եւ ասէ Յուզիթ ի հեռաստանէ ցաղապանս զրանցն. բացէք, բացէք արդ զըրուեսդ, զի ընդ մեզ է Տէր Աստուած մեր:

Յուզիթ.

ՊԱՏՄԷ ՅՈՒԴԻԹ ԶՅԱՆԹԱՆԱԿ ԻՒՐ

Պան, պահապան	Սպայ, ազատ ձեռք դէր
խորիկ ընդ մէջ, -փն իւրոյնէ մեր	Գինեբրուք, քնն իփէն
Խօլ, յեմար, ետեդ	Նիրն, քան, հոսք
Բարկ, քն- (+եկն)	Սնարք, գլխա մերեմ
Անապակ, զար քնանսն-քնն	Անեակ, յախ (չեան)
Գինեհարիլ, քննաքն-	Յոճրակ, (եդքե)
Դեղեիլ, երբեւ	Փոլ, (պօլալ)
Գուն գործել, զան-լ	Հոնչիւն, խաւորոյ
Անժաման, զանան-լ	Կառափն, գլխ- (+եկն)
Իրան, յարմի	Բուռ, (-լանք)
Պարուել, ամբիւել, քննել	Տօղաւորիլ, գնչմանս քալ (չայն)

Արդ լուարուք. այն ինչ ելի ես ի դրանց, կալան զիս պահք թըշնամեայ. Եւ առաջի Հողոփեռնեայ ամին զիս:

Եհարց նա ցիս. Ո՞ւր եւ առ ի՞նչ դաս, ո՞ ես :  
 Կէս յայտնեցի զիրաւն եւ կէս (1) լըռեցի .  
 Ինքն իմանայր եւ ոչ ինչ .  
 Ա. յլ հաճեցաւ ընդ բանս իմ .  
 Եւ բարեգութ քաղցրութեամբ ,  
 ( Թէպէտ օտար իմըն թըւէր ինձ գութ ի դէմքս նորին , )  
 Ընկալաւ զիս , լըւաւ ինձ ,  
 Բաջալերեաց եւ գովեաց ,  
 Եւ զիս ի գուարթ ընթրիս ընդ իւր հրաւիրեաց :  
 Անօթք սսկիք ծըխէին  
 Ըզիառաւոր սեղանովք .  
 Խորտիկ ընդ մէջ խօլն ըմպէր  
 Ըստէս ըզբարկ անապակ ,  
 Բաժակ մըղէր ըզբաժակ ,  
 Մինչեւ տակաւ զինէհարեալ դեղեւէր :  
 Ըսպայք որ անդ կային բազումք շուրջ ըզմեօք ,  
 Ի գիներբուաց անտի խոնջք ,  
 Ի բաց ելին մի առ մի .  
 Եւ վատագոյնն ի նոցունց  
 Փակեալ ըզգուռն եւ ի բաց ,  
 Թողեալ զիս անդ ընդ նըմա :  
 Սակայն ի սիրտ առ ի վերուս ազդեցիկ (2)  
 Թեթեւ է վտանգ ամենայն :  
 Սանեալ ոչ դոյզն էր մասն յայնժամ գեւեռոյ (3) .  
 Շուրջ դաշտավայրն համօրէն  
 Լըռէր ի նիրհ խորատոյլ .  
 Եւ Հողբիւտն ինքնին քան զօրհանապալ  
 Անապտիւտըն թըմբրեալ ,  
 Կայր ի գահոյս իւր ի քուն :  
 Յարեայ մատեայ անշըշունջ՝  
 Ուր խոնարհեալըն դընէր .  
 Զաչս ի յերկինս ամբարձի ,  
 Եւ ի սըրտէ քան շըրթամբք

(1) Կէս բառն գործածուած է իբր կէսով եւ է մակբայ :  
 (2) Ազդեցիկ անականն իբրեւ բայարմաս՝ իբր բային գորութեամբն առած է իբր  
 վրայ առ է վերստի մակբայն :  
 (3) Կարգն այսպէս. Ոչ դոյզն մասն գեւեռոյ սահեալ էր յայնժամ :

Ասեմ. Ո՞վ Տէր, ահա վայրկեանն՝ յորում միով հարուածով  
 Ըզթողովուրդ քո փըրկես՝  
 Դու խոստացար, եւ ես ի քեզ յուսացեալ՝  
 Ա. յար ի ձեռնարկս յայս եկի  
 Վըստահ ի քոյդ օգնութիւն :  
 Զայս ասացեալ՝ լըծի զզատեան սուսերին ,  
 Որ անդ ի սնարքս գահոյնցն էր կախեալ ,  
 Զերծի զսուսերն, եւ ըզվարսիցըն բուռն հարեալ ահեկաւ ,  
 Առի ուժգին աջ ի վեր ,  
 Յոր վայր բազուկ իմ ձըգտէր ,  
 Եւ ի աագնապ մահունն անդրէն առ Տէր Աստուած կարգալով ,  
 Շեշտ ըզհարուածն ի լայն ծոծրամին իջուցի :  
 Եբաց վայրագըն գաչըս իւր, եւ դեռ ընդ քուն եւ ընդ մահ ,  
 Ըզգաց ըզսուր սայր սուսերին ի փող լըր .  
 Յառնել ի վրէժ գուն գործէր ,  
 Ոչ ներէին վարօքն ըմբուսեալք, եւ գոչէր .  
 Ա. յլ ի հոընչիւն կոկորդին ,  
 Ըսպառէր ձայնն ի շըրթունս անդր անժաման :  
 Կըրկնեմ յայնժամ ըզհարուածն ,  
 Եւ առտիկ կառափն յուսոցըն բաժանեալ սոսկալի ,  
 Յարկնըւուչտն ի գետին  
 Անկեալ իրանըն գըլխատեալ տապալի .  
 Շարժի կառափն ի բոին իմում կիսամեռ .  
 Գունատին դէմքն անդէն տըժգոյն մահատիպ :  
 Բարբառք համերք յօդաւորին ի շըրթունս ,  
 Աչքն ի խընդիւր լուսոյ (4) դըժնեայք թաւալին ,  
 Մեռեալ էր նա, եւ սպառնայր .  
 Տեսի, հարոյ ես ի դող :  
 Ոգի առեալ այնուհետեւ մատուցի  
 Վասըն փառաց յաղթանակին գոհութիւն ,  
 Ա. յնրմ որ զայն շնորհեաց մեզ :  
 Խըլեալ ապա ի մահճաց  
 Ըզվարագոյրըն շըքեղ ,  
 Եւ պարուրեալ ի նմա զկառափն անշունչ՝ ըշտապ տագնապաւ ,  
 Ետու իմուսն հաւատարիմ նաժըշտի ,

(4) Տես 9 կանոն 2. դաս :

Որ ըստասէրն ինձ անդ մերձ :  
Եւ ելեալ ի խորանէ սատակամահ անկելոյն ,  
Անցի անտեսս , եւ կամ թերեւ՛ ըս մեծարեալ , ի զօրաց .  
Եւ դարձ այսրէն արարի :

Պետրոսի Մերաբարեայ  
ՅԱԶԱՏՈՒԹԻՒՆ ԲԵՏԻՈՒՂԱՅ  
Հանդես Բ. Տեսիլ Բ.  
(Թարգ. Հ. Ե. Հիւրմիւզ)

### ՊԱՒՂՈՍ ՅԱՏԵՆԻՆ ՓԵՍՏՈՍԻ

Գալ յողջոյն (սուրբ) , (ԳԷ) «դէմնելու» ,  
Սպաս , զորք [ Ընդհանուրեւ ԳԷ  
Հանել (աուրս) , (օրե) անցանել  
Չեկուցանել , ինչոք  
Առնել պատահաս . պարէք ԳԷ  
Դասախազ , ԳԷ պահանջու  
Վնաս , յանցանք  
Կարծել . ԳԷ ԳԷ

Տեղի առնուլ , պարհանութիւն ԳԷ  
Պատժել , իր' իրէք  
Յանհնարս մտանել , ԳԷ ԳԷ  
Քաջ արանց , ԳԷ  
Յանդիմանութիւն , ԳԷ  
Մարիլի , ԳԷ  
Յամուրիւն , ԳԷ  
Գարուրիւն , ԳԷ

Իբրեւ անցին աւուրք ինչ , Ագրիպպաս արքայ եւ Բերենիկէ  
Եկին ի կեսարիտ յողջոյն Փեսոսի (1) : Եւ իբրեւ աւուրս բազումս  
հանէին անդ , Փեսոսս զեկոյց արքայի զՊաւղոսէ եւ ասէ . Այր  
մի աստ մնացեալ է կապեալ ի Փելիքսէ : Իբրեւ չքայ յերուսա-  
ղէմ , զգացուցին ինձ վասն նորա զլսաւորքն Հրէից , խնդրէին  
յինէն առնել նմա պատուհաս : Ետու նոցա պատասխանի եթէ չէ  
օրէն Հոռոմայեցւոց շնորհել ումեք զօք , մինչչեւ ամբաստանեալն  
յանդիմանն ունիցի զգատախազն եւ տեղի պատասխանեոյ առնու-  
ցու վասն ամբաստանութեանն : Իբրեւ եկին գատախազքն այսր ,  
ոչինչ յապաղեցի , այլ ի վաղիւն նստեալ յատենի՝ հրամայեցի ա-  
ծել զայրն , վասն որոյ (2) մատուցեալ ամբաստանքն եւ ոչ մի ինչ

Ջնաս չարութեան ի մէջ բերէին զորոց (3) եսն կարծէի , բայց  
խնդիրս ինչ վասն իւրեանց պաշտամանն ունէին ընդ նմա : Իբրեւ  
յանհնարս մտի վասն այնպիսի իրաց քննութեան , ասեմ ցայրն թէ  
կամիցի՞ երթալ յերուսաղէմ , եւ անդ դատել վասն նոցին իրաց :  
Բայց ի Պաւղոսի բողոքելն (4) զի պահեսցի ի քաջի արանցն յանդի-  
մանութիւն , հրամայեցի պահել զնա մինչեւ տաց տանել առ կայսր :  
Ագրիպպաս ցփեստոս ասէ . կամէի եւ ես լսել առնն , եւ նա ասէ .  
Վաղիւ լուցես : Եւ ի վաղիւ անդր իբրեւ եկն Ագրիպպաս եւ  
Բերենիկէ բազում եւ երեւելի սպասուք , եւ մտին յատեանն  
հանդերձ հազարապետօքն եւ արամիք պատուաւորօք քաղաքին ,  
հրամայեալ Փեսոսոսի՝ ամին զՊաւղոս : Եւ ասէ Փեսոսս . Արքայ  
Ագրիպպաս եւ ամենայն արք որ ընդ մեզ էք , տեսանէք զսա .  
վասն սորա ամենայն ժողովք Հրէից ամբաստան եղեն ինձ յե-  
րուսաղէմ , եւ աստ աղաղակէին թէ չէ սարտ դմա կեալ . բայց  
ես ի վերայ հասի թէ ոչ ինչ դորա արժանի մահու զործեալ (5) ,  
եւ դորա ինքնին բողոք կալեալ առ քաջ արանցն , խորհեցայ յղէ :  
Բայց ստուգութեամբ ինչ գրել տեսան իմում ոչ ունիմ , վասն  
այնորիկ ամի զզա առաջի ձեր , եւ մանաւանդ առաջի քո , արքայ  
Ագրիպպա , որպէս զի վերասին քննեալ մարթացից ինչ գրել .  
քանզի անպատեհ իմն թուի ինձ տալ տանել կապեալ մի , եւ ոչինչ  
Ջնաս զմանէն նշանակել : Եւ Ագրիպպաս ասէ զՊաւղոս . Հրա-  
մայեալ է վասն քո խօսել : Յայնժամ Պաւղոսի ձգեալ զձեռն առ-  
նէր պատասխանի : Վասն ամենայն ամբաստանութեան Հրէից զի-  
նէն (6) , արքայ Ագրիպպա , համարիմ զանձն երանելի , զի քո ա-  
ռաջի տալոց եմ այսօր պատասխանի . մանաւանդ զի զիտակ իսկ  
ես ամենայն կրօնից եւ խնդրոց Հրէից , վասն որոյ աղաչեմ եր-  
կայնմտութեամբ լսել ինձ : Կենաց իմոց , որ ի մանկութեան յազգի  
անդ իմում յերուսաղէմ (7) , տեղեակ են ամենայն Հրեայք . յա-

(1) Տես 9 կանոն 2 դաս :

(2) Վասն որոյ շողիպայ է՝ երբ նշանակէ «արք» . իսկ նոս նախորդութեամբ խնդիր  
է , զի կր նշանակէ «արք» համար՝ անձ մի յարարեցելով :

(3) Կարծէի երբ (կապածիլ) նշանակէ , զով առանց է ի բացառական խնդիր  
կ'առնու սովորաբար :

(4) Ինչպէս յաշկացուցիցն յաշկացեալէն նախապա եղած ասեն անոր ունեցած  
նախդիրն կ'առնու , այսպէս՝ բնորոշութեան եով յաշկացուցի ձեռով զգնուած սեր-  
բային յառաջ դուրելու ասեն բնորոշութեան ունեցած նախդիրն իր վրայ կ'առնու :

(5) Չեղջեալ է է կական բայն :

(6) Տես 6 կանոն ժԲ դաս :

(7) Ոչ յարարեալան դերանունն առանց յայնի համաձայնութիւն մի ունենալու  
իւր յարարեալին հետ՝ երբեմն ուղղական կը դրուի ամէն հոլովից փոխան , քակտեա  
յանախ ետեւէն կ'աւելցուի դերանունն բառ մի ըստ դիմին , եւ մերք նոյն ինքն յա-



զորդրեանն, եւ յաղօթս կայր առ Աստուած յամենայն ժամ: Ետես ի տեսլեան յայտնապէս զիններորդ ժամու աւուրն՝ զՀրեշտակ Աստուծոյ զի մտանէր առ նա եւ ասէր ցնա. Կոռնելիէ: Եւ նա հայեցեալ ընդ նա՝ զարհուրեցաւ, եւ ասէ. Զի՞նչ է Տէր: Եւ ասէ ցնա. Աղօթք քո եւ ողորմութիւնք քո ելին յիշատակաւ առաջի Աստուծոյ. եւ արդ յլեա արս ի Յոսպէ՝ եւ կոչեա զՍիմոն զմն՝ որ կոչի Պետրոս. Եւ մտեալ է առ Սիմոնի ումեմն խաղախորդի, որոյ է տունն մերձ ի ծով: Եւ իբրեւ զնաց Հրեշտակն որ խօսէր ընդ նմա, կոչեաց երկուս ի ծառայիցն (2), եւ զինուոր մի բարեպաշտօն ի սպասաւորացն իւրոց, եւ ստամեալ նոցա զամենայն՝ առաքեաց զնոսա ի Յոսպէ: Եւ ի վաղիւ անդր ի նաւապարհ անկանել ևնցա եւ մօս ի քաղաքն լիւնել (3), եւ Պետրոս ի տանիսն կալ յաղօթս զվեցերորդ ժամուն. քաղցեալ, եւ կամէր ճաշակել: Եւ ի պատրաստելն նոցա՝ եղև ի վերայ նորա զարմացումն, եւ տեսանէ զերկինս բացեալ, եւ զչորեցունց տանոց կախեալ անօթ ինչ իբրեւ կտաւոյ մեծի իջեալ նստեալ ի վերայ երկրի. յորում էր անեւայն չորհոսանիք եւ սողունք երկրի եւ բոչունք երկնից (4). Եւ եղև ճայն առ նա. Արի, Պետրոս, զե՛ն եւ կեր: Եւ Պետրոս ասէ. Քաւ լիցի, Տէր, զի ոչ երբէք կերայ խառնակ ինչ եւ անսուրբ: Զայն եղև կրկին անգամ առ նա. Զոր Աստուած սրբեաց՝ զու մի՛ սլո՞ծեր: Այս եղև երկցս, եւ վերացաւ անօթն յերկինս: Եւ մինչդեռ զարմացեալ էր ընդ միտս Պետրոս՝ թէ զինչ իցէ տեսլին զոր ետես, ահա արքն առաքեալք ի Կոռնելեաց՝ հարցին զապարանիցն Սիմոնի, կացին առ դրանն, կոչեցին եւ հարցանէին, եթէ Սիմոն՝ որ կոչի Պետրոս՝ աստ մտեալ իցէ: Եւ մինչդեռ Պետրոս զմտաւ ածէր վասն տեսլեանն, ասէ Հոգին ցնա. Ահաւասիկ արք ոմանք խնդրեն զքեզ. այլ արի էջ՝ եւ երթ ընդ նոսա առանց իրիք խղճելոյ (5), զի ես առաքեցի զնոսա: Եւ իբրեւ

(2) Ինչպէս 4 և այնպէս եւ այլ բուսական անկանք երբեմն անուրի անայցական կը դուրսին, մանաւանդ երբ այն բուսական ցոյց տեսած անձն կամ իրն բոս անեւայնի որո՞ւ հանգամանք չ'ունենայ:

(3) Ուր որ միեւնոյն նախորի երկու հոլով գտնուին, եւ մին միտոյն խնդիրն լինի, յառաջ կը դուրս խնդիրն իւր նախորի, եւ ական կ'աւանդուի միտոյն (խրեւրաւորին) նախորի. ուստի այս խօսակն մէջ անհեւ եւ լեւեւ անուրի դերքայի փոխանակ յայնչի եւ է լեւեւի դուստն են:

(4) Յոգնակի տրքայի իմ երբեմն բայն յերոզ դեմ եղակի կրեայ դուրի:

(5) Հոս անուրի դերքայն իրեւ անուն գործածուած լինելով իւր ունեցած անական իրի հոլովով համաձայն դուստն է նմա:

էջ Պետրոս առ նոսա, ասէ. Ահաւասիկ եմ գոր խնդրեքն. զինչ իրք են՝ վասն որոյ եկիք: Եւ նոքա ասեն. Կոռնելիոս հարիւրապետ՝ այր արդար եւ երկիւղած յԱստուծոյ, վիայեալ յամենայն ազգէ Հրէից, հրաման առ ի հրեշտակէ սրբոյ՝ կոչել զքեզ ի տուն իւր եւ լսել բանս ի քէն: Կոչեաց զնոսա ի ներքս եւ առ իւր ազոյց: Եւ ի վաղիւ անդր յարուցեալ Պետրոս զնաց ընդ նոսա, եւ ոմանք յերբարց անտի որ ի Յոսպէ էին՝ եկին ընդ նմա: Եւ ի վաղիւ անդր մտին ի կեսարիա. եւ Կոռնելիոս մնայր նոցա. կոչեցեալ զազգատոհմն իւր եւ զվարեւոր բարեկամն:

Եւ եղև ի մտանելն Պետրոսի, ընդ առաջ եղև նմա Կոռնելիոս, անկեալ առ ոտան նորա երկիր պաղանէր: Եւ Պետրոս կանգնեաց զնա եւ ասէ. Յոտն կաց, եւ ես ինքն մարդ եմ: Եւ խօսելով ընդ նմա եմուտ ի ներքս, եւ գտանէր անդ ժողովեալ զբազումս: Եւ ասէ ցնոսա. Դուք ինքնին գիտէք՝ որպէս անանք է առն հրէի հպիլ կամ մերձեալ առ այլազգի, եւ ինձ Աստուած եցոյց՝ մի՛ զոք խառնակ կամ անսուրբ ասել ի մարդկանէ: Վասն այսորիկ եւ առանց ընդ բանս ինչ ածելոյ եկի կոչեցեալ. բայց արդ հարցանեմ, յինչ պէտս կոչեցէք զիս: Եւ Կոռնելիոս ասէ. Յառաջ քան զչորս աւուրս մինչ ցայս ժամ, (չորս օր առաջ մինչեւ այս ժամ) կայի յաղօթս յինն ժամ ի տան իմում, եւ ահա այր մի եկն եկաց առաջի իմ ի հանդերձս սպիտակս, եւ ասէ. Կոռնելիէ, լսելի եղեն աղօթք քո, եւ ողորմութիւնք քո յիշեցան առաջի Աստուծոյ: Եւ արդ յլեալ ի Յոսպէ, եւ կոչեա զՍիմոն՝ որ կոչեցեալն է Պետրոս. սա մտեալ է ի տուն Սիմոնի ուրումն խաղախորդի մերձ ի ծով. որ եկեսցէ եւ խօսեսցի ընդ քեզ: Եւ ես խկ եւ խկ յղեցի առ քեզ. դու բարեք տարեր զի եկիր. արդ ամենեքեան մեք առաջի Աստուծոյ կամք, լսել զամենայն որ հրամայեալ է քեզ ի Տեառնէ: Երաց Պետրոս զերբան իւր եւ ասէ. ճշմարտութեամբ հասեալ եմ, զի ոչ գոյ ակնառութիւն առաջի Աստուծոյ, այլ յամենայն ազգս՝ որ երկնչին ի նմանէ եւ գործէն զարդարութիւն՝ բնորոնելի է նմա (6): Զբանն առաքեաց որդւոցն իսրայելի՝ աւետարանել զխաղաղութիւն ի ձեռն Յիսուսի Քրիստոսի. սա է ամենայնի Տէր: Դուք ինքնին գիտէք զբանն, որ եղև ընդ ամենայն Հրէաստան սկսեալ ի Գալիլէէ, յետ մկրտութեանն զոր քարոզեաց Յովհաննէս. զՅիսուս որ ի նազարեթէ,

(6) Իմն. բնորոնելի է նմա այն որ երկնչի ի նմանէ եւ գործէ զարդարութիւն:

զոր օձն Աստուած Հոգւով Սրբով եւ գորութեամբ . որ շրջեցաւ բարի առնել՝ եւ բժշկել զամենայն ըմբռնեալսն ի սատանայէ , զի Աստուած էր ընդ նմա : Եւ մեք վկայեմք ամենայնի զոր արար յերկրին հրէաստանի եւ յերուսաղէմ . զոր եւ սպանին կախեալ զփայտէ . զնա Աստուած յարոյց յերրորդ աւուր , եւ ետ նմա յայտնի լինել ոչ ամենայն ժողովրդեանն , այլ մեզ վկայիցս յառաջագոյն ընտրելոցս յԱստուծոյ , որք եւ կերպք եւ արքաք ընդ նմա յետ յարութեան նորա ի մեռելոց : Եւ պատուիրեաց մեզ քարոզել ժողովրդեանն՝ եւ վկայութիւն դնել թէ նա է սահմանեալն յԱստուծոյ դատաւոր կենդանեաց եւ մեռելոց . նմա ամենայն մարգարէք վկայեն , թողութիւն մեղաց առնուլ անուամբ նորա ամենայն հաւատացելոց ի նա : Եւ մինչդեռ խօսէր Պետրոս զբանս զայս , հանգեաւ Հոգին Սուրբ ի վերայ ամենեցուն՝ որ լսէին զբանն : Զարմացան՝ որք ի քիպաւորսքնէ անի հաւատացեալք<sup>(7)</sup> եկեալ էին ընդ Պետրոսի , զի եւ ի հեթանոսս պարզեւք Հոգւոյն Սրբոյ զեղուին . քանզի լսէին ի նոցանէ խօսել լեզուս եւ մեծացուցանել զԱստուած : Յայնժամ պատասխանի ետ Պետրոս . Մի թէ զՅուրն ոք արդելով կարէ առ ի չմկրեալոց զսոսա . որք եւ զՀոգին Սուրբ ընկալան սրպէս եւ մեք : Եւ հրամայեաց նոցա մկրտել յանուն Յիսուսի Բրիտանի : Յայնժամ աղաչեցին զնա լինել անդ աւուրս ինչ :

Գործ. Ժ.

21

ՎԱՍՆ ՆՆՁԵՑԵԼՈՑ

Աղաւթել , աւրել , Իրեանել  
 Աղիսել , Բոցել , Գոցել  
 Շիրիս , Գեբեզման  
 Թալիել , սպարել

Զուգրնաց , Գեղեղ Կաւուլ Կաւուլ  
 Ի կենցաղումս , սյա Կենաց Գեղ  
 Հաւորէն , Բուր  
 Պատրուս , Իսթեմեթե

Որ կենդանեաց եւ մեռելոց ես խնամող ,  
 Եւ նորոգես զլուծեալ մարմինն իմ ի Հոգ ,  
 Որ զդժոխոց աղարտեցեր զաղխեալ նիգ

(7) Եւրոպեականն իւր յարաբերեալն յառաջ դրուած է . ուսի կարգն այսպէս .  
 Կաւուլ , Գեղեղ , Գեղեղ Կաւուլ , Ի կենցաղումս , սյա Կենաց Գեղ , Հաւորէն , Բուր , Պատրուս , Իսթեմեթե :

Եւ շիջուցեր զմահուն խայթոց զազտածիգ .  
 Որ դու ես կեանք եւ յարութիւն մահացուաց ,  
 Յոյս քաւութեան զըզջացելոց ի մեղաց .  
 Որ ի խաչին բեւեռեցար վաւրն մեր  
 Եւ զպատուական ի նմա զարիւն քո հեղեր .  
 Լուր դատաւոր արդար , եւ հայր բարեխնամ ,  
 Որ ի խորոց աստի առ քեզ տէր կարգամ :

Որ զմեղուցեալ ըզմարդն , Աստուած իմ եւ Տէր ,  
 Եւ ըզմեղոք մեռեալ մարմինն<sup>(1)</sup> յարուցեր .  
 Որ առ շիրման արտասուեցեր Ղազարու ,  
 Ի ձեռանէ թափեալ զաւարն ըզմահու ,  
 Յիշեա ըզմնօղս իմ եւ զեղբարս եւ ըզքորս ,  
 Եւ որք<sup>(2)</sup> ծընան զիս ի յերկունս հոգեւորս .  
 Եւ զնընջեցեալսն ի քեզ ուղիղ հաւատով ,  
 Որ ազգականք եւ որ ծանօթք ինձ գորով ,  
 Կէսք նախ քան զիս լըցին զընթացս կենաց ,  
 Եւ կէսք ի նայն ասպարէզ ինձ զուզընթաց :

Հաշտեաց ի ձեռնն սուրբ մարմնոյդ եւ արեան ,  
 Եւ արժանի արա գնոցա քաւութեան ,  
 Որք ինձ բարի ի կենցաղումս արարին ,  
 Եւ որք ինչ չար բստ պատրանաց բանարկուին ,  
 Ոյց ես պատժոցն եղէ թերեւս պատճառ ,  
 Հրապոյրք չարեաց կամ օրինակ զաւր<sup>(3)</sup> չար :

Յիշեա յիշեա զհաւատացեալս համօրն ,  
 Յճրոց կարգաց յորմէ ազգէ եւ իցեն .  
 Զամենեցուն յիշեա զհոգիս եւ հանգստի ,  
 Զի գործք ձեռաց են քոց եւ գինք արեան քո .  
 Զի քո խաչիգ հաւատացին յաշխարհի ,  
 Եւ յարութեանդ որ ընտրելոց քոց սրահի .  
 Զի ծնեալք ի սուրբ աւազանն շնորհիւ քո ,

(1) Երբ գոյական բառի մը նախադաս ամական իւր առջեւէն խնդիր ունենայ :  
 գոյականին նախդիրն այդ խնդրոյն վրայ կը դրուի , ինչպէս կը տեսնուի այս օրինակին մէջ :

(2) Երբեմն յարաբերալին լռելիայն իմացում ասերն , յարաբերականն անփոփոխ ալ կրնայ դրուիլ . — Այս խօսքին մէջ յարաբերականն է Գեղեղ Կաւուլ : (Բարդուսէ 6 կանոն 2 դաս) :

(3) Երբեմն յոգնակի որոշեալ կամ անորոշ խոցակականն , ինչպէս Կաւուլ Կաւուլ , եւ այս կը պատահի նաեւ նախադրութեան խնդիր երրորդ յոգնակի նախադրանաց :

Հաղորդեցան արեան փրկչիդ եւ մարմնոյ :

Որ ըզհոգիդ քո սուրբ ետուր մեզ Յիսուս ,  
Յիշեա զնոցա հաւատս ի քեզ եւ ըզյոյս :

Եւ դասեցո ի խորանի սյդր ի քում :

Ձհոգիս նոցա ընդ սուրբս ի կեանս անպարտում ,

Ընդ բազմերանս հոգեղինաց զուզապար

երգել քեզ փառս , եւ արդարոցն ընդ գումար

Որ յաւիտեան երանաւէաք անդ չգըսյդ :

Փառաւորեն զամուսն ընդ Հօր եւ Հոգւոյդ :

Չ. Մ. Հիւսմիւզեան

### ՊԱՏԵՐԱԶՄ ՅՈՎՆԱԹԱՆՈՒ ԸՆԴԴԷՍ ԲԱՔԻԴԵԱՆՅ

Այլն առնել , ծաղրել , խնամել  
Գրուս , բեր իրա անասն  
Բուն , բանալի եւ նորս զբոնս — ինչ  
Վառեալ , զեւս իրաներ  
Սպառապուս , բարեբան  
Խաղալ , յարձակել , բռնել  
Պատանգ , բրտս արտաքս  
Զօրահասոյց լինել , զբոնս ծաղրել  
Հանդերս , զարտաքս , պարտաքս

Չու , ճամբս բաներ  
Արուեսական , երբ լայնութեան զարձի  
Թափել զոգիսն ճեղքաներ  
Գար , բարձր տեղ ( սուրբաբան )  
Ակառն , բերք  
Երախ , բերան  
Խրամակարկաս առնել , պարտս պարտ  
Հոսիլ , լսել [ սուրբս քոցել  
Հրիկ առնել , երբ ծեղ , յարել

Եւ եղև յեա մահուան Յուդայի՝ բրեցին անօրէնքն շուրջ ըզ սահմանօքն իսրայելացւոց , բուսան բզիսեցին եւ բազմացան որ գործէին զանօրէնութիւն : Յաւուրան յայնտիկ եղև սով մեծ , եւ ինքնակամ գնացին մարդիկն ի նոսա , եւ աշխարհն ձեռնառու էր ի նոսա : Եւ ընտրեաց Բաքիդ արս անօրէնս , եւ կացոյց իրբեւ տեարս ի վերայ նոցա , որ քննէին եւ խնդրէին եւ ամէկն զբարեկաման Յուդայի առ Բաքիդ , եւ խնդրէին վրէժ ի նոցանէ , տառապեցուցանէին եւ սցսն տոնէին , եւ նեղէին եւ ծաղր առնէին զիսրայել , զի ոչ երբէք լեալ էր այս յսմէ հեաէ երեւեցաւ մարդարէ : Եւ ժողովեցան ամենայն բարեկամքն Յուդայի , եւ շրգան առ Յովնաթան եւ ասեւ . եղբայր քո Յուդա մեռաւ , եւ այր չիք որ նման է նմա ելանել ընդդէմ թշնամուոյ , տալ պատասխանի սյդոցիկ որ եկեալ թշնամութեամբ նեղեն զագգս մեր : Արդ զքեզ ընտրեցաք մեք ի տեղի նորա , զի եղիցիս զու իշխան ի վե-

րայ մեր , լինել մեզ առաջնորդ եւ սալ պատերազմ ընդ թշնամիս մեր : Եւ յանձն առ Յովնաթան ի ժամանակին յայնտիկ զառաջնորդութիւն , եւ համարձաւ նա փոխանակ Յուդայի եղբոր իւրոյ : Իրբեւ գիտաց Բաքիդ՝ խնդրէր սպանանել զՅովնաթան եւ զՇմաւոն , զեղբայր նորա , եւ փախեան նոքա յանապատն Թակովեայ , եւ եկին բանակեցան ի ջուր անդր լնին Ասիառ (1) : Եւ զիտեաց Բաքիդ զօրն շարաթուց , եւ եկն ինքն բանակեցաւ զօրօքն իւրովք յայնկոյս Յորդանան գետոյ : Եւ առաքեաց առ նոսա զեղբայր մի զիւր՝ զօրագլուս զօրաց բազմաց , եւ ազաչեցին զՆաբատացիս զբարեկաման իւրեանց . յանձն առնէին նոցա զկահ եւ զգրաստ եւ զամենայն ինչս որ մնացեալ էր ի բնի իւրեանց : Եւ ելին որդիքն Յամբրեայ որ ի մէջ Դամասայն էին , ըմբռնեցին զՅովհաննէս , եւ առին գնացին կահիւն հանդերձ ընդ իւրեանցն (2) : Յեա ժամանակացս սյսոցիկ ազդ եղև Յովնաթանու եւ Շմաւոնի եւ եղբարց իւրեանց , եթէ որդիքն Յամբրեայ հարսանիս արարին , եւ սուեալ ամէկն զհարսն յԱրլալթայ , զուստր միոյ ուրումն ի մեծամեծաց աւագաց Քանանացւոց անտի , մեծաւ չուով՝ անչափ հանդերձիւ : Եւ յիշեցին նոքա զՅովհաննէս զեղբայրն իւրեանց , ելին մտին նոքա ի դարան ի ծործոր լերինն . եւ ամբարձին զաչս իւրեանց , տեսին զի դայր չու մեծ եւ ամբոխ բազուս , եւ եւ փեսայն փեսաւիրօքն եւ եղբարրքն հանդերձ , եւ փողովք եւ թմբկաւ եւ սկսպէս արուեստականօք , եւ բազում վառելովք : Եւ ելին սոքա ի դարանէ աստի , սպանին զբազումս եւ բազում վիրաւորս արձակեցին , եւ զվառեալան փախստեայ արարին , եւ առին յաւարի զկահ եւ զհանդերձ , եւ զչուն աւար հարկանէին (3) . եւ դարձան հարսանիքն ի կոծ , եւ ձայն արուեստականացն՝ ի սուգ եւ յոզբս դարձաւ . եւ խնդրէին սպառսպուս զվրէժ արեան եղբօրն իւրեանց . եւ դարձան ի մարգն Յորդանան գետոյ : Իրբեւ գիտաց Բաքիդ՝ առ զօրս եւ խաղաց ի վերայ նոցա , եւ եկն եհաս յանձաւան Յորդանան գետոյ : Առէ Յովնաթան ցօրսն իւր . եկայք յարիցուք՝ մարտ դիցուք վասն ոգւոց մերոց , զի ոչ

(1) Յասուկ անուանեան բացայայտչ եղած ասեմ աս անգամ տմականի այն յառաջ կ'անցնին , ուսի եւ սովորաբար առանց համաձայնութեան ուղղական կր դրոխն , քեւ երբեմն ալ կր համաձայնին . նաեւ ետեւ ալ դրուելով երբեմն անհամաձայն կր մնան , ինչպէս կ'երեւի այս օրինակին մէջ :

(2) Իմա , ընդ իւրեանս :

(3) Պարզ կամ բարդ անունէ մը ձեւացեալ բայք հայցական հոլով սեռի խնդի կ'առնուն , եւ այդ անուն կրնայ իրեն ստորոգելի ծառայի :

է այսօր իբրեւ զերէկն եւ զեռանդն. եւ ահաւասիկ զօրք ճա-  
կատեալ են յանդիման մեր. ոչ ամուր թաքստի եւ ոչ դաշտ փա-  
խտի. եւ գետս Յորդանան չուրջ զմեօք պատեալ է. արդ ե-  
կայք ձայն բարձցուք յերկինս, յարձակեսցուք ի վերայ, թերեւս  
սպարեալիք ի ձեռաց թշնամեաց մերոց: Զբանսն ասաց, եւ անդէն  
խառնեցաւ յարձակեցաւ ՚ի վերայ Բաբելոնաց. այն ինչ լինէր զո-  
գիսն ի գիրկս իւր քափել (\*), եւ նա յետս կոյս կործանեցաւ, եւ  
հասեցան Յովնաթան եւ որ ընդ նմա էին ի դարէ անտի. անդ  
հարին կոտորեցին Բաբելոնեանք՝ ի Յուդայի գնդէ անտի արս հա-  
զար մի, եւ դարձան յերուսաղէմ: Սկսան շինել քաղաքս ամուրս  
յերկրին Հրէաստանի ամրացուցին զքաղաքն Բեթսուվրայ եւ գիւմ-  
գեթայ (\*\*) եւ կացոյց (Բաբելոն) ի նմա զօրս բազումս եւ համբարս  
յոյժ. եւ սո նա զորդիս իշխանաց երկրին ի պատանդս, եւ եղ  
գնտա յակառն երուսաղէմի ի պահեստ: Յամին հաբիւրեորդի  
սասնեորդի, (\*) յամսեանն երկրորդում, հրամայեաց Յակիմոս քա-  
կել զպարխապն սրահիցն սրբութեան ներքնոյ, եւ սկսան քակել  
զգործն մարդարէից: ի ժամանակին յայնմիկ հարաւ Յակիմոս եւ  
խախանեցան զօրձք նորս. քակեցան երախք նորս, պապանձե-  
ցաւ եւ ոչ կարէր խօսել բան մի եւ հրաման տալ վասն տան իւրոյ.  
եւ մեռաւ Յակիմոս ի ժամանակին յայնմիկ մեծաւ տանջանօք:  
Իբրեւ ետես Բաբելոն եթէ մեռաւ Յակիմոս, դարձաւ անդրէն սա  
արքայն, եւ դադարեաց երկիրն Հրէաստանի ամս երկուս: Խոր-  
հեցան անօրէնքն եւ ասեն. Ահաւաղիկ Յովնաթան եւ որ ընդ  
նմա են՝ խաղաղութեամբ նստին բնակութեամբ յանհոգս. արդ  
եկայք անցուք գիւրբիդ, եւ ըմբռնեսցէ զգոսս ամենեւին ի գի-  
շերի միում: Գնացին խորհեցան ընդ նմա. նա խաղաց գալ վաղ-  
վաղակի զօրօք բազմօք, եւ առաքեաց նա հրովարտակս գաղտ  
սո խորհրդակիցս իւր որ էին ի Հրէաստանի, զի ըմբռնեսցեն ըզ  
Յովնաթան եւ որ ընդ նմա էին, եւ ոչ կարէին: Զի ազգ եղև  
նմա բանկ (\*\*) խորհրդին, եւ կալան նոքա արս յերկրին առաջնոր-  
դաց չարեացն (\*\*) յիսուն մի, եւ անդէն խողխողեցին: Եւ խոյս

(4) Ինս, Ան Բաբելոն (Յովնաթան) զտէն է գիրք Իբր (Բաբելոն) Բաբելոն (եր  
մովնարան գիւմից պապանելու վրայ եր):  
(5) Փոխանակ բաբելոն Գաբելոն (Տես 4 կանոն ԺԳ դաս):  
(\*) 158 ամօք յառաջ քան գիրխասս.  
(6) Տես 4 կանոն Ի դաս:  
(7) Պարզելի է իստին պապետ. եւ կալան նմա յերկրին արս յիսուն մի յառաջ  
նորոց չարեացն:

ետուն Յովնաթան եւ Շմաւոն եւ որք ընդ նոսա էին ի Բեթբէս  
ի յանապատն, եւ խրամակարկատ արարին զնա, եւ ամրացուցին  
զնա: Եւ իբրեւ ետես Բաբելոն, զօրահասոյց լինէր եւ դայր պա-  
չարէր. մարտ եղեալ զԲեթբէսեաւ՝ եւ մարտնէր աւուրս բա-  
զումս, եւ ասնէին կանգնէին չուրջ զնովաւ մեքենայս: Եւ եթող  
Յովնաթան զՇմաւոն զեղբայր իւր ի քաղաքի անդ, եւ եկն եղ  
նա (8) ի գաւառ անդր: Շմաւոն եւ որ ընդ նմա էին ելին՝ հրձիգ  
արարին զմենքենայս, եւ մարտ պատերազմի եղին ընդ Բաբելոնաց.  
ի պարտութիւն մասնեցան ի նոցանէ, զի էր խորհուրդն այն եւ  
արչաւան նորին ընդունայն: Եւ բարկացաւ (Բաբելոն) սրամտու-  
թեամբ ի վերայ արանցն անօրինաց, որ խրամն ետուն նմա ար-  
չաւել յերկիր նորս. սպան նա զբազումս ի նոցանէ, եւ խորհե-  
ցաւ նա դառնալ յերկիր իւր սւտի եկեալն էր:

Ա. Մակ. Թ.

Յ Ո Վ Ա Ս

Սաղեւոյթ, ԳԼ ԳԵԳ ԳԵԳ	Բեղեկ, Երգութիւն
Անկանի ի սիւր, ԵԼԵ	Պնդել, Ի պոյ Ի պոյ
Յեզեր, Բագ, ԳԵԳ	Յաւաւս զործել, հասարակութիւն ընդ
Հասասել զնել զերեսս, ԳԵԳ Ե ԳԵԳ ԳԵ	Բարակոփ, ԳԵԳ Ի ԳԵԳ ԳԵԳ
Բարձուն, ԲԵԳ ԳԵԳ ԳԵԳ ԳԵԳ ԳԵԳ	Գործելի կամ Գործօն, ԳԵԳ ԳԵԳ ԳԵԳ

Եւ Գոթողիա մայր Ոքողիայ, ետես եթէ մեռան որդիք նորս,  
կորոյս զամենայն զաւակ թագաւորութեանն: Եւ սո Յովնաթէ՝  
զուստր արքայի Յովրամոյ քոյր Ոքողիայ՝ զՅովնա զորդի Ոքո-  
ղիայ, եւ զողջաւ զնա ի միջոյ որդւոց արքայի սպանելոցն, զնա  
եւ զգայեակ նորս ի սենեկի անկողնոյ, եւ թագոյց զնա յերե-  
սաց Գոթողիայ եւ ոչ մեռաւ: Եւ էր ընդ նմա ի տան Տեառն  
թաքուցեալ ամս վեց. եւ Գոթողիա թագաւորեալ էր ի վերայ  
երկրին: Եւ յամին եթեմբորդի առաքեաց Յովիլայէ. եւ սո ըզ  
հարիւրապետան եւ զՔոսին եւ զԻսաիմ, եւ ան զնոսա ի տուն  
Տեառն, եւ սխտեաց նոցա զուխտ Տեառն. եւ եցոյց նոցա Յո-

(8) Տես 3 կանոն Ե դաս:



վիդայէ զորդին արքայի: Եւ պատուէր ետ նոցա եւ ասէ. Այս բան է զոր ասնիցէք. պահեսձիք զպահպանութիւն տանն, եւ պատեսձիք զարքայիւ՝ այր<sup>(1)</sup> եւ գործի իւր ի ձեռին իւրում. եւ որ մտանիցէ ի սաղերովմն՝ մեռցի. եւ ինքն էր ընդ արքայի ի մտանել նորա: եւ յերանել նորա: Եւ արարին հարիւրապետքն զամենայն զոր պատուիրեաց Յովիդայէ իմաստուն. եւ ետ հարիւրապետացն զեղարդունս եւ զբովանդակ զէնն արքայի Դաւթի որ կայր ի տանն Տեառն: Եւ առաքեաց զարքայորդին, եւ եդ ի վերայ նորա զյեզեբն եւ զվիպյութիւնն, եւ թագաւորեցոյց զնա եւ օծ զնա, եւ ծափս եհար եւ ասէ. Կեցցէ արքայ:

Եւ լուաւ Գոթողիս զձայն ընթանալոյ ժողովրդեանն, եւ եմուա առ ժողովուրդն ի տունն տեառն, եւ ետես՝ եւ ահա կայր ի վերայ սեանն ըստ օրինի իւրում, եւ երգիչք եւ փուլարք շուրջ զարքայիւն, եւ ամենայն ժողովուրդք երկրին ինդային եւ փոզ հարկանէին փուլովք, պատուեաց Գոթողիս զհանդերձս իւր, աղաղակեաց եւ ասէ. Դաւ է, դաւ է: Եւ պատուէր ետ Յովիդայէ քահանայ հարիւրապետացն ոստիկանաց զօրուն եւ ասէ ցնոսա. Հանէք զդա ի ներքուստ սաղերովթայդ, եւ որ մտանիցէ զկնի գորս՝ մեռցի սրով: Քան զի ասաց քահանայն թէ մի՛ մեռցի ի տան Տեառն: Եւ արկին ձեռն ի նա (ի Գոթողիս) եւ մտին ընդ ձանապարհ մտից երկվարաց տանն արքայի, եւ մեռաւ անդ: Եւ ուխտեաց Յովիդայէ ուխտ ի մէջ Տեառն եւ ի մէջ արքայի եւ ի մէջ ժողովրդեան, լինել ի ժողովուրդ<sup>(2)</sup> Տեառն: Եւ եմուա ամենայն ժողովուրդ երկրին ի տունն Բահազու, եւ կործանեցին զնա եւ զեղանս նորա, եւ զպատկերս նորա խորատկեցին մանր<sup>(3)</sup>. եւ զՄաթման զբուրմն Բահազու սղանին յանդիման սեղանոյն:

Որդի եօթն ամաց<sup>(4)</sup> Յովաս ի թագաւորել իւրում, եւ քառասուն ամ թագաւորեաց յերուսաղէմ: Արար ուղղութիւն ասաջի Տեառն զամենայն առուս գոս<sup>(5)</sup> լուսաւորեաց զնա Յովիդայէ քահանայ, բայց ի բարձանցն ոչ մեկնեցան, եւ անդ տակաւին

(1) Եւրահանէիւր, Գ Գ. Գ Գ. Գ Գ. Գ Գ. միջակ անուանց սեղ յանախ կը գործածուի այդ, այդ այդ:  
 (2) Տեա 3 կանոն Ա. դաս:  
 (3) Տեա 2 կանոն Ա. դաս:  
 (4) Հոս Եօթն ամաց յասկացուցլի ձեռով ամակամ է արդէ բառին, փոխանակ ըսելու Եօթնամեաց:  
 (5) Փոխանակ լսելու, այդ լուսաւորեաց, իբրև ժամանակի սեպուպիսն գուցնող հայցակամ:

զոհէր ժողովուրդն, եւ արկանէր խուռնիս ի բարձունսն: Եւ ասէ Յովաս ցքահանայն. Զամենայն արձաթ սրբութեանցն մտեալ ի տուն Տեառն՝ իւրաքանչիւր ասն անցելոյ ի համարի ոգւոց (մարդահամարի մէջ անցած), եւ զամենայն արձաթ որ անկանիցի ի սիրտ մարդոյ բերել ի տուն Տեառն, առցն յիւրեանս քահանայքն, այր իւրաքանչիւր ի վաճառէ իւրեանց. եւ նոքա կազմեցեն զբեզեկ տանն Տեառն՝ յամենայն լմիք ուր գտանիցի անդ բեզեկ: Եւ եղև ի քսաներորդի եւ յերկրորդի ամի Յովասու արքայի՝ ոչ կազմեցին քահանայքն զբեզեկ տանն Տեառն: Եւ կոչեաց արքայ Յովաս զՅովիդայէ քահանայ եւ զքահանայսն՝ եւ ասէ ցնոսա. Ընդէր ոչ կազմեցէք զբեզեկ տանն Տեառն, եւ արդ մի եւս առնուցուք արձաթ յամենայն վաճառացն ձերոց, այլ ի բեզեկ տանն Տեառն սաջիք զայն: Եւ ուխտեցին քահանայքն չառնուլ արձաթ ի ժողովրդենէն, եւ ոչ կազմել զբեզեկ տանն: Եւ առ Յովիդայէ քահանայ տապանակ մի, եւ ծակեաց ծակ ի բերան նորա, եւ եդ զնա ի կողմանէ սեղանոյն Տեառն եւ ետուն քահանայքն՝ որ պահէին զգուռնն՝ զամենայն արձաթ զըսեալ ի տանն Տեառն: Եւ եղև իբրև ետես եթէ բազում է ի տապանակի անդ, ել զպրտպեան արբունի եւ քահանայն մեծ, եւ պնդեցին զարձաթն գտեալ ի տան Տեառն, եւ ետուն զարձաթն զպատրաստեալն՝ ի ձեռս գործելաց զգործս<sup>(6)</sup> կահի տանն Տեառն, եւ ետուն ցհիւսունս փայտից եւ ցլինօզս զործել ի տան Տեառն, եւ ցնկարիչս եւ ցծարտարս եւ ցքարակրփս քարանց զընել փայտ եւ քարս տաշեալս, կազմել զբեզեկ տանն Տեառն: Բայց զի մի լինիցին տանն Տեառն զրուեք արձաթիք, բեւեռք եւ սաշաք եւ փողք, ամենայն անօթ ոսկի եւ անօթ արձաթի՝ յարձաթոյ մտելոյ ի տուն Տեառն, այլ զի գործօնաց զործոյն տացն գոյն, եւ կազմեցեն գուռնն Տեառն: Եւ ոչ առնէին համար արանցն<sup>(7)</sup> յորոց ձեռս տային զարձաթն, առ զործաւորաց զործոյն, զի յաւաստ գործէին. եւ արձաթ վասն մեղաց եւ վասն յանցանաց՝ ոչ մտանէր ի տուն Տեառն, այլ քահանայիցն լինէր: Յայնժամ ել Աղայէլ արքայ Ասորոց, եւ ետ պատերազմ ընդ Գեթայ եւ առ զնա. եւ եդ Աղայէլ զերեսս իւր ելանել ի վերայ երուսաղէմի: Եւ առ Յովաս արքայ Յուդայ զամենայն զսրբու-

(6) Զգործս սեղի խնդիր է գործելոց (գործոյ) բայտամտիսն: (Բազպոսէ 6 կանոն ժԲ. դաս):  
 (7) Տեա 4 կանոն Գ. Դաս:

Թիւնսն զոր սրբեաց Յովսափատ եւ Յովրամ եւ Ոքոզիա Հարք նորա եւ Թագաւորք Յուդայ, եւ զիւր սրբութիւնսն եւ զամենայն արձաթ գտեալ ի գանձս տան Տեառն եւ ի տան Թագաւորին, եւ սուտքեաց Ազայելի արքայի Ասորոց: — Յարեան ծառայք նորա (Յովսաու) եւ եղին նմա դաւաճանութիւն, եւ Հարին զՅովսա ի տան Մատլոնայ բնակեալ ի Գաղազդ. եւ Յովազքար սրդի Յեմանութայ եւ Յեղբրութ սրդի նորա, սրտանդք ծառայք նորա, Հարին զնա եւ սպանին. եւ Թագեցին զնա ընդ Հարս իւր ի քաղաքի Դաւթի:

Կ. Թագ. ԺԱ. ԺԲ.

ԽՐԱՏԲ ՅՈՎԻԴԱՅԵԱՅ ԱՌ ՅՈՎԱՍ

Խէր արկանել, Խաւճ Դաւն զարծել, Ընեւ Բուռն, Բանուր

Քօղ, Զաճիցի, Կարուր  
Յուշի ունել, Գրտ գահել  
Պատկառ կալ, Կարուր Կրեւ

ՅՈՎԻԴԱՅԵ ԵՒ ՅՈՎԱՍ



ՅՈՎԻԴԱՅԵ

Ե՛կ իմս Յովաս (1), եկ Թագաւոր իմ առ իս:

ՅՈՎԱՍ

Ո՛վ սիրեցեալդ իմ հայր, կոչեա եթէ սիրես զիս՝ սրդի: Եթէ դանտնըս զոյս, աւալ, կորուսից, Ձի՛նչ օգնէ ինձ կրրել ըզթագ արքունի:

ՅՈՎԻԴԱՅԵ

Այ՛ս, միտկ իմ սիրելի, եւ փառք իմ: Որպէս հաճոյ քեզ թըւի, Այնպէս ըզքեզ կոչեցից, Եզէց միշտ քեզ սրդեկոչ:

(1) Սովորաբար յօդն յառակ անուանց նախագաս եզոզ ամականին վրայ կը դրուի:

ՅՈՎԱՍ

Այլ դու ընդէ՛ր արտասուես. Խէթ արտասուք քս արկանին յիս, հայր իմ:

ՅՈՎԻԴԱՅԵ

Ոչ միշտ սրդեակ իմ արտասուք բզխեն դառինք ի վշտաց:

ՅՈՎԱՍ

Ձի՛նչ ասիցէ մայր իմ սրդ. Ի տեսանելըն զիս ի ձորձս յայտասիկ:

ՅՈՎԻԴԱՅԵ

Ուրախ լիցի, զընծացէ Ի տեսանել ի քեզ սիրա՝ Արքունական ձորձոցըդ քոց համեմատ:

ՅՈՎԱՍ

Արդ զի եզէ Թագաւոր, Սիրա իմ Տերամբ լիցի դահու արժանի. Ո՛չ ի ձեռին նորա է սիրա արքայից:

ՅՈՎԻԴԱՅԵ

Այ՛ս՝ այգպէս, սրդեակ իմ, քեզ ուսուցի. եւ քաղցր է ինձ զի յիշես. Այլ եւ յաճախ սրտեհ առեալ ցուցի քեզ Որ ինչ են պարտք արքայից. Շնորհէ քեզ արդ Տէր ըզթագ, Այլ ըզնորհին իւրոյ ի քէն խընդրեացէ Յաւուր միւսմ ըզհամար: Երկիր եւ կալ ի մըտի Ըզդատատանն անաշառ՝ Որ քեզ մընայ, եւ սկըսիր նախ քում անձին հրամայել. Իղձք քո լիցին քեզ առաջին հպատակք, Ձի ժողովուրդ քո ի քեզ Տեսանիցէ Հնազանդութեան օրինակ: Պարտք քո, եւ ոչ կար, Հատի գործոց քոց լիցի, եւ առաւել քան անձին՝ (2)

(2) Նախադրութիւններէն ոմանք (որպէս, քան, իբրեւ կամ իբր) այլեւայլ նորով ինդիր կ'առնուեն ըստ տեղոյն:

Հասարակաց բարեոյն ի խնամ՝ դուն գործես .  
 Սիրեսցէ զքեզ ժողովուրդ քո որպէս Հայր ,  
 Մի՛ երկիրցէ իբր ի գոռոզ բլրաանէ (3) ,  
 Երկիրդ նոցա է ասիկար թագաւորի սահապան ,  
 Եւ ոչ բռնի նոցա ըզեր ժողովրդեան է ստանալ (4) :  
 Վարձըս բարեաց սուր եւ պատիժըս չարաց  
 Արդարապատ քրննութեամբ :  
 Յամբ ի դատեւ , եւ լեր ի գործ փութաջան .  
 Մի՛ դու ի շուրթքն չոգսքսթ վըստահիր ,  
 Սիրա նորա վաս զիւրահաւան է աւագաց ի հրատոյր ,  
 Այլ դու զխորհուրդ խոհական  
 Կալ քեզ ի գործս առաջնորդ ,  
 Չարիութիւն աջակից ,  
 Չարդարութիւն միշտ առաջի աշաց քոց ,  
 Եւ կալ զԱստուած ի սրբոյի :  
 Արա ըստ քումբդ կարի  
 Որչափ է կար մահացուի ,  
 Եւ ընկես զհոգ քո ի Տէր՝  
 Որ անօրինէ պամենայն .  
 Տայ նա բեռին համեմատ  
 Ըզգորութիւն տանելոյ ,  
 Եւ ինքն ընտրէ ի յերկրի  
 Ըզգոյաշտօնեայս իւր ի գործ :

ՅՈՎԱՍՏ

Խոստանամ քեզ , այո՛ Հայր ,  
 Յուշի ունել պամենայն ,  
 Եւ կալ պատկառ մինչ ի սպառ  
 Բնուելից կարգացս այսոցիկ :

ՅՈՎԻԴԱՅԷ

Այլ ժամ է արդ բառնալ ըզքօյ՝ որ ծածկէ  
 Ըզքեզ յաշաց Ղեւտացուոց ,  
 Մատիր արդ ել ի գահոյս ,  
 Այլ նախ անկիր երկիր պագ

(3) Նոյն կանոն ընդ վերոյն :  
 (4) Իմն , Ոչ է նոցա ստանալ բռնի գեր ժողովրդեան :

Թագաւորին թագաւորաց , որպէս ուսարդ եւ գիտես ,  
 Ի կարեւոր պահուս խնդրել առ ի նմանէ օգնութիւն :

ՅՈՎԱՍՏ

Տէր որ ածէր ի շքոյցէ զիս ի քոյ ,  
 Որ ըզտատկեր քո վեհ ի յիս դրոշմեցեր ,  
 Որ սարգեւեաց եւըս յոգունց  
 Չիս արժանի արարեր ,  
 Ուղղես ըզգործս իմ ըստ կամաց քոց սրբոց ,  
 Եւ ըզխորհուրդս իմ եւ ըզբանըս սըրբեա .  
 Եւ եթէ ոչ հաւատարիմ քեզ հանդերձեալ իցեմ կեալ  
 Շիջո ըզկեանս իմ յաղուէ ,  
 Չեւ մեղուցեալ քեզ՝ փափաքեմ մեռանել :  
 Հեղ ըզհոգի քո ի յիս ,  
 Լից երկիրդ ըզք սըրբով ,  
 Եւ ինաստուն արա զիս .  
 Վառես ըզսիրա իմ քոյով  
 Աստուածային եւանդեամբ :

Պետրոսի Մեքասրաւեսայ  
 Ի ՅՈՎԱՍՏ ԱՐԲՈՅ ՅՈՒԴԱՅԷ  
 Հանդես Բ. Տեղի Բ.  
 (Թարգ. Հ. Ե. Հիւրմիւլ)

ԵՐԵՔԻՆ ՍԵՆԵԿԱՊԱՆՔ ԴԱՐԵՇԻ

Ընտնից , բան Լորտ՝ ողջ  
 Ետեղակալ , եղբակ , եւ Կոնստանտին  
 Տեղի այգրեղի , ( Եւրոպէի եղբ )  
 Թափել ( զինուոյ ) , գրեւորեալ անցիկն

Ոգեխառնիլ , Գի Կերտ Գի հոգի ըստ  
 Սրափեցուցանել , գրեւորեալ անցիկն  
 Խօսիլ զինամեծս . Գի Գի Լորտեւ  
 Հարն , երբեք Կոնստանտին

Թագաւորն Դարեհ արար խրախուսութիւն մեծ . եւ ժողովեաց  
 զամենայն իշխանս իւր եւ զընտոծինս իւր , եւ զամենայն մեծա-  
 մեծս Մարաց , Պարսից եւ Քաղղէացուոց , եւ զամենայն նախա-  
 րարս եւ զզօրագլուխս , եւ զետեղակալս ընդ նոսա . ի կողմանցն  
 Հնդկաց մինչեւ ի կողմանս Եթովպացուոց . եւ էին նախարարք հա-  
 րիւր քսան եւ եօթն . եւ կերան եւ արբին եւ յաղեցան եւ ու-  
 թախ եղեն : Եւ յորժամ վախճան եղեւ՝ Դարեհ թագաւոր եմուտ

ի սենեակ իւր, եւ ելեալ ի գահոյս իւր ի քուն եղև: Յայնժամ երեք պատանիք որ էին սենեկապանք նորա, եւ մինչդեռ ի քուն կայր թագաւորն՝ նոքա ի ներքս ի սենեկի սպաս կալեալ եւ պահ ունէին նմա, խօսել սկսան ընդ մտեանս եւ ասեն. Եկայք իւրաքանչիւր ասացուք բան մի. եւ որ ասացէ իմաստուն եւ առաւել զօրաւոր քան զընկերս իւր՝ տացէ նմա Դարեհ թագաւոր պարգևս մեծամեծս եւ մեծ եւ անդւանի երեւեսցի քան զամենեսան. եւ ծիրանիս զգեցուցէ նմա, եւ ոսկի սպասուք արբցէ եւ կերիցէ, եւ ի վերայ ոսկեղինաց նստցի եւ ննջեացէ. եւ վարեսցէ երիւարս ոսկեսանծս. եւ խոյր բեհեղեայ թագ կապեսցէ նմա եւ մանեակ ոսկի ի պարանոցի նորա. եւ երկրորդ յաթուռն Դարեհի նստցի վասն իմաստութեան իւրոյ, եւ ազգական Դարեհի անուանեսցի: Եւ յայնժամ իւրաքանչիւր գրեալ զիւր բան, կնքեցին եւ եղին ընդ սնարս Դարեհի արքայի, եւ ասեն. Յորժամ յարիցէ՝ տացուք ցնա զգիրդ, եւ ընտրեսցէ թագաւորն եւ երեք մեծամեծք՝ իշխանք պարսից. եւ որոյ (1) բան գտցի իմաստանագոյն՝ նմա տացեն զյաղթողական պարգևս: Եւ գլուխաց առաջինն, ասէ. Յաղթող եւ զօրաւոր է քան զամենայն գինի: Եւ գրեաց երկրորդն եւ ասէ. Յաղթող եւ զօրաւոր է քան զամենայն թագաւոր: Եւ երրորդն գրեաց եւ ասէ. Յաղթող եւ զօրաւոր են քան զամենայն կանայք, եւ քան զամենայն յաղթէ ճշմարտութիւն: Եւ յորժամ զարթեալ թագաւորն, սուտալ զգիրն զոր հտուն ցնա, կարգաց. եւ սուաքեալ կոչեաց զամենայն մեծամեծս Պարսից եւ Մարաց, եւ զնախարարս եւ զսարապետս եւ զտեղակալս եւ զիշխանս: Եւ նստեալ ի սեղւոյ յայգորելի, եւ կարդացին զգիրն առաջի ամենեցուն: Եւ ասէ թագաւորն. կոչեցէք այսր զպատանիսն, եւ նոքա մեկնեսցեն զբանս իւրեանց: Եւ կոչեալ մտին առաջի, եւ ասեն ցնոսա ամենեքեան. սրտաւնցէք մեզ զգրեալսդ: Եւ սկսաւ ստել առաջինն. որ ասաց վասն զօրութեան գինեոյ, եւ ասէ այսպէս. Ո՛ արք, զի՞որդ ոչ է զօրաւոր գինի, զի ամենայն մարդիկ որ ըմբեն զնա՝ յիմարեցուցանէ զմիսսն (2), եւ զբազաւորաց եւ զսառապելոց՝ մի միսս առ-

(1) Ուր, . . . միջակ անուն կամ անական են, երբ յարաբերելու յայտնի դեմ մի չկայ ի միջի. իսկ թէ կայ՝ յարաբերական դերանուն են, այսպէս՝ այս խօսիին մէջ որո՞ւ միջակ անուն է, զի կիր քարգմանուի (արու-ար), եւ չունի յարաբերելի բառ. (2) Այս խօսիին մէջ գրեալ բառին եով լռելեայն պէտք է իմանալ որո՞ւ դերանունն, որ թէեւ աւելարարիւն՝ սակայն պատճառն պիտի ունենայ զայց արու՝ որ արդէ

նէ (3) նոյնպէս եւ զտեսուն եւ զճառայի, զմեծատանց եւ զաղքատաց. եւ զամենեցուն միտս զարձուցանէ եւ շրջէ յուրախութիւն, եւ ոչ երբէք յիշեն զտրտութիւն եւ զտխտս ինչ: Քան զի զամենեցուն սիրտս ընու զուարթութեամբ եւ մեծութեամբ, եւ ոչ յիշէ զթագաւորս կամ զիշխանս, եւ տայ խօսել զմեծամեծս. եւ յորժամ ըմպէ, ոչ յիշէ զսիրելիս եւ զեղբարս եւ զթշնամիս. եւ բազում անգամ հանեալ սուր, եւ յորժամ թափի գինին՝ ոչ յիշէ գինն զորձեաց: Ո՛վ արք, զի՞որդ ոչ է զօրաւոր գինի, որ զայս ամենայն բռնադատէ զորձել: Եւ տացեալ զայս ամենայն լքուեաց: — Եւ սկսաւ խօսել երկրորդն, որ ասաց վասն զօրութեան թագաւորի. Ո՛ արք, ոչ ապաքէն զօրացեալ են մարդիկ եւ ունին զժող եւ զցամաք եւ զամենայն ինչ որ է ի նոսա: Իսկ թագաւոր զօրացեալ տիրէ ամենայն երկրի եւ մարդկան, եւ զոր ինչ ասէ եւ հրամայէ՝ վազվազակի սանեն, եթէ հրամայէ պատերազմել ընկեր (4) ընդ ընկերի իւրում, ոչ իշխեն անցանել զբանիս. եւ եթէ սուաքէ գնոսա ի սպտերազմ ընդ թշնամիս, երթեալ վազվազակի զորձեն մենքենայս եւ լերինս եւ սարիսպս եւ աշտարակս, սպանանեն եւ մեռանին, եւ զհրամանաւ թագաւորին ոչ կարեն անցանել. եւ եթէ յաղթեսցեն՝ զամենայն բարութիւնս բերեն թագաւորին: Եւ ոչ միայն զօրական սպտերազմօղք, այլ եւ մշակք որ զորձեն զերկիր, յորժամ սերմանեն եւ հնձեն, զարդիւնս իւրեանց բերեն թագաւորին, եւ հարկահանք զարձեալ բռնադատեալ զաշխարհ՝ հանեն հարկս թագաւորի: Եւ թագաւոր միայն զօրացեալ իշխան է ի վերայ ամենայնի. եւ եթէ հրամայէ սպանանել՝ սպանանեն, եւ եթէ կեցուցանել՝ կեցուցանեն, եւ եթէ շինել՝ շինեն, եւ եթէ քակել՝ քակեն, եւ եթէ տնկել՝ տնկեն, եւ ամենայն սշխարհ թագաւորի զօրութեան եւ հրամանի լսեն. եւ ինքն արքայ գինն եւ կամի զորձէ, եւ ինքն ի հանգստեան կայ, բազմի, սուտէ, ըմպէ եւ ի քուն մտանէ. եւ այլք ամենեքեան շուրջ պահեն զնա, եւ հրամանի նորա անսան. եւ ոչ իշխեն ըստ կամս իւրեանց երթալ սուրք եւ կամ զորձել, եւ ոչ իշխեն

բառն պէտք է սեռական դրուի. — վասն զի երբ դերանուն բառ մը աւելորդ դրուի զոչականէ մը ետեւ, այն ասէն բուն խնդիրն երոյ զոչականն երբեմն ուղղական կը դրուի, եւ աւելորդ դերանունն կամ համագոր բառն՝ զոչականին պահանջամ հոլովն կ'առնու: (Քաղցաւէ 2 կանոն Ժ. դասին)  
 (3) Ինտ. Չմիսս բազաւորաց եւ զմիսս սառապելոց մի (միսս) առ նի: (4) Տես 5 կանոն Է դաս:

րաւոր է թագաւոր, որոյ բան հրամանի իւրոյ (4) այսչափ զօրացեալ իշխէ ամենեցունց: Եւ զայս ասացեալ լռեաց: — Եւ երրորդն որ ասաց վասն զօրութեան կանանց եւ վասն ճշմարտութեան, այս է Զորոքարել. սկսաւ խօսել եւ ասէ. Ո՛ր արք, եթէ մեծ է թագաւոր եւ կամ այլ բազում մարդիկ, եւ կամ զօրաւոր է գինի, ո՞նչ է որ յաղթեալ ունի եւ տիրէ ի վերայ ամենեցուն: Ո՞չ սպաքէն կանայք: Քանզի կանայք են որ ծնանին զթագաւորս. եւ ամենայն մարդիկ որ տիրեն ծովու եւ ցամաքի՝ ի նոցանէ ծնան եւ կանայք ծնան եւ սնուցին զնախս որ անկեն զայգիս՝ ուստի լինի գինի. եւ նոքա են որ առնեն զհանդերձս արանց, եւ նոքօք զարդարին եւ փառաւորին մարդիկ, եւ ոչ է հնար ասանց նոցա լինել մարդկան: Եւ թէ ժողովեացեն զսոկի եւ զարծաթ եւ զամենայն բարութիւնս. եւ տեսեալ կին մի գեղեցիկ՝ զարծեալ ի նա եւ բերանարաց եղեալ հային ընդ նա. եւ ամենայն կամօք իւրեանց սիրեն զնա առաւել քան զսոկի եւ քան զարծաթ եւ քան զամենայն բարութիւնս. եւ թողեալ զհայր եւ զմայր իւր՝ որ ծրնան եւ սնուցին զնա՝ եւ զաշխարհ իւր, եւ երթայ զհետ կնոջ իւրոյ, եւ այնպէս միացեալ ոգեխառնի ընդ նա, մինչեւ ոչ յիշէ զհայր իւր եւ ոչ զմայր եւ ոչ զաշխարհ: Եւ յայտնանէ արժան է ձեզ գիտել թէ տիրեն ի վերայ ձեր կանայք ձեր, զի զամենայն ինչ զոր գործէք եւ ածխաթիֆ (5), բերէք եւ տոյք ցկանայս ձեր: Եւ առեալ առն զսուր իւր՝ գնայ ի ճանապարհ հեռի, եւ եթէ չահի ինչ, կամ աւագակէ եւ զողանայ, եւ կամ ընդ ծով եւ ընդ գետս նաւէ, եւ գազանաց սրտահէ եւ ընդ խաւարուս գնայ, եւ յորժամ զողանայ եւ յախշաակէ եւ ընդ ամենայն վիշտս անցանէ, զայ բերէ զամենայն վաստակսն առ կին իւր. քան զի առաւել սիրէ մարդ զկին իւր քան զհայր իւր եւ զմայր իւր: Եւ բազումք յիմարեցան ի մտաց իւրեանց եւ վասն կանանց իւրեանց անկան ի ծառայութիւն, եւ բազումք ի կորուստ մասնեցան, եւ մեռան եւ սպանին, եւ սխալեալ անկան ի մեծամեծ մեղս վասն

(4) Սագական, էական եւ երբմն ցուցական դերանուանց աւելադրութիւնն յանախ կը պատահի յարաբերական դերանուան հոգ՝ յեսաղաս եւ սովորաբար համաձայն դուրեղով նմա:

(5) Ինչպէս ներգործական բայեր երբմն չեզոք միսք ցուցնելով իրենց հայցական հոլովն յայլ հոլով կը փոխեն, այսպէս եւ բնօրինակաւ չեզոք բայեր ներգործականի նշանակութեամբ հայցական ինզիր կ'առնուն փոխանակ այլեւայլ հոլովից, ինչպէս է այս խօսքին մէջ — քանզի բայն:

կանանց: Եւ այժմ՝ ոչ հաւատայք ինձ. ո՞նչ մեծ թագաւորդ անձնիշխան է ինքն, եւ ամենայն ոք ի մարդկանէ ոչ իշխէ մերձեալ ի դա: Տեսանէի ես զլուստար հարձի թագաւորի, զի նստէր ընդ աջմէ թագաւորիդ. եւ առեալ զթագն ի գլխոյ զորս՝ դնէր ի գլուխ իւրում. եւ ամեալ ապտակ թագաւորիդ. եւ առ այս թագաւորդ ոչ ինչ ցատնայր. այլ բացեալ զբերան իւր հայէր ընդ դէմ նորա, եւ եթէ ծիծաղէր՝ ծիծաղէր ընդդէմ նորա, եւ եթէ տրտմէր՝ թագաւորդ ողորքէր մինչեւ սթափեցուցէ զնա: Արդ, ո՞ր արք, զիմորդ ոչ են զօրաւոր կանայք՝ որ զայս ամենայն առնեն: Եւ յայնժամ թագաւորն եւ մեծամեծք նորա սկսան հայել այր ընդ ընկեր իւր: Եւ սկսաւ խօսել Զորոքարել վասն ճշմարտութեան եւ ասէ. Ո՛ր արք, ո՞չ սպաքէն զօրաւոր են կանայք. մեծ է երկիր, բարձր են երկինք, եւ երազընթաց է արեգակն. վասն զի ունի տրշուանս ընդ կամարածեւ խորանն երկնից, եւ զարծեալ վաղվաղակի սլացեալ հասանէ ի տեղի իւր ի միում աւուր: Ո՞չ սպաքէն մեծ է այն՝ որ զայս ամենայն արար: Արդարեւ ճշմարտութիւն մեծ եւ զօրաւոր է քան զամենեւեան. ամենայն երկիր սպառնի ի ճշմարտութիւնն, եւ երկինք օրհնեն զճշմարտութիւն, եւ ամենայն գործք շարժին եւ զնոցան աւաջի նորա, եւ ոչ է ի ճշմարտութեան անիրաւութիւն եւ ոչ մի (6): Անիրաւ է գինի, անիրաւ է թագաւոր, անիրաւ են կանայք, անիրաւ են եւ ամենայն որդիք մարդկան, անիրաւ են եւ ամենայն գործք նոցա, եւ ոչ գոյ ի նոսա ճշմարտութիւն, եւ յանիրաւութեան իւրեանց կորնչին: Իսկ ճշմարտութիւն կայ եւ մնայ եւ զօրաւոր է յաւիտեանս. եւ կենդանի է եւ ունի իշխանութիւն նորա յաւիտեանս յաւիտենից, եւ ոչ գոյ ի նմա ակնառութիւն, եւ ոչ երբէք փոփոխի. այլ իրաւունս առնէ. եւ մերժեալ է ի նմանէ անիրաւութիւն եւ շարժութիւն. եւ ամենայն գործք ճշմարտութեան հաճոյ են ամենեցուն, եւ ոչ գոյ ի դատաստանի նորա անիրաւութիւն. քանզի ճշմարտութիւն է զօրութիւն թագաւորաց եւ իշխանութիւն եւ մեծութիւն, եւ է օրհնեալ Տէր Աստուած ճշմարտութեան: Եւ ասացեալ զայս՝ լռեաց ի խօսելոյն: Եւ ամենայն ժողովն յայնժամ մեծամայն աղաղակեցին եւ առնն. Մեծ է ճշմարտութիւն եւ յաղթող եւ զօրաւոր:

Ա. Եզր. Գ. Գ.

(6) Տես 7 կանոն Գ. դաս:

### ՄԱՀ ՍԻՍԱՐԱՅ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ԴԵՐՈՎՐԱՅ

Փեղկ, վրտե վարդայր կամ քել  
 Ծամկիխ, ( քուլտ Բուլու )  
 Ուուն, ( քեպի )  
 Մապիւրմիսն, յոժարութեան, կոժ  
 Կամակոր, ծառ  
 Փարազուն, հարթեր, քիտեր  
 Գէտ ակն ունել, աւել քիտեանայել, սպանել  
 Խուզարկու, քանու, քիտու  
 Խոտորիլ, քարան ( ստիտ )

Նգուրիսն, քանութեան, ստիտ  
 Կարգեալ, էլեան  
 Կարթալիսոր, քիտեր կարտ  
 Կերուրիս, քեպիտեր  
 Գալխուրան, կոժ, պարթ կոժ  
 Կարոտ, քիտեանայել քիտ  
 Կեղու, ( կար. ) եղել, կորտել, էլեալ  
 Կապուտ, կարտու  
 Բաւիսն, քանութեան, էլեալ

Ազգ եղեւ Սիսարայ թէ ել Բարակ որդի Արինէեմայ ի լեռան թարովր. եւ գումարեաց Սիսարա գամենայն կառու իւր, ինն հարիւր կառու երկաթեղէնս, եւ գամենայն գորն որ ընդ իւր յԱրիսովթայ ազգաց՝ ի հեղեղացն Կիսունի (1) : Եւ սակ Դերովրայ ցնարակ. Արի, զի այս օր է՝ յորում մասնեաց Տէր զՍիսարա ի ձեռն քո. զի ահա Տէր է առաջի քո : Եւ էջ Բարակ ի լեռնէն թարովրայ, եւ սասն հազար արանց (2) զհետ նորա, եւ գարհուրեցոյց Տէր զՍիսարա, եւ գամենայն կառու նորա եւ գամենայն բանակս նորա՝ սրով սուսերի սաւալի Բարակայ : Եւ էջ Սիսարա ի կառաց իւրոց, եւ փախեաւ հեախոտս. եւ Բարակ զհետ մրտեալ երթայր զինի կառացն, եւ զհետ բանակին մինչեւ յանտան սզգաց, եւ անկաւ ամենայն բանակն Սիսարայ սրով սուսերի, եւ ոչ մնաց եւ ոչ մի : Եւ Սիսարա մեկնեցաւ գնաց հեախոտս ի խորանն Յայելի կնոջ Բարերայ կինեցոյ, քանզի խաղաղութիւն էր ի մէջ Յարինայ արքայի Ասովրայ եւ ի մէջ տանն Բարերայ կինեցոյ : Եւ ել Յայել ընդ առաջ Սիսարայ եւ սակ ցնա. իրտորեաց առ իս, տէր իմ, խոտորեաց, եւ մի՛ երկնչիր : Եւ խոտորեաց առ նմա ի խորանն, եւ ծածկեաց զնա ընդ փեղկիւք նորա : Եւ սակ ցնա Սիսարա. Արքո ինձ սակաւ մի ջուր՝ զի ծարաւի եմ :

Եւ երաց զտիկ կաթինն եւ արբոյց նմա. եւ ծածկեաց զերեսս նորա : Եւ սակ ցնա Սիսարա. Կաց դու առ դրան խորանիդ, եւ եղիցի՝ թէ եկեացէ որ առ քեզ եւ հարցցէ եւ ասացէ որ ցքեզ, եթէ է՞ որ այդր այր, ասացես՝ թէ ոչ է : Եւ ծածկեաց զնա ընդ փեղկիւքն նորա, եւ ա՛ռ Յայել կին Բարերայ զցից խորանին, եւ կալաւ զուռնն ի ձեռին իւրում, եւ եմուտ մեղմով առ նա, եւ բախեաց զցիցն ընդ ծամելիս նորա եւ վարսեաց ընդ գեախինն, եւ նա տապալեցաւ ի մէջ ոտից նորա եւ եհան զոգի : Եւ ահա Բարակ անդեալ կայր զհետ Սիսարայի, եւ ել Յայել ընդ առաջ նորա եւ սակ ցնա. Եկ այսր եւ ցուցից քեզ զայնն զոր դու խնդրես : Եւ եմուտ՝ առ նա. եւ ահա Սիսարա կայր անկեալ մեռեալ, եւ ցիցն ի ծամելոյ նորա : Եւ կորացոյց տէր Աստուած յաւուր յայնմիկ զՅարին արքայ Գանանացոց առաջի որդւոցն իսրայելի : Եւ ձեռն որդւոցն իսրայելի երթալով երթայր խոտացեալ ի վերայ Յարինայ արքային Գանանացոց՝ մինչեւ սատակեցան : —

Եւ օրհնեաց Դերովրա եւ Բարակ որդի Արինէեմայ յաւուր յայնմիկ, եւ սակն. ի սկսանել զօրավարացն իսրայելի՝ մտադիւրութեամբ ժողովրդեանն օրհնեցէք զՏէր : Լուարուք թագաւորք եւ ունկնդիր լերուք նախարարք. ես Տեառն երդեցից եւ սաղմոս ասացից Աստուծոյ իսրայելի : Տէր, յեւանել քոյ ի Սէիրայ եւ ի չուել քում յանդատանացն Եղովմայ՝ երկիր չարժեցաւ եւ երկիրք խոովեցան, եւ ամպք ցողեցին ջուր. լերինք չարժեցան յերեսաց Տեառն Երովայ Սինայի. յերեսաց տեառն Աստուծոյ իսրայելի : Յաւուրցն Սամեզարայ որդւոյ Անաթայ ցաւուրս Յայելի պահասեցին թագաւորք, եւ գնացին ընդ չաւիղս, գնացին ընդ ճանապարհս կամակորս : Պակասեցին փարազուք բնակեալք ի մէջ իսրայելի՝ պակասեցին, մինչեւ յարեաւ Դերովրա, մինչեւ յարեաւ մայր իսրայելի : Յանկացան իբեւ զարեղէն ցկանակի (4) սատուածոց օտարաց սնտուոց. յայնժամ պատերազմեցան քաղաք իքիսանաց, ծածկութեամբ նորոց գեղարդանց, քառասուն հազար այր (5) ի մէջ իսրայելի : Սիրտ իմ ի վերայ կարգելոցն իսրայելի :

(4) Տես (2 կանոն ԽԳ դաս) :  
 (5) Քառասուն հազար այր իբեւ քաղաքայից է քաղաք էլիսանց ին՝ զոր կրնամք իմանալ իբեւ էլեանս քաղաքացն. վասն զի երբեմն յասկացեալն յասկացուցին սեռական հոլովովն կը դուրի, եւ յասկացուցին ալ յասկացելոյն յասուկ հոլովն կ'առնու : Օրինակի համար. կ'րսեմ, քանչո՞ք է բերանց, փոխանակ քսելու, բերանքս յանցանոց. — անորոցք չեւոք, փոխանակ քսելու, անորոքք չեւոցք, եւլլն :

(1) Հոս գորութեամբ կ'իմացուի քաղաքաց քայն :  
 (2) Տես 2 կանոն Բ. դաս :

զօրաւորք ժողովրդեանն օրհնեցէք զՏէր: Հեծեալք յերկվարս ի միջօրէի, եւ սպիտակաց, երթեալք յատեանս ատենակալաց: Տուք ձայն բարբառոյ նուագածուաց ի մէջ ցնծացելոց. անդ տացեն արդարութիւն Տեառն. զարդարութիւն զօրացոյց ի մէջ իսրայելի. յայնժամ էջ ի քաղաքս ժողովուրդ Տեառն: Զարթիր զարթիր, Դեբովրա, զարթո զբիւրաւորս Հանդերձ ժողովրդեամբ. զարթիր զարթիր խօսեաց երգովք: Զօրացեալ յարիցես Բարակ. գերեսցես զգերութիւն քո՝ որդի Աբինէմայ: Յայնժամ մեծացաւ զօրութիւն նորա: Տէր ընկրկեաց ինն՝ զզօրագոյնսն քան զիս: Ժողովուրդ Եփրեմայ պատժեաց զնոսա ի հովիտսն. եղբայր քո Բենիամին՝ քոյին ժողովուրդ: Յինն ի Մաքիբ իջին խուզարկուք, եւ ի Զարուղոնէ զօրացուցիչք՝ դաւազանաւ պատմութեան զպրի: Եւ զօրավարք իսաքարու ընդ Դեբովրայ եւ ընդ Բարակայ. եւ ապա Բարակ ի հովիտսն տարածեաց զոտս իւր. ի բաժինս Թուրենի մեծամեծ հեզուքիւնք՝ ursi ('): Ընդէ՛ր նստիցին ի մէջ Մոսփաթեմայ, լսել զշաչիւնս տագնապողաց, անցանել ի կողմն Թուրենի: Մեծամեծ յարուցեալ կան հետազօտութիւնք սրտից: Գաղ յայնկոյս Յորդանանու բնակեաց. եւ Դան՝ ընդէ՛ր բնաւ պանդխտիցիս ի նաւս. Ասեր բնակեաց առ ծովեզերք ծովուց, եւ ի կիրճս նորա բնակեացէ: Զարուղոն՝ ժողովուրդ անձնանախատ ի մահ, եւ Նեփթաղիմ ի բարձունս ազարակի: Հասին թագաւորք եւ ճակատեցան. յայնժամ տագնապեցան թագաւորք Քանանացւոց ի Թանաք ի վերայ ջրոց Մակեդղովայ: Զագահութիւն արծաթոյ ես ոչ առի: Յերկնից ճակատեցան աստեղք յիւրաքանչիւր յօրինուածոց, ետուն պատերազմ ընդ Սիւարայ: Հեղեղատն կիսոնի մերժեաց զնոսա, հեղեղատն կաղեսիմայ, հեղեղատն կիսոնի: կոխեացէ զնոսա անձն իմ, ոտք իմ զօրացի զօրութեամբ: Յայնժամ կարթակոտորք եղեն դարչապարք երկվարաց Մաղդարովթայ, եւ հարթեսցեն դարչապարք իմ զհպարտութիւնս զարհուրանաց նոցա: Նգովեցէք զՄարովզ, ասէ Հրեշտակն Տեառն, անիծանելով անիծեցէք զբնակիչս նորա, զի ոչ եկին յօղնականութիւն Տեառն. օգնական Տէր ի մէջ նահասակաց հօրն (8): Օրհնեալ լիցի ի կանանց Յայել կին Քարբեայ կիսեցւոյ, օրհնեցի ի կանանց (9) ի խորանի

(6) Տես (6 կանոն ԺԶ. դաս.)  
 (7) Զեղչեալ է հոս եղև բայն:  
 (8) Կարգա. Օգնական է Տէր՝ հօրն ի մէջ նահասակաց:  
 (9) Տես (6 կանոն Դ. դաս.)

իւրում: Զուր խնդրեաց, եւ ետ կաթն դաշխուրանաւ զօրաւորաց. մատոյց կողի: Զձեռն իւր ձախ ձգեաց ի ցիցն, եւ զաջ իւր ի սպառսպուռ ջախջախանս անպիտանացուցանել, եւ վախճանեցոյց զՍիւարա. վարսեաց ընդ ծամելիս նորա եւ անցոյց ցից ընդ զլուխ նորա եւ սատակեաց: Ի մէջ ստից նորա անկաւ ծանրացեալ, եւ նիրհեցոյց ի մէջ ծնդաց իւրոց, յորում կորացաւ՝ մինչեւ զգեանեցաւ, անդ անկաւ չուսուականն: Մայրն Սիւարայ հայեցեալ դէտ ակն ունէր ի վանդակապատ սլատուհանէն, քանզի տեսանէր զգարձեալսն ի Սիւարայ, վասնզի յետնեցան կառք նորա ի գալոյ: — Ընդէ՛ր յամեցին հետք կառայ նորա: — Կանայք իմաստունք իշխանաց նոցա ետուն անդրէն պատասխանի նմա եւ ասն. եւ ինքնին անձամբ անձին տունէր պատասխանի. Ոչ գտանիցեն զնա աւարաբաւիք, առնել սէր բարեկամաց ի զլուխ արանց: Եւ եգել զաղիս նորա կապուտ երանգոյն Սիւարայ, կապուտ երանգոյն գոյնագոյն նկարուց, նարօտ պէսպէս նկարուց, այն էր պարանոցին նորա կապուտ: Այսպէս կորիցեն ամենայն թշնամիք քո Տէր, եւ որք սիրիցենն զնա՝ իբրեւ զելս արեգական ի զօրութեան նորա:

Պատ Գ.—Ե.

ՆՈՐԻՆ. ԴԵԲՈՎՐԱՅ  
 ՆՈՅՆ ՕՐՂՆՈՒԹԻՒՆ  
 ( Ի չափս հայկական )

Արսնէս, հասարակաց Գաճեայ	Խոսնապոմն, ասորի վախ իբար անցած
Շկանել, Եփրատի Եփրայն Յայն հանել	Վախ, անբարեք, գաւ ի վայր տել
Կապարն, Եփրայն ամա	Այս արձակել, աչք տիւր
Նուս, Կանախ (Յիւս, Ելա)	Ճեպցեսայ, շար Կանախ, Կանախուց
Փլուզանել, Գլուզանել	Գիլ, անայն Կանախ
Սալամբակ, Կարծի Ելախնէ ասեցու (Տէ)	Եկուոր, Ելա

Ի սկսանել զօրավարացն իսրայելի յաղթականաց Զինուորեալք ի պատերազմըն տեսան ըզ Տէր օրհնեցէք. ես Տեառն երգեցից, երգս Աստուծոյ իսրայելի: Տէր յեղանել քո լուսեղէն սեամբ ի լեբանցըն Սէիրայ, եւ ի չուել վառաց քոց ընդ անդաստանս իդումական, երկիր շարժեցաւ, երկինք յոտին քում խռովեցան. Ամաք ցօղեցին ջուր յերեսաց տեսուն երովայ Սինայի,

Յերեսաց տեսան իսրայելի լերինք սարսեալ դըլըրդեցան :  
 Յաւուրց Սամեգարայ մինչեւ ցաւուրըս Յայելի  
 Կուրացան արահեոք եղեն անկոխ յերթեւեկաց .  
 Ոչ եւս իշխանք անցին ընդ այն , գնացին ընդ հետըս կամակորս ,  
 Պակասեցին փարազունք բնակեալք ի մէջ իսրայելի ,  
 Պակասեցին մինչեւ յարեաւ Դերովրա մայր իսրայելի .  
 Յոր վայր ըզհետ եղեն սնտեաց դից , աստուածոց օտարութեոց ,  
 Փոխանակեալ ըզհաց սուրբ ընդ գարեղէն նըկանակի ,  
 Ձէր ոչ ուրու ի քառից բիւրուց արանց իսրայելի  
 Երկանեալ նեա ի կապարճից , շողեալ (1) սուսեր ի պատենէ :  
 Յընծացէ սիրտ իմ ի վերայ զօրավարացն իսրայելի .  
 Զօրաւորք ժողովրդեանն Տեառն ըզՏէր օրհնեցէք :  
 Ի լուսափայլ հեծեալքդ ի նուս երիվարաց , խօսեցարձեք .  
 Տուք ձայներթեալքդ ընդ արահետս եւ որ բազմեալքդ էք ի յատեան ,  
 Ո՛ւր թընամեաց բեկան կառք , ո՛ւր ընկլան զօրք նոցա յալիս :  
 Անդ պատմեսցի վրէժխնդրութիւն Տեառն ի վերայ ամբարըշտաց ,  
 Անդանօր սղորմութիւն տեսան ընդ որեարն իսրայելի :  
 Յայնժամ էջ անդր ի քաղաքըս ժողովուրդ Տեառն յաղթական ,  
 Եւ ի դրունս ապարանից աթուք արկան , եղաւ ատեան :  
 Զարթիր զարթիր Դերովրա , ըզբիւրաւորս ընդ քեզ զարթո՛ .  
 Զարթիր հանդերձ ժողովրդեամբ քով , առ քընար , խօսեաց երգով ,  
 Արի՛ Բարակ զօրացիր , արի՛ գաւաղդ Արեներմեան ,  
 Հնր պատերազմ , առ աւար , ի ձեռակապս արկ ըզգերին :  
 Յայնժամ յաղթեաց զօրացաւ , տէր ընդ նմա ետ պատերազմ .  
 Հըզօրագոյնք ընկըրկեցան , տէր ընկըրկեաց ինձ ըզնոսա .  
 Յայնժամ զարթեաւ Եփրեմ ելոյժ վրէժ ի հովիտըս անդ ի նոցունց .  
 Յայնժամ փըլոյզ ըզքեզ իսպառ Բենիամին , ո՛ Սամալիկ .  
 Իջին յինէն ի Մաքիր ըսպառագէնք խուզարկուք ,  
 Յըզեաց որեար Զարուղոն , յըզեաց իշխանս անդր ի խրախոյս .  
 Զօրավարք Իսաքարու գումարեցան ընդ Դերովրայ ,  
 Դիմեցին ընդ Բարսակայ իբր ի վախից գահաձլիժեալ :  
 Պառակտեցաւ Ռուբէն , լըքան սիրտք ի բաժինըս Ռուբէնի .  
 Ընդէր նըստիս ի Մոսփաթիմ , ո՛հ , ըզշաչիւն լըսել զինուց .  
 Մեծամեծք ի քեզ տագնապք գնայցեն ընդ սիրտըս հետազօրք :  
 Անդ յայնկոյս Յորդանանու բնակէ եւ Գազ անկարեկիր .

(1) Իմա՛ . Ձեր զիսնեալ ուրու . . . կամ շողեալ . . . ելլն :

Եւ դու ընդէ՛ր , Դան , ընդ ծով յածիս նաւուք սահեալ նրժդեճ .  
 Հիմ եւ Ասեր զէնընկէց բազմեալ (2) ի գրահս առ ծովեզեր ,  
 Մինչ Զաբուղոն մինչ նեփթաղիմ անձնանախատ դիմեն ի մահ :  
 Հասին թագաւորք , ճակատեցան ի պատերազմ .  
 Իշխանք Քանանու հասին ետուն մարտ ի թանաք .  
 Հարան խորտակեցան ի վերայ ջուրց Մակեդոնայ :  
 Աստեղք ի վերուստ ընդդէմ նոցա ճակատեցան ,  
 Յիւրաքանչիւր յօրինուածոց տալ պատերազմ ընդ Սիսարայ :  
 Հեղեղատըն Կիսոնի ըզդիակոյս նոցին մերժեաց ,  
 Ալիք Կադեսիմայ եւ հեղեղատըն Կիսոնի :  
 Կոխեսցէ անձն իմ ըզնոսա , ոչ արձակեալ աչս ի յաւար :  
 Կարթակոտորք եղեն յայնժամ ի ձեպըշտապ խուճապմանէն  
 Գարշապարք սալաւըմբակ երիվարաց Մադգարովայ .  
 Կարկեաց (3) իբրիսինջ նոցին եւ խրոխտ պարանոցին հըզարտութիւն :  
 Նըզովեցէք ըզՄարովզ , ազգէ հրեշտակն յերկնից պատգամ .  
 Նըզովեցէք , եւ բնակչաց նորին անէժըս կարդացէք ,  
 Փոխանակ զի հրաժարեաց զինուորեկ տեսան ի յօգնութիւն ,  
 Զի չէառ յանձն ախոյեկաց Հըզօրին գալ նպաստ ի կոխ (4) :  
 Օրհնեալ Յայել ի կանայս , կին Կինեցուոյն Քարերայ ,  
 Օրհնեցի նա ի կանանց հանդերձ իւրովըն խորանաւ ,  
 Արիւթեան նորա խորանն այն ասպարէզ արձանացեալ .  
 Զուր խընդրեաց , եւ ինքըն կաթն առեալ մատոյց փրփրատեսակ ,  
 Դաշխուրանաւ զօրաւորաց անուշահամ մատոյց կոզի .  
 Ըզձեռն իւր ձախ ձըգեաց ի ցից , եւ զաջ ի յուռն անդր ի հարուած  
 Անցոյց ի գլուխ նորա ցից , ընդ ծամելիս նորին վարսեաց ,  
 Ի սպառըսպուռ ջախջախանս հար սատակեաց ըզՍիսարա .  
 Իմէջ ոտից նորա անկաւ նիրհեալ ի քուն յաւերժական ,  
 Ի մէջ ծընգացն՝ ուր կորացաւ , անդ անկաւ հէքն եւ չուռուական :  
 Յայնժամ մայրըն Սիսարայ վանդակապաս պատուհանէն (5)

(2) Փոխանակ բսելու , բ-դե-լ է-ս :

(3) Փոխանակ բսելու , բ-դե-ս- : Ի՞ վերջաւորոյ ներգործականներէն ոմանք եւ ոչ սակաւ ի չեզոք բայից , իւրեց կրաւորական է՛ր երբեմն է՛ի փոխելով , իբրեւ ներգործական կը խոնարհին :

(4) Կը բարեգնանուի , (որովհետեւ յանձն չաւառ կուույ մէջ նպաստել Հզօրին (Տիրոջ) պատերազմողներուն :

(5) Տաղաչափական ազատութեամբ բացառականի է նախորին զեղչուած է , աւանց այն պատճառին՝ զոր մասամբ ցոյց տուած եմք . (Տես 4 կանոն ժԳ. դաս) :



Հայեցեալ դէտակն ունէր եկաւորացն ի Սիսարայ .  
 Ձի՞ յեանեցան կառք նորա . զի՞ կասեցին անիւքն ի գլի,  
 Եւ հեռք կառաց նորա ընդէ՞ր խոկ յամէին դեռ ես ի գալ:  
 Տիկնայք իմաստունք պատասխանի ետուն անդրէն,  
 Եւ ինքնին անձա՞մբ անձին կըրկնէր նա գնոյն պատասխանի .  
 Ոչ գտանիցեն աւարարաշխք ըզնա ի սիր բարեկամաց:  
 Եւ գեղուիկ ի յուշ աղիք իւր ընդ կապուսքն (6) Սիսարայ,  
 Ընդ կապուտ երանգոց երփնազեղիցըն նրկարուց,  
 Նարօտ սէսպէս նրկարուց, այն էր ուլան նորին կապուտ:  
 Այսպէս կորիցեն, Տէր, թըշնամիք քո առհասարակ .  
 Իսկ որ ըզքեզըն սիրեն, լուսափայլեն արփիահարաշ,  
 Որպէս ընդ այգն յածել ըզախ ծագէ արփին ճաճանչագեղ:

(Տաղաչափեալ)

Խ Զ. Ե. Հիւրմիւզեան.

### ՈՒՆԱՅՆՈՒԹԻՒՆ ՈՒՆԱՅՆՈՒԹԵԱՆՑ

նդ արեգակամբ, երբեք մտայ  
 Յանախել շարդաւանել  
 Արար, սանեցոյց արեղն, ինչ  
 Գուտան, երբող մարդ իմ կն  
 Ձբօսանք, ծագէ, անխնայեան

Բան, երբ որ (պահ)  
 Վիժած, անցողաց արդ  
 Ծփանք, հոգ, մարդաստ  
 Ծուղակ, արագայն  
 Իշխան, ազատ, իբրդ

Ունայնութիւն ունայնութեանց, սասց ժողովօղն, ունայնութիւն  
 ունայնութեանց՝ ամենայն ինչ ընդունայն է: Ձինչ աւելի է մար-  
 դոյ յամենայն վաստակս իւր զոր արժանի (1) ընդ արեգակամբ:  
 Ազգ երթայ եւ ազգ զայ՝ եւ երկիրս յաւիտեանն կայ: Ծագէ ա-  
 րեգակն, եւ մտանէ արեգակն եւ ի անդի իւր ձգի: Ի ծագել իւ-  
 րում ելանէ ընդ հարաւ, եւ պատի ընդ հիւսիսիւ, պատեղով  
 պատի. գնա հոշմ, եւ ի շրջանս իւր դառնայ հողմ: Ամենայն  
 ուղիք ի ծով գնան, եւ ծով ոչ լնու. ի անդի յոր ուղիք գնան՝  
 անդ նորին դառնան ի գնալ...:

Ասացի ես ի սրտի իմում. եկ եւ փորձեցից զքեզ յուրախու-  
 թեան, եւ տեսից ի բարութեան. եւ ահա եւ այս ինքն ունայ-

(6) Տես 5 կանոն 2. դաս:

(1) (1 կանոն Ա. դաս):

նութիւն է: Ծագուն ասացի՞ զբօսանս (2), եւ ուրախութեանն՝  
 զի՞ գործես զայդ: Եւ խորհեցայ թէ սիրա իմ ձգեսցէ իբրեւ ըզ  
 գինի զմարմին իմ. եւ սիրտ իմ առաջնորդեաց իմաստութեամբ,  
 եւ զօրանալ յուրախութեան. մինչեւ տեսից ո՞ր իցէ բարին որդ-  
 ւոց մարդկան՝ զոր արասցեն ի ներքոյ արեգական ի թիւ աւուրց  
 կենաց իւրեանց: Յաճախեցի ինձ արարս, շինեցի ինձ ապարանս,  
 անկեցի ինձ այգիս: Արարի ինձ պարտէզս եւ դրախտս, եւ անկեցի  
 ի նոսա փայտս ամենաբերօ: Արարի ինձ աւազանս ջրոց՝ արբու-  
 ցանել ի նոցանէ զանտառախիտս մայրեաց: Ստացայ ծառայս եւ  
 աղախնայս, եւ ընդո՞՞նք եղեն ինձ. եւ ստածուածք անդուց եւ  
 հօտից բազում եղեն ինձ քան զամենեցուն (3) որ յառաջ եղեալ  
 էին քան զիս յերուսաղէմ: Ժողովեցի ինձ արծաթ եւ ոսկի, եւ  
 ստացուածս բազումս զբազաւորաց եւ զգաւառաց (4): Արարի ինձ  
 գուսանս եւ երգեցիկս՝ արս եւ կանայս, եւ զփափկութիւնս  
 որդւոց մարդկան: Արարի ինձ տակառագետս՝ արս եւ կանայս .  
 եւ մեծացոյ առաւել քան զամենեւին որ յառաջ էին քան զիս  
 յերուսաղէմ. նա եւ իմաստութիւն յաւելաւ ինձ: Եւ զամենայն  
 զոր ինչ խնդրեցին աչք իմ, ոչ գրկեցի ի նոցանէ. եւ ոչ արգելի  
 գսիրտ իմ յամենայն ուրախութեանէ: Ձի սկրտ իմ ուրախ եղեւ  
 յամենայն վաստակս իմ, եւ այս եղեւ բաժին իմ յամենայն վաս-  
 տակոց իմոց: Եւ հայեցայ ես յամենայն արարս իմ զոր արային  
 ձեռք իմ, եւ ի վաստակս զոր վաստակեցայ առնել, եւ ահա ա-  
 մենայն ընդունայնութիւն է, եւ յօժարութիւն սգւոյ:

Տեսի ես զամենայն զոր ետ Աստուած որդւոց մարդկան՝ զբազ-  
 նուլ ի նմա: Ամենայն ինչ զոր գործեաց՝ բարի է ի ժամանակի իւ-  
 րում. նա՝ եւ զամենայն յաւիտեանս ետ ի սիրտս նոցա, զի մի  
 գտցէ մարդ զարարածն զոր արար Աստուած ի սկզբանէ մինչեւ  
 ցկատարած: Գիտացի թէ ոչ գոյ բարի ի նոսա՝ եթէ ոչ ուրախ  
 լինել, եւ գործել բարիս ի կեանս իւրում, քանզի ամենայն մարդ՝  
 որ ուտիցէ եւ ըմպիցէ եւ տեսանիցէ բարի յամենայն վաստակս  
 իւր, այն պարզեւ Աստուծոյ է: Գիտացի թէ զամենայն զոր ա-

(2) Տօսանս՝ ստորգելի է ծագան ին. ստորգելին եթէ անգլական բառ ըլլայ, շատ անգամ փոխանակ է ի յանգիւ կը դուի:

(3) Փոխանակ քսելու քան զպայտանս ամենայն: Յակացուցին վրայ դրուած է լուելեայն իմացուող յակացելոյն զ նախդիրն. (Տես 4 կանոն ԺԳ դաս):

(4) Եթէ յակացեալ բառն հայցական հոլով է, շատ անգամ իբրեւ անո՞րե հայ-  
 ցական կը դուի, եւ նախդիրն յեսադաս յակացուցին վրայ կ'անցնի, ինչպէս  
 կ'երեւի այս խօսքէն:

բար Աստուած՝ այն (5) կայ յաւիտեան . ի նոսա ոչ ինչ յաւելուլ, եւ ի նոցանէ ոչ ինչ գոյ պակասեցուցանել, եւ արար Աստուած, զի երկիցեն յերեսաց նորա : . . .

Դարձայ եւ տեսի ես զամենայն զրպարտութիւնս որ լինին ընդ արեգակամբ, եւ ահա արտասուք զրպարտելոցն, եւ ոչ ոք էր սր միտթարէր զնոսա . եւ ի ձեռս զրպարտաց նոցա բռնութիւնք : Եւ զովեցի ես զամենայն մեռեալս որք յառաջագոյն մեռան, քան զկենդանիսն՝ որ ցայժմ կենդանի իցեն : Եւ քան զնոսա զերկուսին լաւ այն է՝ որ չեւ եւս է լեալ, որ ոչ ետես զամենայն արարածն չար՝ որ արարաւ ի ներքոյ արեգական : Եւ տեսի ես զամենայն վաստակս եւ զամենայն արութիւն արարածոցն . զի նախանձ առն ի մերձաւորէ իւրմէ . սակայն եւ այն ունայնութիւն է եւ յօժարութիւն ոգւոյ :

է չարութիւն զոր տեսի ի ներքոյ արեգական, եւ բազում է յոյժ ի վերայ մարդոյ : Այր մի որում տացէ Աստուած մեկնութիւն եւ ինչս եւ փառս, եւ ոչ ինչ պակաս իցէ անձին իւրում յամենայնէ որում ցանկանայցէ, եւ ոչ առնիցէ զնա Աստուած ի խան ուտել ի նմանէ, զի այր օտար կերիցէ զնա, եւ այն ընդունայնութիւն է եւ ախտ չար : Եթէ ծնցի այր հարիւր (6), եւ ամս բազումս կեցցէ, եւ եւս բազում եղիցին աւուրք ամաց նորա, եւ անձն նորա ոչ յագեսցի ի բարեաց անտի, եւ գերեզման եւս ոչ գտցի նմա, ես ասացի թէ լաւ է քան զնա վիժածն, զի ունայնութեամբ եկն եւ խաւարաւ զնաց, եւ ի խաւարի անուն նորա ծածկեսցի : Քանզի զարեւ ոչ ետես, եւ ոչ գիտաց՝ զինչ է հանգիստ սորա քան զնորա : Եւ եթէ եկաց նա զհազար ամաց ելա (7), եւ զբարութիւն ինչ ոչ ետես, միթէ ոչ երթայցէ ամենայն ի մի տեղի : . . .

Չայս ամենայն փորձեցի ես իմաստութեամբ, եւ ասացի՝ բն իմաստնացայց, եւ նա հեռացաւ յինչն, հեռագոյն քան որպէսն

(5) Ինչպէս երբմն յարաբերականն յարաբերելոյ հոլովովն կը դրուի (Տես 8 կանոն ժՁ դաս) նոյնպէս եւ յարաբերելոյ երբմն յարաբերականին հոլովն կ'առնու . յաճախ զկնի ունենալով դեբանուն մը կամ համազօր բառ մը՝ որ ցոյց տայ յարաբերելոյն բուն հոլովը : (Բաղդասէ 2 կանոն ժ. դաս, եւ 2 կանոն ԻԵ դաս)

(6) Չորսքեամբ պէտք է իմանալ որքէն բառն :

(7) Փոխանակ ըսելու յիւր իւր իւր հազար ամաց : Այս խօսքին մէջ խալ կը նշանակէ (սպիւր), իսկ եւ՛ բառն նշանակելով (վախճան, կամ լրումն) յամենայն պատշաճութեան մը ցոյց կուտայ՝ մանաւանդ երբ հազար ամաց բառն իբրեւ սոճական առնումք, ըստ այսմ զեւ հայցական բնութեան խնդիր է :

էր . եւ զխորութիւն խորոց ո՞վ կարասցէ գիտել : Շուրջ եկի ես եւ սիրտ իմ, ճանաչել՝ նա եւ խորհել եւ խնդրել զիմաստութիւն եւ զհանձար, եւ գիտել զամբարշտի զուրախութիւն եւ զլլկանս եւ զժիւնս : . . . Եւ ահա արդ զայս գտի, զոր արար (8) Աստուած զմարդն ուղիղ, եւ նոքա խնդրեցին զխորհուրդս չարութեան . . . :

Դարձայ եւ տեսի ի ներքոյ արեգական, զի ոչ թեթեւաց են ընթացք, եւ ոչ զօրաւորաց պատերազմ, եւ ոչ իմաստնոց հաց, եւ ոչ հանձարեղաց մեծութիւն, եւ ոչ գիտնոց շնորհք : Զի ժամանակ է եւ պատահար պատահէ ամենեցուն նոցա : Քանզի ոչ իսկ գիտաց մարդն զժամանակ իւր : Որպէս ձկունք որսացեալք ցանցիւք չարեօք, եւ որպէս թռչունք որսացեալք ի ծուղակս, նոյնպէս հարկանին յորոգայթս որդիք մարդկան ի ժամանակի չարի՝ յորժամ հասանիցէ ի վերայ նոցա յանկարծակի . . . :

Ունայնութիւն ունայնութեանց, ասաց ժողովօղն, ամենայն ինչ ընդունայն է . . . : Այլ վախճան բանիս (9) . Չամենայն ինչ լուր, յԱստուծոյ երկիր, եւ զպատուիրանս նորա պահեա, զի այս է մարդն ամենեւին :

Սողոմոն (ժողովօղն)

ԳՈՎՈՒԹԻՒՆ ԻՄԱՍՏՈՒԹԵԱՆ

Յիր, լըւնալ, Բուրբէրէ	Սարգ, Գափնէ
Կիւմանն, (Գաբէր)	Տաշխն, աղեթ խանէ մը (Գարս գեւորեալ)
Չմուռ, (պահար)	Կնդուր կ. աղեթ խանէ մը (Գեւորեալ)
Քաղբան, Գեալ մը անուշահոտ խեղճ (Գաննէ)	Բեւեկնի, Բերեթնի ծառ
Երուկն, Գեալ մը խալի	Խորիսիս. Գեղբու Բէլէ
Կանկալ (աւուր), Հրեթն Նիսան ամայն օրերն	Ջրմուղ, Գաբէր Գաբայ
Ածու, (Բուրլ)	Հեռարձակ, Լար Գեալ
Գալ զվիմեամբ, համայնեղ իրարս	Գալուտոս, ցեղաք
Իբրեւ զի, Գաբէր, Գաբէր	Գայթել, Գաբէր, Գաբորեւ
Յոլովել, Գեղեղանեղ	Եկեղեցի, Գաբէր, Գաբորեւ
Սանալ, Գեղեղ, Էլեւել	Ճանքակ, Գեղեղ Գաբէր խալ

(8) Որ յարաբերականին ուղղականն կը գործածուի զէ, Բէ, Գեղ զէ, Լան զէ, Գաննէ, Գաբէր, Գաբէր, Լան Գաբ, շաղկապներուն տեղ, եւ Գաբ գործիականն Գաբէր, Լան Գաբ ի փոխան . բայց երբմն ալ զէ . Լան զէ, Գաննէ զէ, Գաբէր զէ, Գեղ զէ շաղկապներու միտքն ունենալով՝ փոխանակ ուղղականի ալիւ ալ հոլովներով կ'ընայ դրուի բային պատահական կամ համաձայնութեան օրինակ անսխալ ուսի հոս դրուած է Գաբ փոխանակ ըսելու Գ կամ Բէ :

(9) Պէտք է իմանալ . վախճան բանիս այս է :

իմաստութիւն գովեսցէ զանձն, եւ ի մէջ ժողովրդեան իւրոյ պարծեսցի: Յեկեղեցւոյ Բարձրելոյն գերան իւր բացցէ, եւ առաջի զօրութեանց նորա պարծեսցի: — Ես ի բերանոյ Բարձրելոյն ելի, եւ իբրեւ զմէզ ծածկեցի զերկիր: Ես ի բարձունս բնակեցայ, եւ աթոռ եմ ի սիւն ամայոյ (1): Ընդ ծիր երկնից չըջեցայ միայն, եւ ի խորս անդնդոց գնացի, յալիս ծովու, եւ յամենայն երկիր: Եւ յամենայն ժողովրդեան եւ յազնս ստացայ: Ընդ սոսա ամենեսեան հանգիստ խնդրեցի, եւ ի ժառանգութեան (2) ուր զաղարեցից: Յայնժամ պատուիրեաց ինձ արարիչն ամենեցուն, եւ որ հաստատեացն զիս՝ առաք զաղար խորանի իմոյ (3): Եւ ասաց. ի մէջ Յակոբայ բնակեաց զու, եւ յիսրայելի ժառանգութիւն կալլիր: Յառաջ քան զյաւիտեանս՝ ի սկզբանէ հաստատեաց զիս, եւ մինչեւ յաւիտեան ոչ պակասեցայ: Ի սուրբ խորանի առաջի նորա պաշտեցի, եւ սալա ի Սիոն հաստատեցայ, ի սուրբ քաղաքի նմանապէս հանգոյց զիս, եւ յերուսաղէմ իբխանութիւն իմ (4): Եւ արմատացայ ի փառաւոր ժողովրդեան. ի բաժին Տեառն ժառանգութիւն նորա: Իբրեւ գնո՞՞՞ բարձրացայ ի Լիբանանու, եւ իբրեւ զսարգն ի Լեբինս Ահեբմնի: Եւ իբրեւ զարմաւենի բարձրացայ յենգաղս, եւ իբրեւ զտունկ վարդենեւոյ յերիքով: Իբրեւ զձիթենի վայելուչ ի դաշտի, եւ բարձրացայ իբրեւ զսօս: Եւ իբրեւ զկինամն, եւ որպէս զճանրակ խնկոյ՝ ետու հոտ: Իբրեւ զմուս ընտիր բուրբցի անուշահոտութիւն, որպէս զքաղրան եւ զեղունկն եւ զտաշխն եւ զհոտ կնդրկի ի վրանի: Ես իբրեւ զբեւեկնի արձակեցի զսոսա իմ, եւ ոտք իմ, ոտք փառաց եւ շնորհաց: Ես որպէս այգի բղիւնցի շնորհս, եւ ծաղիկք իմ պտուղ փառաց եւ մեծութեան: Մտտերուք ամենեքեան՝ ոյք ցտեկացեալ էք ինձ, եւ յարմտեաց ինոց յագեցարուք: Զի յիշատակ իմ քան զմեզր քաղցր է, քանզի եւ ժառանգութիւն իմ քան զիսրիսիս մեղու: Ոյք ուտեն զիս՝ տակաւին քաղցիցեն, եւ ոյք ըմպեն զիս՝ տակաւին ծարաւեսցին: Որ լուիցէ ինձ՝ ոչ ամաչեսցէ, եւ ոյք գործիցեն ինեւ՝ ոչ մեղիցեն: Այս ամենայն Դիբի Ուխտի Աստուծոյ բարձրելոյն, օ-

(1) Տես (3 կանոն Ե, դաս):  
 (2) Իմա. խնդրեցի հանգիստ ի ժառանգութեան ելլին:  
 (3) Տես (4 կանոն Դ դաս):  
 (4) Զեղչեալ է եղև բայն:

ւէնք (5) զոր պատուիրեաց մեզ Մովսէս, ժառանգութիւն ժողովրդոց Յակոբայ: Որ զեղու իբրեւ զփիտոն զիմաստութիւն, եւ որպէս զՏիգրիս յաւուրս կանխոց: Որ լցուցանէ իբրեւ զեփրատ՝ զհանձար, եւ իբրեւ զՅորդանան՝ յաւուրս հնձոց: Որ երեւեցուցանէ իբրեւ զլոյս զխրատ, եւ իբրեւ զԳիեհոն յաւուրս կիթոց: Ոչ վախճանեաց առաջինն ճանաչել զնա, եւ ոչ վերջինն զնեաց զնա: Զի ի ծովէ բազմացաւ մտախոհութիւն նորա, եւ խորհուրդ նորա՝ յանդնոց մեծաց: Եւ իբրեւ զՂրմուզ ելի ի գետոյ, եւ որպէս վտակ ելի ի դրախտէ: Ասացի՝ արբուցից զպարաէզն, եւ արբուցից զածուն: Եւ ահա եղեւ ինձ ջրմուղ ի գետ, եւ գետն եղեւ ինձ ի ծով: Տակաւին զխրատ իբրեւ զառաւօտ լուսաւորեցից, եւ երեւեցուցից զնա մինչեւ ի հեռարձակ: Տակաւին վարդապետութիւն եւ որպէս զմարգարէութիւն սփռեցից, եւ թողից զնա յազգս յաւիտենից: Տեսէք զի ոչ ինձ միայնոյ վաստակեցի, այլ ամենեցուն՝ որ խնդրեն զնա:

Երիւք զեղեցիկացայ, եւ յարեայ վայելուչ առաջի Տեառն եւ մարդկան. Միաբանութիւն եղբարց, եւ սէր մերձաւորաց. եւ կից եւ այլ (6) որ զմիմեամբք գայցեն: Երիս ինչ ատեաց անձն իմ, եւ յոյժ ծանրացայ կենօք նոցա. Զաղքատն հպարտ, եւ զմեծատունն սուտ, եւ զձեր զագառնա եւ պակասեալ ի մտաց: Ի մանկութեան ոչ հաւաքեցեր, եւ զհորդ գտանիցես ի ձերութեան քում: Իբրեւ զի զեղեցիկ է ալեաց առնել դատ՝ եւ ձերոց ճանաչել զխորհուրդ: Իբրեւ զի զեղեցիկ է ձերոց իմաստութիւն, եւ փառաւորելոց իմացութիւն եւ խորհուրդ: Պսակ ձերոց շտատհմտութիւն, եւ պարծանք նոցա՝ երկիւղ Տեառն: Ինն կարծեաց երանի ետու ի սրտի, եւ զտաներորդն ասացի լեզուաւ: Մարդ ուրախ լեալ յորդիս, կենդանի՝ եւ տեսանիցէ զխորձանունն թշնամեաց: Երանի՛ որ բնակիցէ ընդ կնոջ իմաստնոյ, եւ որ լեզուաւ իւրով ոչ գայլիեաց, եւ որ ոչ ծառայեաց անարժանի իւրում. Եւ երանի

(5) Օրէնք բացայայտի է գրեթէ բառին. — Ժառանգութեան usuroցիլի բառին եով լուեկայն կ'իմացուի են բայն:  
 (6) Երբեմն բացայայտիցն առանց նայելու բացայայտալի հոլովին անմամաձայն կր դուի ո՞ր եւ է հոլովով՝ որ կրնայ պատշաճիլ բային իբրեւ տերայի կամ խնդիր: Այսպէս՝ Մեծութեան եղբարց, եւ սէր մերձաւորաց եւ կեն եւ ոյք եւ այլն բառերն բացայայտից են երեւոյ ին, բայց հոլովով անմամաձայն դուած են իբեց բացայայտալին. իսկ հետագայ պարբերութեան մէջ, որ պարտեմ, եւ զձերութեան եւ զձեր բացայայտից են, անմամաձայն դուած են երեւ բացայայտալին:

որ եզիտ հանճար, եւ որ պատմիցէ յականջս լսողաց: Իբրեւ զի մեծ է՝ որ եզիտ զիմաստութիւն, այլ ոչ է առաւել քան զերկիւղածն ի Տեառնէ: Երկիւղ Տեառն քան զամենայն յուրվեաց: Եւ որ ունիցի զնա՝ ո՛ւմ նմանիցէ: Զամենայն վէր<sup>(7)</sup>, եւ մի՛ զվէր սրտի: Զամենայն չարութիւն, եւ մի՛ զչարութիւն կնոջ: Զամենայն հարուածս, եւ մի՛ զհարուածս ատելեաց: Զամենայն վրէժս, եւ մի՛ զվրէժս թշնամեաց: Ոչ է գլուխ չար քան զգլուխ օձի, եւ ոչ ցասումն՝ քան զցասումն թշնամեոյն:

Սիրաբ. Ի՛ն եւ Ի՛ն

Ի ԶԱՐԶԱՐԱՆՍՆ ՔՐԻՍՏՈՍԻ

Հասել, արեգիւ  
Աղօթիք, արեգիւ շնորհ  
Ապախսիք, արեգիւ շնորհ  
Ձաղկանք, ինչ

Կեղեիկ, պարտեւ,  
Խուժան, Կարեւորագոյն Բարեբախտ  
Ստուարտուր, հարս եւ սար  
Հեղոյս, քամ ( Կեղեիկ )

Աւ քեզ անկեալ պաղատիմ՝  
Որ բեւեռեալ ի խաչիդ  
Բազկատարած կաս վասն իմ:  
Օրհնեմ ըզքէր քո անճառ,  
Այլ ինձ հիբիս բիւր աւալ<sup>(1)</sup>  
Զի ես կըրիցդ եմ պատճառ:  
Հիմ ի լերինն աղօթկեր՝<sup>(2)</sup>  
Որունձեւ քիրտն արեան  
Տէրդ ի զիմաց քոց հեղեր,  
Բայց զի գոճիրս իմ կանխաւ  
Եւ զապախտիսն իմ առ քեզ  
Տեսանէիր զառաջեալ:  
Ո՞ գքեզ, Փըրկիչ իմ Յիսուս,  
Դատապարտեաց առ ի մահ,  
Բայց մեղք ի քէն հաստեւոյս:  
Ո՞ գքեզ կապեալ կաշկանդեաց:

(7) Թէ այս եւ քէ հետագայ հայցականներու առջեւ գործեամբ պէտք է իմանալ՝ ինչեք եւեւ կամ յանջն արտասուլ բայն:  
(1) Լուսկեայ կ'իմացուի Կարեւոր կամ Կարեւոր բայն:  
(2) Աղօթիք իբրեւ ստորագրի գործածուած է, որոյ իմ լուսկեայն պէտք է իմանալ Կարեւոր քան:

Ոչ զինաւորք ոչ դահիճք,  
Այլ հոյլք իմոց յանցանաց:  
Ո՞ անողորմ ած ապտակ  
Յաստուածային դէմքս քո,  
Բայց մեղք իմ ո՛հ զըժընդակք:  
Ոչ ի թուք պղիճ բերանոյն  
Քոյդ անարգեալ կերպարան,<sup>(3)</sup>  
Այլ ի մեղացս իմ անհուն:  
Ո՞ զկուսածին քոյդ իրան  
Ընդ ձաղկանօք կեղեքեաց,  
Թէ ոչ մեղացս իմ խուժան:  
Ո՞ զերկնաստեղծ յօնիւք քովք  
Պըսակ ի վշոց բոլորեաց:  
Մեղք իմ ծանուներ եւ յուրվք:  
Ո՞ զփայտ խաչի յուս քոյին  
Երարձ Աստուած իմ եւ Տէր,  
Եթէ ոչ մեղք իմ նոքին:  
Ընդէր անկար ի յերկիր.  
Բայց զի եւ զմեղս իմ ի յուս  
Զոյգ ընդ խաչին բերէիր:  
Ո՞ գքոյդ մերկեաց<sup>(4)</sup> ըզմարմին,  
Արկեալ ըզձեռն ամպարիչո  
Յերկնաւորաց պաշտելին:  
Ո՞ գքո, Փրկիչ իմ Յիսուս,  
Զըգտեալ բազկացդ ըզդաստակ  
Ի ստուարատուր ի հեղոյս,  
Եւ զոտըս քո՝ յոյց ի գնաց  
Երկինք Երկիր զըզըրդին՝  
Ի փայտ խաչին բեւեռեաց:  
Հիմ ըզլեզին դառնութեան  
Արբեր ի բոյժ ծարաւոյդ,<sup>(5)</sup>  
Այլ ընդ մեղացս իմ փոխան<sup>(6)</sup>:

(3) Անարգեալ անցեալ դերբայն գործածուած է իբրեւ դիմաւոր բայ, փոխանակ ըսելու անարգեաց:  
(4) Կասարեալ ժամանակն է Գրեթ բային, եւ ոչ Գրեթեթին:  
(5) Տես 8 կանոն 2 դաս:  
(6) Ընդ նախադրութիւնն որ սեռակեանով Գրեթեթ, Գրեթ կը նշանակէ, երբեմն իւր հետ կ'ունենայ նաեւ Գրեթեթ կամ Գրեթեթ նախադրութիւնն:

Եւ զկողք, Աստուած իմ եւ Տէր,  
 Ոչ տէգն եհերձ զինուորին,  
 Այլ ես հարի կարեվէր:  
 Յինչն կրեցեր զամենայն,  
 Ընդ իմ ըզմահ յանձն առեալ  
 Վասն իմ իջեր ի զամբան:  
 Ես յայսմհետէ քո փոխան,  
 Ես փոխանակ քո մեռայց՝  
 Քան մեղանչել յաւիտեան:  
 Լիցի ինձ մահ քո եւ վիշտ  
 Յոյս եւ սիրտու՛մն յայսմհետէ,  
 Հանդէպ աչաց իմաց միշտ  
 Կեանքդ իմ կախեալ ըզփայտէ:

Հ. Ե. Հիւրմիւզեան

ԽՐԱՏՔ ԶԱՐԴԱՐՈՒԹԵՆԷ, ԵՒ ԱՆՄԱՀՈՒԹԻՒՆ ԱՐԴԱՐՈՅ

Անգլսել, բաժնել  
 Փորձ, (ամ.) վարժ, կրթութիւն  
 Վարիլ (իսի) գործածել (բան մը)  
 Երիկամունք, գործնական որոյ  
 Շեկցել, գոգոսել  
 Այլազգի, արբեբ, արեւ կերպ

Կեսամբուրիւն, յանրամասնութեան  
 Յանկարծակի իմն, որպէս անտես  
 Սակ, պայման, վիճակ  
 Շամանդազ, մշակ (տեխնիկ) հիւսիս  
 Խոցակցել, արանջել  
 Խրսիլ, պարտաւիճել, շարժարարել

Սիրեցէք զարդարութիւն, ոյք դատիք զերկիր: Խորհեցարուք զՏեառնէ բարութեամբ, եւ միամտութեամբ արիւ (1) խնդրեցէք զնա: Ձի գտանի այնոցիկ որ ոչ փորձեն զնա, եւ երբեւ որոց (2) ոչ թերեհաւատեն ի նմանէ: Ձի խորհուրդք թիւրք անջաան յԱստուծոյ, եւ զորութիւն փորձ՝ յանդիմանէ զանզգամս: Ձի յանձն չարարութեամբ իմաստութիւն ոչ մտցէ, եւ ոչ բնակէ ի մարմնի վարեցելոյ մեղօք: Ձի սուրբ Հոգին իմաստութեան փախիցէ ի նենգութենէ, եւ մերժեցի ի խորհրդոց անմտաց, եւ

(1) Տես 5 կանոն ԺԴ դաս:  
 (2) Փոխանակ րսիլու, այնպէ՛ք որք. (Տես 6 կանոն Զ. դաս)

յանդիմանեցէ ի հասանել ի վերայ անիրաւութեանց: Ձի մարդասէր Հոգին իմաստութեան՝ ոչ արդարացուցանէ զհայհոյիչն ի շրթանց իւրոց. զի երիկամանց նորա է վկայ Աստուած, եւ սրտի նորա ոստիկան ճշմարիտ, եւ լեզուի նորա ունկնդիր: Ձի Հոգի Տեառն ելից զտիեզերս, եւ որ ունի զամենայն՝ ունի զգոյութիւն բարբառոյ: Վասն այնորիկ եւ որ չընջէին զանիրաւս՝ ոչ ծածկեացի, եւ ոչ իրաւունք առ նովաւ առանց կշտամբութեան անցցեն: Ձի խորհրդոց ամբարշտաց՝ հարց եւ փորձ եղիցի, եւ բանից նոցա լուր առ Տէր հասցէ՝ ի կշտամբութիւն անօրէնութեանց նոցա: Ձի ունկն նախանձաւորութեան լսէ զամենայն, եւ շշտջիւն քրթմնջանաց ոչ ծածկեացի: Այսուհետեւ զգոյ լերուք յանօգուտ քրթմնջանէ, եւ ի բամբասանաց խնայեցէք զլեզու. զի շշտջ զազոնի՝ դատարկ ոչ անցցէ, եւ բերան ստախօս սպանանէ զանձն: Մի՛ ցանկայք մահու մոլորութեամբ կենաց ձերոց, եւ մի՛ ձգէք յանձինս զատակու՛մն գործովք ձերաց ձերոց: Ձի Աստուած զմահ ոչ արար, եւ ոչ խնդայ ընդ կորուստ կենդանեաց: Քանզի հաստատեաց ի լինել զամենայն, եւ ի փրկութիւն են գործք աշխարհի: Ձիք ի նոսա զեղ սատակման, եւ ոչ թագաւորութիւն դժոխոց ի վերայ երկրի, զի արդարութիւն՝ անմահ է: Իսկ մապարիշտք ձերոք եւ բանիւք կոչեցին զնա առ իւրեանս. բարեկամ համարեցան զնա, եւ հալեցան եւ գաշինս կռեցին ընդ նմա. զի արժանի իսկ են բաժանակից նմա լինելոյ:

Խորհեցան յանձինս իւրեանց զանուզղայս եւ ասեն. Սակաւ եւ ցաւազին են կեանք մեր, եւ ոչ գոյ բժշկութիւն ի վախճանի մարդոյ, եւ չերեւեցաւ որ դարձաւ ի դժոխոց: Ձի յանկարծակի իմն եղաք, եւ յես այսորիկ լինիցի՛մք իբրեւ զչեղեալ (2): Ձի իրբեւ զծուխ է շունչ յանգունս մեր, եւ իրբեւ զկայծակն բանն ի շարժման սրտի մերում. յորոյ շիջանէն՝ մոխիր լինի մարմինն, եւ ոգին սփռի իբրեւ գոգ թոյլ: Անցցեն կեանք մեր իբրեւ զհետս ամառոյ, եւ իբրեւ զչամանդաղ ցրուեսցին հալածեալ ի ճառագայթից տրեգական, եւ ի տապոյ նորա ծանրացեալ: Ձի անցք ստուերի են կեանք մեր, եւ չիք խափան վախճանի մարդկան, զի կնքեցաւ եւ ոչ որ դարձուցանէ: Արդ եկայք եւ վայելեցուք ի բարութիւնս որ կանս (3), եւ վարեցուք արարածովքս զբաղեալք իբրեւ ի

(2) Տես 3 կանոն ԻԱ դաս:  
 (3) Հոս որ խա՛ս ամական է է բարբառութեան ին, քէն երբեմն առանձինն՝ իբրեւ գոյական կը գործածուի, եւ կը նշանակէ Կերթ, Ժամանակ:

մանկութեան: Պէտպէս դիտե՛ք եւ անոյշ իւղովք լցցու՛ք, մի՛ անցցէ առ մեօք ծաղիկ գարնայնոյ: Բոլորիւք վարդից պսակեացուք՝ մինչչեւ թառամեալ իցեն: Մի՛ ոք ամենեւին լիցի անման ի մեծամեծար ուրախութենէս մերմէ: Երանայն տեղիս թողցուք զնշանակ ուրախութեան. զի այն է բաժին մեր եւ սոյն վիճակ: Բռնադատեցուք զանանկն անիրաւութեամբ, մի՛ խնայեցուք յայրին, մի խորհեցուք ի բազմաժամանակեայ ալեաց ծերոյն: Եւ օրէնս արդարեան՝ բռնութիւն մեր եղիցի (4). զի տկարութիւն անպիտան յանդիմանի: Դարանակալ եղիցուք արդարոյն՝ զի դժպէ՛ի եղեւ մեզ, եւ հակառակ կայ գործոց մերոց, եւ նախապէս զնձ մեզ զյանցանս օրինացն, եւ բարասէ զմեզ մեղօք մանկութեան մերոյ: Խոստանայ ունել զգիտութիւն Աստուծոյ, եւ որդի Տեառն զանձն իւր անուանէ. եւ եղեւ ի յանդիմանութիւն մտաց մերոց: Ծանր է մեզ եւ տեսանելն զնա, զի անման են այլոց կեանք նորա, եւ այլազգի շաւիղք նորա: Ի գարեութիւն (5) համարեցաք նա, եւ խորշի ի ճանապարհաց մերոց՝ իբրեւ ի պղծութեանց. երանէ զվախճան արդարոց, եւ հպարտացեալ՝ կոչէ հայր զԱստուած: Տեսցուք թէ ճշմարիտ իցեն բանք նորա, եւ փորձեցուք զվախճան նորա: Եթէ իցէ արդարեւ որդի Աստուծոյ, պաշտպանեցէ նա, եւ փրկեցէ զնա Աստուած ի ձեռաց հակառակորդաց: Թշնամանօք եւ գանիւք խոչտանգեցուք զնա, զի զչափ սուցուք զհեզութեան նորա, եւ խեղամուտ լիցուք անոխակալութեան նորա: Մահու խոյտառակութեան դատեցուք զնա. եթէ լինիցի՝ այցելութիւն նա ի բանից իւրոց:

Չայս խորհեցան եւ խարեցան, զի կուրացոյց զնոսա չարութիւնն իւրեանց, եւ ոչ ծանեան զխորհուրդս Աստուծոյ, եւ ոչ վարձուց ակն կալան սրբութեան (6), եւ ոչ ընտրեցին զպատիւ ոգւոց անարատից: Չի Աստուած հաստատեաց զնարզն յանեղծութեան, եւ ի պատկեր իւրոյ բարերարութեանն արար զնա: Նախանձու բանասարկութիւն եմուտ մահ յաշխարհ, եւ փորձեն զնա որ նորա վիճակին սակի են: Բայց սգիք արդարոց ի ձեռին Աստուծոյ են, եւ ոչ մերձեցի ի նոսա մահ: Թուեցան յաչս անբզ-

(4) Կարգա այսպէս. եւ բռնութիւն մեր եղիցի օրէնս արդարութեան, փոխանակ բռնութեան, օրէնս արդարութեան. (Տես 2 կանոն ԻԲ դաս):  
 (5) Տես 3 կանոն Ա. դաս:  
 (6) Սրբաբանութեան անպակն է Էրեմիայի (Տես 5 կանոն Ե դաս):

դամաց թէ մեռան, եւ համարեցան չարչարանք ելք նոցա՝ եւ զնալն ի մէջ բեկումն. բայց նոքա են ի խաղաղութեան: Չի թէ պէտեւ յաչս մարդկան տանջեցան, այլ յոյս նոցա լի է անմահութեամբ: Եւ սակաւիկ ինչ խրատեալք՝ զտցեն զմեծ բարութիւն. զի Աստուած փորձեաց զնոսա, եւ եզիտ զնոսա իւր արժանիս: Իբրեւ զոսկի ի բովս քննեաց զնոսա, եւ իբրեւ զողջակէզ զոհի ընկալաւ զնոսա: Ի ժամանակի այցելութեան իւրեանց պայծառացին, եւ իբրեւ կայծակն ընդ եղէզն ընթացին: Դատեցեն զազգս եւ կալցեն զժողովուրդս, եւ թագաւորեցէ նոցա Տէր յաւիտեան: Յուսացեալք ի նա՝ խնացին զճշմարտութիւն, եւ հաւատարիմք՝ սիրով ակն կալցեն նա. զի շնորհք եւ ողորմութիւն ի վերայ սրբոց նորա, եւ այցելութիւն ի վերայ ընտրելոց նորա: Իսկ անպարիշտք ըստ խորհրդոց իւրեանց ընկալցին զպատիժս, որ անփոյթ արարին զիրաւանց եւ եղեն ապստամբք ի Տեառնէ: Չի որ զիմաստութիւն եւ զխրատ անարգէ, թշուառական է, եւ ընդունայն է յոյս նոցա, եւ վաստակք նոցա անօգուաք, եւ անպիտան գործք նոցա. կանայք նոցա անմտք, եւ չարաբար մանկուք նոցա, եւ անիծեալ ծնունդք նոցա:



Տ Ր Տ Ո Ւ Ն Ջ Ք Յ Ո Ւ Մ Յ

Կսեկ, Լուսին	Խոկալ, Դրոճեւ, Խրեհեւ
Խանչիլ, Կուր	Ղօղիլ, Կահաւորեւ
Յիւ, Կայեւ	Երեկ, Երեւոյ
Շարաւ, Բարեւ	Չազարութիւն, Գարսաբեան
Սնոզոր (մկ.) Կարեւորութեամբ	Տոզոր, Բարեւ, Լուսին
Դնել, համարեւ, Կեղեւ	Ընդարձակել, համբար Կուր
Նա ուրեմն (զղկ.) Կարեւորութեամբ	Երկայնամիտ, համբար Կուր

Եթէ կռեւելով ոք կռեւր զբարկութիւնս իմ, եւ զցաւս իմ միանգամայն բառնայր ի լուծ կռոց, քան զաւազ ծովու ծանրագոյն լինէր (1). Նա ուրեմն բանք իմ անզգամք են: Չի նեաք Տեառն

(1) Լուսին բային լուսնայն իմացուած դերանուն սերբային քայէն յոգնակի է, բայց բայն եզակի դուած է. (Տես 4 կանոն Ի դաս):

ի մարմնի իմուժ են, եւ սրտմտութիւնն նորա ծծէ զարիւն իմ. յորժամ սկսանիմ խօսիլ՝ կտտեն զիս: Իսկ արդ՝ զհարդ, միթէ տարապարտոնց խանչիցէ ցիւս, բայց եթէ կերակուր ինդրիցէ. կամ թէ գոչիցէ՞ եզն առ մսուր՝ յորժամ ունիցի զկերակուր, կամ ուտիցի՞ հաց առանց աղի, կամ գուցէ՞ համ ի բանս ունայնս: Սա (2) ոչ կարէ հանդարտել անձն իմ, զի շարաւով տեսանեմ ըզ կերակուր իմ՝ իրբեւ զհօտ առիւծու: Զի եթէ տացէ՝ եւ եկեսցեն յիս խնդրուածք իմ, եւ զյոյս իմ տացէ Տէր: Սկսաւ Տէր խոցոտել զիս, բայց իսպառ մի՛ սպանցէ զիս: Եղիցի ինձ քաղաքն իմ գերեզման՝ յորոյ վերայ պարսպացն (3) ձեռնի, եւ ի նա ոչ խնայեցից, զի ոչ սուտ արարից զբանս սրբոյն Աստուծոյ մերոյ: Զի զինչ է զօրութիւն իմ թէ համբերից, կամ զինչ ժամանակ՝ զի հանդարտեցէ անձն իմ: Միթէ զօրութիւն վխնացից զօրութիւն իմ, կամ մարմինք իմ պղնձիք. կամ թէ ո՞չ ի նա ապաւինէի: Արդ օգնութիւն իմ մերժեցաւ յինէն, եւ ողորմութիւն հրաժարեաց յինէն. այցելութիւն Տեստն անտես արար զիս: Ոչ հայեցան յիս մերձաւորք իմ, իրբեւ զվտակ պահասեալ եւ իրբեւ զալիս անցին զինեւ: Որք սարսէին յինէն՝ արդ ահաւասիկ հասին ի վերայ իմ: Իրբեւ զձեռն կամ իրբեւ զսառն պաղեալ՝ որ հալիցի ի հասանելւոյ ջերմութեան եւ ոչ ձանաչիցի թէ որպէս էր, նոյնպէս եւ ես լքայ յամենեցունց, կորեայ եւ անանկացայ: Տեսէք զձանապարհս թեմնացւոց՝ որք ի շաւիղս Սաբայ հայիք, եւ ամօթ կրեսցեն յուսացեալքն ի քաղաքս եւ յինչս: Դա՛ եւ դուք՝ աւաղիկ (4) անողորմ հասէք ի վերայ. հայեցեալ ի վէրս իմ՝ երկերուք: Արդ ես զձեզ ինչ խնդրեցի՞, կամ ձերմով զօրութեամբդ կարօտեալ իցեմ ապրեցուցանել զիս ի թշնամեաց, կամ ի ձեռաց հօրաց փրկել զիս: Ուսուցէք զիս՝ եւ ես լռեցից. եւ եթէ մնորեալ ինչ իցեմ, արարէք զիս խելամուտ: Այլ ուրեմն խոտան են բանք ճշմարտի. քանզի ոչ եթէ ի ձէնջ խնդրեմ զօրութիւն: Եւ ոչ կշտամբանք բանից ձերոց լռեցուցանեն զիս, եւ ոչ բարբառոյ բանից ձերոց անասցից: Բայց զի իրբեւ ի վերայ որբոց յարուցեալ էք ի վերայ իմ, եւ խաղաղացեալ էք ի վերայ բարեկամի ձերոյ: Բայց արդ հայեցեալ յերեսս ձեր ոչ ստեցից. նստարուք, եւ մի՛ ինչ լիցի


(2) Սա, որ, նա բառերն առաջի, առաջի, առաջի բառերս մեզ գործածուելով, կամ երբեմն առանձինն՝ նոյն գործիւնն ունենալով շողիսպ են:  
 (3) Փոխանակ բսելու, ի վերայ որբոցն որպէս ելլի, (Տես 4 կանոն է դաս):  
 (4) (Տես 2 կանոնն այս դասին մէջ):

անիրաւութիւն ի դատաստանի, եւ դարձեալ իրաւանց ուշ ունիցիք: Զի ոչ գոյ ի լեզուի իմուժ անիրաւութիւն, կամ կոկորդ իմ ոչ խոկասցէ յիմաստութիւն:

Ո՞չ ապաքէն իրբեւ զփորձութիւն են վարք մարդոյ ի վերայ երկրի, եւ իրբեւ զառօրեայ վարձք վարձկանի կեանք նորա: կամ իրբեւ զծառայ երկուցեալ ի Տեստնէ իւրմէ՝ եւ զօղեալ ընդ հովանեաւ, եւ իրբեւ զվարձկան որ սպասիցէ վարձուց իւրոց, նոյնպէս եւ ես սպասեցի ամնոց սնտեսաց: Գիշերք ցաւագին տուեալ են ինձ. եթէ ննջեցից՝ ասեմ ե՞րբ իցէ տիւ, եւ եթէ յառնիցեմ՝ դարձեալ թէ ե՞րբ իցէ երեկ. լի ցաւօք լինիմ յերեկորեայ մինչեւ յառաւօտ: Թաթաւին մարմինք իմ զազրութեամբ որբանց, մաշեցի զկոշտս երկրի առ ի գրարախս փեթոյ (5): Եւ կեանք իմ թեթեւագոյնք են քան զխօսս, եւ կորեան յունայնութեան յուսոյ: Յիշեա զի փուք են կեանք իմ, եւ ոչ դարձցի ակն իմ ի տեսանել զբարի, եւ ոչ հայեցի յիս ակն տեսողի: Աչք քո յիս, եւ ես ոչ եւս իցեմ, իրբեւ զամպ ջնջեալ յերկինց: Զի եթէ իջանիցեմ արդ ի դժոխս, ոչ եւս ելցէ՝ եւ ոչ դարձցի ի տուն իւր, եւ ոչ եւս ծանիցէ զնա տեղի իւր: Այսուհետեւ ոչ եւս խնայեցից ի բերան իմ. խօսեցայց մինչեւ իցեմ ի վիշտս, բացից զդառնութիւն անձին իմոյ տագնապաւ: Միթէ ծո՞վ իցեմ կամ վիշտով, զի կարգեցեր զինեւ պահ: Ասացի թէ միսիթարեսցեն զիս մահիճք իմ, վճարեցից զինէն զբանս յանկողնի իմուժ: Զարհուրեցուցանես զիս երազովք, եւ տեսլեամբք հարկանես զիս: Թափես զողի յանձնէ իմմէ, եւ ի մարմնոյ զշունչ իմ, եւ ի մահուանէ զկեանս իմ. զի ոչ թէ յաւիտեան կեամ, թէ երկայնամիտ եղէց: Ի բաց կաց յինէն՝ զի ընդունայն են կեանք իմ: Զի զինչ է մարդ՝ զի մեծացուցեր զնա, կամ զի հայիցիս ի նա մտօք, կամ այցելութիւն առնիցես նմա մինչեւ ցառաւօտ, եւ ի հանգիստ դատիցես զնա: Մինչեւ յե՞րբ ոչ թողուցուս զիս, եւ ոչ ընդարձակեցեր ինձ, մինչեւ ցաւովք կլանիցեմ զտոզուկս իմ: Զի թէ մեղայ՝ զինչ կարիցեմ առնել քեզ, որ զիտեսդ զմիտս մարդկան: Ընդէ՞ր եղեր զիս քեզ ստիս, եւ իցեմ քեզ բեռն. եւ ընդէ՞ր ոչ արարեր մուացումն անօրէնութեան իմոյ՝ եւ՛ սրբութիւն մեղաց իմոյ: Արդ ահա յերկիր դառնայցեմ կանխեալ, եւ այլ ոչ եւս իցեմ:

Յոր Զ-է

(5) Խնդիր եղող բառն կրնայ իւր խնդրառուին նախդիւն տուելու երբ յառայանցնի:



### ՆՈՅՆ ԲԱՆԲ ՏՐՏԵԱՆԱՅ ՅՈՒԱՅ

( Ի չարս հայկական )

Նժար, կէտէն ուր (բառ)  
 Համանգամայն, ժանգամայն  
 Միտել ի usar, չար ծրել  
 Գծոխրութեան } անբարեկէ  
 Անքմբեր }  
 Անալի, անլի  
 Խար, չար բար  
 Ի դերեւ ելանել, պարտու ելել  
 Տոկալ, դիտանալ

Արփիախրաս, լայն կամ կրակ ցայտեցող  
 Հեն, աստի  
 Գողել պայխար, չէճ բռնալ  
 Անագորոյն, անգոր  
 Ի թիւ արկանել, հարել  
 Կողկողիլ, հեծել լալ  
 Կեղ, չէրտ, խոյ  
 Անդունական, չէր պարտ  
 Անուրջ, երաւ, շեփել

Թէ կըրտելով ոք կըրտէր բարձեալ ըզմեղս իմ ի նըժար, եւ հանդէպ նոցին ըզվիշտս իմ եւ զաղէաս համանգամայն, Ծանրագոյն յոյժ քան զաւաղ ծովու ի ստոր սայլ (1) մտտէին: Նա ուրեմն ի բողբոքել առ Տէր իցեմ ես անըզգամ:

Ձի նեաք Տեառն ի մարմնի խնում մըխեալ կան սայրասուրք, եւ զարիւն իմ զայրոյթ սըրտմըտութեան նոցա ծըծէ:

Այն ինչ խօսել ըսկըսեալ, եւ կեղեքեն կըտտեն զողխս: Դըժոխըմբերք են կըշտամբանքդ ինձ անողք եւ անիրաւ: Թէ անալի ուտիցի՞ հաց, կամ է՞ ի զրոյց համ ի սնտոի: Իսկ զխորդ, միթէ զո՞ւր տարապարտուց խանչիցէ ցիւ, Ո՞չ առ քաղցի խընդրէ ճարակ էրէվայրի սովալըուկ, կամ գոչիցէ՞ եղն առ մըսուր եթէ գտանէ խար ի մըսրին:

Սա աւաստի ոչ կարէ անձն իմ ժուժկալել բուժել ըզքաղց: Շարաւալից ըզկերակուր իմ տեսանեմ իբր առիւծու:

Յոյս իմ իցի՛ւ ճըշմարտեալ, եւ լիցին ուխտք իմ լըսելի:

Ձի խոցոտել զին ըսկըսաւ Տէր, ո՞ գիտէ դուցէ սպանցէ: Լիցի քաղաքն իմ ինձ շիրիմ, զոյր պարըսպօքըն ճեմիլ:

Մեռայց յօժար, եւ մի՛ պատգամք սըրբոցն ելցեն յիս ի դերեւ, Ձի զօրութիւն իմ աշէ զինչ է թէ խալառ համբերեցից, Կամ երբ ցաւոց իմոց վախանան՝ (2) թէ տոկալ անձն իմ կարասցէ:

(1) Սոյս բառն յոգնակին է աս դերանուան:  
 (2) Այս խօսքին մէջ գեղջեալ է տե՛ր կամ տե՛տե՛ բայն:

Մի՛ թէ վիմանց ինչ զօրութիւն, կամ թէ պղընձիք իցեն մարմինք, եթէ ոչ ինքն ինձ Հըզօրն արասցէ այց, յոյժ եմ տըկար:

Ձիք ուստեք ինձ օգնութիւն, փակեալ բնաւից դուժ եւ դորով: Մերձաւորք իմ դարձուցին զերեսս յինէն, գնացին ի բաց:

Որպէս սըրնթաց սահեալ վըտակ, որպէս ալիք անցին զինեւ: Որք յինէն ահիւ սարսեալք՝ այժմ աւաստի յիս յարձակին:

Լըքայ յամենեցունց, լըքայ, կորեայ եւ անանկացայ:

Ձինչ էի, զինչ եմ այժմիկ: աւաղ, ի սպառ այլակերպեալ, Իբրեւ ըզճիւն կամ ըզսառն ի ճաճանչից արփիահարտ

Հալեալ՝ ի ջուր լուծեալ, որ ոչ ճանաչիցի որպիսի՛ էր: Հայեցարուք ի թեման, ակն ի շաւիղս արկէք Սաբայ, Որ ի գոյս են յուսացեալ, որ ի քաղաքս՝ յամօթ լիցին:

Դա եւ դուք անողորմ արդ ի վերայ իմ հասէք, Որ ի վերս իմ հայեցեալ եւ արհաւորք ընկճէք զողխս: Ես ինչ ըզճեղ խընդրեցի, եւ կամ կարծօտ իցեմ ինչ ձեօք, Ընդդէմ հինից կամ յերեսաց հըզօրի գոլ ինձ ապաւէն:

Ուսուցէ՛ք զիս՝ եւ լըսեցից, ցուցէ՛ք ինձ լըս՝ թէ խարխափեմ: Խոտանք ուրեմն այսօքիկ թըլին ձեզ բանք ճըշմարտութեան:

Այլ ո՞չ ի ձե՛նջ է զօրութիւն սայց, իւրովի են սայք հըզօր, Նա եւ ոչ կըշտամբանք ձեր ըզըրթուեն իմ կարկեսցեն, Հողմոց ի լուր բարբառիք: ոչ անսացից բանից ձերոց:

Իբր որբոյ ողորմելոյ եկեալ հասեալ էք յիմ վերայ, եւ ընդդէմ բարեկամի անագորոյն դըրդէք պայքար:

Բայց լըւարո՞ւք, եւ խելամուռ լիջիք զի չեն բանքս անիրաւ: Դատաւորք բազմեցարո՞ւք, այլ իրաւանց կացէք պատկառ, Ձիք ի շըրթուեն իմ սըտութիւն, երկնէ կոկորդ իմ ըզհանձար:

Ո՞չ ապաքէն փորձութիւն են ի յերկրի աստ կեանք մարդոյ, եւ կենցաղ իւր ընդ երկնաւ իբր առօրեայ վարձ վարձկանի:

Որպէս ծառայ յահէ տեսան իւրոյ զօգեալ ընդ հովանեաւ, Իբր ըզվարձկան որ սպասիցէ առնուլ ըզվարձ իւր ընդ երեսի, Հանգոյն եւ ես սպասեցի դէտակն ամսոց կալեալ սնտեաց, եւ զիչըրքս ցաւագինս հեծեծելով արկի ի թիւ:

Այն ինչ ի նինջ զաշըս փակեալ, եւ հառաչեմ երբ իցէ տիւ: եւ իբրեւ այն ինչ յարուցեալ, դարձեալ թէ երբ իցէ երեկ: Կողկողիմ ի ցաւոց յերեկորեայ ցըղարձ այգուն:

Կեղովք եւ զագրութեամբ որդանց մարմին իմ թաթաւեալ, եւ զխոշտ երկրի մաշեցի առ ի զլժարալսս իմ քերեկոյ:



Թեթեւագոյն քան խօսք ընդ օդս անցին աւուրք իմ եւ կորեան ,  
Համօրէն ընդ նոսին եւ յոյս սնտաի ունայնացեալ .

Յիշեա Տէր , զի ոչ եւս աչք իմ դիտեսցեն ըզբարութիւն ,  
Ձի փուք են կեանք իմ եւ ոչ եւս հայեսցի ակն յիս տեսողի ,  
Աչք քո ի յիս , ակնարկեա եւ եթ , եւ այլ ոչ եւս իցեմ ,  
Իբրեւ անա ջընջեալ յերկնէ , ոչ իսկ ըզհետ թողեալ շաւիղ .

Ձի իջանել թէ ի դըժոխս ոք իջանէ , ոչ եւս ելցէ ,  
Եւ ոչ ի տուն իւր դարձցի , ոչ ըզնա վայր իւր ծանրցէ :

Հնապ օն այսուհետեւ ոչ եւս ի շուրթն իմ խնայեցից ,  
Բողոսեցից ըզդառնութիւն , հեղից ըզվիշտս անձին իմայ .

Մի՛ թէ ծով իցեմ ես մըրըրկալից կամ թէ վիշտով .

Ձի կարգեցեր զինեւ պահ ըզտառապանս եւ զհեծութիւն .

Ասացի թէ անկողինք իմ ինձ լիցին ի քաջալեր ,  
Եւ սփոփեցայց ի մահճի դոյզն ընդ անձին լեալ խօսակից .

Այլ երազովք ինձ արհաւիրս անդ արկանես անդոհականս ,  
Եւ տեսեամբք ահաւորօք զիս ի յանուրջս իմ հարկանես .

Թափես յանձնէ իմէ՛ զոգի , բառնաս ըզդունչ իմ ի մարմնոյ .

Իսկ ընդէ՛ր ոչ եւ ըզկեանս իմ տաս կապտել մահու յինէն .

Ձի թէ կելով կեցից , եղջց ինչ ոչ դիտեմ երկայնամիտ :

Ամիտիես զձեռքն քո յինէն , զի ընդունայն կեանք իմ են ինձ .

Ձի՛նչ է մարդ զի խնամարկես դու զնա , հայիս ի նա մրտօք ,

Ձի պահպանես դու զնա , զի այց ընդ առաւօտս առնես նըմա :

Մինչեւ ցե՛րք ոչ թողուցուս առնուլ վայրիկ մի ինձ հանդիստ ,

Ձի կլանիցեմ ես ըզտողուկս իմ ի ցաւոց հեղձամղըճուկ :

Ձի թէ մեղայ , որ սըրտադէտդ ես որ քըննես զերկիամուռն՝

Դու դիտես զի զքեզ ինձ հաշտ ցանկամ ի կեանս եւ ի մահու .

Իսկ ընդէ՛ր եզիր սոսիս զիս քեզ եւ բեռն ինձ անըմբեր .

Քաւեա ըզմեղս իմ , Տէր , սըրբեա՛ , ի մուռացօնս արկ զայն ի խոր .

Ձի յերկիր ահա դարձայց ընդ հուսլ , եւ այլ ոչ եւս իցեմ :

(Տաղաչարիեալ)

Ի Հ. Ս. Հիւրմիւզեանէ

34

### Ե Ղ Ի Շ Է

Ա.

#### ԽՈՐՀՈՒՐԴԷ ԵՒ ԻՐԲ ԶԱՐԲ ՅԱԶԿԵՐՏԻ ԱՐՔԱՅԻՆ ՊԱՐՍԻՑ

Անարի , Լար , Լեւիար  
Անուսումնոթիւն , Գէորգիւն  
Անցի իրացն , Երօ Քանթր  
Ի կարծ (մկ.) Իւրիւր  
Հրդեհել , արել  
Հանդես առնել , Գնել , Գործել  
Վասարել , Գործարարել , Գործել

Անձախական , որ Գնորդ  
Ընդանել , Գնել , Գործել  
Արկանել ի ներս , Գն Բերել  
Շանթել , Գաւարել (օճ)  
Պարզել գոչել , Բերան Բաց Գործել  
Կարաւան , (Գեղարան)  
Յառաջ կոչել՝ մասնագանել , Գործել

Որոց ողիքն թուլացեալ են յերկնաւոր առաքինութենէն , յոյժ  
ընդ ահիւ անկեալ է ընութիւն մարմնոյ (1) . յամենայն հոգմոյ  
չարժի եւ յամենայն բանէ խառվի եւ յամենայն իրաց դողայ . ե-  
րազադէտ է այնպիսին ի կեանս իւրում , եւ յանգիւստ կորուստն  
յուզարկի ի մահուան իւրում : Որպէս եւ ասաց ոմն ի հնումն Մահ  
ոչ իմացեալ՝ մահ է , մահ իմացեալ՝ անմահութիւն է : Որ զմահ ոչ  
գիտէ , երկնչի ի մահուանէ . իսկ որ գիտէ զմահ , ոչ երկնչի ի մահ-  
ուանէ :

Եւ այս ամենայն չարիք մտանեն ի միտս մարդոյ յանուսումնու-  
թենէ : Կոյր զրկի ի ճառագայթից արեգական , եւ ազիտութիւն  
զրկի ի կատարեալ կենաց . լաւ է (2) կոյր աչօք քան կոյր մտօք :  
Որպէս մեծ է հոգի քան զմարմին , այսպէս մեծ է տեսաւորու-  
թիւն մտաց քան զմարմնոյ (3) : Եթէ ոք կարի առաւելեալ իցէ աչ-  
խարհական մեծութեամբ , եւ մտօքն արքատաղոյն , այնպիսին ո-  
ղորմելի է քան զբազումս . որպէս եւ տեսանեմք իսկ , ոչ միայն  
ի չարաւոր մարդիկ , այլ որ (4) մեծն է քան զամենայն , թագա-  
ւոր՝ որ ոչ ունի զիմաստութիւն արթնակից իւր , ոչ կարէ ի վի-  
ճակին իւրում վայելուչ գող : Իսկ թէ առ երկրաւորս այսպէս , որ-  
չափ եւս առաւել աս հոգեւորն : Բոլոր մարմնոյս հոգի է կենդա-  
նութիւն , իսկ մարմնոյ եւ հոգւոյ միտք են կառավար . եւ որպէս

(1) Հոս պիտի է իմանալ Գնորդ դեռանուն եւ ուս այսմ կարդալ . Յոյժ քնդ անխ  
անկեալ է բնութիւն մարմնոյ Գնորդ՝ Գնորդ ողիքն ելլել :  
(2) Ձեղջեալ է Գնել բայն :  
(3) Տես 4 կանոն ԺԳ դաս :  
(4) Փոխանակ ըսելու , Գնորդ Գն . (Տես 7 կանոն ԺԹ դաս)

առ մի մարդ՝ այսպէս եւ առ բոլոր աշխարհս: Թագաւոր ոչ միայն զիւրն ասցէ պարսիս, այլ եւ որոց<sup>(5)</sup> եղեւ պատճառք ի կորուստ: Բայց մեք թէպէտ եւ ոչ ունինք հրաման բամբասել զիշխանն, եւ ոչ գովողք կարեմք լինել այնմիկ՝ որ աստուածամարտ լինին: Այլ զանցըս իրացն պատմեմ, որ ի նմանէ ընդ սուրբ եկեղեցիսն անցանէր<sup>(6)</sup>, եւ ոչ զանդադիմ: ոչ բամբասասէր մտօք, այլ ճշմարտութեամբ զեւս իրացն ասելով ոչ լռեցից, ոչ ի կարծ ընդոստուցեալ, եւ ոչ ի լուր զարթուցեալ, այլ ես ինքնին ի տեղւոջն պատահեցի եւ տեսի, եւ լուսայ զձայն բարբառոյ յանդգնաբար խօսելով<sup>(7)</sup>: Իբրեւ զհնոր՝ սաստիկ՝ զի<sup>(8)</sup> բախիցէ զծով մեծ, այնպէս շարժէր եւ տատանէր զամենայն բազմութիւն զօրաց իւրոց: Եւ հանդէս առնէր ամենայն ուսմանց, եւ ընդամէջը զամենայն մուգութիւնն եւ զքաւդէութիւնն եւ զամենայն ուսմունս աշխարհին իւրոյ: Արկանէր ի ներքս եւ զքրիստոնէութիւն կեղծաւորութեամբ, եւ ասէր զայրացեալ մտօք: Հարցէք, քննեցէք, տեսէք: Թող որ լաւն է՝ ընտրեալ կալցուք: Եւ փութայր որ ինչ ի մտին էր, թէ վաղվազակի կատարեսցէ:

Իսկ ի կողմանց կողմանց<sup>(9)</sup> Քրիստոնէայքն որ ի զօրուն էին, իմացան զհուրն՝ որ ի ծածուկ վառեալ բորբոքէր, եւ կամէր հըրդեհել զլերինս եւ զըաշտս առ հասարակ: Ջեռան եւ նոքա անծախական հրովն, եւ սաստիկացէս պատրաստեցան ի փորձութիւն զաղանի մեհենայիցն<sup>(10)</sup>: Իսկ անօրէն իշխանն իբրեւ զիտաց, եթէ յայտնեցաւ խորամանկութիւն խորհրդոցն, եւ պատրաստեալ հուրն՝ մինչեւ ուրուք ի նա փչեալ, վառուին նորս<sup>(11)</sup> յայտնի իմացաւ

(5) Ուրեք ուրեք յասկացեայն նախդիրն չիլիմուի յասկացուցին վրայ, երբ ինկնին յասկացեայն յայնի կ'իմացուի. ուսի այս խօսիին մէջ ուր յասկացեայն է ըստրոք, իւր նախդիրն չէ կ'իմացմ որոց յասկացուցին վրայ, որոյ առջեւ լուկեայն կ'իմացուի որոցն յերանունն. եթէ ոչ պիտի լռուէր, Այլ եւ ըստրոք (պատրաստ պնդիցի) որոց պատմում եղեւ ի կորուստ:

(6) Որ դերանունն որ զանոց էրոց բառն կը յարաբեր եւ նեհեաբար յոգնակի է եզակի առած է իւր-բայն: (Տես 4 կանոն Ի դաս)

(7) Անուրի դերբայն շատ անգամ ուղղական՝ եւ մանաւանդ գործիական կը դուրի փոխանակ ըստ բայաձայնակին եւ անցեալ դերբայի եւ անոր հոլովից. — Ուսի հոս դրուած է իւրեւ, փոխանակ քսելու իւրեւ կամ իւրեւ:

(8) Գէ փոխանակ որի (Տես 2 կանոն Ժե դաս)

(9) Կը նշանակի (որոցն իւրեւ) (Տես 3 կանոն Ժե դաս)

(10) Փոխանակ քսելու, որ է իւրեւ զորոցն զորեւ. (Տես 9 կանոն Զ դաս)

(11) Ինչ. եւ պատրաստել հորոց վառումն յայնի իմացաւ, եւլին. (Տես 2 կանոն Ժ դաս)

երկեղածաց Աստուծոյ, սկսաւ ծածուկ նետիւք խոցոտել զմիտս իւրոյ շարութեանն, եւ անբժշկական վէրս յողիս եւ ի մարմինս տեսանէր: Մերթ շանթէր զալարէր իբրեւ զօձ թիւնաւոր, մերթ պարզէր գոչէր իբրեւ զառիւծ զայրացեալ. զեղյր գլորէր, տապալէր երկդիմի մտօք, զխորհուրդս կամացն կամէր կատարել: Բանզի ձեռն արկանել եւ ունել ոչ կարէր, վասն զի ոչ էին հոմագունդ ի միում վայրի առ նմա. սկսաւ այնուհետեւ յառաջ կոչել զիրտսերս յաւազաց եւ զանարգս ի պատուակաւնաց եւ զողէտս ի գիտնոց եւ զանարիս ի քաջ արանց. եւ զի՛ մի մի թուրիցեմ, այլ զամենայն զանարժանսն յառաջ մատուցանէր, եւ զամենայն զարժանաւորսն յետս տանէր. մինչեւ զհայր եւ զորդի քակէր ի միմեանց:

Եւ իբրեւ ետես, թէ ոչ ինչ յարգեցաւ ծածուկ հնարագիտութիւնն. այլ ընդդէմք յովվագոյն գործէին. քանզի տեսանէր զքրիստոնէութիւն՝ որ օր քան զօր յորդեալ տարածանէր ընդ ամենայն կողմանս հեռաւոր ճանապարհին ընդ որ ինքն անցանէր, սկսաւ հաչել եւ մաչել եւ հառաչելով յոգւոց հանել: Յայտնեաց ակամայ զծածուկ խորհուրդսն, եւս հրաման բարձր բարբառով եւ ասէ. Ամենայն ազգ եւ լեզուք՝ որ ընդ իմով իշխանութեամբ՝ զադարեանցն յիւրաքանչիւր մուրր օրինացն, եւ միայնոյ եկեացն յերկրագութիւն արեգական, զոչս մատուցանելով եւ աստուած անուանելով, եւ սպաս ունելով կրակի ի վերայ այսր ամենայնի եւ զմոգութեան եւս օրէնս կատարելով, զի մի ինչ ամենեւին պակաս առնիցեն: Չայս ասելով քարոզ կարգայր ի մեծի կարաւանին, եւ պատուէր սաստիւ ի վերայ զնէր ամենեցուն, եւ դեսպանս ստիպաւ արձակէր յամենայն ազգս հեռաւորս, զզոյն պատուէր հրամանի առ ամենեսեան արկանէր:

Յայնմ ժամանակի միաբան մագքն եւ քաւդեայքն բարձին զձայնս իւրեանց եւ ասեն, Աստուածքն՝ որ ետուն քեզ տէրութիւն եւ զյաղթութիւն ի վերայ թշնամեաց քոց, ոչ ինչ են կարօտ խնդրել ի քէն յերեւելի պատուականացս, այլ զի բարձցես զամենայն ուսմունս մուրրութեան մարդկան, եւ ի մի դարձուցես օրէնս ուսմունս մուրրութեան: Հաճոյ թուեցաւ բանն առաջի թագաւորին եւ ամենայն մեծամեծացն, եւ մանաւանդ որ էին առաջիկայք օրինացն: Խորհուրդ ի մէջ առեալ, յաղթէր խրատն: Անդէն ի ներքոյ պահ դրանն արգելոյր զբազմութիւն այրուծիոյն Հայոց եւ վրաց եւ զԱղուանից, եւ զամենեցուն՝ որ էին հաւա-

տացեալ ի սուրբ Աւետարանն Քրիստոսի: Եւ հրաման սաստիւ ի վերայ դռնապանացն առնէին, թէ որ յարեւելս առ մեզ գայցեն՝ թողցեն: Իսկ յարեւելից յարեւմուտս անանց լիցի ճանապարհ: Եւ իբրեւ արգել եւ փակեաց զնոսս յամուր եւ յանել գառա- գիղն, եւ յիրաւի սասցիլ ամուր եւ անել, քանզի չիք անդ տեղի փախստի եւ թաքստի, վասն զի շուրջանակի թշնամիք են բնակեալ, յայնմ ժամանակի ձեռն արկանէր ի նոսս, եւ մեծաւ չարչարանօք եւ պէս պէս տանջանօք վատթարէր զբազումս ի նոցանէ, եւ ստիպէր ուրանալ զճշմարիտն Աստուած եւ խոստովանել զերեւելի տարերս: Իսկ զօրականքն առ հասարակ գեղեցիկ խորհրդով քաջապէս զօրութեամբ միաբան ազազակէին եւ ասէին. վկայեն երկինք եւ երկիր, ոչ երբէք հեղգացեալ եմք յարքունի վաստակս, եւ ոչ խառնեալ <sup>(1)</sup> վատութիւն ընդ արութիւն քաջութեան, ի զուր անողորմ են հարուածքս ի վերայ մեր: Եւ բազմանայր գոչունն ազազակի նոցա, մինչեւ ինքնին թագաւորն ահանատես լինէր իրացն յանդիմանութեան, եւ անդէն վազվազակի երգմամբ հաստատէր եւ ասէր. Ոչ թուլացուցից ձեզ, մինչեւ կատարեսձիք զկամս հրամանաց իմոց:

Բ. Յեղանակ

35

Բ

ՈՒՐԱՅՈՒԹԻՒՆ ԱՒԱԳԱՆԻՈՅՆ ԵՒ ՀԱՒԱՏԱՅԵԼՈՅՆ ԸՆԴ ԱՅՆ ՎԻՇՏՔ

Հեղուլ (զխնդրուածս), (—դաւանք) ընէլ  
 Խրատու, իբրս ասու  
 Խեղաքիւր, ծառայութեամբ  
 Այրուծի, հեռէլ զօր  
 Խոնքեական, գործէլ ապրո  
 Իղծի լինել, քառքէլ  
 Անյազ, չգահաստ  
 Հայս, իմար  
 Փանդամ, լալակ (եւլակ)  
 Զանգիլ, իմարտել  
 Յանգոր ելանել, հանգարանալ

Ծիւղի, եւեւ (ւերեւոփ)  
 Գումիզ, փշ, ջրէլ  
 Շնցի, ջրէլ  
 Առյայտ, երբ [ վերաբերել  
 Հարկանել ի միս կամ յոգիս, լարել  
 Զգուել, քեզէլ, ասել  
 Գորովել, ծառայել  
 Տոչորել, արել  
 Անիւն, փէր  
 Կափուցանել, գոյել  
 Գեհեան, հեպ (քեւեան)

(12) Իմս. եւ ոչ եւ խառնեալ:

Իսկ երկիւղածացն Տեառն զայս տեսեալ, մեծաւ յուսով աղօթելով ասէին միաբան. Դու Տէր ամենայնի, որ գիտես զծածկեալս սրտից մարդկան, եւ յայտնի են առաջի քո ամենայն աներեւոյթք խորհրդոց, եւ ոչ ինչ խնդրես վկայութիւն յերեւելեաց, որպէս զի եւ զանգործս մեր տեսին աչք քո, արդ առաջի քո հեղուք զխնդրուածս մեր: Ընկալ Տէր, զծածկութիւն աղօթից մերոց, եւ կատարեալ զմեզ ի հաճոյս պատուիրանաց քոց, զի ամաչեսցէ չարն, որ խրոխտացեալ մարտնչի ընդ մեզ իշխանութեամբ անօրինին: Շարժեալ, Տէր, զկամակոր խորհուրդսն նենգաւորին, եւ խախտեալ զկամս ամբարշտութեան նորա, եւ դարձո զմեզ խաղաղութեամբ խորհրդոցն անգրէն ի սուրբ եկեղեցին. զի մի յանկարծակի յափշտակեալ աւերեսցի չարսչար ի թշնամեաց: Եւ անձամբ իւրեանց զայս ուխտ եղեալ անքակութեամբ ընդ Աստուծոյ, զի հաստատուն կայցեն ըստ առաջին խորհրդոցն, պատգամ ի ներքս յղէին զնոյն խրատուուն <sup>(\*)</sup> իւրեանց, իբր թէ կատարեսցին կամք անօրէնութեան նորա: Զայն իբրեւ լուաւ թագաւորն յոյժ ցնծացեալ բերկրեցաւ, կարծեցեալ զգիտն հասանել նմա յօգնականութիւն, շրջեալ եւ աւերեալ զհաստատուն խորհուրդս ծառայիցն Աստուծոյ, եւ ահա մատուցանեն երկրպագութիւն արեգական, պատուեալ զնա զոհիւք եւ ամենայն օրինօք մողութեանն: Եւ զայս ոչ կարաց իմանալ ցնորեալն, եթէ անըստուեր լոյսն արեգականն արդարութեան՝ սպառէր եւ մաշէր զխաւարային խորհուրդս նորա, եւ եղծեալ ապականէր զամենայն խեղաթիւր կամս նորա: Եւ կուրացեալ ի ճշմարիտ յայտնութենէն՝ ոչ ինչ խնցաւ զպատրանս խաբէութեանն, որով վրիպեացն: Հեղցր արկանէր առաջի նոցա զպարգեւս երկրաւորս, եւ վերստին ամենեցուն զպատիւս եւ զբազն նորոգէր, յառաջ մատուցանելով եւ երեւելի առնելով ընդ ամենայն տիեզերական իշխանութիւնն: Եւ անբաւ առատութեամբ ազարակս եւ աւանս միում միում ի նոցանէ յարքունուստ շնորհէր, սիրելիս եւ բարեկամս կարգայր զնոսս, եւ առ հպարտ յանդիմութեան մտացն կամակորութեան՝ կարծէր թէ փոխանակիցի ճշմարտութիւնն ընդ ստութեան:

Եւ զայս արարեալ, բազում այրուծի գունարէր ընդ նոսս, եւ

(\*) Զմի ոմն ի ներկին խորհրդականաց բազաւորին, որ ի ծածուկ հաւատացեալ գոյով ի Քրիստոս, խրատ եւ աւագանուց յուրաս կալ ի հաւատոց, զի ապրեցուպցն զանձինս:

զմեծ ոմն իշխան մոզպետ կացուցանէր ի վերայ նոցա: Կոնարհէր եւ աղաչէր պատուիրելով, թէ մինչ ես ի պատերազմէս դարձեալ զայցեմ խաղաղութեամբ, ձեր արարեալ եւ կատարեալ իցէ զամենայն ըստ կամաց իմոց: Իսկ խոհերականքն այնուհետեւ յարուցեալ յիրաքանչիւր խաւարային զարանաց՝ իղձք լինէին վաղվաղակի զհրամանն կատարել, ձայն արարեալ յաշխարհս հեռուորս՝ միանգամայն խաղալ գնալ յերկիրն արեւմտից: Կէտ եղեալ զժամանակն՝ զամիսն վեցերորդ (1), տազնապէին եւ ստիպէին արքունի հրամանաւ:

Մինչեւ ի նաւասարդէ նաւասարդ(2), ասէ յամենայն տեղիս՝ ուր իցեն ընդ իշխանութեամբ թագաւորին մեծի, բարձցին կարգք եկեղեցոյ, փակեցին եւ կնքեցին դրունք սուրբ տաճարացն, գրով համարով առցին նուիրեալ սպասքն յարքունիս, լուսեցեն ձայնք սաղմոսացն եւ դադարեացեն ընթերցուածք անսուտ մարգարէիցն: Քահանայք մի՛ իշխեցեն ի սուռնս իւրեանց ուսուցանել զժողովուրդս, եւ հաւատացեալքս ի Քրիստոս՝ արք եւ կանայք, որ բնակեալ են յիրաքանչիւր մենանոցս, փակեցեն զհանդերձս իւրեանց ըստ աշխարհական կարգաց: Դարձեալ եւ կանայք նախարարացն կալցին զուսումն վարդապետութեան մոզպն: Ուստերք եւ դստերք ազատաց եւ շինականաց կրթեացին ի հրապարակս նոցուն մոզպ: Կարճեցցին եւ արգելցին օրէնք սուրբ ամուսնութեան, զոր ունէին ի նախնեաց ըստ կարգի Քրիստոնէութեանն. այլ փոխանակ ընդ կնոջ միոյ բազում կանայս արասցեն զի աճեցեալ բազմացին ազգք Հայոց: Դստերք հարանց լիցին, եւ քորք՝ եղբարց, մարք մի՛ ելցեն յորդւոց, այլ եւ թուռնք ելցեն յանկողինս հաւուց: Պատրուծակք մի մեռցին անյազ, եթէ յօգեաց իցէ եւ եթէ յայծեաց եւ եթէ յարջաւոց եւ եթէ ի հաւուց եւ եթէ ի խողաց: Հայսք առանց փանդամի մի զանգլին, ծիւղք եւ քակորք ի կրակ մի եկեացեն, ձեռք առանց գոմիզոյ մի լուսացին. շնջրիք եւ աղուէսք եւ նապաստակք մի՛ մեռցին: Օձք եւ մողէզք, գորտք եւ մրջմունք, եւ որ այլ եւս խառնափնդոր բազմաձճիք են, մի՛ կացցեն, այլ վաղ թուով համարով ի մէջ բերցին ըստ արքունի չափոյն: Չայս ամենայն որ ասացաք(3), առ ժա-

(1) Չափան վեցերորդ բացալայից է զժամանակն բառին:  
 (2) Տես 3 կանոն ժէ դաս:  
 (3) Փոխանակ քսելու՝ զոր ասացաք. (Տես 7 կանոն ժժ դաս)

մանակ մի մինչեւ ի զլուս տարւոյ կատարեացեն ամենեքեան. եւ զայլն ամենայն առյապա պատրաստեացեն: Իսկ զայս ամենայն հրամանս պատուիրանաց առեալ մոզպաց եւ մոզպետաց, զտիւ եւ զգլխեր փութային հասանել յաշխարհն Հայոց, եւ առ յոյժ խնդութեանն (4) ոչ երբէք յագէին երկայնութեամբ ձանապարհին:

Եւ ահա անդէն ի մեծ բանակին Պարսից՝ յազգաց ազգաց, որք են հաւատացեալի սուրբ Աւետարանն Քրիստոսի, իբրեւ տեսին ըզչար յանձնառութիւնն Հայոց. յոյժ հարան ի միտս իւրեանց, եւ կործանեցան անկան ի վերայ դիմաց իւրեանց: Բազումք ի նոցանէ թաղծեալք ի սուրբ ծանրութեան, հարեալ յողիս եւ դառնացեալ յարտասուս, եկին եւ յանդիմանեցին զնախարարեանն, եւ յոյժ դարովեցին զուխտ քահանայութեանն: Զլուսին զամենեստան եւ ասէին. Զի՞ առնիցէք զսուրբ կտակարանսդ, եւ կամ յո՞ տանիցէք զսպաս տէրունական սեղանոյն, մոռանայցէ՞ք արդեօք զհոգեւոր օրհնութիւնսդ, եւ կամ լուսալ զաղարիցէ՞ք ի մարգարէական ձայնիցդ: Կախուցէք զաչս յընթերցուածոց, եւ խցէք զականջս ի լսելոյ, միթէ՞ զմտացդ անմոռացութիւն ո՞չ յիշցէք. զի՞նչ առնիցէք զպատուիրեալսն ի Տեառնէ. «Որ ուրասցի զիս առաջի մարդկան, յուրաստ եղէց եւ ես առաջի Հօր իմոյ, որ յերկինս է, եւ հրեշտակաց սրբոց (5)»:

Վարդապետք էլիք առաքելական քարոզութեանցն, արդ աչակերտք լինիցիք մալար խաբէութեանն: Ուսուցիչք էլիք ճշմարտութեանն, արդ ուսուցանէք զսպառի խաբէութիւն մոզպաց: Քարոզք էին արարչական զօրութեանցն, արդ զտարերս աստուածս խոստովանիք: Յանդիմանիչք էլիք ստուրթեան, արդ եւ քան զսուտն ստադոյնք լինիցիք: Ի հուր եւ ի հողի էլիք մկրտեալք, արդ ի մոխիր եւ յաճիւն թաթաւիցիք. կենդանի մարմնով եւ անմահ արեամբ էլիք սնեալ, արդ ի ձեռններ զոհից եւ ի շարաւս աղտեղիս մրձոտիցիք: Տաճար էլիք Հոգւոյն սրբոյ, արդ զտհարան դիւսոց լինիցիք. քրիստոսազգեացք էլիք ի մանկութենէ, արդ մերկացեալք ի փառացն դիւաբար արեգական կաքաւիցէք. ժառանգ էլիք արքայութեանն, արդ անձամբ զանձինս արկէք ի ժառանգ գեհնէնին: Նոցա է ըստ պառնացեալ հուրն անշէջ, ընդէր դուք ընդ նոսա այրեցեալ տոչորեցայք, նոցա (6) պարարի որդն անմահ, իսկ արդ դուք պարա-

(4) Յոյժ ամական է խնդութեանն ին (Տես 2 կանոն Ա դաս)  
 (5) Իմա Առաջի հրեշտակաց սրբոց:  
 (6) Փոխանակ քսելու, վառն նոցա (Տես 6 կանոն ժՁ դաս)

րիցէք զմարմինս ձեր նմա ի կերակուր. խաւարն արտաքին նոցա թանձրացեալ պահի, դուք լուսագգեստ (7) ընդէր յուղարկեցայք ընդ նոսա ի նոյն խաւար: Նոքա ի վաղնջուց հետէ էին խկ կուրացեալք, դուք զկնի կուրացն կուրացարուք (8). նոցա էր փորեալ զխորխորատն, դուք ընդէր լցէք յառաջագոյն: Ե՞րբ ուսանիցիք զբազմաթիւ անուանս աստուածոցն նոցա, այն՝ որ չիք ուրեք ի միջի եւ ոչ մի (9): Թեթեւացեալ ի ծանր բեռանց՝ անձին անձամբ ասէք զբեռն ծանրութեան. ազատացեալք ի մանկութենէ՝ չարաչար մտէք յանազատելի ծառայութիւնն: . . . Դուք էիք մեր ամուր պարխպ ամուր ասպատանի, յորժամ աստի վտանգ հասանէր. առ ձեզ յանդորր ելանէաք. արդ մեծ ամուրդ այդ հիմն ի վեր տապալեցաւ: Դուք էիք մեր պարծանս (10) առ թշնամիան ճշմարտուտութեան, արդ դուք էք մեր նախատինք առ նոյն թշնամիս: Յայժմ վասն ձերոյ ճշմարիտ հաւատոցն եւ ի մեզ փոքր ի շատէ խնայէին, եւ արդ ի պատճառս ձեր եւ զմեզ անողորմ դատին:

Ձայս եւ առաւել քան զսոցն խօսեցան ընդ մեծամեծս աւագանւոցն, եւ յաւելին ցաւս ի վերայ ցաւոց: Յայտնել եւ ցուցանել նոցա զխորհուրդն ոչ կամէին, լսել եւ չառնել պատասխանի անհնար էր, հեղձամղձուկ եղեալ մեծապէս յարտասուս հարկանէին: Ընդ նոսին դառնացեալ լսողք ու տեսողք յանմխիթար սուգ լինէին ամենեքեան:

**Թ-Գ. Յեղանակ**

(7) Իմա. լուսագգեստ քուր:

(8) Կուրացարուք, փոխանակ քսելու՝ կուրացար: Բայերէն ոմանց հրամայական յոգնակի երկրորդ դեմն եւ կաստեալ յոգնակի երկրորդ դեմն միեւնոյն խոնարհմամբ կը լինին:

(9) Ա.Յ. որ ելլն; փոխանակ քսելու, այնպէ՛ք որոց կամ յորոց: — Ա.Յ., այդ, այն երբեմն կը համաձայնին ցուցուած գոյականին յարաբերականին հետ, ինչպէս որ յարաբերականն ալ երբեմն անոնց անհամաձայն ըլլալով, յետադաս կը դրուի:

(10) (Տես 2 կանոն ԻԲ դաս)

**ԿԱՅԻՆԱՅ ԽԴՃԻ ՄՏԱՅՆ ՏԱԳՆԱՊ ԸՆԴ ՍՊԱՆՈՒՄՆ ԵՂԲՈՐՆ**

Յիմն դառնալ, Ինչպէ՛ս քու  
 ձեպընթաց, Լուսաբոյն  
 Շրջըջել, ասբն անբն Գրչոյն  
 Շրջիւն, Իւրոյն  
 Նուալիլ, Կուր  
 Յիմն դառնալ, Ինչպէ՛ք քու  
 եղի, քու (ււււ)

Վիթալ, Ինչպէ՛ք  
 Կիլ, Ինչպէ՛ք, Ինչպէ՛ք  
 Կրուցեալ, Կուր, Կուր  
 Թափել զոգիս, Կուր Կուր  
 Երաշխայ, Կուր  
 Կալլակիլ, Կուր  
 ձապալիլ, Կուր Կուր

**ԵՒԱՅ ԵՒ ԱՊՍ. ԿԱՅԻՆ**

**ԵՒԱՅ**

Ա.Յ, կարի խկ ճըշմարիտ է՝ զի աստ  
 Յաքսորանացըս վայրի,  
 Որում եղաք արժանի,  
 Ձիք գըտանել խաղաղութիւն բայց ի Տէր . . .  
 Ա.Յ եկաւորդ այդ չից՞  
 Ինքըն որդին իմ կային.  
 Ձի՞ դայ այդպէս ձեպընթաց,  
 Է՞ր միայնակ առնէ դարձ.  
 Ո՛հ, զի՛ յաճախ շըրջըրջէ  
 Կասկածանօք դաչըս իւր,  
 Եւ դողունի անհաւատար ասնու քայլ,  
 Ի սոյլ հողմոյ եւ ի շըրջիւն տերեւոյ  
 Յետս ընկըրկի եւ դողայ,  
 Գոյն երեսացն հատանի . . .  
 Յո՞ զիմես, մի՛ խուսեր յինն, մայր քո եմ,  
 Ո՞չ ձանաչես զիս զեւայ,  
 Ա՛հ, որպիսի՛ ահ եւ սոսկումն ունի զքեզ:

**ԿԱՅԻՆ**

Ո՛վ հանդիպումըն գըթնեայ:

**ԵՒԱՅ**

Եղուկ եմ ես. զի՛նչ է արիւնդ այդ բոքեւ.

Ո՛ւր է եղբայր քո անմեղ.

Աւանդ. ո՞ր ձեռքն ցուրտ ըզսիրտ իմ դեղու:

Ո՛չ տաս դու ինձ պատասխանի. լուռ լեր անգուլթ անողորմ:  
Լուռ լեր, գիտեմ. որդեակն իմ...

Միակ սրտի իմոյ սփոփումն... արիւնդ այդ...

Ո՛վ Տէր, եւ ո՛ր ձեռն ինձ տացէ... մեռանիմ... ( նուաղի )

Կ Ա Յ Ի Ն

Մինչչեւ դա յինքըն դարձեալ

Տամ ես աստի խոյս ի բաց...

Այլ եղուկ եմ եւ թըշուառ

Անկեալ ի վիճ արհաւիրաց.

Յաստուածասաստ ցասմանէ

Ո՞ր զիս վիրապ ծածկեսցէ.

Փախեայց. այլ ո՛ւր եւ ո՞րպէս,

Եւ զի՞նչ օգնէ ինձ փախուստ,

Թէ ընդ բեռամբ դողդոջ մարմնոյս ծունկը իմ կըքեն կըթուցեալ,  
Յիս թէ գդահիճ իմ կըբեմ:

Ե Ի Ա Յ

( Սրապիեալ ի նուաղանկեն ) Ո՛ւր ես...

Կ Ա Յ Ի Ն

Ո՛հ զի՞նչ արարից,

Յինքըն դառնայ մայր իմ արդ:

Ե Ի Ա Յ

Արէլ որդեակ իմ...

Կ Ա Յ Ի Ն

Ո՛վ անուռն ահարկու,

Ո՛վ կըշտամբանք դառնաղէտ:

Ե Ի Ա Յ

Եղեռնաւոր, դարձո՛ւ զորդեակն իմ առ իս:

Կ Ա Յ Ի Ն

Դ՞ու եւս, մայր, կամիս ըզսիրտ իմ հարկանել կարեվէր:

Ե Ի Ա Յ

Մայր զիս կոչես տակաւին.

Եւ ո՞յր, աւանդ, այսուհետեւ իցեմ մայր,

Համայն զորդիս իմ կորուսի զերկասին,

Արէլ մեռեալ, կային եղեալ դատապարտ.

Չար քան ըզմահ անմեղին

Է ինձ կորուստ կենդանւոյն:

Կ Ա Յ Ի Ն

Բաւ է, մի՛ եւքս մի՛ մայր...

Ե Ի Ա Յ

Ըզոտակալին դայն ոճիր

Ո՞րպէս գործել կարացեր,

Ո՛չ քրտամնեցար ի տես զիմոց անմեղին,

Ի դողդոջէլ անբիժ մարմնոյն ի մահուն.

Ո՛չ ձեռքն քո կարկամեցաւ յիջուցանելն ըզհարուած,

Եւ ո՞րպէս ոչ պաղեցաւ

Արիւն ի քո երակունս:

Զայս դու առ սէր հայրենի,

Զայս առ երկունքս մօր քո

Հատուցանես վարձ (1), անգուլթ.

Ո՛ւր ակն ունել իցէ օրէն շքնորհասպարտ գոհութեան,

Ո՛ւր հաւատոց եւ զըթուլթեան եւ սիրոյ.

Եզկէլի հայր, մայր տառապեալ եւ թըշուառ:

Կ Ա Յ Ի Ն

Բաւ է արդ բաւ, ճանաչեմ

Եւ խելամուտ եմ իմոց

Անհընարին աղետից.

Անցեալն առնէ զիս յուսահատ, թափէ զողիս մերձակայն.

Եւ արհաւիրս ինձ յաճախէ ասրագայն:

Յամենայնի ըզպատուհաս իմ ինձ թըլի նըկատել

Եկեալ հասեալ ընդ առաջ.

Թըլին աչաց իմոց դահիճք առ ի տալ ինձ պատուհաս

Մարդիկ բոլոր եւ զօրութիւնք երկնայինք.

Ոչ եւս է յիս յոյս յԱստուած,

Ողորմել ինձ ո՛չ կամի,

Եւ կամ ոչ եւքս կարէ:

(1) Կրկնուած զոյս ցուցական ամականներն Է-է բառին կը վերաբերին:



կուրիւն (2) ընչից, կամ ի խողխողումն սիրելեաց, կամ ի դերու-  
թիւն ընտանեաց, ելանել ի հայրենի երկրէն եւ անկանել ի սորը-  
կութիւն յօտարութեան, առ ոչինչ համարեցան զայս ամենայն  
անցս չարչարանացն. այլ միայն միաբան կալ ընդ Աստուծոյ, զի  
ի նմանէ միայն մի՛ դերի ելցեն. եւ ամենայն երեւելի մեծութեանս  
զնա բաւական համարեցան՝ ընտրեալ ի միտս իւրեանց: Եւ զուրա-  
ցութիւնն մեռելութիւն վարկանէին, եւ զմահ վասն Աստուծոյ ա-  
նանց կենդանութիւն, եւ ծառայել յերկրի՝ ազատութիւն կենաց  
իւրեանց, եւ ընկենուլ զանձինս յօտարութիւն ընդ Աստուծոյ զիւ-  
տից: Որպէս յայսմ ժամանակի տեսաք աչօք մերովք, զի զնոյն  
նահասակուրիւն նահասակեցաւ (3) եւ աշխարհս Հայոց:

Քանզի իրրեւ ետես մեծն վարդան զերկազառակութիւն աշխար-  
հին իւրոյ, ոչ ինչ թերահաւատութեամբ զանգիտեաց: Թէ՛պէտեւ  
ստուգեալ գիտաց զբազմաց այլոց եւս զերկմտութիւն, որ դեռ  
եւս ընդ նմա միաբանեալք էին, քաջալերեցաւ յանձն իւր եւ քա-  
ջալերեաց զգօրսն իւր. քանզի ինքն իսկ բռնացեալ ունէր զթա-  
գաւորանիստ տեղիսն միաբանութեամբ նախարարացն, որ ոչ քա-  
կեցան ի սուրբ ուխտէն:

Սկսաւ սպարապետն խօսել միաբանութեամբ նախարարացն ընդ  
զօրսն եւ ասէ. ի բազում պատերազմունս մտեալ է իմ, եւ ձեր  
ընդ իս. է ուրեք զի (4) քաջապէս յաղթեցաք թշնամեացն, եւ է  
ուրեք՝ զի նոքա մեզ յաղթեցին. եւ բազում այն է՝ որ յաղթող  
գտեալ եմք եւ ոչ յաղթեալք: Եւ միանգամայն այն ամենայն էին  
մարմնոյ պարծանք, քանզի հրամանաւ անցաւոր թագաւորին  
մարտնչեալք: Որ փախչէր, վատանուն յաշխարհի երեւէր, եւ  
անողորմ մահ ի նմանէ գտանէր. իսկ որ քաջութեամբ յառաջ  
մատչէր, քաջ անուն ազգի ժառանգէր, եւ սրբաբան մեծամեծս  
յանցաւոր եւ ի մահկանացու թագաւորէն ընդունէր: Եւ մեք իսկ  
աւատիկ յիւրաքանչիւր մարմինս ունիմք վէրս եւ սպիս բազումս,  
եւ բազում այն քաջութիւն իցէ, վասն որոյ առեալ իցէ եւ սրբ-  
գեւս մեծամեծս: Անարգ եւ անօգուտ զքաջութիւնսն համարիմ,

եւ առ ոչինչ զպարգեւսն զբազումս. վասնզի ամենքեան խախ-  
նելոց են: Իսկ արդ եթէ վասն մահկանացու հրամանատուին զայն  
արութիւնս կատարէաք, որչափ եւս առաւել վասն անմահ թա-  
գաւորին մերոյ, որ տէրն է կենդանեաց եւ մեռելոց, եւ դատե-  
լոց է զամենայն մարդ ըստ գործոց իւրոց: Ապաքէն եթէ կարի  
չատ յառաջ մատուցեալ ծերացայց (5), սակայն ելանելոց եմք ի  
մարմնոյ աստի, զի մտցուք առ Աստուած կենդանի, որ ոչ եւս ե-  
լանիցեմք ի նմանէ:

Արդ աղաչեմ զձեզ, ո՛վ քաջ նիղակակիցք իմ, մանաւանդ զի  
բազումք ի ձէնջ լաւագոյնք էք քան զիս արութեամբ, եւ գահու  
ի վեր ըստ հայրենի պատուոյն. բայց յորժամ ձերով կամօք եւ յօ-  
ժարութեամբ առաջնորդ եւ զօրազուլս ձեզ կացուցէք, հէշտ եւ  
բազմալի թուեսցին բանք իմ լսելիս մեծամեծաց եւ փոքունց:  
Մի երկուցեալ զանգիտեացուք ի բազմութենէ հեթանոսացն, եւ  
մի յահագին սրոյ առն մահկանացուի զթիկունս դարձուցուք.  
Կի եթէ տացէ Տէր յաղթութիւն ի ձեռս մեր, սատակեսցուք ըզ-  
զօրութիւն նոցա, զի բարձրացի կողմն ճշմարտութեանն. եւ եթէ  
հասեալ իցէ ժամանակ կենաց մերոց սուրբ մահուամբ պատերազ-  
միս, ընկալցուք իւրնուրեքամբ արսիւ (6). բայց միայն յարութիւնս  
քաջութեան՝ վատութիւն մի խառնեսցուք: Մանաւանդ զի ան-  
մուաց է ինձ, յիշելով զիմ եւ զմանց (7) ի ձէնջ, ի ժամանակին՝  
զի զանօրէն իշխանն խաբեցաք, պատրեցաք իրրեւ զմանուկ մի  
սղայ անպիտան. իբր այն եթէ ի վերին երեսս զկամս նորա ամ-  
բարչութեանն կատարեցաք. բայց ի ծածուկ զխորհուրդս Տէր  
ինքնին վկայէ մեզ, որպէս անքակ կացեալ եմք ի նմանէ: Զոր եւ  
դուք ինքնին իսկ գիտէք, վասն սիրելեաց մերոց՝ որ ի մեծի նե-  
ղութեան էին, հնարս խնդրէաք վասն յանդորր հանելոյ, զի նո-  
քօք հանդերձ մարտ եղեալ կուուեսցուք ընդ անօրէն իշխանին  
վասն հայրենի աստուածատուր օրինացն: Եւ իրրեւ նոցա ոչ ինչ  
կարացաք օգնել, անհնար լիցի այս՝ եթէ վասն մարմնաւոր սիրոյ  
զԱստուած ընդ մարդկան փոխանակիցեմք:

Իսկ արդ յերկուս եւ յերիս կուրս Տէր ինքնին մեծաւ զօրու-  
թեամբ օգնեաց մեզ. որպէսզի զանուն քաջութեան ժառանգե-

(2) Հոս յառաջիկայումս բառին է նակալիւն զանց առնուած է: (Տես ժՎ դասին  
1 կանոնին վերջի դիտողութիւնն)  
(3) Տես 1 կանոն Ս. դաս:  
(4) Է զէ կամ որ, եր զէ, Է արեւ զէ, Է արեւ ար յանախ կր գործածուին եր-  
բէն, արեւ մակալներուն տեղ:

(5) Փոխանակ քակու ծերացայց. եզակին յոգնակիի ձեւով դրուած:  
(6) Տես 5 կանոն ժՎ դաս:  
(7) Այս յակագոցցայց առջեւ պէտք է իմանալ աստուածութեան կամ աստուծոյ յակագ-  
եակներն: Ս. յակա՝ յակացեալ մը երբեքն բոլորովին լռելեայն կ'իմացուի, միայն  
իւր նակալիւն դրուելով յակացուցչին վրայ:



ցաք, եւ զգորսն արքունի չարաչար հարաք, եւ զմոգսն անողորմ սատակեցաք, եւ զպղծութիւն կռապաշտութեանն ի տեղեաց տեղեաց սրբեցաք, զանօրէն հրաման թաղաւորին եղծաք ապականեցաք, զխռովութիւն ծովուն ցածուցաք, լեառնացեալ ալիքն դաշտացան, բարձրադէզ փրփուրն սպառեցաւ, զազմնացեալ սրամտութիւնն զազարեաց: Որ ի վերայ ամբոց որոտայր, նիւռն եղեալ՝ քան զսովորական բնութիւնն ի վայր գտաւ ընդ մեզ խօսերով: Որ բանիւ հրամանաւ (8) կամէր կատարել զչարութիւնն իւր ի վերայ սուրբ եկեղեցոյ, արդ աղեղամբ եւ նիզակաւ եւ սրբով կուտի: Որ իբրեւ զհանդերձ կարծէր ունել մեզ զքրիստոնէսութիւնն, արդ իբրեւ զգոյն ի մարմնոյ՝ չկարէ չըջել. թերեւս եւ ոչ այլ կարասցէ մինչեւ ի կատարած:

Եւ ահա եկն եհաս ժամանակ, զի զամենայն զկեղտ անուն ի մէնջ ի բաց բարձցուք: Յայնժամ իբրեւ զթախեալ սգաւոր՝ յոգի եւ մարմին (9) էաք արամեալք, այսօր զուարթացեալ եւ զգաստացեալք յերկասեան առ հասարակ եմք լրջացեալք. քանզի եւ զՏէրն բարերար ընդ մեզ տեսանեմք յառաջնորդութիւն: չէ մեր մարդ զօրավար, այլ զօրագլուխն ամենայն մարտիրոսաց: Երկիւղ թերահաւատութեան է նշանակ. զթերահաւատութիւն մեք ի մէնջ վաղ մերժեցաք, ընդ նմին եւ երկիւղն փախիցէ ի մտաց եւ ի խորհրդոց մերոց:

Չայս ամենայն սուարինի զօրավարն խօսեցաւ ընդ ամենայն բազմութեանն. զարձեալ եւ զմի մի ի նոցանէ քաջալերէր ի ծածուկ եւ սրասպնդէր, եւ զամենայն սրահասութիւն աղքատութեան լընայր: Որոյ ոչ ինչ գոյր զօրակամին (10) յանձնէ եւ յընկերաց մատուցանէր, որոյ զէն չէր, զէն պատրաստէր. եւ որում հանդերձ պիտոյ էր, հանդերձ զգեցուցանէր, եւ որում երիվար՝ երիվար տայր: Եւ առատ ուսովք ուրախ առնէր զամենեւեան, եւ զուարթագին զինքն ցուցանէր ամենեցուն:

Ե. Յեղանակ

(8) Տես 5 կանոն ԺՊ դաս  
 (9) Փոխանակ բարբառ. է մարմին: Երբեմն եւ շաղկապով կապուած նոյն հոլովով երկու բառերէն վերջնայն նախկին կրնայ զանց առնուիլ:  
 (10) Կարդաւ. Զբախտելն սրբոյ ոչ ինչ գոյր եւայլն. (Տես 7 կանոն Ի. դաս)

ՆԿԱՐԱԳԻՐ ՊԱՏԵՐԱԶՍԻՆ ՀԱՅՈՑ ԸՆԴ ՊԱՐՍԻՑ

Հասանիլ ի միջոյ, Գեղեղեմ պատիւ  
 Հնարագիտութիւն, հնարք, Գործարարութեան  
 Երամակ, Խառն (Գիւրգիւն)  
 Խումբ առնիլ, Ժողովուրդ  
 Ամբոյս, Խառնաշփոթութեան  
 Պատեցազն, զբահասար  
 Հասանել, արձանագիւր, ցալ  
 ձօնել, Երբեցանել  
 Գալարափող, արած փող, (Բարձրութեան)  
 Նախնիք, արհեստագիտութեան  
 Ի վերայ կալ, հասնուլ, ճշտել  
 Կանացի, թոյլ, Կնիւ պէտ րիւր

Հրաձգութիւնք, Կրտսէ, Կոյնիւ  
 Կոփիւն, Կահաներուս Երբեմն զանեւու  
 Շտապ, Կարմնայ. Կարմրանք [Կոյն  
 Թիգախել, Կրտսէ, Կարձակել  
 Գիտարաւ, Երբեմն Կրտսէ  
 Քայ Լայ (մկ) Կրտսէ Կարմնանք (Կրտսէ)  
 Գերբուկ, Խորհրդարար՝ Կարմր Կրտսէ  
 Գիտանոց, Կարմրակ, Բարձր Կրտսէ  
 Ի մէջ փակել, Կարմրակ Կրտսէ, Կարմրել  
 Մայրաւոր, անոր  
 Սրաքսութումն, Կարմրակ  
 Աւխարումն, Կարմր, Լայ

Յետ այսորիկ իբրեւ ետես զօրավար զնդին Պարսից, եթէ հաստան պատգամաւորքն ի միջոյ՝ խաբել զնոսա, եւ բարձաւ յոյս ակնկալութեան իւրոյ ցրուել զնոսա յանքակ միաբանութեանն, յայնմ ժամանակի յառաջ կոչէր զանօրէն վասակ եւ զամենայն ուրացեալ իշխանսն, որ էին ընդ նմա յաշխարհէն Հայոց. հարցանէր զնոսա, եւ ուսանէր ի նոցանէ զհնարագիտութիւն յաղթութեան: Եւ իբրեւ ուսեալ տեղեկացաւ զառն առն իւրաքանչիւր քաջութիւնս, կոչէր եւ զբազումս ի զօրագլխացն՝ որ էին ընդ իւրով ձեռամբ, եւ հրամայէր ամել զառաջեաւ զերամակս փոլացն, եւ ի գունդս գունդս զբազանսն բաժանէր, եւ առ մի մի փիղ երեք հազար սպառնազնեք (1): Կարգէր կազմէր զգորսն ամենայն, եւ տարածանէր երկայնէր զճակատն յերկայնութիւն դաշտին մեծի: Եւ իւրաքանչիւր զազանացն յաջմէ եւ յահեկէ զերեքհազարեան սպառնազնան պատրաստէր, եւ զբնիք բնիք նահասակացն (2) շուրջ զիւրեաւ գումարէր, եւ այսպէս ամրացուցանէր զգունդն Մատեան իբրեւ զաշտարակ մի հզօր եւ կամ իբրեւ զբերդ մի անմատոյց: Նշանս բաշխէր, դրօշս արձակէր, եւ ի ձայն մեծի փողոյն պատրաստ հրամայէր լինել: Իսկ արին վարդան յառաջ մատուցեալ եւ զաւագանին հարցանէր, եւ միաբան ամենեցուն խրատու

(1) Լուեկայն պէտ է իմանալ Կարմր Կարմր Կարմր  
 (2) Փոխանակ բարբառ, Կարմր Կարմր Կարմր Կարմր (Տես 2 կանոն Կ. դաս)

զգորագլուխսն կարգէր: Կազմէր զճակատն յորդորելով ընդ ամենայն երեսս դաշտին դէմ յանդիման Արեաց գնդին, առ արին Տղմուտ գետոյն:

Եւ իբրեւ այս այսպէս պատրաստեցան, երկոքեան կողմանքն զի սրամուտթեամբ եւ մեծաւ բարկութեամբ զայրանային, եւ զպանացեալ զօրութեամբ յիրեարս յարձակէին երկոքեան. եւ ամբոս աղաղակին երկոցունց կողմանց՝ իբրեւ ի մէջ ամեւոց շըփոթելոց՝ ճայթմունս գործէր, եւ հնչումն ճայնից զքարանձաւս լերանցն շարժէր: Ի բազմութենէ սազաւարացն եւ ի փայլիւն պատենագէն վառելոցն իբրեւ նշոյլք ճառագայթից արեգական հատանէին: Եւ եւ ի բազում սուսերացն շուլալ, եւ ի ճօճել բազմախուռն նիզակացն իբրեւ յերկնուստ ահագին հրաձգութիւնք եռային: Քանզի ո՞վ իսկ է բաւական ասել զմեծամեծ տագնապ ահաւոր ճայնիցն, որպէս կոփիւնք վահանաւորացն եւ ճայթմունք լարից ազեղանցն զլսելիս ամենեցուն առ հասարակ իրացուցանէին: Անդ էր տեսանել շտապ մեծի տագնապին եւ զաղէստ անբաւ տարակուսանացն երկոցունց կողմանցն, առ ի յանդուզն յարձակմանէն զմիմեանս բախելով, քանզի թանձրամիտքն յիմարէին եւ վատասիրաքն լքանէին, քաջքն խիզախէին եւ նահատակքն գոչէին: Եւ խուսք արարեալ ամենայն բազմութեան՝ զգետն ի մէջ փակէին, եւ զանդիտեալ գունդն Պարսից ի դժուարութենէ գետոյն՝ զտեղեալսն զեւալ սկսան: Իսկ գունդն Հայոց հասեալ անցանէին, ճի ի վերայ ասեալ յարձակէին մեծաւ զօրութեամբ: Սաստիկապէս բազլսեալք ընդ միմեանս, յերկոցունց կողմանց բազում վիրաւորք յերկիր անկեալ դիտթաւալ խաղային: Յայնմ մեծ տագնապի ի վեր հայեցաւ քաջն Վարդան, եւ տեսանէր զընտիր ընտիր քաջ նահատակաց Պարսից զօրուն, զի զձախակողմն շարժեցին զՀայոց գնդին (5): մեծաւ ուժով յարձակէր ի տեղին, եւ զաջ թեւն Պարսից գնդին բեկեալ՝ արկանէր զգազանօքն, եւ շըջան ասեալ կատրէր մինչեւ ի նոյն տեղի: Եւ այնպէս շտապ տագնապի ի վերայ հասուցանէր, մինչեւ գունդն Մատեան քաղեալ բաժանեցան ի մեծամուր պատրաստութենէն, զեւ եւս քաջ քաջ ի փախուստ դառնային:

Ապա դէտակն ի վեր համբառնայր Մուշկան Նիսալաւուրս, քակ-

եալ զմանս տեսանէր ի գնդէն Հայոց, եւ զինի մնացեալ ի հովիտս լերանցն: Վասն որոյ զաղաղակ բարձեալ՝ քաջաւերէր շուրջ զիւրեւ եւ զգորս Արեաց, որք զտեղի ասեալ կային ընդդէմ գնդին Վարդանայ: Եւ անդէն ի տեղուոյն երկոքին կողմանքն զպարտութիւն խոստովանէին, եւ առ յոյժ թանձր անկեալ դիականց իբրեւ զքարակոյտս զերբկաց երեւէին: Չայն իբրեւ ետես Մուշկան Նիսալաւուրան, մնայր զազանացն Արտաշրի, որ ի վերայ զազանացն նստէր ի բարձր դիտանոցին եւ կամ իբրեւ յամուր քաղաքին, եւ ի ճայն մեծ զալարիտոյցն զիւր գունդսն ստիպէր, եւ յառաջամարտիկ զօրօքն զնա ի մէջ փակէր: Իսկ կորովին Վարդան իւրովք քաջ նիզակակցօքն ոչ սակաւ նախճիրս ի տեղուոյն գործեաց, յորում տեղուոյ եւ ինքն իսկ արժանի եղև ասուլ զկատարեալ նահատակութիւնն: Եւ յերկարեալ զործոյ պատերազմին՝ օրն տարածամէր, եւ մօտ առ երեկս կարճատէր. բազմաց օրահասք մահու հասանէին, մանաւանդ ի թանձրութենէ դիականց մօտ առ մօտ խտացեալ իբրեւ զփայտահարս մայրաւորաց: Անդ էր տեսանել զբեկումն նիզակացն եւ զխորտակումն ազեղանց, վասն այնորիկ եւ ոչ կարէին կալ ճշմարտիւ ի վերայ սուրբ մարմնոյ երանելեացն եւ սաստիկ խուճապ տագնապի էր կողմանցն երկոցունց անկելոց: Եւ որք մնացեալքն էին վատնեալք եւ ցրուեալք լինէին ի լեռնադաշտս ամուր ձորոցն. եւ յորժամ պատահէին միմեանց, զարձեալ միւսանգամ զմիմեանս սատակէին, եւ մինչեւ ի մուսս արեգականն անդադար լինէր գործ դառնութեանն:

Եւ քանզի զաքնանային էր ժամանակն, ծաղկալից դաշտքն զառնային ի յորդահոսանս արեանց բազմաց: Մանուէնդ յորժամ տեսանէր ոք զբազմակոյտ դիականցն անկելոց, սիրտն բեկանէր եւ աղիքն զալարէին՝ լսել (4) զմնչիւն խոցելոցն եւ զմնչիւնս բեկելոցն, զթաւալզլոր խաղալ սողալ վիրաւորացն, զփախուստ վատացն, զթաքուստ լքելոցն, զսրտաթափումն զանարի արանցն, զճչիւն կանացեացն, զզրբս սիրելեաց, զաշխարումն մերձաւորաց, զվայ եւ զաւաղ բարեկամաց: Քանզի ոչ թէ կողմ էր՝ որ յազթեաց, եւ կողմ էր որ պարտեցաւ, այլ քաջք ընդ քաջս ելեալ երկոքին կողմանքն ի պարտութիւն մատնեցան: Բայց քանզի անկեալ էր զօրավարն Հայոց ի մեծ պատերազմին, ոչ ոք զոյր այնուհետեւ ի մէջ զլիաւոր, յոր յեցեալ ժողովէին գունդն մնացելոցն: Թէ-

(3) Արտաշատի գնդին, փոխանակ ըսելու, զՅախախտ գնդին (Տես 2 կանոն Բ. դաս)

(4) Փոխանակ ըսելու էւել կամ Լեւեալ:

պէտեւ բազում այն էր՝ որ ապրեցան, քան թէ որ մեռանն, սակայն ցանեալ ցրուեցան, եւ հասեալ անկանէին ի տեղին տեղիս յամուրս աշխարհին, եւ բռնանային ի վերայ բազում գաւառաց եւ բերդից, զոր եւ ոչ առնուլ իսկ ոք կարէր:

Երկերիւր ութսուն եւ եօթն նահատակք, ընդ նմին եւ մեծամեծ նախարարքն անդէն ի տեղւոջն կատարեցան: Եւ յարքունի տանէն եւ ի տանէն արծրունեաց եւ յիւրաքանչիւր նախարարաց տանէն, թող զայս երկերիւր ութսուն եւ եօթնս, եւ այլ եւս եօթն հարիւր եւ քառասուն այր, որք զանուանս իւրաքանչիւր ի դպրութիւն կենաց դրեցին ի նմին աւուր ի մեծ պատերազմին: Եւ միահամուռն լինի ամենայն հազար եւ երեսուն եւ վեց: Իսկ ի կողմանէ ուրացելոցն անկանէր յայնմ աւուր երեք հազար հինգ հարիւր քառասուն եւ չորք այր:

Զ. Յեղանակ

ԻՍԱՀԱԿ ՀՆԱԶԱՆԴ ՉՕՐՆ ՅԱՄԵՆԱՅՆԻ

Զբանիւք անկանիլ, խօսի բանասիւ  
Յակնիոս, զմայրան զեջ  
Բաղձ, էջ, քաթաթ  
Յանգասից, առանց խնայալու  
Ի մուացօնս արկանել, հարսու  
Աւելիտես, ապերախո  
Գօս, լոբ, ցամաթ  
Փան, քոյն  
Ի պատանս քրտնիլ, խոբուիւ  
Ասերիւր, ճոսա ճոբայ

Տարաղիւք, հերոս րեչ քրտնել  
Նժդեհակից, պարեխոսեց  
Անյեղիլ, անխոբո  
Կուել դաւինս, դու ճ հարսարեւ  
Ընձեռել, որս, պարեխեւ  
Նորքնիւլ, նոր ծլծ  
Գեղանսիս, գեղեցիկ բախո անեցու  
Յեղաօրջել, քոբել  
Տոփել, (սիրոբ) գրեւել  
Նա աւանիլ, նա, ճանաւանք

Ա.Բ.Ր.Ա.Հ.Ա.Մ ԵՒ ԻՍԱ.Հ.Ա.Կ



Ա.Բ.Ր.Ա.Հ.Ա.Մ

Բաւ է, որդեակ իմ, բաւ է.  
Մինչ մեք դեռ եւս աստ ըզբանիւք անկանիւք,  
Ես ի գմայլից տեսանելոյ ըզքեզ յակճիւս ինձ ի լուր.  
Դու ի բաղձից (1) յախըշտակեալ գիտեոյ,  
Տարածամեալ յանըզգաստից է գիշեր.  
Երթ, սիրեցեալք իմ իսահակ, բաւ է արք,

(1) Ի գմայլից եւ ի բաղձից բառերն խնդիր են զբանիւք անկանիւք բային:

Լիցի լըսել քեզ միւսանգամ ըզթերին:

ԻՍԱՀԱԿ

Քանիցս ի վէպս ըքքանչեւեաց անցիցրդ քոց դառնաս հայր,  
Ընկըզմի անձն իմ ի գմայլումս այնպիսի,  
Զի ոչ վաստակ ինչ ըզգամ,  
Ոչ փոյթ է ինձ հանգըստեան,  
Ի մուացօնս ի խոր եւ զանձն իմ արկեալ:  
Յափըշտակիմ մըտօք յոր ինչ եւ սրտմես,  
Եւ ամենայն ուրեք ընդ քեզ թըլիմ գոլ,  
Թէ հնազանդեալ Աստուծոյ՝ յերկրէ քուժմէ ելանես,  
Թողում ընդ քեզ ըզդաշտարայս քաղդէական եւ զիսառան,  
Բնակիմ պանդուխտ ի մայրիս.

Ի Պաղեստին լինիմ ընդ քեզ լեռնաբնակ.  
Թէ գնաս խնդրել տարադէմ հաց ի սովի,  
Ի Գերրարա եւ յեգիպտոս նըժդեհակից գամ ընդ քեզ,  
Եւ ընդ վըտանդըս մօր խնց քեւ շալի զահի հարկանիմ:  
Եւ առ աղբերքն Յորդանանու յորժամ զարքայս հարկանես,  
Յաղթողակից ընդ քեզ եւ անդր հասանեմ:  
Իսկ ի պատմել քո ըզլոտստմունս Աստուծոյ  
Եւ զանցելի ուխտ եւ դաշինս ընդ քեզ կըռեալ եւ ընդ նա,  
Այնպէս անես ըզնա ինձ գէմ յանդիման,  
Զի սասանի սիրտ իմ ի լուր աստուածախօս բարբառոյ (2):  
Ո՛հ որպիսի՛ դաս ինձ ի խրատ են պարագայք կենաց քոց,  
Հորդեն գնացք քո ինձ ուզի, եւ յանցըս քո զոր պատմես:  
Յայտնի նկատեմ ըզխորհըրդօցն Աստուծոյ  
Ըզնորահրաջ կարգ եւ օրէնըս գաղտնիս.  
Տեսանեմ քանի՛ է մեծ ի սքանչելիս՝ զոր առնէ,  
Քանի՛ առատ ի զնորհքս քեզ ընձեռել (3)  
Տեսանեմ հայր, իբր եւ քանի՛ դու սիրելի ես նրմա,  
Բիւր ինչ ի միտ առնում, եւ բիւր ինչ ի բանիցդ ուսանիմ:

Ա.Բ.Ր.Ա.Հ.Ա.Մ

Ոչ ինչ զանխուլ է յինէն,  
Զի ի խօսել խմում, որդեակ իմ, ընդ քեզ  
Ոչ ի յերկիր արեւիշուշտ ըզսերմանիս արկանեմ,

(2) (Տես 8 կանոն Զ. դաս)  
(3) Փոխանակ քնելու ընձեռել քեզ ընդ քեզ. (Տես 5 կանոն ԼԲ. դաս)

Այլ ժամ է արդ, երթ դու զի յոյժ զայս գիշեր...:

Ի Ս Ա Յ Ա Վ

Ա՛հ հայր եւ զայն եւրս պատմեա, եւ երթայց:

Զի՛նչ ապա յետ տալոյ հիւրոյն զաւետիս

եւ մօրն իմոյ ծիծաղելոյ (4) եղեւ դէպ:

Ա Բ Բ Ա Յ Ա Ս

Ոչ յամեցին արդիւնքն ըզհեա զալ աւետեաց, որդեակ իմ,

Յըզի ընդ հուպ գրտաւ ինձ մայր քո Սառա,

եւ նորընծիւզ երեք բողբոջ ի ժամու:

Ի Ս Ա Յ Ա Վ

Իցէ՞ թէ ես իցեմ բողբոջն այն, հայրիկ:

Ա Բ Բ Ա Յ Ա Ս

Այո՛, որդեակ, ըսքանչելեաց ի ծնունդ քոյին եղեմ պէ՛տ:

Փոխել բնութեան գօրէնրս իւր (5) եւ դու ի գօսըն փայտէ

Տըւար պըտուղ հրաշալի:

Ի Ս Ա Յ Ա Վ

Իսկ աւետիքն, իսկ խոտացեալն այն երկիր,

Ա Բ Բ Ա Յ Ա Ս

Իսկ աւետիքն անյեզլի

Ի քեզ որդեակ իմ եւ յորդիս քո լըցցին:

Եւ երկիրս այս, ուր դու շըրջիս արդ նըժդեհ,

Լիցի որդւոց քոց յեփրատայ մինչեւ յալիս Նելլոսի:

Ի Ս Ա Յ Ա Վ

Ապա ուրեմն որդիք իմ...:

Ա Բ Բ Ա Յ Ա Ս

Որպէս զատեղս իբրեւ զաւազ լիցին որդիք քո անթիւ,

եւ ժողովուրդ իւր սիրելի անուանեսցէ զնոսա Տէր,

Ըսքանչելիս վասըն նորա գործեսցէ,

եւ ամենայն բնակիչք երկրի ի մեզ, որդեակ, օրհնեսցին:

Ի Ս Ա Յ Ա Վ

Ո՛վ փառք, ո՛հ բախտ գեղաճըստի, երանելի եմք հայր իմ:

Ա Բ Բ Ա Յ Ա Ս

Մի՛ քեզ, որդեակ իմ, մի լիցի բերկրել փառաց ի ճաճանչ,

Մեղք են բերկրանք՝ ուր ժանտաժուտ հըպարտութի՛ն դաղտ սողեալ,  
Զերկնից շընորհս յեղաշըրջէ ժահր ի թոյն:

Ի Ս Ա Յ Ա Վ

Քաւ լիցի հայր, թըւի ինձ սիրտ իմ ի ժանտէ այտի զերծ,

Այլ ի պատրանըս մարթ է ինձ ըմբընկլ,

Ոչ ոք լիով ճանաչել զանձըն կարէ,

Ոչ զիս ի գուր խրատես հայր,

Տրօպէ ահիւ սիրտ իմ ընդ բանըս քոյին:

Ա Բ Բ Ա Յ Ա Ս

(Ո՛վ բարութեան սըրտի աղբիւր՝ երկիւզ սուրբ):

Ի Ս Ա Յ Ա Վ

Եւ զի՞ լըռես, եղուկ եմ հայր սիրելի,

Ողորմեա ինձ թէ գնամ երբէք ըստերկր,

Յոյց զարահեա՝ զոր թէ աւաղ կորուսի,

Անկեալ առ ոտըս քո աղերս արկանեմ:

Ա Բ Բ Ա Յ Ա Ս

Արի, որդեակ իմ, յոտըն կաց, եկ ի դիրկս իմ, վըստահ լեր,

Զի բանք իմ չեն ի կըշտամբանս՝ այլ ի խրատ,

Նա աւանիկ գութք իմ յուզին ընդ խոհականըդ կասկած,

Երթ արդ, որդեակ իմ, պահեսցէ որպիսի եսդ ըզքեզ Տէր:

Ի Ս Ա Յ Ա Վ

Եթէ զանձին սըրբութիւն

Հասանէ ինձ արատել,

Գըթա յիս հայր սիրելի,

Եկ հասիր ինձ յօգնութիւն,

Աղօթիւք քովք տեսի զըսս,

Աղօթիւք քովք եւ մեռայց:

Եթէ ոչ զանձն անարտ (6)

Վըկայեսցէ սիրտ իմ ինձ,

Ոչ կարացից հանդուրժել,

Կեանք իմ լիցի ինձ ի մահ:

Պետրոսի Մեքսաքասեայ

ՅԻՍԱՀԱՎ

Համդու Ա. Տեսիլ Ա.

(Թարգ. Հ. Մ. Հիւրմիւզ)

(4) Պէտք է կրկնել Յեք նախադրուքիւնն այս խօսքին մէջ:

(5) Կարդա. Պէտք եղեմ բնութեան փոխել գօրէնս իւր:

(6) Անարտ բառն հոս ստորգրելի է գրուի ին եւ ոչ անական:

### ԱՄԲԱՍՏԱՆՈՒԹԻՒՆ ԶՎԱՍԱԿԱՅ ԵՒ ՄԱՀ ՄԱՏՆՁԻՆ

Հաւաստի , յանձնել  
 Մարգարէն , հաստատել  
 Պատրարարքիսն , յանցանք լինելն  
 Փոռսիճ , որոք , հարցաբանութեան  
 Ի գրոյս երթալ , լինալ  
 Պատուալորք , գլխաւ զարք ղ  
 Կռանակուո , հաստատել յանցանք յանցանք  
 Գուստրակ , ստեղծար զարք  
 Գանիին , ստեղծար  
 Բրիկար , հաստատարք պատուանքայ

Պատիւ , ընծայ կամ պարտարք զարք ինչ  
 Չնդան , բանար  
 Ոսննար լինել , բարձրագոյն , շարքել  
 Առնաւասչեալ , ինչոն իստարան , գրտ  
 Գիւ , բեւ  
 Հաւ , նախնիք  
 Տրտել , գրել , հեւ լուրել  
 Մզիլ , բարձրել  
 Ստել , լուր պեւ լուրել  
 Կրկունք , ստեղծար երեւ ինչ (նոգարք)

Յայնմ ժամանակի հրաման ետ հազարապետն . Ածէք այս եւ ի կապելոցն<sup>(1)</sup> , որք են ի բանախանդ : Լուծին եւ անին յերանելեացն զՍահակ եպիսկոպոս Ռչտունեաց եւ զուրբն Յովսէփ եւ զԿեանդ երէց : Եւ իրբեւ մերկացան ամենայն բանք ատենին առաջի նոցա , ետ պատասխանի Սահակ եպիսկոպոսն եւ ասէ . Որ յայտնի ուրացեալն են ի ճշմարիտն Աստուծոյ , ոչ գիտեն զինչ գործ են եւ կամ զինչ խօսին . քանզի խաւարեալ է խորհուրդ<sup>(2)</sup> նոցա , ըզտեարս պաշտեն սուտ պատճառանօք , եւ ընդ ընկերս մտանեն յուրս ստուծեան : Եւ են նոքա դարանք սատանայի , զի նոքօք իսկ կատարէ զգառնութիւն կամացն իւրոց , որպէս երեւի իսկ ի դոյն յայդ վասակ : Քանզի մինչ ունէր զանուն քրիստոնէութեան , վերինն երեսօք կարծէր ծածկել եւ թագուցանել զամենայն չարութիւն իւր առաջի ձերոյ անդէտ տէրութեանդ , եւ զամենայն նեղութիւնն իւր քրիստոնէութեամբ ծածկէր : Ուստի եւ ձեր իսկ կարծեցեալ մեծապէս պատուեցէք զգառնութեանք քան զարժանն իւր : Հաւատացէք դմա զաշխարհն Վրաց . հարցէք , եթէ գոհ իցեն զգմանէ : Ետուք դմա զտէրութիւնն Սիւնեաց . լուարուք յազգահանաց այտի դորա , զինչ պատմեն զգմանէ : Սրարէք զգա մարդպան Հայոց . զոր նախնեացն ձերոց մեծաւ աշխատութեամբ զբտեալ էր , դա ի միում ամի կորոյս պերկիրն ամենայն : Տեսեր , իրբեւ բարձաւ ի դմանէ պատուական անունն Աստուծոյ , զոր ու-

նէր ստուծեամբ , մերկ երեւեցաւ ամենայն չարագործութիւն դորա : Զի եթէ առ Աստուծոն իւր սուտ գտաւ , առ ո՞ որ ի մահկանացուաց աստի դա արդար գացի : Արդ ամենայն ամբաստանութիւն որ այժմ յայտնի եղեւ զգմանէ , ո՞չ ահա ձեր իսկ յառաջագոյն լուեալ եր<sup>(3)</sup> . բայց յոր գէմն ծածկեցէքն , դուք ձեզն իսկ քաջ զխտէք : Ինձ այսպէս թուի , թէ սուտ յուսով դա զձեզ իրնդ գացոյց : Այլ ոչ դուք եւ ոչ դա եւ ոչ որ զինի ձեր գալոցն է , զայն ի մեզ ոչ կարէ<sup>(4)</sup> տեսանել : Արդ արարէք զգա որպէս եւ կամիք , ցմեզ զի<sup>5</sup> հարցանէք :

Զարմացաւ մեծ հազարապետն ընդ միտս իւր , եւ ի խորհուրդս իւր քննէր զամենայն բանս ատենին : Քանզի հասեալ էր ի վերայ , եթէ յերաւի դատապարտեցաւ այրն ըստ անարժան գործոցն իւրոց , եմուտ եւ եցոյց զամենայն բանս ատենին յարքունիսն : Եւ իրբեւ լուաւ թագաւորն եւ ստուգեաց ի հազարապետէն զանն պարտաւորութիւն , բարկացաւ յոյժ եւ ի խոր խոցեցաւ , բայց միայն երկայնատութեամբ կամեցաւ հասուցանել զնա ի մեծ անարգութիւն : Լուռ եկաց աւուրս երկոտասան , մինչ ի գլուխ չոքաւ փուրսիչ ամբաստանութեանն : Եւ եղեւ յաւուր միոջ մեծի զամենայն երեւելի եւ զպատուականն հրամայէր յընթրիս կոչել : Կոչեցին եւ զուրացեալն . եւ նա ըստ առաջի կարգի օրինացն արքունի արկանէր զպատուական հանդերձն , զոր ունէր ի թագաւորէն , կապէր եւ զպատուալուրսն , եւ զխոյրն սակեղէն դնէր ի վերայ , եւ զկռանակուո ձոյլ ոսկի կամարն ընդելուզեալ մարգարտով եւ տակամբք պատուականօք ընդ մէջ իւր անէր , եւ զզինդան յականջան , եւ զգլումարտակն ի պարանոցին , զստանյրսն զթիկամին , եւ զամենայն օրէնս պատուոյն զանձամբ արկեալ երթայր յարքունիս . չքեզ եւ երեւելի քան զամենեսեան երեւէր բազմութեանն իսկ նախարարն որք կամօք ի Հայոց չոգան անձամբ տուեալ զանձինս ի փորձութիւնն , եւ սուրբն որ յառաջագոյն հասեալ էին , կապաւնօք ունէին զամենեսեան<sup>(5)</sup> առ դրանն արքունի : Իրբեւ տեսին զնա զարդարեալ եւ չքեզացեալ , եւ բազմամբքս զնոքաւ գայր յարքունիս , ի միտս իրեանց սկսան այսպանել եւ ասել . Ո՞վ անմիտ վաճառական , զանմահ եւ զանանց պատու ետուր , եւ զանցաւորդ

(1) Այս խօսքին մէջ գորութեամբ կ'իմացուի զժամանակն բառն :  
 (2) (Տես 4 կանոն է դաս եւ 4 կանոն Ի դաս

(3) Փոխանակ ըսելու , զամենայն ամբաստանութեան . Յարարեալս յարարեալսն ինչպիսի սուած է :  
 (4) Բայն սակաւ ուրեք կը համաձայնի իրեն մեծաւոր դուռով դիմին :  
 (5) Փոխանակ ըսելու , զնախարարան . . . եւ զսարքան կապաւնօք ունէին զամենեսեան եւլին , (Տես 2 կանոն ժ . դաս)

զնեցեր, զոր եւ զայդ եւս ընդ մօտոյ աւուրս կորուսանելոց ես :  
 Եհաս եւ նստաւ ի Գերեմիայի դահլիճսն (6), որ էր հրապարակ մե-  
 ծամեծացն : Արդ եկն ել սենեկապանն յարքունուստ, հարցանէր  
 ցնա եւ ասէր, Արքայ յլեաց առ քեզ, յորմէ՞ գտեալ է քո զայդ  
 ամենայն պատուական պատիւդ, ասա ինձ վաղվադակի, վասն որո՞յ  
 արդար վասակոց (7) : Եւ յուշ առնէր նմա զամենայն բանս ատե-  
 նին, յորում դատաւարտեցաւն. նաեւ զոր ոչ եւս անդ խօսեցան՝  
 զայն եւս յայտնէր նմա : Զի ոչ ըստ կարգի ունէր նա գտէրու-  
 թիւնն Սիւնեաց աշխարհին, այլ նենգութեամբ եւ քսութեամբ  
 ետ սպանանել զհօրեղբայր իւր զՎաղինակ, եւ ինքն տարաւ զտէ-  
 րութիւնն իրրեւ քրտիկար յարքունիս : Նաեւ այլ եւս բազում  
 բանիւք դատաւարտեցին զնա, որում ամենայն աւագանին վկայ  
 գային : Պատանձեցաւ ամենեւին, եւ չգտաւ բան ճշմարիտ ի բե-  
 րան նորա : Իրրեւ կրկնեցին եւ երեքկնեցին ցուցանելով ի ներքս  
 յարքունիսն, հատաւ վճիռ մահու ի վերայ նորա : Արդ եկն ել  
 դահճապետն, եւ մատեաւ առաջի ամենայն մեծամեծացն, մերի-  
 ւաց ի նմանէ զպատիւն զոր ունէր յարքունուստ, եւ զգեցոյց նմա  
 հանդերձ մահապարտի : Կապեցին զոտս եւ զձեռս, եւ կանանցա-  
 բար նստուցին ի ճի մատակ. տարան եւ ետուն յայն զնդան, ուր  
 կային մահապարտք ամենայն :

Իսկ նախարարքն Հայոց եւ սուրբ եպիսկոպոսքն հանդերձ երի-  
 ցամբքն, թէպէտ եւ էին ի մեծի պատուհասի, ոչ ինչ յիշէին զնե-  
 դութիւնսն՝ որ անցեալ էր ընդ նոսա. եւ կամ որ այլ եւս ակըն-  
 կալութիւնն էր գալ ի վերայ (8), այլ զարմացեալ էին ընդ մեծ յայտ-  
 նութիւնն՝ որ եղև յԱստուծոյ : Մխիթարէին գլխեանս եւ ասէ-  
 ին. Քաջութեամբ պատերազմեցաք, առաւել եւս համբերութեամբ  
 ճգնեսցուք : Լուեալ է մեր ի սուրբ հարցն մերոց, եթէ գլուխ  
 ամենայն առաքինութեան համբերութիւնն է, եւ իմաստութիւն  
 երկնաւոր՝ կատարեալ աստուածապաշտութիւն, եւ զայս ոչ ոք  
 կարէ գտանել առանց չարչարանաց : Իսկ չարչարանքն յորժամ  
 ընդերկարանայ ի վերայ, յայնժամ բազմանայ վարձ հատուցմանց  
 պարգեւին : Զայս ասէին, եւ բազում արտասուս ի վերայ կորու-  
 սելոյն հեղուին. եւ անդէն զերգս հոգեւորս ի բերան առեալ ա-

(6) Ներսիս ամակամ է է դահլիճսն ին :

(7) Որ անուրե կամ միշակ ամակամն սովորաբար նախադաս լինելով գոյակա-  
 ցին կը համաձայնի հոլովով, բայց ոչ միտ բով :

(8) Փոխանակ լսելու հարցն եր գաւ. (Տես 1 կանոն Լէ դաս)

սէին. « Բարի է յուսալ ի Տէր քան յուսալ ի մարդիկ. բարի է  
 յուսալ ի տէր քան յուսալ յիշխանս. ամենայն ազինք շրջեցան զի-  
 նեւ, եւ անուամբ Տեառն յաղթեցին նոցա » : Քաջալերէին  
 զմիմեանս եւ ասէին. Զայս գիտելով, եղբարք, մի՛ երկի-  
 ցուք յանաստուած ազգէս հեթանոսաց, որ քան զմեզուս վատ-  
 թարագոյն եւս են ի զայրանալն իւրեանց. զի եւ նոցա ցատումն  
 ի սատակումն անձանց իւրեանց լիցի. այլ մեք զանուն Տեառն  
 կարդասցուք, եւ վանեսցուք զամենեսեան :

Իսկ ուրացեալն Վասակ հայէր ի միաբանութիւն սուրբ կապե-  
 լոցն, որք մեծաւ խնդութեամբ ընդունէին զչարչարանսն, եւ  
 զուարթագոյն եւ պայծառք երեւէին որպէս յառաջագոյն յարքու-  
 նիսն. հայէր եւ կարօտէր, եւ ոչ ոք խառնեաց զնա ի նոսա, այլ  
 ուրոյն նովին կապանօք պահէին : Եւ որ ըստ օրէ բերէին իրրեւ  
 զգէշ ընկենուին ի մեծ հրապարակին, ձագէին եւ այլանէին, եւ  
 տեսիլ ամենայն կարաւանին զնա առնէին : Կողոպտեցին հանին եւ  
 ոչ ինչ թողին զոր ընդ իւրսն ունէր. այնպէս ձագեցին ալքատու-  
 թեամբ, մինչ հաց մուրանային եւ բերէին նմա իւր ծառայքն : Եւ  
 այնպէս սաստիկ արկին զպարտս հարկաց աշխարհին ի վերայ տան  
 նորա, որ (9) մինչեւ զհարց եւ զհաւուց եւ զիւր արարս եւ զզարգս  
 կանանց եւս եղ ի վերայ եւ ետ եւ տուժեցաւ, եւ ոչ կարաց հա-  
 տուցանել զպարտան արքունի : Եւ յայն տեղի հասուցին, մինչեւ  
 հարցանել նմա թէ կայցէ՞ ինչ գանձ ի գերեզմանս նախնեացն մե-  
 րոց : Եւ եթէ գտեալ էր նորա, հանէր եւ տայր ընդ իւր եւ ընդ  
 ընտանեացն տուգանս, որպէսզի բազում մարդիկ իսկ չողան ի տուժի :

Եւ իրրեւ այսպէս յամենայն կողմանց հարեալ վատթարացաւ,  
 անկաւ յախոսս դժնդակս անդէն ի կապանսն : Զեռաւ փոր նորա,  
 եւ հարան եւ տրորեցան զոգք նորա, եւ քամեալ մղեցաւ թան-  
 ձրանսութիւն նորա : Եւսային որդունք ընդ աչս նորա, եւ ի վայր  
 սորեցին ընդ ուրնուսն նորա. խցան լսելիք նորա, եւ ծակտե-  
 ցան չարաչար շրթունք նորա. լուծան ջիւղք բազկաց նորա, եւ  
 յետ կոյս կորացան կրկունք ոտից նորա : Բղիւնաց ի նմանէ հոս  
 մահու, եւ փախստական եղեն ի նմանէ ձեռնասուն ծառայք նորա :  
 Լեզուն միայն կայր կենդանի ի բերան նորա, եւ ոչ գտաւ խոս-  
 տովանութիւն ի շրթունս նորա : Ծաշակեաց զմահ հեղձանդձուկ,  
 եւ էջ ի դժոխս անհնարին դառնութեամբ : Ոտնհար եղեն նմա ա-

(9) Քիչ անգամ կը գործածուի զէ ցաղկապին տեղ :

մենայն սիրելիք նորա, եւ ոչ յագեցան սաստիկ հարուածով ամենայն թշնամիք նորա: Եւ այն որ կամէրն թագաւոր լինել մեղօք՝ Հայոց աշխարհին, ոչ երեւեցաւ տեղի գերեզմանի նորա. <sup>(10)</sup> քանզի իբրեւ զըսն մեռաւ եւ իբրեւ զգէշ քարչեցաւ: Ոչ յիշեցաւ անուն նորա ի մէջ սրբոց, եւ ոչ մատեաւ յիշատակ նորա առաջի սուրբ սեղանոյն յեկեղեցւոյն: Ոչ ինչ եթող չարիս զոր ոչ գործեաց ի կեանս իւր, եւ ոչ ինչ մնաց ի մեծամեծ չարեաց՝ որ ոչ անցին ընդ նա ի մահուան նորա:

Է. Յեղամակ

41

2

ՏԻԿՆԱՅՔ ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀԻՆ

Ոչինչ ընդհատ, ոչ արբէր  
Անդրազոյն եւս, առել  
Գեհախոսի, գեղե՛կ լըսոյ պարտի  
Սնկողմարի լինել, անդգն ձգել  
Փարայ, իտէ (ւեօրեօթ)  
Խախամո՛ւ, հերտուր եփող  
Շարքարմոս, լաքնաւ մը պաշտ  
Դասառակ, ձերոց արքել  
Օգնան, արտ  
Սկուսեղ, (Բեփօթ)  
Նուիրակ, քարոս (հասաս)  
Բնակարանու նդ, էքրե ընթանն անսցանակ  
Բաժակակալ, գնէ քաշուլ

Մրակապան, արագաստի սեւեակ  
Երական, սեղաթ  
Ալազիլ, ցափէլ, արթալ  
Տաւսախիլ լինել, հեղբու իւրել  
Գրգիլ, քափանալ  
Բասեռն, բարոց կամ քեպոլ  
Ամին, լայրի երեց Յոթ  
Խոսարմոս, խորով արտ  
Ամոլ, լաթ արտ զոթ ըմբեր  
Կարեւոր, արտիկ, ծանր  
Աւար, էնչ, կալաթոթ  
Կասիլ, արտել  
Բնագիր, յեղարտուր մեծանեղոյն

Իսկ կանայք երանելի առաքինեացն եւ կապելոցն եւ անկելոցն ի պատերազմին՝ ամենեքեան միահամուռ զերկնաւոր նախանձ բերելով, ոչ ինչ ընդհատ երեւեցան յայնցանէ որ ոչ ճաշակեցին զաշխարհ: Քանզի եթէ աւագագոյնք էին, եւ եթէ մանկագոյնք, զմի առաքինութիւն հաւատոյ զգեցան: Ոչ ինչ յիշեցին ամենեւին զանուն փափկութեան մայրենի ազատութեանն, այլ իբրեւ մարդք՝ որ վշտամբերք լեալ իցեն անդատին ի շինական սովորութեանցն տանջելով վարեալ զկեանս աշխարհիս, անզրագոյնք եւս քան ըզնոսա յանձն առին զհամբերութիւն վշտաց: Ոչ միայն յոգիան միմի-

(10) Ինս. Ոչ երեւցաւ տեղի գերեզմանի այնքէն որ կամէրն, ելլն (Տես 2 կանոն Իե. դաս):

թարեալ կացին առ աներեւոյթ զօրութիւնն յուսոյն յաւիանելոյ, այլ եւ մարմնոյ նեղութեամբք առաւել եւս բարձին զբեռն ծանրութեան: Ձի թէսլետե ունէին զիւրաքանչիւր ձեռնասուռն սպասաւորս, ոչ որ երեւէր ի նոցանէ՝ թէ որ տիկինն իցէ եւ կամ որ նաթիլոն. մի հանդերձ էր հասարակաց, եւ միասլէս գեանալիչտիք երկոքեան: Ոչ որ ումեք անկողնարկ լինէր. քանզի եւ չճանաչէին իսկ զխոտեղչնան ընտրել ի միմեանց, մի գոյն թխութեան փորոս յիցն, եւ մի գոյն սեւութեան սնարից բարձիցն: Ոչ գոյր նոցա համեմ խախամոքք անուշարար առանձինն, եւ ոչ հացարարք որոշեալ ի պէտս սպասու ըստ ազատաց կարգի, այս հասարակացն էր: Շարքարմոսն <sup>(1)</sup> ըստ կարգի միայնակեցաց, որ յանապատ բնակեալ են: Ոչ որ ումեք ջուր ի ձեռն <sup>(2)</sup> արկանէր, եւ ոչ կրտսերք աւագաց դաստառակս մատուցանէին. չանկաւ օշնան ի ձեռն փափկասուն կանանց, եւ ոչ մատուցաւ իւր ի վրարթութիւն խրախութեան: Չեղան առաջի սուրբ սկտեղք, եւ ոչ անկան բաժակախոտեղչնան: Չեկաց ուրուք նոցա նուիրակ առ դուրս, կալք յուրախութիւն. չեկաց ուրուք նոցա նուիրակ առ դուրս, եւ ոչ կրչեցան պատուականք յարանց ի տաճարս նոցա. չիշեցան նոցա՝ թէ գուցէ որ ամենեւին ի բնականունեղ դայեկաց եւ կամ ի սիրելի հարագատաց:

Փոշոտեցան եւ ծխոտեցան սրահակք եւ սրահպանք նորեկ հարսանց, եւ սարգի ոստայնք ձգեցան ի սենեակս առագաստից նոցա, կործանեցան բարձրագահք տաճարաց նոցա, եւ խանգարեցան սպասք երախտանաց նոցա, անկան կործանեցան ապարանք նոցա, եւ տապալեալ աւերեցան ամուրք ապաստանի նոցա: Չորացան ազգեցան բուրաստանք ծաղկոցաց նոցա, եւ տաշտախիլ եղին որթք զինէրեր այգեաց նոցա: Աջօք իւրեանց տեսին զյափըշտակութիւն արարոց իւրեանց, եւ ականջօք իւրեանց լուսն զչարչարանս վշտից սիրեկաց իւրեանց, առան զանձք իւրեանց յարքունիս, եւ ոչ մնացին ամենեւին զարդք երեսաց իւրեանց:

Տիկնայք փափկասունք Հայոց աշխարհին, որ գրգեալք եւ գգուեալք էին յիւրաքանչիւր բաստեռուս եւ ի դահաւորակս, հանապաղ ըսկ եւ հետի երթոյլին ի տունս աղօթից, անձանձրոյթ խնդրեալ ուխտիւք՝ զի համբերել կարատցեն մեծի նեղութեանն:

(1) Ձեղչեալ է լեւել բայն:  
(2) Փոխանակ բոխու, է ձերս արտոթ: — երբեմն միջակ անունի կամ դեռուունի յաշկացոցիցն՝ բային տական խնդիր կ'իլին:

Որ ի մանկութենէ իւրեանց սնեալ էին ուղղովք զուարակաց եւ ամճովք էրէոց, խոտաբուս կենօք իբրեւ զվայրենիս ընդունէին զկերակուրն մեծաւ խնդութեամբ, եւ ոչ յիշէին ամենեւին զսովորական փափկութիւնն: Սեւացեալ ներկան մորթք մարմնոյ նոցա վասնզի ցերեկ արեւակէզք էին եւ զամենայն զիշերան գետնաբեկք: Սաղմուք էին մշտնջենաւորք՝ միտունջք ի բերանս նոցա, եւ միտթարութիւնք կատարեալք ընթերցուածք մարգարէիցն: Մտաբանեցին երկու երկու իբրեւ ամուք հաւանք եւ հաւասարք՝ ուղիղ տանելով զահօսն արքայութեանն, զի առանց վրիպելոյ հասցեն ի նաւահանգիստն խաղաղութեան: Մոռացան զկանացի տկարութիւն, եւ եղեն արուք առաքինիք ի հոգեւոր պատերազմին. մարտեղեալ կռուեցան ընդ մեղսն կարեւորս, հատին կտրեցին եւ ընկեցին զմահաբեր արմատս նորա: Միամտութեամբ յաղթեցին խորամանկութեանն, եւ սուրբ սիրով լուացին զկապուտակ ներկուածքս նախանձուն. հատին զարմատս ազահութեան, եւ չորացան մահաբեր պտուղք ոստոց նոցա: Խոնարհութեամբ կռիւեցին զամբարտաւանութիւն, եւ նովին խոնարհութեամբ հասին երկնաւոր բարձրութեանն: Աղօթիւք բացին զփակեալ դրունս երկնից, եւ սուրբ խնդրուածովք լծուցին զհրեշտակս ի փրկութիւն. լուան աւեախս ի հեռաստանէ, եւ փառաւորեցին զԱստուած ի բարձունս:

Այրիք որ ի նոսա էին՝ եղեն վերստին հարսուներ առաքինութեան, եւ բարձին յանձանց զնախատինս այրութեանն: Իսկ կանայք կապելոցն՝ կամօք կապեցին զմարմնաւոր ցանկութիւնս, եւ եղեն կցորդ չարչարանաց սուրբ կապելոցն. ի կեանս իւրեանց նմանեցին քաջ նահատակացն մահուամբ, եւ ի հեռաստանէ եղեն վարդապետք միտթարիչք բանդարդեւեացն: Մատամբք իւրեանց վաստակեցին եւ կերակրեցան, եւ զկարգեալ ոտձիկ նոցա յարքունուստ՝ ամ յամէ թոշակ առնէին եւ տային տանել նոցա ի միտթարութիւն: Անարիւն ճիւղանց նմանեցին, որ երգոյն քաղցրութեամբ առանց կերակրանաց կեան, եւ կենդանի են միայն զօղն ծծելով, զանմարմնոցն բերին զնմանութիւն:

Բազում ձմերաց հալեցան սառնամանիք, եհաս գարուն եւ եկին նորեկ ծեծեւունք. տեսին եւ խնդացին կենցաղատէր մարդիկ, եւ նոքա ոչ երբէք կարացին տեսանել զանձկալիսն իւրեանց: Մաղիկք զարնանայինք յիշատակեցին զպսակատէր ամուսինս նոցա, եւ աչք իւրեանց կարօտացան տեսանել զցանկալի դեղ երեսաց նոցա: Սպաւեցան բարակք որսականք, եւ խցեալ կուրացան արչաւանք

որսորդաց: Բնագրօք յիշատակեցան նոքա, եւ ոչ մի տօնք տարեկանաց ոչ ածին զնոսա ի հեռաստանէ. ի ճաշակատեղս նոցա հայեցան եւ արտասուեցին, եւ յամենայն յատեանս յիշեցին զանուանս նոցա: Բազում արձանք կանգնեալ էին յանուն նոցա, եւ անուանք իւրաքանչիւր նշանակեալ ի նոսա:

Եւ իբրեւ այնպէս յամենայն կողմանց ալէկոծ լինէին միտք նոցա, ոչ ինչ կասեալ թուլացան յերկնաւոր առաքինութեանն: Արտաքնոցն երեւէին իբրեւ այրիք սգաւորք եւ չարչարեալք, եւ յողիս իւրեանց զարդարեալք եւ միտթարեալք երկնաւոր սիրով: Ոչ եւս սովորեցին հարցանել զեկեալ ոք ի հեռաստանէ, եթէ երբ լինիցի մեզ տեսանել զսիրելիսն մեր. այլ այն էին իղձք աղօթից նոցա առ Աստուած, եթէ որպէս սկսանն՝ քաջութեամբ ի նմին կատարեցին լի երկնաւոր սիրովն:

Ը. Յեղանակ

42

ՅՈՎՍԷՓ ՅԱՅՏԵ ԶԱՆՁՆ ԵՂԲԱՐՅ ԻՒՐՈՑ

Տալ զլիբձ, գործէ եւ  
Գողցել, լուս

Ունել առ իւր, +ուս պահել  
Եղեուն, սէր, ծանր յանցանք

ՅՈՎՍԷՓ, ՅՈՒԴԱ; ԲՆԵՒԱՄԻՆ, ԵՒ ԱՅԼ ԵՂԲԱՐԲ ՅՈՎՍԵՓԱՅ

ՅՈՎՍԷՓ

Զինչ են անխաբ, իբրք զոր դուք գործեցէք.  
Ո՛չ դիտէիք զի հմայելով հըմայէ այր իբրեւ զիս:

ՅՈՒԴԱ

Զինչ տացուք, տէր, պատասխանի. զինչ խօսել,  
Զինչ իրաւունքս ցուցանել կարիցեմք.  
Յիշեաց Աստուած ըզձառայից քոց ըզմեղս,  
Եհաս մեզ ծամ տալ զեղեան մերոյ վրէժ:  
Յաւիտենից Տէր, ճանաչեմ ըզձեռն քո՝ վրէժխընդիւր,  
Եւ տեսանեմ զարդարութեան քո՝ զպաղտնիս  
Ընդդէմ մեղաց սահմանեալ:  
Վառես ի սիրտ չարագործին



Բոց՝ որ ըզտիւ եւ ըզգիչեր  
Ծախէ զնորին երիկամուսնս,  
Մինչեւ լիցի նա խելամուտ  
Ձի իւ իւիք ոք մեղանչէ՝  
Նորքիմբք տանջեալ պատուհասի:

ՅՈՎՍԷՓ

Մի՛, քաւ լիցի ինձ խըստանալ ձեզ ցայդ վայր.  
Առ կըրտսերոյն գըտան գողօնքն, ապա նա ինքն միայն  
Կացցէ մնացէ աստ ծառայ.

Իսկ դուք երթայք խաղաղութեամբ առ հայր ձեր:

ՅՈՒԴԱ

Այլ մեք որով երեսօք, տէր, դառնալ առ նա կարիցեմք:

ԲԵՆԻԱՄԻՆ

Յիս տէր, եւ զի՛նչ, կացից ես աստ միայնակ:

ՅՈՎՍԷՓ

Դու միայնակ, այլք մեկնեացին օ՛ն ի բաց:

ԲԵՆԻԱՄԻՆ

Կացէք, լուարուք ինձ, ո՛հ, այսպէս կաս ի խոստման քում, Յուդա,  
Գոնեա զհամբոյր հրաժարական ընկալարո՛ւք, եղբարք իմ,  
Ահա մեկնիք դուք, ես մընամ աստ գերի:

Հայր իմ, զիտրդ տառապեացիս ի լըսել քո զգոյժքս զայս:

Եթէ իցէ ձեզ ի սըրտի

Գուժ ընդ եղբայր ձեր եղիկելի,

Գէթ դուք, եղբարք իմ, դուք ընդ իմ

Գողջիք նըմա զի ես կեամ,

Գողջիք զի զինքըն սիրեմ.

Այլ ասիցէք մի՛ նըմա

Թէ յոր աղէտըս կամ աստ:

ՅՈՎՍԷՓ (ի ծածուկ)

Համբեր, սիրտ իմ, վայրիկ մի եւրս ծուծեա:

ՅՈՒԴԱ

Իցէ՞ երբեք թէ զիջցի, տէր, սաստ քոյին:

ՅՈՎՍԷՓ

Ետու հրաման, կացցէ, մի՛ եւրս դարձցի:

ՅՈՒԴԱ

Լուր ծառայի քում, տէր, եւ մի՛ բարկացիս:

ՅՈՎՍԷՓ

Փութա՛ աստ՛, եւ զի՛նչ ասել ունիցիս:

ՅՈՒԴԱ

Յիչէ՞ս զի տէրդ ի գալ մերում ի սկզբան... .

ՅՈՎՍԷՓ

Յիչեմ՛, այս՛, հրամայեցի զԲենիամին ածել ինձ.

Եւ ասացէք զի ծերունի հայր նորա՛

Ձուրկ ի նմանէ չը կարէր կեալ, մեռանէր.

Եւ յաւելի սպառնալ ձեզ,

Առանց նորա զերեսս իմ մի՛ երբեք յուսալ տեսանել:

ՅՈՒԴԱ

Դարձաք այդու քո հրամանաւ առ հայր մեր.

Նա զմեզ դարձեալ յորժամ առ տէրդ յուզարկէր,

Ի դուր է մեզ, ասեմք, գընալ՝ թէ չիցէ

Բենիամին ընդ մեզ եղբայր մեր կըրտսեր:

Ասէ ցըմեզ ծառայ քո հայր մեր լալով.

Ո՛հ, անզուակ լիցի ուրեմն ինձ մընալ.

Երկու միայն ի Հռաքելէ, զիտէք, եղեն ինձ որդիք.

Գազանակուր կորեաւ ինձ մին ի նոցունց,

Դուք ինձ ըզգոյժըն ետուք,

Ոչ եւս, աւալ, տեսի զերեսըս նորա.

Եթէ ըզսա եւս առնուցուք արդ յինէն,

Եւ թէ արկած ինչ պատահէ զճանապարհայն դըմա չար,

Ըզձերութիւն իմ ի դըժոխքս սըրտմութեամբ իջուսջիք:

Սաստկանայր սով, ըստիպէր հարկ, եւ զի՛նչ առնել էր նըմա.

Եթէ առ իւր կամէր զորդեակն ունել՝ սովով կորընչէր:

Իսկ թէ թողայր նըմա մեկնել գալ՝ առ վըշտին մեռանէր:

Սիրեցեալ հայր, ասեմ նըմա ի վերջէ,

Հաւատա յիս զորդին քո.

Եթէ առանց նորա լիցի ինձ դառնալ,

Ձիս մեղապարտ այնուհետեւ կալցիս միշտ:

Լըւաւ նա ինձ, եւ մեկնեցաք, տէր, ըզհրաման քո լըջի:

Հայր ես եւ դու, եղեալ երբեմն եւ որդի.

Ըզկիրս իմ արդ բեր առ վայրիկ մի յանձին.

Ասա՛ որո՞վ սըրտիւ առ հայր իմ դարձ առնել կարիցեմ՝  
Առանց զորդեակն ինձ աւանդեալ ի միասին անկոյ (1):  
Ո՛հ, մի՛ լիցի, տէր, թող դարձցի Բենիամին առ Յակոբ,  
Եւ ծառայ քո կացցէ մնացէ աստ գերի,

Զի մի՛ տեսցեն աչք հիբիս  
Ըզհօրն աղէտըս վըշտաց:

ՅՈՎՍԷՓ ( ի ծածուկ )

Սիրա իմ գելու, մորմոքիմ:

ՅՈՒԴԱ

Ընդէ՛ր ծածկես գերեւըս քո, տէր, յինէն.  
Եթէ՛ չիցեմ ես արժանի գըթութեան,  
Գըթա ի հայրն ալիողորմ տառապեալ:  
Եթէ՛ գլետին համբոյրըս իւր տեսանէիր հայրենիս,  
Հոգի նորա ընդ սիրելւոյ որդեկին  
Թըւէր յիւրմէ բաժանել.  
Ողջ երթ՛ ասէր եւ կըրկնէր,  
Եւ հրաժարեալ՝ դարձեալ փարէր ըզնովաւ,  
Էր զի միում ի մէնջ եւ էր զի միւսում  
Ըստէս ըզնա սպըսպարէր յանձն առնէր:  
Լայր եւ յիշէր զՀոսաբէլ,  
Յիշատակէր ըզ Յովսէփ,  
Եւ գերիցունցն ըզկերպարան ի դէմն որդւոյն նըկառեալ,  
Ոգբայր ի նմա գերկաքանչիւրցըն կորուսա.  
Եւ զամենայն... այլ դու ընդէ՛ր արտասուես,  
Թերեւս ի գութ եւ գբեզ աղէտք մեր շարժեն...  
Ամենակալ Տէր, դու ի սիրա նորա յաւել ըզգորով:

ՅՈՎՍԷՓ

Ո՛հ, բաւ է արդ, ընկճիմ, ոչ եւս ունիմ ժոյժ.  
Ի կեղծ սաստից աստի ստիպիմ դադարել.  
Երայք ի գիրիս իմ արդ, ես ինքն եմ Յովսէփ:

ՅՈՒԴԱ

Յովսէփ:

ԲԵՆԻԱՄԻՆ

Տէր, ա՛կր:

ՏՄԱԻՈՆ

Եղո՛ւկ զինեւ:

ՅՈՎՍԷՓ

Մի՛ երկընչիք, մի՛նդ վաճառել ձեր զիս, եղբարք իմ, հողայք:  
Անտի եհաս Եգիպտոսի, եւ ձեզ խկ  
Յեղեռանէ անտի եհաս փըրկութիւն.  
Յարքունիս այսըր վաղագոյն քան ըզձեզ  
Յըղեաց զիս Տէր վասըն ձեր:  
Դարձիք դուք արդ առ հայր իմ,  
Եւ պատմեցէք նըմա ըզփառըս որդւոյն.  
Գոգջիք նըմա զի եկեսցէ լինել հաղորդ այնոցիկ:  
Ո՛հ, զի՞ լըւէք, մի՛ գուցէ դեռ կասկածէք.  
Խօսեաց Յուդա, եւ դու Շմաւոն ըսփոփեաց,  
Մասիր առ իս Բենիամին եղբայր իմ:

Պետրոսի Մեքսաքսետայ

Ի ՅՈՎՍԷՓ ԳԵՂԵՑԻԿ

Հանդես Բ. Տեսիլ Գ.

(Թարգ Հ. Ե. Հիւրմիւզ)

(1) Իմա, որանց ի միասին անկոյ:

ՂԵԹԱՅԷ ԻԳՐՈՅ ԲԱՐՔԱՌ

Բ. ՏԱՐԻ



ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

(ՅԱՐԴԵԱՅ)

# ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

(ՅԱՐԴԵԱՅ)

## ԳՈԹԷՆ ՏԻԿՆՈՁ

# Ա. ԲԱՆՐԱԿԱՆԲ Ի ՍԻՍԿԵՐԻԱ

Ա.

ձարհաս, (ւեբերու)  
 Աղուամազ, Խէտր Բարաէ ժու  
 Տամուկ, Բաց րիւլ, Խանա  
 Սիւն, արջուները պարբորացնող Խոր Ժ  
 Կնիւն, (սու)  
 Սկիւռ, զընծայ (Կենդանի)  
 Գեղմնապաս, Բրբուր  
 Խաւարծի, ժորու, նոր ծլած  
 Խայարդէ, (ուճալը)

Սխակցարար, Գեւու  
 Արասոյ, Կրծք (տոր)  
 Ունախար, արջ (երէր) տոր  
 Խաւի խաւոյ, (Կու Կու)  
 Լուրք, Բաց Կապուր  
 ՍՆԵՆԻ, օճիկ (Եւկու) ծառ  
 Մորչ, Կուլուր  
 Հոյլ, Բազմաճիւն, Խոմբ  
 Այն ինչ, րէր նոր

Անդստին ի սեպտեմբեր ամսոյ պաղի թոպոլ սառնապատ, եւ ձիւնախաղաղ ծածկի անդ երկիր ցվերջ ամսեանն մայիսի: Յայնժամ ի լուծանել ձեանց ի շողից արեգական՝ սքանչելահարաչ փութով կանաչանան ծառք, եւ յերկուս եւ յերիս աւուրս փթթին ծաղկունք առհասարակ. եւ աճելոյ բուսոց զոգցես իմն լաի ճարճատ. բուրէ վարդից ի թփաստանաց անտի անուշահոտութիւն. ի հեր աղուամազ ծաւալի ընդ տամուկս սինձ համասփիւռ: Ի հոյլ խուռներամ խայտայ արագիլ, բաղք խայտարդէտք, սագք հիւսիսայինք ընդ ծուփս լճից, եւ սպիտակափայլ կուռնին զողեալ յամուրս եղեգանց զնէ գրոյն իւր ճարտարակերտ ի կնիւն վափուկ յեղտիւրս ամայիս, եւ սկիւռ թեթեւ ի ծառոց ի ծառս ընդուստ յանտառի՝ գեղմնապաս թաթիւքն եւ տտամբ օգնեալ, ընթանայ ընդ օդս՝ կրծել զմայրից ոստոց խաւարծիս, եւ զտերեւս թփոց:

Ձի են եւ ի ցրտասառայց դաւառս բնակելոց՝ աւուրք զուարճաւիք, այլ ոչ եւ քարտեղաց անդր:

Առաւելագոյնք յեղկելեաց անտի կեան ի գիւղս գետեզերեայս, ի թոպուրքէ մինչեւ ցեղր իշմեան անապատին. իսկ այլք տարագիր ի հիւզս, եւ ընդ դաշտս սփռեալ: Ոմանց արքունուստ սահմանեալ է ոտնիկ, իսկ այլք անթոշակ՝ յորոտց երկրին ձմերայնոց կերակրին, բնաւից ի գուրթ զտեսողս շարժեալ, բնաւք եղկելիք ի նոցունց ձայնեալ: Ի ճախճախուստ անտառի ուրեք հեռի ի Սայխփքայ՝ ասպարիզիւք իբր տասն, ուր ճահիճք են յաճախաւորք, մերձ ի լիճ խորին բողբոսձեւ, ամենածիր ի թուխ եւ ի սպիտակ կաղամախեաց, բնակէր յարքորս այր ոմն ամաց քառասուն եւ հնգից, հանդերձ կնաւն իւրով, եւ չքնադագեղ դատերաւ, որ այն ինչ ի փթիթս գեղածաղիկ տիոցն էր հասեալ:

Ոչ եւս ոք խորհէր զտառապելոցն՝ որ կէլին անտես, եւ ի սպառ յայնմհետէ եղեն ի մոռացոնս, բայց միայն ի թափառել ուրուք յորսորդաց ընդ անտառն, եւ ի հասանել յեղր լճին, եթէ հարցանէր՝ ո՞չք ոմանք ի հիւղի անդ բնակէին, առնոյր պատասխանի թէ թշուառք ոմանք. եւ ոչ աւելի ինչ հետազտեալ՝ զնայր ի բաց խտտակցարար ասելով. Տացէ նոցա Տէր դարձ ի հայրենիս:

Կառոյց իւր անդ Սփրինճեր (զի այս անուն էր առնն) բնակարան յեղեւնեաց յարդածածուկ, ժայռք շուրջանակի պատասպարէին զայն ի հիւսխային սաստիաշունչ հողմոց, եւ յողովմանէ յորդելոյ լճին: Չէին արաստոյք ժայռքն որձաքարք, ի թերթս նոցին ի խաւի խաւոյս նշոյլք արեւուն ի ներքս անկեալ, սնկենիք հոյլ ի հոյլ ի մուսս գարնայնոյ՝ ի հերձից անտի ի դուրս ոտաչէին, կէսք ի գոյն վարդից՝ բայց աղօտափայլ, այլք դեղին եւ լուրթ ի տիպ սնկենեաց պայքալեան լճին: Իսկ ի փապարս անդ, ուր էր մրրկաց խուն ինչ հող արկեալ, բողբոջ սնկենեաց եւ մայրից բուսեալ՝ նկրտէին արմատս ի խոր եւ ստեղունս ի վեր մորչս արձակել:

1

ԿԻՆ ՆԱԽԱՎԱՐԻՆ

Դղբչիւն, — արտ Լեւ Ժայն  
Շփոք (սոճ) Խառն է Խառն  
Ձանգիտել, Էինաւ

Շառաչիւն. — արտ Կոտայ Ժայն  
ձողփիւն, Լեւ Բեւ Էնդ Կոտայ Ժայն  
Խաղ, Ժանժու, Եր

«Ձի՛նչ դըրբչիւնդ այդ անագան ի լըճիս,»

Դըստրիկ սիրուն, տես, զի՛նչ է այդ»:  
— Բաղք են դրացւոյն անկեալ ի լոյլ ընդ ալիս,  
Նընջեա, մայրիկ, նընջեա հանդարտ:  
«Ձի՛նչ այդ ի ջուրս շըշուկ շըփոթ եւ ուժգին,  
Ա՛հ, զանդիտեմ ես, ո՛վ դըստրիկ»:  
— Մըշակ վարէ գհաւտտարիմ իւր ըզճին,  
Նընջեա, մայրիկ, նընջեա քաղցրիկ:  
«Մըրըրկածուփ հընչէ ահեղ շառաչիւն,  
Լո՛ւր, դըստրիկ, լո՛ւր ըզվայս եւ կոճ»:  
— Երգ ձըկնորսի եւ թիակացն է ճողփիւն,  
Նընջեա, մայրիկ, դերձ ի հոգոց:  
«Ո՛հ, աղէաք, ո՛հ, վըտանգք, բաց բաց ինձ ըզդուրս,  
Ձի բեկանի սիրտ ի ծոցիս»:  
Եւ վշտահար թաղճեալ՝ թըռեաւ եւ ի դուրս,  
Ճիչս առեալ մայրըն ցաւալիս:  
Եւ հանդարտիկ շամբուտ ամանցն ի խաղին,  
Դի անկենդան տարածեալ կայր  
Ընդ խիճըն սեաւ, դունամթափեալ եւ ցըրտին:  
«Ո՛հ, Տէր գըթած, դա իմ է այր...  
Ա. յժմ, իմ դըստրիկ, նընջել կամիմ այժմիկ արդ,  
Նընջել, այս՝ զգիշերն ի բուն,  
Կամիմ նընջել քաղցր եւ յերկար եւ հանդարտ,  
Չանարթնականըն նընջել քուն:»

Ռ. Վ. Կց



Աձու, (Բարև)  
Ձմեկի, Լուսի (Գրեւելեք) Ժու  
Հոյն, (Գրեւելեք)  
Բարսի, (Գաւաթ) Ժու

Յեռուլ, Լուրեւ  
Ժամս ձիգս, Երևոյ Ժու  
Ամեկիկն, Կոտայ  
Խուղ, Գեւու, Երճեք

Ի սկսանել ձեանց լուծանելոյ, եւ աղօս ինչ կանաչութեան յերեսս երկրի երեւելոյ, պարագէլին ընտանիքն ի միասին ի ինտան բուրաստանին: Սփրինճեր յարդարէր զածուս, փեղորս (կին Սփրինճերի) պատրաստէր զսերմանիսս, Ելիսարեթ (դուստր նոցա) աւանդէր զայնս հողոյ: Շուրջ պատէին զվայրիկն չմեհիք, հոյնք, եւ բարտիք արդոյք ի Սիպերիս, զի սոցին եւ

եթ անդ բուրեն ծաղկունք անուշահոտ: Ի հարաւակողմն կոյս արարեալ էր Սփրինճերի ջերմուկ, ուր երիցագոյն խնամովք մշակէր զտարաշխարհիկ ծաղկունս, եւ ի փթթեւ նոցին՝ համբուրէր զնոսա, ցուցանէր հարսին իւրում, եւ ի ճակատ դըստերն յեռոյր ասելով. Զարդարեաց, դստրիկ, հայրենի ծաղկամբք, որ իբրեւ գեղց փթթին նժդեհիկք. սէ, տացեն երկինք չմեռանել քեզ հանգոյն նոցին եւ տարաշխարհիկ: Զայսոսիկ ի յուզել զթոյն բարբառէր, լսիկ եւ հանդարտ կալով հանապազ. էր զի եւ ժամն ձիգս կայր ի հիացման, բազմեալ ակնկառոյց ուրեք անքրթիթ, արձակելով ի խորոց սրտէ հառաչանս, զորս ոչ բաւէին լեցուցանել աղերս հարսինն եւ ողոք, եւ ի տեսիլ դստերն՝ եւս քան զեւս դառնակսկիծք յաճախէին: Անկեալ ստէպ զպարսնոցաւ նորա, եւ ի մէջ բազկաց զնա առ սրտիւն ողջագուրեալ, եւ ապա յանկարծ մօրն զնա մատուցանէր ասելով. Ի բաց առ, Փեղորայ, ի բաց առ զդստրիկդ, վիշաք դորա եւ տառապանք քո մահառիթք են ինձ. աւանդ, եւ զի՞ դու եկիր այսր ընդ իս, եթէ չէիր թշուառութեան իմոյ բաժանորդ. եթէ կայիր յանդորրու եւ ի մեծարանքս ի հայրենիս քո, անտրտունջ արդեօք լինէր ինձ կալ յանապատիս: Ի լուր այսոցիկ գորովագութն փեղորայ հեղոյր արտասուս. աչք նորա, մրմունջ եւ շարժմունք յայտ աննէին՝ որ ՚ի խորս սրտի նորա յուզէր գորով հարսանեկան: Չկարէր նա օր մի հեռի կալ ի նմանէ, մերձ եւ եթ առ նմա ամոքէր զտառապանս իւր: Յառաջին կեանս իւր՝ աւագութիւնք գերաստիճանք ի բացեայ ունէին յաճախ զայր նորա, այլ ի նժդեհութեան անդ կային անմեկինք յիրերաց, որպէսզի սիրելի թերեւս լինէր նմա աքսոր, եթէ մարթ էր յաղէտս առնն հայել անվիշտ: Փեղորայ թէպէտ անցեալ էր զերեսնամենիւք, այլ գեղ նորա ոչինչ էր նուազեալ: Հաւասարասցէս սիրելի էին նմա այր իւր եւ դուստր, եւ առաւել քան զնոսա Արարիչ իւր. երեցունց այսոցիկ սիրելութեանց տիպք ՚ի դէմն նորա երեւեալ, յաւելուին ի նա գեղեցկութիւն՝ ի սրբադայց ամաց անեղձանելի. եւ ի կերտարանաց իսկ նորա յայտնի էր, զի սահմանեալ ի բնէ ի սէր անրիժ՝ կատարէր ի նմա սահման ըստեղծուածոյն: Պատրաստէր նա ինքնին կերակուրս ասորթելիս առն իւրում եւ միտ եղեալ ըզձից նորա յամենայնի, հետադօտէր յաչս նորա զկամս նորին առ ի կանխել կատարել զայն: Կարգ եւ մաքրութիւն իրազողութեամբ հանդերձ տիրէին ի դուզնաքեայ յարկ նոցա. յընդարձակագուռնին ի խղից հանգչին ամուսինք ծած-

կեալ մաշկեկօք. ձեռագործք փեղորայ եւ դստերն ասղնկգործք եւ նկարէնք՝ պատէին զորմս ծխամածս: Սփրինճերի ի շահից որսոցն իւրոց հայթայթեալ էր եւ սրտուհանս ապակեայս, որ դուն ուրեք յերկրի անդ երեւէին՝ ի զեղխութիւն համարեալ: Յերկուս այլ խուզս՝ ի միւսմն ննջէր Ելիսարեթ, ի միւսուսմն աղջիկն Սկիւթացի (աղախին տանն), ուր էին եւ կահք խոհակերոցին եւ սրարտիզի:

2

Ա Ռ Ս Ո Ւ Ա Կ Ն

Հագագ, Լուս, Կոյս, Ընչ	Խոստովիք, հեռ (Դուգ)
Խոնջ, Կոյս	Ականողիք, Կո

Ի վարսագեղ յեց ի ճըղիդ,  
 Ո՛քաղցրախօսըդ ծիծեռնակ,  
 Ընդ նըրբածայն փող հագագիդ  
 Ներդաշնակես ասորժ նըւագ:  
 Զարմանալի ինձ դունագոյն  
 Փետրոցըդ քոց են խոստովիք.  
 Քոյոց թեթեւ թեւոց բախին  
 Զլոմ պարարեն ականողիք:  
 Դու, մինչ կարմիր արեւածայր  
 Յիս յանկողնի ծագէ այգուն,  
 Ի ձայն երգոց ի զուարթարար  
 Բանաս զանկեալ աչս ի նընջիւն:  
 Եւ աստեղաց շաղ զովարար  
 Մինչ ի աքխուր ծաղկանց երամ  
 Ծաւալելով մարզըրտարար՝  
 Վերականգնէ զայն անթառամ,  
 Ընդ հովանեաւ սաղարթագեղ,  
 Խոնջ եւ թախիժ՝ ծուրիք ի ճակատ  
 Նըստիմ յերգոցդ ի լուր գեղգեղ  
 Եւ ի հոգոց հանգչիմ ազատ:  
 Ո՛հ, դու ի նուագդ յաւերժայլի՛ր.  
 Նըստայց ես աստ, Սոխակ քաղցրիկ,  
 Մինչեւ տացես ինձ քաղցր ի նիրհ  
 Նընջել յերգոցդ ի դայլայլիկ:

Հ. Ե. Հիւսիսիզեան



Saurfusuruf , ( սիւրբսիւրբսիւրբ )  
 Ապախս լեալ , երեւե յֆսսսս  
 Կարկենան , կարգեր արդ ղե ( ետֆսսս )

Սեպ , ծայր , ( սիւրբ )  
 Աղկաղկ , սիւրբ , հսսսս  
 Ուղտոյ լինել , հսսսսս ելլել

Բայց Ելիսաբեթ , անդատին ի չորեքամեայ տիոց սնեալ յանտա-  
 սի՝ անծանօթ այլոյ հայրենեաց , գտանէր անդ գեղեցիութիւնս՝  
 զորս ընծայէ բնութիւն եւ ի վայրս ասպիտ լեալս յիւրմէ , եւ  
 բերկրութիւնս բնականս՝ յորս սիրտ անբիծ ամենայն ուրեք գիտէ  
 վայելել : Զբօսնոյր ի խնդիր ձուոյ բազէից եւ սպիտակ անգեղց .  
 սողակէր յեղերս լճակին ընդ ժայռս ի վեր , ուր դենն նոքա բոյն  
 յամարայնի . ըմբռնէր յաճախ եւ վայրի աղաւնիս ի վարմս , եւ փա-  
 կէր զնոսա երամովին ի վանդակի : Մերթ եւս որսայր ձկուսն որք  
 տարմատարմ ընդ լիճն գնային , պատենագէնք ի թեփս ծիրանիս ,  
 երեւեալք յալիս անդ որպէս կարկեհան ի լոյծ արծաթի : Հաճ եւ  
 գոհ ընդ կեանս իւր , զի չանկանէր խկ ի միտս նորա թէ մարթ  
 էր ումեք վայելել ի բախտ երջանկագոյն . կազդուրէր հովասուն ,  
 եւ աճէր ի հասակ կրթութեամբ մարմնոյ . եւ ի դէմս նորա , յո-  
 բուս հանգչէին խաղաղութիւն եւ անմեղութիւն , յաւելոյր օր ըստ  
 օրէ գեղ նորահրաշ : Ըստ այսմ օրինակի , հեռի յաշխարհէ եւ ի  
 մարդկանէ , զարգանայր օրիորդն չքնաղազեղ ի տեսիլ եւեթ ծը-  
 նողացն , եւ ի բերկրութիւն սրտի նոցա . որպէս ծաղիկ յանապա-  
 տի ի նշուլից արփուոյն փթթեալ , ոչ ինչ նուազ գեղանի անտես  
 յաչաց՝ ի տեսիլ աստեղն եւեթ իւրոյ կենտատուի :

Զիք սէր գորովագոյն եւ խանդաղելի քան որ ի նուազունս ամ-  
 փոփեալ . այսպիսի սիրով գորովէր Ելիսաբեթ ի ծնողս իւր՝ զորս  
 միայն ճանաչէր , զորս միայն սիրէր յաշխարհի : Փոխանակ ամե-  
 նայնի էին նմա ծնողք իւր հոգաբարձուք աղկաղկ հասակին , կե-  
 նակիցք նմին եւ խաղաղիցք . չգիտէր ինչ , զոր ոչ ի նոցանէ ուս-  
 եալ , ընդ նոսա զբօսնոյր , նոցին էր շնորհապարտ ըստ հանձարոյ ,  
 ըստ գիտութեան եւ ըստ ամենայնի : Եւ զի ամենայն ինչ իւր ի  
 նոցանէ էր , եւ չկարէր ինչ յինքենէ , քաղցր էր նմա հնազանդել  
 հրամանաց նոցա զորս ի բարերարել միայն տային նմա : Այլ ի զար-  
 դանալ նորա ի սրտանեկութիւն , եւ ի պարզել տեսութեան մտացն՝  
 սկսանէր ի միտ առնուլ ի մօրն արտասուեաց զհօրն իւրոյ թշուա-  
 ութիւն . հետապօտէր ստէպ ի նոցանէ զպատճառս աղեփոցն ,

այլ նոքա ոչ ինչ տուեալ նմա պատասխանի , զհայրենիսն սղբային ,  
 ոչ զհայրենեացն ծանօթս տալով նմա , եւ ոչ որ ինչ ինքեանք ի  
 հայրենիս անդ էին՝ ցուցեալ , զի մի՛ տրամուսցի ի զիտելն յորմէ  
 բարձրութենէ յաքսոր անդր սահեալ էին նժդեհութեամբ : Բայց  
 յորմէ հետէ ծանեաւ զախրութիւն ծնողացն , խորհուրդք մտաց  
 նորա ոչ եւս հանդարտէին . կերպարանափոխ եղեն կեանք նորա :  
 Զբօսանք մանկութեան ոչ եւս քաղցրանային նմա , ելիք զբուրաս-  
 տան , մուսացաւ զծաղիւնս . ոչ եւս թուշնիկք իւր սիրելի էին  
 նմա . ոչ եւս յորս ձկանց , ոչ եւս ի վարել զմականիկ իւր գնայր  
 յեղր լճակին , խորասուզեալ ի խորհուրդ՝ որ բովանդակ զմիտս  
 նորա զբաւէր եւ զսիրս : Բազմեալ երբեմն ի սեպ միոյ ի ժայռից ,  
 յառեալ յալիս ծովակին , խոկայր յարտատուս ծնողաց իւրոց , եւ  
 ի հնարս ցամաքելոյ նոցին : Գիտէր եւեթ զի սղբային նոքա զհայ-  
 րենիս , այլ որ հայրենիքն այն նոցա էին՝ անգիտանայր . եւ քանզի  
 հեռուորութեամբն ի հայրենեաց թշուառացեալ գտանէին , ցան-  
 կալի նմա այն խկ էր՝ ոչ զհայրենիսն զիտել , այլ զհնարս դարձի  
 նոցա՝ անդր գտանել : Ամբառնայր զաչս իւր յերկինս՝ խնդրել ի  
 Տեառնէ օգնութիւն , եւ այնպէս ընկզմեալ կայր ի խորհուրդս  
 յայս , զի տեղատարափք ձիւնաբերք եւ հողմք սատակաչունչք զիտ-  
 րէին ընդոտուցանել զնա : Այլ ի ձայնել զնա ծնողացն՝ լսէր ան-  
 դէն , եւ ի ժայռից բարձանց իջանէր գայր թեթեւընթաց ի լուր  
 խրատու հօրն , եւ օգնել մօր իւրում յառտնին խնամս : Բայց թէ-  
 պէտ առ նոցին , եւ թէ հեռի ի նոցանէ , թէ յընթերցումն եւ թէ  
 ի կար պարապեալ , թէ ի քուն եւ թէ յարթմնի , նոյն եւ մի խոր-  
 հուրդ զուշ նորա գրաւէր , այլ զգուշանայր չյայտնել նոցա զայն ,  
 չէւ ուղւոյ լեալ :

Քանզի խորհէր գնալ հետի մինչեւ ի Պետրոպօլիս ի խնդիր դարձի  
 հօր իւրոյ . այսպիսի խորհուրդ արիական երկնեալ ի մտի , եւ ի  
 գործ այսպիսի քաջայանդուզն պատրաստէր օրիորդն երկչոտ :  
 Բայց թէպէտ եւ արգելք ծանուցք յանդիման լինէին մտաց նորա՝  
 սակայն զօրութիւն կամաց , արութիւն սրտի եւ առ Աստուած  
 ասալինութիւն քաջալերէին յազմել ամենայնի : Ի հաստատել  
 նորա ի խորհուրդն , եւ ի մերձենալ աւուրց ձեռն ի գործ առնե-  
 լոյ , ահացուցանէր զնա անհմտութիւն ճանապարհին , զի եւ ոչ  
 ուրեք ի մտակայ շինցի գիտէր ուղեւորել . չէր նորա երբէք ել-  
 եալ յանառեան , եւ իբր գնալ մինչեւ անդր ի Պետրոպօլիս . գիտիւր  
 բարբառել ընդ ազգս այլալեզունս՝ ընդ որս պարտէր նմա անցանել .





գական. բայց օրն տարածամէր, արեգակն ի մուսս էր, եւ ըՍփրինճեր ոչ երեւէր: Յետ մահաշուկ արկածիցն չեւ եւս թերացեալ էր նա ի խոստմանէն, վասն որոյ երկիւղ անհնարին կալաւ ըզփեդորա. իսկ Ելիսաբեթ Չանայր փարատել զերկիւղ նորա, այլ ինքն եւս յերկիւղի կայր: Փեդորա փափկասուն էր եւ տկար, եւ մինչեւ ցայնժամ ըստ եզր լճին չեւ էր անցեալ, այլ ի սաստիկ հոգոցն ստիպեալ յայնժամ, բուռն արար անձին գնալ ընդ դասեր իւրոս՝ ի խնդիր անն. ելին մեկնեցան ի միասին, դէմ եղեալ ընդ անտառախիտս ի դաշտն: Յուրտ սաստիկ էր, թուէին մայրիք անտառին սառնեղէնք, կողերց նոցա եղեմնապատ սպիտակացեալ մէզ թանձրամած ծածկէր զեզերս շուրջանակի. արեւ ի մուսս՝ ի գոյն տըխուր ներկանէր զհամադոյս եւ ձիւն միապղղաղ բիւրղանման ակնախտիլ՝ զեզեւէր զփեդորա ի գնացս: Բայց Ելիսաբեթ ընդ նոստիկն երկնաւ անեալ, եւ սովոր ի խիզախել ընդ սաստիկագոյն ձմերուտն, քաջաբերէր զմայր իւր եւ օգնէր նմա: Այսչէս դեռաբողբոջ ընձիւղ ծառոյ տեղափոխելոյ յերկիր օտար եւ տկարացելոյ՝ ընդդէպեալ երկրին ուռճանայ ծլարձակ, եւ ի սուղ ժամանակի նեցուկ մտեալ ոստոցն մայրենեաց՝ ընդ հովանեաւ իւրով ծածկէ զբուռն կենսատու իւր:

Մերձ ի դաշտ անդր հասեալ՝ իբրեւ ոչ եւս զօրէր փեդորա յառաջ գնալ, ասէ ցնա Ելիսաբեթ. Օրս տարածամեալ է, մայր իմ, հանգիր դու աստ, եւ երթայց ես յեզր անտառիս. եթէ յամեռք, գիշեր ի վերայ հասանէ, եւ ոչ եւս կարացուք տեսանել զհայր իմ՝ թէ իցէ ի դաշտին: Յայնժամ փեդորա յեցեալ ի մի ի մայրեաց, եթ ող դատերն գնալ, եւ սրացու նա ի դաշտն, եւ ի վերայ միոյ ի գերեզմանաց, որ բլրածեւ ամբռանան անդ խիտ առ խիտ, դէտ կացեալ օրիորդն սրտատրոսի եւ արտօսրալից՝ խնդրէր զհայր իւր, եւ ոչ ուրեք տեսանէր գնա: Չերեւէր ինչ ի լուռ եւ եւ յամայի դաշտին. մութ գիշերոյ սկսանէր զերկիր ընդ երկինս խառնել, եւ ահա յանկարծ ճայթեաց հրազէն ոչինչ ի բացէ, եւ արծարծանէր յոյս յօրիորդն. զի զթնդիւն, զոր ի ձեռանէ հօրն եւ եթ էր լուեալ, համարէր անշուշտ հաւաստիս գտանելոյ անդ զհայր իւր, եւ դիմեալ ընդ այն կողմն, տեսանէ յետ կոյս ժայռի այր մի կորացեալ՝ իբր ի խնդրել ինչ ընդ երկիր, եւ ձայնէ. Հայր իմ, սիրեցեալ հայր, դո՞ւ իցես: Դարձաւ ի նա այրն եւ չէր ըՍփրինճեր. այլ պատանի զեղանի որ ի տես օրիորդին հիացեալ եկաց: Յայնժամ յաւել Ելիսաբեթ ցաւագին. Ոչ, չես դու հայր իմ,

այլ տեսե՞ր դու գնա ի դաշտիդ, եւ ո՞ր կարացից գտանել գնա: Պատասխանի ետ պատանին. Զհայր քո ոչ ճանաչեմ, այլ չէ արժան ի տարածամուս կալ քեզ աստ միայնակ. բազմավտանդ է վայրս, չերկնչի՞ր դու բնաւ: ի վերայ էած օրիորդն. Ո՛հ, չիք ինձ վտանգ ահարկու քան զայն, եթէ չգտից զհայր իմ: եւ զոյգ ընդ բանին ամբարձ զաչս ի յերկինս. ազնուականութիւն, դորով եւ արիւթիւն փայլէին ի նոսա՝ յայտարարք ոգւոյ՝ եւ հանգերձելոյ բախտի նորա նախագուշակք: Յուզեցան գուլթք պատանւոյն. թուէր նմա երազել, զի հանգոյն ինչ չէր նորա տեսեալ, եւ ոչ ի մտի պատկեր այնպիսի նկարեալ: Եհարց զանուն հօր օրիորդին, եւ նա ասէ. Պետրոս Սփրինճեր է անուն նորա: Յայնժամ ասէ պատանին. եւ սրայէս, դո՞ւստր աքսորելոյն իցես՝ որ առ լճիւղ բնակէ ի հիւղիդ, մի՛ ինչ հոգար, ճանաչեմ գնա, չեւ եւս էանց ժամ մի յորմէ հեռէ մեկնեցաւ նա յինէն՝ գնալ ընդ այլ ճանապարհ ի բնակութիւն իւր, եւ արդ հասեալ իսկ իցէ անդր: Զայն իբրեւ լուաւ օրիորդն, փութացաւ՝ ուր թողեալն էր զմայր իւր, եւ ի ձայն ցնծութեան աւետաւորէր նմա ի հեռուստ մայրակոչ լինելով՝ մինչչեւ իսկ մարթէր ձայնի իւրոյ առ նա հասանել: Եւ իբրեւ եկն ի տեղի անդր՝ եւ չեզիտ գնա, վարանեալ տագնապեալ ձայնէր յանտառին զծնօղս իւր, եւ ահա ձայնք հնչեցին յայնմ կողմանէ լճին. փութացաւ եհաս, եւ առ սեամս հիւղոյն տեսեալ զհայր իւր եւ զմայր, դիմեաց ի գիրկս նոցա, Որոց բազկատարած ընկալեալ գնա, եւ ողջագուրեալ զմիմեանս պատմէին թէ ո՞րպէս ընդ այլ եւ այլ ուղի ի հիւղ անդր դարձեալ էին, եւ ահա հասեալ առ միմեանս, եւ զերծեալ ի հոգոց: Յայնժամ գլուտաց օրիորդն զի զհետ իւր եկեալ էր պատանին:

4

Մ Ե Ն Ա Մ Ա Ր Տ

Շորթալգերձ, ըլլեցէն սլաք	Առ ի քաւալ (սո.), գաւ իվայր
Իրնդիւն, մէջ աղմուկ	Մուսլ (սո.), մալի
Դիւր, հարկ՝ արժարակ տեղ	Բոմբիւն, պայման Յայն
Մանուածաւալ, մանր ծաւալ անեցող	Դարձուած կռել, գիտութեան քու
Բարդ ի բարդ, երբոր մրցող արկած	Ձերդ, նախ

Որպէս մըռայլ մըրրիք աչնան  
Շըղթայազերձ ի դուրս սուբան

Յերկուց լերանց հանդիսակաց,  
 Խըրոխո գրընդմամբ խառնին յիրեարս .  
 Սապէս երկու այն դիւցազունք  
 Յուր պատին գերդ գալարունք :  
 Եւ որպէս ուղիք կըրկին պըղտոր  
 Բարձր ի ժայռից գըլին ի գըր ,  
 Բախին յիրեար , ժայթքեն փըրփուր ,  
 Ի մի ձուլեալ վազեն ի դիւր .  
 Մեծ դըզըջմամբ առ ի թաւալ  
 Ծածկեն ըզմարդ մանուածաւալ .  
 Այսպէս ի կուր ահեղասաստ  
 Մըրըրկալիցք եւ ստուերամած  
 Ինխսփեւա ուարին Լոկլին  
 Ահեղ գոռմամբ ի դաշտ ելին :  
 Իշխանդ իշխան հարուած խառնէր ,  
 Եւ այր ընդ այր դարձուած կըշտէր ,  
 Ասպար յասպար բախեալ թընդայր ,  
 Եւ սաղաւարտք իբրեւ քարայր .  
 Սուրք ի սըրոյ հարեալ թըռչին ,  
 Պատառ պատառ զըրահք թափին .  
 Արին ի դաշտըն խոխոջէ ,  
 Ծուլս բարդ ի բարդ յեթեք փըջէ .  
 Թըռչին թափին վեր վայր յերկնից  
 Շերտք եւ բեկորք , տարափ նետից :  
 Որպէս գոչէ մեծ ովկիան  
 Երբ թաւալէ դալեաց խուժան .  
 Որպէս ճայթէ շանթ ի յերկնէ ,  
 Նոյն էր բոմբիւն յայնրմ մարտէ :

Ոստիան

( Թարգ. Հ. Ա. Կ. Ռագրասունի )



Կարեվիւր , Երես Կերտարտաձ  
 Պեմուլ , ապառ Նայել

Ածել ի հուան , հասողէ  
 Ի գունս անկանել , Զիւն Լուս Էլ

Ի միում աւուրց ընդ երեկս՝ մտայոյզ , ձեռն ի ծնտաի , արմուկն  
 յեց ի թոնիր , հառաչէր օրիորդն եւ յոգուց ելանէր : Փեղորս ՚ի

տեսանելն զնա ծանրաթախիծ՝ եթող զասեղն ի ձեռանէ , եւ սիրտ  
 ի տագնապի պըռցեալ ի նա՝ խնդրէր ի Տեառնէ ազդել իւր բանս  
 սփոփիչս այնպիսիս՝ որ մուսցումն վշտաց նորա սրասցեն : Իսկ  
 օրիորդն կացեալ ընդ հովանեաւ ի բացէ՝ բայէր յերկաքանչիւր ,  
 եւ յուսով եւ եթ դադարեցուցանելոյ զարտասուս նոցին սփոփէր ,  
 աներկեւան ընդ օգնականութիւն պատանուոյն ի կատարումն առա-  
 ջարկութեան իւրոյ . զի վստահութիւն իմն անդատին ի սիրտ իւր  
 ազդէր ընդ կարեկցութիւն նորա եւ ընդ պաշտպանութիւն : Բայց  
 կասկածէր թէ գուցէ ծնողք իւր հակառակ կացցեն խորհրդոց իւ-  
 րոց , մանաւանդ մայր իւր . այլ զիմորդ մարթ էր իւր մեկնել ա-  
 ռանց նորին հրամանի , առանց զխտելոյ զհայրենիս նոցա , եւ վասն  
 որոյ իրաց պարտ էր խնդրել զթողութիւն : Հարկ էր նմա յայտնել  
 նոցա զխորհուրդ իւր , եւ ահա ժամ էր յայտնելոյ . եզ ծուր  
 յերկիր , խնդրեաց ի Տեառնէ ամեւ զսիրտ նոցա ի հաւան . եւ մա-  
 տուցեալ առ հայր իւր յետիւտէ՝ կայր յեց ի թիկնաթոռն յորում  
 բազմէր . եւ վայրիկ մը լուռ կացեալ զի թերեւս նա ինքն կան-  
 խեսցէ ի խօսել , իբրեւ ետես զի ընկղմեալ էր նա ի խորհուրդս  
 խօսել կալաւ եւ ասէ . Խնդիր ինչ է ինձ ի քէն , հայր իմ : Նա ՚ի  
 վեր առեալ զգլուխ իւր՝ ակնարկեաց ասել . եւ դուստրն ասէ .  
 Լուարուք ինձ , հայրիկ իմ եւ մայրիկ , եօթնեւտասներորդ ամ է  
 այսօր տիոց իմոց , այսօր ընկալայ ի ձէնձ զկեանս իմ , եւ սիրելի  
 է ինձ փոխանակել զայն ի վերայ ձեր , հանդերձ սրտիւ իմով որ  
 սիրէ գծեզ եւ մեծարէ որպէս պատկերս Աստուծոյ կենդանիս :  
 Ի ծննդենէ եւ այսր ըստ թուոյ աւուրց կենաց իմոց եղեն բարե-  
 րարութիւնք ձեր առ իս , եւ չեղեւ ինձ փոխարինել ձեզ ընդ այ-  
 նոցիկ շնորհակալիս եւ սէր . զի զի՞նչ իցեն շնորհակալիք սրտի առանց  
 արդեանց . եւ իցէ՞ ինչ սէր առանց հանդիսի ցուցակութեան : Թո-  
 ղէք ինձ առնել միանգամ վասն ձեր , զոր ոչ դադարէք դուք առ-  
 նել ընդ իս յօրէ ծննդեան իմոյ . մի՛ խնայէք յայտնել աստ ուրե-  
 մըն դատեր ձերում զգաղանիս արեւոյցը : Պատասխանի ետ հայր  
 նորա կարեվէր սրտիւ . եւ առ ինչ խնդրես զայդ , դուստր իմ :  
 Դուստրն ասէ . Առ ի զիտել զկարեւորս տալոյ ձեզ առհաւատ-  
 չեայ զսիրոյ իմոյ . զիտէ Տէր վասն սրոյ իրաց համարձակիմս ՚ի  
 խնդրել :

Չայստիկ , զձնգովք հօրն փարեալ , ալիսուրմ ի դէմս նորա հա-  
 յեցիւք պաղլաակր : Մտտեաւ անդր Փեղորս յարուցանել զգուստրն  
 եւ կացեալ յետիւտէ՝ ուր նա ՚ի գուճս կայր , եւ ոչ զլարթ-

մունն նորա տեսանէր եւ ոչ գաչս՝ որովք յայտնէրն հօր իւրում  
 զարիական խորհուրդն, եւ անկասկած զաղետիցն՝ որ հանդերձ-  
 եալ էին կեղեքել զսիրտ մայրենի, ասէր ցայր իւր. Ընդէ՞ր խնա-  
 յես զգազանիսդ ի դմանէ. ի մանկութենէ՞ դորա զանգիտես. եր-  
 կընչիս թէ չկարասցէ դա հանդարտել վշտացն ընդ դառնութիւն  
 աղետիցս: Իսկ հայրն յառեալ ի դուստրն իւր, ասէ. Ոչ, չերկըն-  
 չիմ ի տկարութենէ դորա: Յորմէ ի միտ էառ. օրիորդն զի հասու  
 լեալ էր հայր իւր խորհրդոց իւրոց, եւ սեղմեաց զաջ նորա՝ ազ-  
 գելով լռելեայն չյայտնել զայն մօր իւրում, զի ճանաչէր զսիրտ  
 նորա, եւ հնարէր յամեցուցանել նմա զդառնակակիծ յայտնու-  
 թիւնն: Յայնժամ գոչեաց Սփրինճեր. Թո՞ղ ինձ, Տէր, որչափ ինչ  
 տրանջեցի, խորհէի եւ եթ ի բարիս՝ զորս բարձեր յինէն, այլ ոչ  
 յորս պատրաստէիրն ինձ. դուստր իմ, մուսացուցեր դու ինձ այսօր  
 զվիշտս երկոտասան ամաց: Եւ դուստրն ասէ. Մի՛ եւս ասեր,  
 հայր իմ, որպէս սովորութիւն է ասել թէ չիք յերկրի բարութիւն:  
 Այլ աղաչեմ զքեզ, ասա ինձ, զի՛նչ անուն է քո, ո՞ր հայրենիք, եւ  
 ո՞րպիսի հասեալ քեզ արկածք: Եւ հայրն ասէ. Ոչ մի ինչ հասեալ  
 ինձ արկածք. հայրենիք ինձ անդ են, ուր դու մերձ կաս. եւ ա-  
 նուն իմ է՝ բարեբաստիկ հայր Ելիսաբեթի: Յաւել եւ Փեղորա.  
 Եւս քան զեւս բորբոքես դու զիս ի սէր, դատրիկ իմ, ի սփոփել  
 զհայր քո: Գորովեցաւ ի բանից աստի Սփրինճեր. փարեցաւ ըզ-  
 դատերբն եւ զմարբ նորա, եւ թացեալ զնոսա յարտասնուն՝ կրկնէր  
 եւ երեքկնէր հեկեկանօք. Աստուած իմ, թո՞ղ ինձ, եւ մի պատու-  
 հասեր զիս: Եւ ի յուզելոյ կրիցն վայրիկ մի հանդարտեալ, ապա ասէ  
 ցդուստր իւր. Պատմեցից քեզ զամենայն, դուստր իմ, որ ինչ  
 գիտել ցանկաս, այլ համբեր այլ եւս աւուրս ինչ, չկարեմ արդ-  
 խօսել զթշուառութենէ իմմէ, մուսացուցեր դու ինձ զայն: Իսկ  
 օրիորդն, որ յամենայնի հլու էր ծնողացն, ոչ իշխեաց այլ եւս  
 թախանձել մնալով կամաց հօր իւրոյ ի վեր հանելոյ զգազանիսն:

5

### ՆՈՒԱԳ ԶՂԶԱԿԱՆ Ի ԺԱՍ ՄԱՀՈՒ

Լեւոնախնդէս, Լեւոն Դման  
 Վրիժակ, Լեւի հարսը Գործիչ

Համակ, Բարբառ  
 Սլաք, Զեբ

Ուզիղ են, Տէր, եւ ճմարիտ են դատաստանք քո, Աստուած,

Այլ դու քաւիչ դու ախորժես քան դատաւոր մահացուաց.  
 Սակայն եղեոն անօրինիս սյնքան չեղջեալ բարդ ի բարդ.  
 Ձի ինձ ներել արդարութեամբ՝ քում բարութեանդ ոչ է մարթ:

Այո՛, այո՛, լեւոնահանգէտ չարիքս իմ ոչ առնեն թոյլ  
 Ամենակալ ձեռինդ այլ ինչ բայց պատուհաս յիս հեղուլ,  
 Երանութեանս իմում դառնան փառք եւ պատիւ քո ընդդէմ,  
 Ողորմութիւնդ իսկ քո սպասէ զի ես ի սպառ կորիցեմ:

Կատարեսցին յիս կամք քոյին զի փառքդ ըզնոյն պահանջեն,  
 Մի՛ յարտասուս իմ ողորմիր աղբերացեալ ուղխօրէն.

Որտաս, հար զիս շանթընկէց, որ ընդդէմ քո առի զէն:

Երկըրպագեմ ի կորնչելն իմում ձեռին քո վրիժակ,  
 Այլ զո՞ր յիս կէտ հարկանիցեն անկղ շանթից քոց սըլաքք,  
 Որ Յիսուսին քո յարենէ չիցէ ծածկեալ այն համակ:

ՏԵՊԱՐՈՅ

(ԹԻԱՐԳ. Հ. Ե. ՀԻՐԱՄԻՐԳ.)



Ի պարզոյ, օրէն պարզ արեւը  
 Յուրանածն, Բարբառ Նեալ  
 Ճապուկ, Զարմուշ  
 Շառաւիղ, Կարգ Կարգ Կարգ  
 Անպարզ, Կարգ, Կարգ Կարգ

Նախիր, անասան, հօր  
 Համիք, Բարբառ Կարգ  
 Կերտած, Լեւի  
 Չուգարեհասկ, Կերտած Կարգ  
 Լօղիկ, Կերտած (Ֆեդրան)

Ձմերունք Սիպերիոյ մրրկալիցք են. բազում այն է զի ի պարզոյ  
 ամպրոպք ահագինք մթագնեն յանկարծ զերեսս երկնի. դան հա-  
 սանեն հողմք ընդդէմ իրերաց, բերելով աստի զստուամանիս ծո-  
 վուն հիւսիսի, անտի գիտթորիկս կատարիականին. եւ ի հանդիպել  
 նոցա միմեանց՝ ի զուր եղեւնեաց հաստարմատ կոճեղք, եւ յու-  
 բանածեւ բունք ընդդէմ բարկութեան նոցա ճակատ յարդարեն.  
 Ի զուր եւ բարտիք ճապուկ գագաթամբ եւ մշտատատան սա-  
 զարթիւք իւրեանց՝ յերկիր խոնարհին. բեկտին բնաւք եւ արմա-  
 տախիլ տապալին: Ի բարձրաբերձ լեռանց հիւսք ձեանց, եւ շա-  
 առաչիղք սառամանոյ անհեթեթք վայրաբերեալ սաստիկ թա-  
 ւալմամբ՝ եւ բաղխեալ ընդ սեպս քարաժայռից՝ խորտակին եւ  
 խորտակեն, եւ հողմք բռնաշունչք զվշտափա լեռանց, զնշխարս  
 հիւզից, զանդեայ եւ զնախիր տապատ արկեալ, յախշտակին  
 յօդս ի վեր, տանին արկանեն ցիր եւ ցան յերկիր, ծածկեալ հա-  
 մապիւս յաւերակաց համէից:

ի միում առուրց ամենան յունուարի ընդ առաւօտն պատահեաց օրիորդին մի յայսպիսեաց ահագին մրրկաց՝ յընդարձակ դաշտին գերեզմանաց, մերձ ի փայտակերտ աղօթանոց փոքրիկ: Ի տեսանել նորա մթազնեալ գերիկինս՝ յաղօթանոց անդր ի ներքս անկաւ. հողմք ամեհիք կոծեալ զտկարն կերտուած եւ տատանեալ, ի հիմանց սպառնային կործանել, իսկ ինքն խոնարհեալ առ սեղանովն կայր աներկիւղ. ամենայն ինչ չուրջ զնովաւ սասանեալ ի մրրկէն, սիրտ իւր միայն էր անասան, յուսացեալ ի Տէր պահպանել զկեանս իւր վասն ծնողաց իւրոց մինչեւ ազատեսցէ զնոսա:

Յայնմ վայրի յարեաւ մրրիկն այն, եւ դողային ծնողք օրիորդին վասն դատերն իւրեանց, եւ դոչէր մայր նորա տառապեալ. Ո՛հ, ո՛հ, զի՛նչ արդեօք դատերն խնում, Ելիսաբեթին խնում, հասցէ պատահար: Իսկ Սփրինճեր լուս եւեթ առեալ զցուպ իւր՝ եբաց զգուռնն, գնալ ի խնդիր դատերն, փութացաւ եւ Սմուղֆ (որդի քաղաքապետին թոպուքեայ) զհետ նորա: Բանանայր մրրիկն, խորտակէին շուրջանակի մայրիք, վտանգ էր մահու յանտաւին: Սփրինճեր ցուցանէր զայն պատանւոյն, առ ի խափանել զնա ի գալոյ ընդ իւր, այլ ոչ ինչ զօրէր, տեսանէր եւ նա զվտանդն. այլ քամահէր զնովաւ, բարեբախտութիւն անձին համարէր զիմագրաւել վտանգին վասն օրիորդին:

Հասին ի միասին յանտաւ անդր, եւ ասէ Սմուղֆ. Յո՞ երթամք: Սփրինճեր ասէ, ի դաշտավայրն, ուր հանապազօր գնայ Ելիսաբեթ, յաղօթանոց անդր թերեւս իցէ ապաստանեալ: Ոչ եւս ինչ յաւելուն, գնան անմուռնչ, տաղնապ նոյն ի սրտի երկաքանչիւր. ոչ մի ինչ հարցուած առնեն իրերաց, զիմեն անվեհեր, խոնարհին խուսեն ի տարափոյ ոստոց բեկտելոց, ի ճիւղաբերաց ընդ աչս նոցա հողմավարելոց, ի շանթից ժայռից զգլխով իւրեանց շուրջ փոթորկելոց: Հասին ի դաշտավայրն, ուր թէպէտ գերծ ի վտանգէ էին մայրեաց խորտակելոց, այլ անպատասպարք ի բացավայրին ի ստահակ հողմոց մրրկաց մղեալ տապալէին, եւ բազում ճգամք մատեան ի փոքրիկ աղօթանոցն փայտակերտ, ուր յուսային գտանել զօրիորդն ապաստանեալ: Այլ ի տեսանել զխարխուլ ապաստանին տախտակամած յարկին ահեղ ճարձատումբ սպառնումն կործանման, զարհուրեալ կացին՝ զմտաւ ածեալ զվտանգ օրիորդին ի ներքս անդ եթէ էր: Յայնժամ Սմուղֆ զարմանահրաշ արիւթեամբ յառաջ քան զհայր օրիորդին խրախուսեալ եմուտ ի ներքս, եւ թուէր նմա երազել, զի ետես անդ զօրիորդն, ոչ

թէ կիսամեռ զդողի հարեալ, այլ առ սեղանովն անկեալ քաղցր ի քուն: Կարկեալ եկաց անձառ հիացմամբ, եւ նշանացի ցուցանէր զայն Սփրինճերի, եւ երկաքանչիւր նովին զգացմամբ ի ծունր անկան առ զուզահրեշտակ օրիորդուն, որ Բարձրելոյն հովանաւորութեամբ ննջէր անդանօր: Հայր նորա ի դէմս դատերն յառեալ եւ զմայրեալ, իսկ պատանին պատկառանք զաչս ի վայր արկեալ՝ չիչխէր իմն հայել յայնքան անմեղութիւն: Զարթեաւ օրիորդն, ծանեաւ զհայր իւր, եւ զիմեալ ի գիրկս նորա, ասէ. Ո՛հ, զիտէի զի հոգայիր վասն իմ: Իսկ հայրն փարեալ զնովաւ, ասէ. Ո՛հ, դուստր, յորպիսի հոգս արկեր զմեզ, զմայր քո տառապեալ եւ զիս: Դուստրն ասէ, Ներեա ինձ, հայր, զի եղէ նմա առիթ արտասուաց, երթիցուք սրբել զարտասուս նորա: Եւ ի յառնելն տեսեալ զպատանին, բերկրալից զարմացմամբ ասէ. Երանի է ինձ, զի պաշտպանք իմ հսկեն զինեւ, Աստուած իմ յերկնից, հայր իմ եւ դու յերկրի: Խանդաղատեցաւ պատանին ընդ բանս նորա մինչեւ յարտասուս, իսկ հայրն ասէ. Եւ սրպէս կամիս առ մայր քո զնալ, իցե՞ քեզ հնար դառնալ արդ ի տուն, օրիորդ տկար, ինչպիսել ի մարտ ընդդէմ մրրիկին՝ յորմէ սքանչելեօք Սմուղֆ եւ ես մազապուր գերծաք: Դուստրն ասէ. Թող ցուցից զփորձ զօրութեան իմոյ, առաւել է յիս ոյժ քան զոր կարծես, եւ ուրախ եմ, հայր, զի տեսցես քեզէն որչափ ինչ կարեան առնել մօր խնում առ ի սփոփումն: Եւ յասելն զայս՝ ցուանայր յաչաց օրիորդին արիւթիւն այնպիսի, որ տայր հօր նորա ի միտ առնուլ զհաստատութիւն դատերն ի խորհուրդս իւր: Եւ զնայր նա յեց ի թեւս հօրն եւ պատանւոյն՝ սրք օգնէին նմա՝ պատասպարեալ զգլուխ նորա լայն լողիօքն: Քաղցր թուէին անդ պատանւոյն որտունդոստ մրրկաց արհաւիրք, մատուցանելով նմա պատեհ օգնելոյ օրիորդին, յաչս զնէր զվտանգ կենաց՝ զոր ցանկայր բիւրիցս ի վերայ նորա փոխանակել, իսկիտայր եւեթ զկենաց նորա, թէպէտ եւ վտահ էր ի փրկել զնա, եւ յեռանդն սրտին ձայնատուր լինէր ամարոպաց առ հասարակ ընդդէմ իւր:

Դադարեցին յայնժամ մրրիկք սպառնալիցք, պարզեցան երկինք, ոչ եւս սուբային ընդ այն ամպք ահարկուք, անկան հողմք եւ լեցին, եւ սիրտ Սփրինճերի զուարթացաւ. իսկ պատանին հառաչէր, զի եթող օրիորդն զբազուկ նորա եւ զնայր ինքնին, առ ի ցուցանել հօր իւրում զոյժ իւր յոր վտահէրն, եւ զկար զնալոյ ի խնդիր շնորհի ազատութեան նորա մինչեւ ի ծագս երկրի՝

եթէ հարկ լինէր: Եւ ի հասանել նոցա ողջամբ ի սուն, Փեղորա երեցունցն եւս զիրկս արկեալ՝ օրհնէր զԱստուած, եւ զդստրիկն սփոփէր չհոգալ զարտասուեացն՝ զոր եհեղ վասն նորա: Յամաքեցոյց զիօշիկս նորա սկիւռեհիս, ի բաց էառ նմանէ զմաշկեակն, եւ սանդրեաց զվարսս նորա երկայնահերս:

6

ՍԱՆՈՒԿՆ ԵՒ ՇՐԵՇՏԱԿ

Ծնգիլ, հււէլ, Կււէլ	Հակիլ ի մէս, Ծոււէլ, Խոնուհէլ
Հանգէս, հաստար, Կան	Չուարուն, հրեւոսի
Տրսմահալարդ, արբոսիւեամբ Խար	Յասիս, այս ուղիւրհիս Ժէլ

Չըքնաղաղեղ զուարթուն հրեշտակ  
 Յեզր որրանի հակեալ ի մէտ,  
 Իբր ի յառուին վըճիտ արեակ՝  
 Թըւէր զխնացն իւրոց կալ զէտ:  
 Համանըմանդ ինձ ս՛վ մանկիկ,  
 Աղէ՛, ասէր, եկ դու ընդ իս,  
 Ե՛կ եղիցուք մեք երջանիկ,  
 Չիք ինչ վայել քեզ ի յաստիս:  
 Չըգոն անխառն յերկրի բերկրանք,  
 Աստ ի հաճոյս ծընգի հոգին.  
 Տըրամահալարդ խընդից են ձայնք,  
 Եւ հեշտութիւնք հեճեճագին:  
 Միշտ արհաւիրք զտօնս ամբոխն,  
 Եւ ոչ տիւ ջինջ խաղաղական  
 Ի փոթորկաց մուսլ բաղխանէն  
 Չերձ ինչ կացոյց ըզվարդոյսն:  
 Չիա՛րդ. դայցն՝ վիշտք եւ վըտանդ  
 Խուովել ըզքոյդ ճակատ անբիծ.  
 Նըսեմնացի՛ն աչք կապուտակ  
 Ի յարտասուեաց դառնակըսկիծ:  
 Ո՛չ, ո՛չ, յօդոց դաւտուն անհուն  
 Գայցես ընդ իս ճախր անուլ փոյթ,  
 Ու՛ աստուածախնամի՛ն Տեսչութիւն  
 Տացէ՛ զաստէն աւուրս ըզքոյդ:

Մի՛ ոք ի քումը ի բնակութեան  
 Արկցէ զիւրեւ ճորձ սըզագդեաց.  
 Ժողովեացեն յետինդ ըզժամ՝  
 Իբր ըզնախկին պահս քոց կենաց:  
 Մի՛ ծածկեացին ճակատք յամպոց,  
 Մի՛ ինչ անցէ յուշ անդ շիրիւմ:  
 Հանգէա տիովք քեզ արդարոց  
 Գեղեցկագոյնն է օր վերջին:  
 Եւ թօթափեալ զթեւսըն լուսոյ՝  
 Թըռեաւ զուարթունն անդ ընդ բանին  
 Ի բնակութիւնսըն մըշտագոյ.  
 — «Հէ՛ք մայր, մեռաւ քո որդին»:

Պարզուլ  
(Թարգ. Ե. Վ. Գ.)

Նսն, Բոն	Բարմախեաց, Բարձր աս (որդ) ասեցող
Սարեակ, (Կապիտուլ) Բաշտանք	Առապար, Կարսոյ որդ
Յցունագարդ, (Ֆօթօզլլը)	Մարդ, հերասար ասհման
Կսգար, Կեոսի Դե արաբիլ	Նարմուսն, զարմանիլ

Չուարթագոյն ի վերջ կոյս ասլրիլի ծագէր արեգակն ի վերայ ձեանց, եւ կղզիք լճին աւազուեք սկսանէին առ փոքր մի ծածկել դալարեօք. պարզէր կանկար զկոկոն իւր ստուար ձիւնաթոյր, եւ ծաղկունք գունատք յորինէին գորգ յանտառին: Թխատիպ սարեկաց ամպ լջանէր յանաղարթ սոսս ծառոց, եւ նախերգակ զձմերայնոց զուարթացուցանէր ախուր լուսթիւն. ազա եւ անդ զգետեզերքք թեւածէր ի ճարակ բաղեան պարսիկ սեւակտուց՝ վարդագոյն փետրովք ցցունաղարդ, որ ի ձայթիւն հրազինուց ճչէ սաստկաճայն. ճախրէին կացարք ազգի ազգի ի շարս լճին, կեսք սեւատեսակ եւ զեղնակտուց, իսկ այլք բարձրաքեացք՝ մանեակ փետրագարդ յաքսն բերելով: Եւ զի՛ երկարեմ, գարուն կանխահաս գայր աւետաւոր ի Սիպերիա, եւ տոյժ մեծ թուէր ելլիսաբեթի կորուսանել զայն ամ բարեպատեհ յուղեւորութիւն: Եդ ՚ի մտի քաջայանդ ուզն արիութեամբ կատարել զխորհուրդ իւր, յերկնից ակն ունելով օգնականութեան:

վասնորոյ ծուներ եղեալ առաջի ծնողացն՝ ասէ . թոյլ տուք ինձ , ծնողք իմ , յայս ձեւ ցուցակի ընդ ձեզ բարբառեալ , զի զվերագոյնն ամենայն բարբառախոսութեանց՝ խոնարհութեամբ արժան է հայցցել : Իշխեմ ակն ունել դարձուցանելոյ ի ձեզ զազատութիւն ձեր , զերջանկութիւն եւ զհայրենիս . յամաց հետէ այս է՝ յոր բերի յայս իմ քան զամենայն ինչ ինձ ցանկալի , զոր արդ ուրեմն մերձ հասեալ տեսանեմ , եւ ո՞չ թողուցուք ըմբռնել ինձ զայն : Ո՛հ , եթէ առաւել քան զոր խնդրեմս ի ձէնջ կայցէ ինչ ցանկալի , մի՛ լռէք ինձ , հաճոյ է եւ ինձ . այլ թէ չկայցէ . . . : Այլ յասելն զայս ՚ի փղձուկ եւ զգողանի հարեալ , հեղձամղձուկ եղեւ ձայն նորա , եւ փարեալ զծնգովք ծնողացն՝ հաղիւ զբանս իւր կարաց կատարել : Հայր նորա ձեռս ի գլուխ դատերն եղեալ՝ կայր անբարբառ . իսկ մայրն գոչէր . Միայնակ , հեռի՛ , անօգնական . մի՛ եւ մի՛ լիցի , չկարեմ թողուլ : Յաւել դուստրն կողկողազին . Յիս մայր իմ , մի՛ մերժեր զխնդրուած իմ . յանկարծ գիտէիր յորմէ հետէ երկնեմ ՚ի սրտի զխորհուրդս զայս , եւ քանի՛ սփոփանս անտի ընկալեալ է իմ . ընդ ներել տիոց ինձ հասու լինել ազետից ձերոց՝ եղի ի մտի նուիրել զկեանս իմ առ ի հանել զձեզ յազատութիւն . երանի՛ աւուրն յորում խոստացայ օգնել հօր իմում . երանի՛ յուսոյն՝ որ զիսն քաջալերէր ի տեսիլ արտասուաց նորա : Ո՛հ , քանիցս անմուռնջ տառապանացդ ձերոց ականատես՝ ընկձեալ լինէի ի մահառիթ արտմութենէ , եթէ չէր իմ կարացեալ ասել ցիս . ես ինքն զարձուցից ի նոսա զկորուսեալն նսեհ , ընդ որ մորմնքին : Հայր իմ , մայր իմ , եթէ բառնայք յինէն զայս յոյս՝ բառնայք զկեանս իմ . ի խափանել իմում յառաջարկութենէ աստի՛ յոր ամենայն խորհուրդք իմ յանդին , ոչ եւս պիտանի թուեսցին ինձ կեանք իմ , աւուրք իմ չիջցին նուազեալ : Ներեցէ ինձ , եթէ վշտացուցանեն զձեզ բանք իմ , կեցից արդեօք յարգելու՞ ձեր զիս աստ , կեցից , ոչ մեռայց , եւ ոչ մահ իմ յաւելցէ ձեզ վիշտ . այլ թողէ՛ք ինձ լինել երջանիկ : Մի՛ համարիք անհնարին զխորհուրդ իմ , չէ՛ եւ չէ՛ իսկ անհնարին . սիրտ իմ վկայէ զայս գօրեսցէ սա խնդրել զիրաւունս , ո՞չ պակասեսցին սմա բանք ընդունելոյ ձեզ զայն . ոչ յիմքէ , ոչ ի վատտակոց , ոչ ի խափանաց , ոչ ի նախատանաց , ոչ յարքունեաց , եւ ոչ յարքայից . այլ զանգիտէ եւ եթ ի չկամելոյ ձերմէ : Աստանօր կարճեալ Սփրինձերի զբանս նորա , ասէ . թո՛ղ , դուստր իմ , թո՛ղ , խոռվես զօգի իմ , այլայլ իմ . չէր իմ ցարդ ընկրկեալ յառաքինական ինչ գործոյ , եւ ոչ քաջութեան իմոյ սա-

սանեալ յերեսաց առաքինութեան . չկարծէի , դուստր իմ , գու՛ աղար , այլ ի քէն ուսանիմ զի եմ . մի լիցի , չկարեմ հաւանել ընդ խորհուրդ քո : Եւ Փեղորայ ի չհաւանելոյ առնն խրախոյս առեալ , կալեալ զձեռանէ դատերն , ասէ . Լո՛ւր ինձ , դուստր , եթէ տկար է հայր քո , թո՛ղ զի եւ մայր քո լիցի տկար . ներեա նմա թէ չկարէ թողուլ քեզ կատարել զայդ առաքինութիւն : Գէսը նորանչան , խնդրել մօր ի դատերէ զի նուազ առաքինութիւն յանձին բերիցէ . այլ մայր քո խնդրէ եւ եթ զայն իբէն , եւ ոչ հրամայէ քեզ . դեր ի վերոյ ամենեցուն կալով քո , ոչ ումեք օրէն է հրամայել քեզ բաց ի քէն : Ելիսաբեթ ասէ . Այլ հրաման քս լիցի ինձ միշտ պաշտելի . եթէ կամիս կալ ինձ աստ , յուսամ զօրել հնազանդել քեզ . այլ զի գորովի սիրտ քո ընդ խորհուրդ իմ , յուսամ զի եւ հաւանեսցիս ընդ այն : Չէ՛ եւ չէ՛ այն հարեւանցի ինչ եռանդեան բերուեմն , այլ ընդ երկար երկանց մտաց ծնունդ . ոչ ի գուլթ եւ եթ սրդիական գորովոյ , այլ եւ ի պատճառս հաստատունս յեցեալ : Կայցէ՞ ինչ այլ հնար զերծուցանելոյ զհայր իմ յաքսորանաց . յերկոտասան ամս , յորմէ հետէ տառապի նա աստ , ո՞ ի բարեկամաց յանձն էա բարեխօսել վասն նորա . եթէ առնայր իսկ ոք յանձն , իշխե՛ք երբէք խօսել իրբեւ զիս , ազգէ՛ք ի նա սէր հանդոյն իմոյս : Ո՛հ , թողէ՛ք ինձ հաւատալ , որպէս եւ հաւատամս , զի դատեր ձերում պահեալ է Աստուած դարձուցանել ի ձեզ զբարեկենդանութիւն . եւ մի՛ խափանէք զփառաւորեալն պաշտօն՝ զոր հաճեցան երկինք հաւատալ ի նա :

Զի՛նչ աղէ գտանէք յառաջարկութեանս իմում չար . զմեկնե՞լ իմ ի ձէնջ , այլ ո՞չ լռէի ես յաճախ հառաչելոյ ձեր զաքսորանացդ , զի խափանէ զիս ի լինելոյ սուս . եւ ո՞չ այրն այն մեկնեսցէ զիս ի ձէնջ ի բաց : Զվտանգս ուղեւորութեան . այլ ո՞ր այն վտանգիցէ . ձմեռն երկրիս սովորեցոյց զիս խստութեան ցրտոյ , եւ արշաւանք ընդ առապարս ուսուցին ինձ զվատտակա ուղեւորութեան : Զտիոց իմոց կասկածէք , այլ այն իսկ լիցի պատուարան , զի տկարի ամենայն ոք հասանէ յօգնականութիւն : Իսկ զանխորձութենէ՞ իմնէ երկնչիք , այլ չեղէց միայնակ . յուշ լիցին ձեզ բան եւ զիր քաղաքապետին . ոչ առ այլ ինչ ներէ նա առաքելական չքաւորաց ընդ յարկաւս մերով հանգչել , բայց առ ի տալ ինձ ուղեկից պաշտպան եւ առաջնորդ : Տեսէք արդ՝ զի ամենայն ինչ հոգացեալ է , չիք ինչ վտանգ , չիք ինչ խափան , չիք ինձ պակաս , բայց հրաման ձեր եւ օրհնութիւն : Յայնժամ յաւել Սփրինձեր դառնացիս .

Իսկ կերակո՞ւր. մուրանայցե՞ս դու զայն. նախահարց մօր քո՞ որք  
 ի կողմանս յայտոսիկ թագաւորեցին, եւ խնցս որք կացին յաթոռ  
 Պոլոնիոյ, արժան իցէ տեսանել զթոռնեայ իւրեանց մուրացիկ  
 ընդ Ռուսաստան, որ ընդ մարզս ինքնակալութեան իւրոյ զթա-  
 գաւորութիւնս նոցա կացոյց: Որում համեստօրէն զարմացմամբ  
 պատասխանի արար օրիորդն. եթէ արիւն այգպիսի զնայ ընդ ե-  
 րակունս իմ, եթէ իցեմ արքայսզն, եւ պակք կրկին ի ճակատս  
 նախահարց խնց եթէ կացին, յուսամ երեւել արժանի նոցա եւ  
 ձեզ, եւ մի՛ երբէք անպատիւ առնել զանունն՝ զոր թողին նոքա  
 ինձ. այլ աղքատութիւն չածէ բնաւ անարգանս: Ձի՛նչ ամօթ իցէ  
 դասեր Աէլտեանց եւ Ռոպէսքեանց խնդրել ողորմութիւն յիւրոց  
 նմանեաց. քանի՛ աւագորեար անկեալ ի բարձուէ փառաց, ոչ  
 խնդրեցին ողորմութիւն. բարեբաղդագոյն քան զնոսա գտանիմ  
 ես, յօգնութիւն հօր խնց խնդրելով զայն:

7

### Ա Մ Ա Ռ Ն

Աիւլ, Ժող հո՛ւ  
 Պաւլիլ, Ժուր-էլ  
 Բունն, հոգէ Կո-  
 Տարմանել, Եղ-թիւն կել

Արսահունն, արտ հնչող  
 Շէկ, Դեռ-խառն Կ-րօր  
 Աննուկ, Կեր, արգանդ  
 Մրգուզ, Գն-չ, ան-րգ

Մինչ բզմանկտին արտահունձ  
 Բոցակիզէ Խեցգետին,  
 Եւ անջըրդի պասքի բունձ,  
 Եզինքն յակօս տարժանին.  
 Հովանաւոր ընդ ծառով,  
 Շուրջ պարուրեալ ի յոստոց,  
 Հանգչիմ ուր սիւք շքնչէ զով  
 Տերեւակոյտ ի բազմոց:  
 Սաղարթագեղ մայրեաց ծայրք  
 Տատանին մեզմ ի զեփիւռ,  
 Եւ ծածանին դաշտավայրք  
 Ի շէկ ցորեան համասփիւռ:  
 Ծառաստանին մըրգաւէտ  
 Ծանունք ի շոր ու՛ ի ծիրան

կողերքն յերկիր հակամէտ  
 Մերձ առ ինեւ կորանան:  
 Ճըպուռն ի նուագ իւր գեղջուկ  
 Ի ծիրանույն յեց ի յոստ՝  
 Չիւրն յեղյեղէ յար զանձուկ  
 Առ տարփալին իւր Աւգոստ:  
 Գիտեմ, մըրգուզը թռչնի  
 Ի յօրհնութիւն Արարչիս  
 Ի քո գըծուծ դայլայլիկ  
 Գիտեմ զի դու խրատես զիս:



Հ. Ե. Հիւրմիսկեան



Մարտ, Կի՛ի  
 Ձեռնկալու, օգնական  
 Յեխիւկ, Կարգ-բեւ, յօրհնել

Որիզ, Բրէ՛չ  
 Շահավանտ, արտար  
 Բազ ի բաց, ար հե-րո, ար ան-րի

Յաւուր միում կիւրակէի մինչդեռ կային ամենեքին յաղօթս, այր  
 ոմն բախէր զգուրս ցաով. երաց զայն Սփրինձեր, եւ փեղորայ  
 բարձեալ զձայն իւր ասէ. Ո՛հ, Աստուած իմ, ո՛հ Տէր իմ, ահա  
 այրն՝ զորմէ լուաք, ահա այրն որ զայ տանել զգուստր իմ: Եւ ան-  
 կաւ լալով ի վերայ սեղանոյն, ոչ զօրեալ բարեպաշտի տիկնոջն  
 գնալ ընդ առաջ առնն Աստուծոյ: Եմուտ ի ներքս այրն առաքե-  
 լական, որում անուն էր Հայր Պաւլոս. սպիտակամօրուք ծած-  
 կէին զկուրծս նորա, գէմք իւր պատկառելի, կորացեալ մէջը նո-  
 րա ի վաստակոց քան յամաց, ի բազմարկածեան կենաց մա-  
 շեալ էր մարմին նորա, այլ հոգի զօրացեալ. ի հայեցուածս իւր  
 տիրութիւն իմն բերէր, որպէս այր՝ որոյ բազում ինչ իցէ կրեալ,  
 եւ քաղցրութիւն իմն հանգոյն առն՝ որ զիտիցէ հաւաստեաւ ոչ  
 ինչ ընդունայն կրեալ, եւ ասէ. Խնդութեամբ մտանեմ առ քեզ  
 քաջ արանց, զի օրհնութիւն Տեառն է ի վերայ աղքատին հիւզոյս,  
 գիտեմ իսկ քաջ զի են աստ գանձք պատուականազոյնք քան ըզ-  
 մարդարիտս եւ զոսկի. խնդրեմ ի քէն հանդուցանել զիս աստ զայս  
 գիշեր: Փութացաւ Ելիսաբեթ, մատոյց նմա աթոռ, եւ ասէ ցնա  
 ծերունին. Արագընթաց լեալ է քո, դասրիկ, ընդ ուղի առաքի-  
 նութեան, յառաջին անդ քայլս թողեալ զմեզ յետս: Եւ ի բազ-  
 մել իւրում լուեալ զհեծութիւն փեղորայ, ասէ. Ձի՞ լաս, մայրիկ

բարեպաշտիկ, չիցե՞ իսկ օրհնեալ սրտուղ որովայնի քո, չիցե՞ իսկ օրհն կոչել եւ զքեզ օրհնեալ ի կանայս. եթէ արտասուես վասն բաժանելոյ զքեզ առաքինութեան առ փոքր մի ժամանակ ի դըստերէ քումմէ, եւ զինչ առնել իցէ մարց՝ յորոյ ի գրկաց խլեն արտք զորդիս նոցա, յուզարկել ի կորուստն յաւիտենից: Ասէ մայրն տառապեալ. Հայր իմ, եթէ ոչ եւս լիցի ինձ տեսանել զնա: Յայնժամ ծերունին համարձակազոյնս ասէ. Տեսցես զնա յերկինս, այն է բաժին իւր. այլ տեսցես զնա եւ յերկրի. ծանուեք առաջի կան նմա ճգունք, այլ Տէր զօրացուցէ զնա, այն որ ըստ գեղման գառին աայ շնչել հողմոյ: Յայնժամ Փեղորս խոնարհեաց զգլուխ իւր ի հաւանութիւն. իսկ Սփրինձեր լուռ եւ եթ կայր, ոչ եւս կարէր բարբառել առ մորմնք սրտին: Ելիսարեթ իսկ՝ որ մինչեւ ցայն օր արիացեալն էր, սկսաւ զգալ տկարութիւն. յոյս օգնելոյ ծնողացն՝ յազլթող լեալ էր ցայնժամ վշտի բաժանմանն ի նոցանէ, այլ ի հասանել պահուն՝ յորում կարող էր ասել. վաղիւ ոչ եւս լիցի ինձ լսել զձայն հօր խոյ, վաղիւ ոչ եւս լիցի ինձ վայելել ի գգուանս մօր խնյ, թերեւս ամ մի լի անցցէ մինչեւ գաից դարձեալ զայս քաղցր բերկրութիւն, թուէր բացեալ երկիր ընդ ստիւք իւրովք. մթազնէին աչք նորա, եւ ծունիք իւր կթուցեալ՝ անկանէր արտասուօք ի գիրկս հօր իւրոյ: Եզնւի, հէք դատրիկ, զի եթէ այժմէն դու տարածանես զբազուկս քո առ ձեռնկալու, եթէ անդստին խոնարհիս յերկիր իւր որթատունկ աննեցուկ, զիա՞րդ զօրեացես ապա հասանել միայնակ զկէս գոգցես աշխարհի:

Նախ քան զհանգիստ քնոյ՝ բազմեցաւ երէցն ընդ աքսորականս ի սեղան, առնուլ ընթրիս: Վշտակցութեամբ հայէր ի նոսա բարեգութ ծերունին. ի բազում ուղեւորութիւնս վշտացելոց բազմաց հանգիպեալ էր նա, եւ առաւելագոյն ջանք նորա լեալ էին սփոփել զվիշտս. վասն որոյ զիտէր վշտաց իւրաքանչիւր պատկանել զսփոփանս, եւ ըստ անձնիւր հանգամանաց յերկարել զբանս:

Եւ ապա հայրն Պաւլոս ծանոյց նոցա, զի կոչեցեալ յաւազաց ուխտին դառնայր ի հայրենիս իւր ի Սպանիա, հետի, եւ հասանէր նմա անցանել ընդ Ռուսաստան, ընդ Գերմանիա եւ ընդ Գաղղիա. եւ յաւել, թէ չէր դժուարին ուղին առաջիկայ. զի որ ընդ անապատս էր ուղեւորեալ, ուր քարանձաւք էին նորա օթեւանք, ուր վէճ էր գլխոյ իւրոյ զաղար, եւ ալիւր կամ որիկ թրջեալ ի ջուր՝ այն էր ամենայն իւր կերակուր, չէին ինչ զարմանք՝ եթէ

հանգիստ վաստակոց իւրոց համարէր զհասանել իւր յազգս քաղաքականացեալս. վասնորոյ ի հայրենիս իւր զինքն վարկանէր՝ հասեալ յազգս հաւատացեալս: Պատմէր նա անլուրս զվշտակրութեանց իւրոց, եւ զդժուարութեանց՝ որոց հանգիպեալն էր յանցանել ընդ ահագին սարխսսս ձենաստանի, եւ ի դնալ ի խորս լայնածաւալ աշխարհին Սկիւթացոց: Յաւել եւս պատմել, սրպէս ի մուտս անբաւ անապատին Սունկարիոյ՝ որ է մասն ձենաստանի, եւ սահմանակից նորին ընդ Սիպերիոյ, տեսեալ էր նորա երկիր բերրի սամուրենեաց փառաւորաց եւ ազգի ազգի այլոց մաշկեկաց, որովք մարթ էր առնել շահավաճառ ընդ ազգս Եւրոպայ. այլ չեւ եւս ինչ ի ճարտարութեանց մերոց մտեալ էր անդր, եւ ոչ ուրուք ի վաճառականաց իշխեալ էր ածել զսկի եւ զտուրեւառ անդր՝ ուր առաքելականի առնն կանգնեալ էր զխաչ, եւ ըզբարեարութիւնս իւր սփռեալ: Այսքան է ճշմարիտ՝ զի եղբայրսփրութիւն քաջ ի բաց անցանէ զնայ արշաւասոյր ուր եւ ոչ ագահութիւն կարէ հասանել:

Յարգարեցին ծերունւոյն անկողին մաքուր եւ զիւր ի խղկանն ուր աղջիկն Սկիւթացի յառաջագոյն հանդէէր, եւ եկն նա յայնժամ ննջել առ թոնրովն արջենեաւ սարածածկեալ:

8

Ձ Մ Ե Ռ Ն

Յեզկիլակ, արտաբերէ	Ծուկն, պարտաւորութիւն
Ոգորիլ, կոտորել	Ձեզանիլ, յորտել

Ի ձմեռայինն ահա հասեր յեզկիլակ, երկնի Սկիւթաց տարագլմ շուն քեզ զուշակ: Մըրըրիոյոյզ ոգորիլ զքեւ Այծեղջիւր, ի ծուկնըս ձեան տեղայ յերկիր բզգեղմն իւր: Մինչ դու ի տան պատըսսարիս առ հըրով, Չոր ի սփոփումն քեզ Հասաչին ետ գօրով, Յիշեա զի ինքն յանապոռսսար ի հիւզի վասըն մեղաց քոց ի ցըրոտոյ նըւաղի: Անդ եզն եւ էջ ձեպին ի սպաս անսովոր, Մի քան զանբանսըն դըտանիր դու ի ստոր:





ի ձեւ բոցեղէն բրդան , հանգոյն փայտակոյտ նախնեացն խարուկի  
 ուր գլխութիւն հեթանոսական զղիւցազանցն ամիոփէր անիւն :  
 Սակայն յայտ ամենայն վտանգս , եւ յառաջիկայսն եւս առաւել իմն  
 սպառնականս՝ յանցս գետոց յորդեւոց , ոչ ինչ արանջէր օրիորդն .  
 թուէր իսկ նմա առաւելագանց քան զիրան լուեալ զգծուարութիւ-  
 նըս ճանապարհին : Զի բարեխառն էին օդք , եւ չգնայր միշտ հետի ,  
 զի հանդիպեալ զճանապարհայն սայլից ունայն դարձաւորաց ի Սի-  
 պերիոյ՝ ուր ամեալ էր նոցա աքսորեալս , զիւրաւ ի սուրհանդա-  
 կաց անտի ընդունէր ծերունին հրաման ելանելոյ ընդ ուղեկցին  
 ի սայլս անդր , եւ ոչ ամօթ համարէր օրիորդն զբարւոյ Հօրն ըն-  
 դունել զչնորհ . զի զոր ի նմանէն ընդունէր , համարէր զայն երկ-  
 նից շնորհ :

9

Գ Ա Ր Ո Ւ Ն

Արեգեք , արեւն աստուծոյ  
 Յաճուն , խնորհ , պարեւն

Տեսալ , նաւաստ , խնորհ  
 Զով , գեւ

Արիին ոսկեփայլ  
 Ըղձըմեռն ի բաց  
 Հալածէ դարձեալ ,  
 Եւ ի գարնային  
 Պըճնէ ի ճաճանջ  
 Լուսաղգեաց զերկին :  
 Բուք եւ սառն եւ ձիւն  
 Տեղի տան ի բաց  
 Յաղթեալք ի յարվոյն ,  
 Եւ ողիւզաբեր  
 Գընդակն ի յայգւոջ  
 Ուննու արեղջեր :  
 Հովիտ եւ արօտ  
 Փայլեալք յերին ի նոր  
 Բուրեն քաղցրահոտ .  
 Բուրումն համասփիւս  
 Ածէ չնդ երկիր  
 Քաղցրաչունջ զեփիւս :

Հընչեն եղի այերք  
 Քաղցրաձայն հաւուց  
 Ներդաչնակ ի յերգ .  
 Համայն ուրեք ծառք ,  
 Եւ համայն ուրեք  
 Նըւաղեն անտառք :  
 Խայտայ ընդ արօտ  
 Ատարեր խաշին  
 Բազմերամ շուրջ հօտ .  
 Շաղաիրատ ծիծուած  
 Կախի կաւակերտ  
 Ըզկողերց որբան :  
 Աստ ըզկարմորակ  
 Մանկտին մըրգասէր  
 Ժողովէ զեւակ ,  
 Անդ զիւրն հանգունակ  
 Օրիորդ ցածուն  
 Քաղէ զմանիչակ :  
 Ո՛հ , քանի՛ չըքնաղ  
 Եզանակս ինձ այս  
 Պատրաստէ կենցաղ .  
 Ո՛հ , զի՛ զեղեցիկ  
 Եւ զի՛ սիրելի  
 Ինձ ամն է այժմիկ :

Դ Ա Ր Ձ Ե Ա Լ Ի Գ Ա Ր Ո Ւ Ն

Լուծան գետոց սառամանիք ,  
 Պըճնի երկիր դալարագեղ ,  
 Շընչէ զեփիւս արգ քաղցրասիւք ,  
 Արգ արձակեն հաւք ըզգեղգեղ :  
 Լեր դու մանուկ գործօն եւ ժիր ,  
 Տես իբր ի գործ ճեպի մեղուակ ,  
 Համեստութիւն զըստրիկդ ուսիր ,  
 Մինչ ժողովես ըզմանիչակ :

Ամենեցուն տըւան ի խրատ  
 Եւ տրուաք յէիցըս հրաշակերա .  
 Դաս՝ զոր քեզ տայ դոյզն ինչ արմատ  
 Կալ դու ծընօղդ ի մշտի սերա :  
 Վերընծիւղեալ չքքնաղ բողբոջ  
 Ի յարմատոյ առնու ըզջով ,  
 Թէ զորդիս քո կըրթես դու ոչ  
 Չես հայր չես մայր բարեգորով :

Հ. Ե. Հիւրմիւրեան



Ակումբ , (Գրեթե)  
 Դարգին , (Գրեթե)  
 Վարեալ է վասն իւր , Բանը Լնցած է

Ակնյայտի , ալի գարնել  
 Յանցումն , յանցում  
 Երեկնայ , (ապրիլի) շերտ

Յաւուրց հետէ սկսեալ էր Հայրն Պաւլոս ակնյայտնի տկարանալ, հազիւ կարէր ընթանալ, եւ յեց իսկ ի ցուպն եւ ի բազուկ օրիորդին՝ ստիպէր հանգչել անդադար: Յեւանել նորա ի սայլ, ուղին կազմեալ ի ստուար կոճեղաց զետեղելոց ի ճախճախուտս՝ ցունցս ուժգին տայր նմա, որ սպառէին զմնացուած գորութեան նորա, այլ թերեւս արիութեամբն ժուժկալէր: Բայց ի հասանել իւրեանց ի Սարաբուլ, որ գիւղ մեծ էր յեզր Բաւայ՝ զանգակատուն իսկ ունեւորվ, զգաց ծերունին նուազումն այնպիսի անսովոր, զի չէր կարող անտի անդր դնալ: Աժառ յիջեւան ուրեք յտնի՝ մերձ ի տուն Ուրբաւթիկի որ վերատեսուչն էր արքունի կալուածոց ի Սարաբուլ: Միակ անդ խուղ գտաւ ի ձեղուան, որոյ յատակ յերերի կայր, եւ սրատուհանք էին առանց աստիեաց. չէր անդ աթոռ կամ ակումբ, եւ ոչ մի. ամենայն կահք անդանօր էին սեղան մի, եւ դարգիճ առանց անկողնոյ. արկին անդր խուն մի յարդ՝ ընկողնանել ծերունւոյն ի վերայ նորա: Հողմ այնպիսի ցրտասառոյց ընդ սրատուհանն շնչէր, զի եթէ ներէին երբեք ցաւք հիւանդին՝ տալ քուն արտեսանացն, սակայն արգելոյր ի հողմոյն: Խորհուրդք տխրականք սկսանէին նեղել զելխաբեթ. ինդրեաց բժիշկ, եւ չգոյր բժիշկ ի գեղջն. ոչ ոք յորոց անդն կային կարեկից լինէր ծերունւոյն հիքը՝ որ մերձ էր ի մահ. ինքնին միայնակ օրիորդն առնէր նմա զամենայն հոգ եւ խնամ: Նախ

քան զամենայն՝ զկապերտ հնոտի որ կախեալ կայր զորմոյ, ած զպատուհանաւն, ապա քաղեալ ի դաշտէ բանջարս ակտարոյժս, որպէս ի մօրէ իւրմէ էր ուսեալ, եւ խառնեալ զայնոսիկ մատոյց հիւանդին: Այլ ըստ մերձենալ գիշերոյ՝ զայրանայր ակտ նորա, եւ ոչ եւս օրիորդն տառապեալ ժոյժ ունէր արտասուաց. մեկնէր երբեք երբեք մեկուսի, հեղձուցանել զհեկեկանս իւր, բայց բարեգութ ծերունւոյն լուեալ զայն ի խշտոյն, լայր եւ ինքն վասն վշտի օրիորդին՝ զոր չկարէր սփոփել, քանզի զգայր զի ոչ եւս էր ապրանաց, եւ վճարեալ էր վասն իւր աշխարհ, իբր ոչ եթէ յետ վաստակելոյ զամս վաթսուսն ի սէր Աստուծոյ իցէ երկնչել ի մահուանէ, այլ ցանկալի է փոքր միւս եւս կեալ որում առաջի կայցէ բազում այլ եւս գործել բարիս: Այլթէր նա ի մրմունջ. Աստուած իմ, մի համարիր ինձ ի արտունջ, այլ թէ չնորհէիր ժաման առնել ինձ յուչ եղեալ տեղին զգաստրիկս տառապեալ, անգորրապոյն լինէր ինձ մեռանել:

Չգիշերն ողջոյն կայր օրիորդն յտին, վառեալ ջահ բեւեկնեայ, խնամել զհիւանդն. սուղ ինչ յառաջ քան զժագել տուրնջեան՝ մատեաւ տալ նմա ըմպել, գիտաց ծերունին զի յետ սակաւ միոյ ոչ եւս կարեւոց էր խօսել, յարեաւ ի նիստ, առ զբաժակն ի ձեռանէ օրիորդին, ամբարձ զայն ի վեր, եւ ասէ. Աստուած իմ, քեզ յանձն առնեմ զգաստրիկս զայս, որ խոստացար զբաժակ մի ցուրա ջուր յանուն քո արբուցեալ՝ ոչ առնել անվարձ: Աստի ի միտ էաւ օրիորդն հաւաստեաւ, զոր մինչեւ ցայնժամ որպէս անհնարին ինչ մերձէր ի մտաց, ետես զի առաջի աչաց ունէր ծերունին գմահ, ետես զի կորնչէր ամենայն ինչ վասն իւր, սիրտ նորա գելաւ, անկաւ ի ծուերս առ խշտով ծերունւոյն՝ ի քիրտն ցուրտ հարեալ, եւ հեղձամիճուկ ի հեծութենէ: Իսկ ծերունին գարովեալ ի նա, կրկնէր եւ երեքիկէր ի խորոց սրտէ. Աստուած իմ, գիթա ի սա. գիթա ի սա, Աստուած իմ: Եւ ի զայրանալ եւ եւս ցաւոց ակտին, ասէ ցօրիորդն. Յանուն Աստուծոյ եւ հօր քո, հանդարտեաց, դատրիկ, եւ լուր ինձ: Սթափեցաւ օրիորդն, ցածոյց զողբս, սրբեաց զարտասուս, եւ յառեալ ի ծերունին մնայր մեծարանօք լսել որ ինչ ասելոցն էր: Իսկ նա յեց ի քանոն դարգձին, ժողովեալ յանձն զոյժ իւր, ասէ. Վիշտս ծանսնս հասանէ կրել քեզ, դատրիկ, յուղեւորիկ քո միայնակ յայդմ հասանէ կրել ի դժուարին եղանակիս, այլ փոքրագոյնն է այդ ՚ի վտանգաց: Ահաւորագոյն վտանգս սրտարաստեն քեզ արքունիք. արիութիւն

սովորական զօրէ ի տոկ թշուառութեան, այլ հրապուրանաց ոչ եւս: Արիութիւն քո չէ սովորական. բնակութիւն արքունեաց մի՛ փոխեսցէ գբեզ. եթէ չարք ոմանք՝ որոց յոգունք պատահեսցեն քեզ, կամեսցին կարօտութեամբ քով զերծանել առ ի խտորեցուցանել գբեզ յառաքինութենէ, մի՛ լուրիցես խոստմանց նոցա, եւ մի՛ ունայն մեծութիւնք պատրեսցեն գբեզ: Երկիւզ Տեառն եւ սէր ծնողաց հզօրագոյնք են քան զամենայն, եւ է ի քեզ այս եւ այն. յոր թշուառութիւն եւ գոցիս անկեալ, մի՛ թողցես երբէք զբարութիւնս զայստօրի՝ ընդ ամենայն բարեաց քեզ ընծայելոց. յուշի կալ անմուաց, զի միակ յանցումն քոյին՝ լիցի մահառիթ որոց ետուն քեզ կեանս: Օրիորդն ասէ. Մի՛ երկընչիր, հայրիկ: Յաւել ծերունին. Ոչ երկնչիմ, երկիւզածութիւն քո եւ ծնողասիրութիւն արժանի են հաւատարմութեան, եւ ոչ ինչ երկբայիմ, զի յաղթեսցեն ամենայն վտանգաց՝ որոց թողցէ Տէր ելանել քեզ առ ի փորձ ընդ առաջ:

Մերձ աւաստիկ հասեալ ի մահ՝ կարեմ ասել քեզ, դուստր իմ; զի մեծ է առաքինութիւն քո, սակաւք լեալ են նմանիք յաշխարհի, ի գութ շարժեսցի այսի քաղաքագեան թողութեայ, վարձատրեսցի այդ յերկրի մինչեւ յերկինս վարձատրեալ: Եւ լեաց աստանօր ծերունին, գծուարէր տուրեւառ շնչոյն, քիրտն ցուրտ թանայր գճակաւս. իսկ ելխաբեթ լայր անբարբառ, յեցեալ զգլուխ իւր ի խշտեակն յարդեղէն:

Յեա ընդ երկար լուսթեան՝ խլեաց ծերունին ի կրծոց իւրոց զփոքրիկ նշան խաչին երեսնեայ, եւ սուեալ զայն օրիորդին՝ ասէ նուազեալ ձայնիւ. Բնկալ զսա, դատրիկ, չունիմ այլ ինչ տալ քեզ. զայս եւ եթ թողում քեզ՝ որ էր ամենայն մեծութիւն իմ յերկրի, որով ոչ ինչ պակասեաց ինձ: Եւ օրիորդն համբուրեաց զայն զառնակակիծ մարմնքմամբ, զմտալուս մահ նորա հաւաստի դուշակելով ի տալոյ ի բաց զժառանգութիւն իւր զայն: Յաւել դարձեալ ծերունին կարեկցութեամբ մեծաւ. Որովք տառապեալ անտէրունչ, մի՛ երկընչիր, զի հսկեսցէ քեզ հովին բարի, եւ օգնականութեամբն նորա լիցիս առաւել քան զոր ետդ, ի բարութիւն նորա լըր ասպաստան, որ կերակրէն զձագս ճնճղիւս, եւ որ գիտէն զթիւ աւագահատից ծովափանց, մի՛ մոռացի նա գբեզ: Յայնժամ կալեալ օրիորդին գրկապինդ գճեռն ծերոյն՝ զոր կարկասէրն առ ինքն, ասէ ողբագին. Հայր իմ, չժուժամ զրկիլ ի քէն: Եւ ծերունին ասէ. Աստուած է, դատրիկ իմ, որ զայդ հրամայէ. հնազանդ լըր

նմա, ցածո զսուգ քո, ահա գնամ յերկինս աղօթել վասն քո, եւ վասն ծնողաց քոց: Եւ ոչ կարաց կատարել զբանս իւր, շարժէին շրթունք նորա, եւ ոչ լինէր բարբառ լսելի. անկաւ ի խշտեակն, զաչս ի վեր ամբարձեալ, ի ճիգն յեաին յանձնել Արարչին գհեծութիւն որբոյն, եւ մեռեալ՝ տակաւին թուէր աղօթս մատուցանել:

10

ՄԱՇԵՑԵՐ ՈՐՊԷՍ ՍԱՐԴԻ ՈՍՏԱՅՆ ԶԱՆՁՆ ՆՈՐԱ

Բեհում, (գաֆրան)	Գիւրգ, գափսի
Տոլարար, Խարբար	Մահակ, (տէշեէ)
Առկ, Բարսիւս, Բեւ	Գասակեթ, Յեւոփորթ, պալար

Մինչ վարատէր այդ զլուսթ

Բզգիչերոյ մութ աքրտում,

Ի՛նչի ի գրախտ ծաղկազարդ

Կրթել յակինթ եւ բըրբում:

Շուրջ ծառաստան պըղաւէտ,

Նուսն՝ որթենի եւ խընձոր

Ոստովքն յերկիր հակամէտ

Պըճնին ի միրգ ցօղաւոր:

Հընչեն նոճիք քաղցր ի յերգ,

Արձակի ժիր մեղուաց պար,

Յոռնեն մըշակք յլրեանց երկ,

Զեռան մըրջիւնք տողարար:

Յանկարձ յառեալբիբ ի վեր,

Տատանեալ մեղմ ի գեփիւս

Տեսանեմ սարդ ընդ այեր

Ի բազմուղի յոստայն իւր:

Խընձորենւոյն ի ճիւղս անդ

Յեց նըրբաթելն իւր առէջ,

Ճօճէր երկայն մեհեւանդ

Մարգըրտայեռ ի ցօղէջ:

Ի սկըբնածագ շող արփուոյն

Փայլեալ գործածն հիասքանչ,

Ծիածանին երփն ի գոյն

Սըփուէր բզցոլ եւ ճաճանչ:

ի բեհեզեայն իւր չըքնաղ  
ի նքն ի բաւզին միջակէտ,  
Յանդորրաւէտն ի կենցաղ  
կայր ամրացեալ որսոյն դէտ:

Շիղ ի ձեռին գիրք մանկիկ,  
Որպէս եւ միշտն էր սովոր,  
Անդրր սողայր գայր մընջիկ  
Գողանալ նուռն եւ խընձոր:

Եւ մինչ ի յաջ եւ յահեակ  
Չըդէր ճապուկ զիւրըն շերտ,  
Դիպեալ ի նուրբն ի մահակ  
Եղծաւ սարդին դաստակերտ:

Եղնուկ նըմին եւ աւալ...  
Այլ ի նմանէ ուսիր դու  
Մի՛ յանկայունդ ի կենցաղ  
Յուսալ սով մարդ մահացու:

Եւ դու յառոյգդ ի հասակ  
Մի՛ վըստահիր սով մանուկ,  
Դոյզն ախտ հիւժէ զայն արագ,  
Կալ քեզ խրատիչ ըզմամուկ:

Հ. Ս. Հիւրմիւրկեան



Քննեալ, պարտաւոր  
Պաղարակ, ստորի նմանակ  
Չնստագոյն, ցած

Տրամ, կործ  
Յելուգակ, ստորակ  
Հասուած, կործ

Ի բազում աւուրց հեռէ շնչէր հողմն հիւսիսոյ, եւ սառամա-  
նիք դիպացեալ յեզերս վոլիայ՝ արգելուին զգեան. չէր մարթ ան-  
ցանեւ ընդ այն, բայց ըստ մասին ինչ հետի՝ ընդոստ ընդ հատուա-  
ձըս սառին գնալով, եւ ըստ մասին նաւակու: Նաւաստիք իսկ սո-  
վորեալք ի վտանգս նաւարկելոյ ընդ այն, չիշխէին անցանեւ յայն-  
կոյս առանց մեծի ինչ շահու, եւ ոչ ոք յուղեւորաց արկանէր զան-  
ձըն ի վտանգ: Ելլաւարեթ միայն առանց խորհելոյ ի վտանգն՝ կա-  
մէր ի մի ի նաւաց անտի ելլալէ, այլ նաւավարք մերթեյնն զնա  
բացէ ի բաց իրր խօթամիտ, եւ երդնուին չթողուլ նմա անցանեւ

ընդ գետն, չեւ բուրովին պաղեալ: Եհարց թէ քանի՛ ժամանակ  
պարտ էր նմա սպասել. եւ նոքա ասեն. Ոչինչ նուազ քան գեր-  
կուս եօթնեակս: Յայնժամ եդ ի մտի անցանեւ ընդ գետն անյա-  
պաղ. եւ ասէ ցնոսա աղբրսանօք. Խնդրեմ ի ձէնջ, վասն Աստու-  
ծոյ օգնեցէք ինձ անցանեւ ընդ գետոյ. դամ ես յայնմ կուսէ թո-  
պուրքեայ գնալ ի Պետրոսոյ խնդրել յինքնակալէն շնորհս վասն  
հօր խոյ, որ յաքսորս կայ ի Սիպերիա. եւ արծաթ այնչափ ինչ է  
առ իս, զի եթէ եղչց աստ զաւուրս հնգետասան՝ չմնայ ինչ ինձ  
առ ի կարող լինելոյ յառաջ եւս գնալ: Ի բանից աստի գորովեալ  
մի ի նոցանէ, կալաւ զձեռանէ նորա եւ ասէ. Ե՛կ, փորձեցայց  
ածել զքեզ. դուստր բարի թուիս, երկիւղած յԱստուծոյ եւ ծնօ-  
ղասէր. օգնեսցեն քեզ երկինք: Եւ մուծեալ զնա ի նաւ իւր, էած  
զնա մինչեւ ի մէջ գետոյն. ուստի եւ անդր չկարելով նաւել, ՚ի  
թիկնամէջս իւր ընկալաւ զնա, եւ յեց ի մի ի թիոց՝ գնալով ընդ սա-  
ռամանիս, եհաս անվտանգ յայնկոյս վոլիայ, եդ զբեռն իւր յեր-  
կիր...: Ի հասանեւ Ելլաւարեթի ի վլատիմիր քաղաք, չէր մնացեալ  
առ նմա աւելի քան զուսուլի մի. ի Սարաբուլ քաղաքէ մինչեւ անդր՝  
անցեալ էին ամիսք իբր երեք, եւ զթութեամբ շինականաց՝ որ ձրի  
տան զկաթն եւ զհաց՝ չեւ էր սպառեալ աղքատին գանձ նորա,  
այլ սկսանէր անդ պակասել ի սպառ: Կօշիկք նորա հերձոսեալ  
էին, ձորձք քճքճեալք ոչ եւս պատասպարէին զնա ի ցրտոյ՝ որ խո-  
նարհեալ իսկ էր քան զերեսուն աստիճան ի վայր, եւ օր ըստ օրէ  
զայրանայր: Չիւնախաղաղ ծածկեալ էր երկիր երկոտնաչափ ի թան-  
ձրուեթիւն. էր զի պաղեալ ընդ օդս ձիւն՝ թուէր անձրեւ պաղ-  
լորակ, եւ իստոնէր զերկին ընդ երկիր, եւ էր դարձեալ զի հեղեղք  
ջուրց վիհս բանային առաջի նորա, կամ մրրիկք հողմոց այնպէս  
բուռն շնչէին, զի առ ի խոյս տալ ի հարուածոյ նոցին՝ հարկ լինէր  
օրիորդին փոս ի ձեան անդ գործել, եւ պատասպարել անդ՝ ած-  
եալ զզլսով զհեղեւանս եղեւնեաց, զորս կորզէր աջողակի՛ ուս-  
եալ ի բնակչաց Սիպերիոյ:

Ի վլատիմիր քաղաքէ մինչ ի Փոքրով զիւղ արքունի՝ երկիրն ըզ-  
նատագոյն ձախճութեամ է եւ անտառախիտ յազգի՛ աղզի ծառոց  
վայրենեաց, որք թէպէտեւ հաճոյ աչաց յամարայնի՝ այլ յաճախ  
սպաւէն են աւազակաց. իսկ ի ձմերայնի նուազ է վտանգ, զի  
հատեալ ի մայրեւորաց եւ մերկացեալ ի սաղարթոց՝ չտան նոցա  
տեղի թաքստի: Սակայն Ելլաւարեթ լէր զձանապարհայն աւա-  
զակութիւնս գործեցեալս անդ, որ ահացուցանէին արդեօք զնա՝

եթէ ունէր ինչ առ իւր արծաթ. այլ զօրասպահիկն խոկ կարօտ մու-  
րանալոյ, զերծ թուէր յամենայն երկիւղէ, եւ վահանաւ չքաւորու-  
թեանն ծածկեալ, յուսայր անցանել անվտանգ ընդ անտառն:  
Վերստս ինչ այսր քան զվոքրով աւերեալ էր միրկին զարահետն,  
եւ ուղեւորաց առ ի Մոսկով՝ հարկ էր առնել չրջան ընդ ճախճա-  
խուտս զորս գործէ վուկա. այլ պաղ թանճր ծածկեալ զայնսովի՝  
առնէր գնալի որպէս տրամ երկիր: Ելիսաբեթ ըստ օրինակի այլոց  
կալաւ զայն ուղի, եւ զնայր ընդ անապատն սառնեղէն, այլ առ  
ի չգոյնէ անդ շաւղի՝ մուրրեալ, խրեցաւ ի տղմուսս, ուստի բա-  
զում ճգամբ եղև նմա ի բլրածեւ ուրեք երկիր ելանել: Անդ արդ-  
մաշաղախ եւ վաստակարեկ բազմեալ ի վէմ մի, ելոյճ վիշխիկս յո-  
տից՝ ցամաքեցուցանել յարեւու, որ ծագէր յայնժամ անաղօս:  
Անապատ էր վայրն. չերեւէին անդ հետք բնակութեան. ոչ ոք  
անցանէր ընդ այն, եւ ոչ շշունչ լինէր անդ լսելի: Գիտաց Ելի-  
սաբեթ զի զարտուղի ի բաց անկեալ էր յարահետ ճանապարհէն,  
եւ լքաւ արիութիւն նորա. տեսանէր յետկուսէ՝ զճահիճս՝ ընդ  
որս անցեալն էր, եւ ի բացէ անտառ անուրբա՝ որոյ ոչ նշմարէր  
եզր: Տիւն տարածամէր, եւ պարտասեալ ինքն ի վաստակոց՝  
յարուցեալ այսր անդր ընթանայր, գտանել ուրեք սպաւէն կամ  
օգնական, այլ ի զուր. ոչ ոք ուրեք, եւ ոչ ճայն ինչ ուստեք լսե-  
լի լինէր. այլ բարբառոյ մարդկեղինի թուէր լնուլ զսիրա նորա  
ցնծութեամբ: Եւ ահա ճայնք յանկարծակի հնչեցին, եւ հետ ընդ  
հետ ելանէին արք յանտառէն. ընթացաւ առ նոսս յուսապատար.  
այլ ի մօտեւ առ նոսս՝ խնդութիւն նորա դարձաւ յարհաւիրս:  
Կերպարանք նոցա վայրենի եւ դէմք դժնեայ՝ սոսկումն ածէին  
նմա առաւել քան զվրայնութիւնն՝ յորում էր, յուշ լինէր նմա որ  
ինչ լուեալն էր զեղեւնադործութենէ յելուզակաց ի կողմանսն  
յայնսովի, եւ երկուցեալ թէ՛ զուցէ պատուհասէր Աստուած զյան-  
դուգն վատահութիւն իւր, անկաւ ի ծունկս՝ խոնարհեալ առաջի  
ուղորմութեան նորա: Յառաջ մատեան աւաղակքն, զկայ առին առ  
նմա, եւ յառեալ ի նա, ասեն. Դու ուստի՞ դաս. զի՞ խնդրես աստ:  
Չաչս ի վայր արկեալ օրիորդն, եւ զբողանի հարեալ, ասէ. Յայ-  
նում կողմանէ թողութեայ դամ, երթալ խնդրել յինքնակալէն  
չորհս հօր խումբ: Եւ յաւել՝ զի վոքր միւս եւս եւ կորնէր ՚ի  
ճահիճս անդ. եւ զի յետ վայրիկ մի զօրանալոյ՝ գնայր խնդրել  
իւր ուրեք սպաւէնն: Հիացեալ կացին արքն, եւ հետագօտէին  
եւ եւս. կամէին գիտել սրջոյի ինչ ունէր արծաթ վասն բազում

այնչափ երկայն ուղեւորութեանն, եւ իբրեւ հանեալ նորա զբրա-  
միկն՝ զոր ի նաւասուոյն վուկայ ընկալեալն էր՝ եցոյց նոցա, ա-  
սեն. Եւ շունքս ինչ այլ: Օրիորդն ասէ. Եւ ոչինչ: Հայէին ընդ  
միմեանս հուզկահարքն անգութ եւ անկարեկիր, սովորութեամբ  
եղեւնադործութեանն խստասրտեալ. սակայն եւ յապուշ հարեալ  
չկարէին հաւատալ աչացն, զի գերաշխարհիկ իմն թուէր նոցա այն,  
եւ համարէին ի վերնական անծանօթ զօրութենէ պաշտպանեալ՝  
զօրիորդն. եւ ակն ածեալ ի նմանէ՝ չիլիսելով գործել ինչ նմա չար,  
այլ ոչ եւ բարի, ի բաց կացին ի նմանէ՝ ստեղծով ցիրեարս. թողցուք  
զդա, մի վնասեսցուք դմա, զի արդարեւ Աստուած ընդ դմա է:

11

Գ Ե Բ Ո Ւ Շ Ի Ն

Կերանդի, Բէ ճանգալ  
Ամբոխ, Կասնո-Վրայնիւն  
Ըմբերձիկ, Կեր Բարձրացած  
Թարաղուն, Կիւլցաս

Յափրանալ, զգաստ գէւ  
Ի հիւ գալ, զբէն ընել  
Փիլովալ, սոսի (արդիցաբանութեան)  
Համբուն, Բնա-

Ի գերանդուոյն զերծ՝ ածէ հասկ նորընծիւղ.  
Եւ ուս յամրան ի հընձանէն աներկիւղ՝  
Չայգուն ըզբաղցր ըմպէ զձիր,  
Եւ ես հանգէտ նըմին ի գեղ եւ ի տիս՝  
Չեւ եւս մեռայց, թէպէտ առ ժամս ունին զիս  
Ամբոխ սըրաի եւ ճանձիր:  
Թո՛ղ զիրկս արկցէ մահու Ստոյիկն յաչս անթաց,  
Իսկ ես ողբամ յուսով, ի սեաւ շունչ մրբրկաց  
Հակեալ՝ յառնեմ ըմբերձիկ.  
Թէ՛ գոն դառինք՝ գոյ եւ հէշտին աւուրց ժամ,  
Ո՛հ, յո՞ր մեղեր ոչ յափրացաք մեք ի համ,  
Յո՞ր ծով չանկաւ փոթորիկ:  
Յիս բեղնաւոր յուղին անուրջ արդարեւ,  
Ի զնէր որմուկք բանաի ծանրին աստ զինեւ,  
Են իմ յուսոյ թեւք ի թիւ.  
Պուրծ ի վարմից անագորոյն որսորդին՝  
Ընդ օդս աշխոյժըն փիլովալ խընդագին

Երգ ի բերան դայ ի հիւ :  
 Եւ հիմ մեռայց թէ յարթմընի եւ ի քուն  
 կամ յանդորրու , եւ խիղճ մըտաց ոչ համբուն  
 Զարթումն եւ զնինջ իմ խռովեաց .

Ընդ եկս ի լոյս յաչըս բնակից գոյ ժըմտիլ ,  
 եւ աստանօր թաղծեալ ճակատք յիմ տեսիլ

Պարզին ի խինդ խորագրաց :

Զըքնաղ ուղւոյս չեւ ժամանեալ ի սպառուած՝  
 Հազիւ անցեալ կամ զառաջնովք ի կընձնեաց

Ճանապարհին ցանկափակ ,

Եւ կենցաղոյս ի նորասկիզբն ի սեղան  
 վայր մի եւեթ մատեան շըրթունք իմ միայն

Ընդ թաթաղունըն բաժակ :

Ի գարնայնի ըղծիւք հընձոց ակընկալ ,  
 Իբրեւ զարեւ՝ յեղանակէ փոխեալ յայլ՝

Խընդբեմ զամացս ըզվախճան .

Պերճ ի ցօղնի իմում եւ փառք պարտիզլ՝

Զառաւօտին ըզցոլս միայն դեռ տեսի ,

Յանկամ աւուրբս լըման :

Յապաղեա՛ , մահ , եւ յիս ինչ մի դայցեսս մտ ,

Ե՛րթ ըսփոփեւ ըզսիրտս՝ զոր Ահ եւ Ամօթ

Ու՛ Անյուսութիւն առնուն կեր .


Ինճ առ Պալէս են դեռ կանաչ ապաստանք ,

Ինճ Մուսայից են երգք , հովտաց արձագանդ ,

Մեռանեւ ոչ կամիմ դեռ :

ԱՆՏՐԻ ՇԷՆԻՇ

(Թարգ. Ս. Վ. Գ.)



Ճեմեիիւ , պրըբէլս րեզ  
 Մնալ , րոտեւ

Հրեւ , Բնորոնթ  
 Շոխնդն , աղմուի , շիթն շայն

Յամին 1801 եմուտ նա ի մայրաքաղաքն մեծ ի Մոսկով , եւ  
 համարէր վախճան լեալ վշտաց իւրոց , ոչ կարծելով զի այլ եւս  
 աղէտք սպտրաստեալ կ'ըլին նմա : Ի մատչելն ի քաղաքամէջ

անդր՝ ետես ապարանս հոյակապս , զարդարեալս արքունական  
 ճոխութեամբ , եւ առ նոքօք հիւզս ծխամածս անպատասպարս ի  
 հողմոց . ետես փողոցս բազմամբոյս , մինչեւ հազիւ կարող լինել  
 նմա հերձանել զամբոխն՝ որ նեղէրն զնա եւ խթէր շուրջանակի  
 արմիւս : Սուղ ինչ անտի ի բացէ եզիտ անտառս եւ մարգագե-  
 տինս , որպէս զի կարծել զանձն ի դաշտավայրի մեծի . զկայ էառ  
 վայրիկ մի յընդարձակ ճեմելիս ծառազարդս , ուր զգնայր բազ-  
 մութիւն յոյժ՝ մնալով հանդիսին . երթեւեկէին կառք շառաչմամբ  
 մեծաւ ընդ ամենայն կողմանս արշաւասոյր : Հնչէր զանգակն մեծ  
 կաթողիկէին անլուելի , եւ ամենայն ուստեք քաղաքին այլ զանգա-  
 կանին տային արձագանդ . եւ թնդիւնք հրետից , որ երբէք երբէք  
 արձակէին , հազիւ լինէին լսելի ի շուինդն ճայնից՝ որովք հնչէր  
 քաղաքն ընդարձակ : Մանաւանդ ի մօտել ի հրապարակն կրեմեւեան՝  
 երթայր եւ յաւելոյր ամբոխն եւ աղմուկ . խարոյկ բոցածաւալ  
 ամենայն ուրեք բորբոքէր : Ելիսաբեթ նստաւ անդ մեկուսի գղու-  
 շութեամբ , ցրտահարեալ եւ պարտասեալ զօրն ցերեկ յոտին , եւ  
 ուրախութիւն նորա այգուն փոխեալ ՚ի տրտմութիւն , զի շրջեալ  
 նորա ընդ անթիւ փողոցս քաղաքին եւ տեսեալ ապարանս բա-  
 զումս հոյակապս , եւ ոչ ուրեք եզիտ իւր դադար . զի տեսեալ  
 բազմութիւն յոյժ յամենայն ազգաց , չեզիտ զօք ի նոցանէ իւր  
 օգնական , զի լուեալ էր անդ հարցանելոյ բազմաց զճանապարհ  
 տանց իւրեանց , եւ զայրանալոյ ընդ մոլորել իւրեանց . եւ նա-  
 խանձեալ ընդ բախտ նոցա՝ ասէր ի մտի . Երանի՛ ոյք խնդրեն  
 զընակութիւն իւրեանց , եղնկ այնմ՝ որոյ չիք տեղի խնդրելոյ ,  
 եւ չիցէ ուստեք մոլորեալ :

Մերձենայր գիշերն , զայրանայր ցուրտն , յայգուէ հետէ չէր ինչ  
 օրիորդին առեալ կերակուր , եւ չգիտէր զինչ առնել : Նկատէր  
 զդէմս ամենեցուն՝ թէ իցէ՞ ինչ յուսալ յումեքէ ողորմութիւն , այլ  
 ոչ ոք յայնցանէ՝ յորս սլուցեալ հայէր առ կարօտութեան , դառ-  
 նայր հայել յինքն՝ անկարօտ ինքեան : Փորձէր բաղխել զգրունս  
 յուեգոյն իջեւանաց , եւ ամենայն ուստեք մերժէր ի բաց . զի  
 յոյս առաւելագոյն շահից յաւուրս հանդիսին՝ փակէր զգութ աղ-  
 քատագունիցն իսկ ի պանդոկապետաց , զի ուր հասանէ ումեք ճո-  
 խանալ , առաւել կծկէ զձեռն ի տալոյ : Դարձաւ եկն նստաւ առ  
 մեծի խարուկին ի կրեմեւեան հրապարակի . լայր լուեւեայն՝ թաղ-  
 ծեալ տրտմութեամբ , եւ ոչ կարէր ճաշակել զպատառ իսկ հացին՝  
 զոր պառաւոյ ուրուք տուեալ էր նմա կարեկցաբար :

Եղկելի օրիորդին ամբարձեալ զաչս ի վեր՝ որպէս թէ յերկնից խնդրելով օգնութիւն եւ քաջալերեալ ի խրախոյս՝ զոր զգաց ի սրտի, համարձակեցաւ խնդրել եւ յայլոց անցաւորաց: Կէսք անցին զնացին անլուր, այլք ետուն նմա խուն ինչ որ չբաւէր ի պէտս նորա: Գիշերն յառաջ խաղայր. ամբոխն լուծանէր, շիջանէին խարոյկք, պահանորդք դրան սարարանիցն՝ որ երթեւեկէին ի հրապարակին, մատեան առ օրիորդն եւ ասեն. Ձի՛ է քո աստ: Նա ի սաստէ վայրագ գորականին ահարեկեալ, սկսաւ լալ առանց կարող լինելոյ պատասխանել եւ ոչինչ: Նոքա ոչ ինչ գլխացեալ յարտասուս նորա, շուրջ եղեն զնովաւ յանդուզն լրբութեամբ եւ միւսանգամ ասեն. Ձի՛ կաս աստ: Պատասխանի ետ օրիորդն դողալով. Գամ յայնմ կողմանէ թոպուլքեայ՝ խնդրել յինքնակալէն շնորհս հօր խնում. հետի մինչեւ ցայսր եկի. չբաւոր եմ, եւ ոչ ոք ուրեք զիս ընդունի: Քրքիլ բարձին զինուորքն՝ սասայօդ զբանս նորա համարեալ. խակ անմեղ օրիորդն խռովեալ՝ խոյս կամէր տալ, այլ ոչ թողին նմա՝ կալեալ զնա անդ ըւնի, եւ գոչէր ի խոր տրտմութենէ. Աստուած իմ, հայր իմ, հասէք ինձ յօգնութիւն, ընդէր թողէք զհէքս զիս զելիսարեթ: Ի ձայն ազադակին հասեալ անդր արք ուննք, բողբ բարձին ընդդէմ բռնութեան գորականին: Իսկ օրիորդն ձեռս ի վեր ամբարձեալ, ասէր. Վկայ են ինձ երկինք՝ զի ոչ ստեմ. դամ ետ յայնմ կողմանէ թոպուլքեայ՝ խնդրել զնորհս հօր խնում, զերծուցէք զիս, փրկեցէք զիս, զի մի չեւ ընկալեալ զշնորհս՝ մեռայց: Ընդ այսպիսի բանս օրիորդին յուզեցան գութք ամենեցուն, եւ յառաջ մատեան բազումք օգնել նմա, եւ մի ի նոցանէ ասէ ցգորականն. Ես ինքն ընկալայց զդա՝ ի պանդոկի խնում, որ է ի հրապարակիս առընթեր սրբոյն Բարսղի եկեղեցւոյն. Թուի ինձ օրիորդ համեստ, թողէք զդա ընդ իս: Եւ զօրականին յետոյ ուրեմն շարժեալ ի գութ, թողին զնա եւ մեկնեցան ի բաց. յայնժամ օրիորդն փարեալ ըզծնդովք բարերարին՝ գոհանայր, իսկ այրն ածեալ զնա ի պանդոկին՝ որ մերձ էր անդր, մեկնեցաւ ի վերնայարկ տանն ի խորջ մի, եւ կին նորա ընկալաւ զելիսարեթ առ իւր ի մահճին: Բաց Ելիսարեթ չկարէր փակել ընդ երկար զաչս իւր ի քուն. սիրտ նորա յուզեալ էր յոյժ եւ ի փղծուկ հարեալ. գոհութիւն մատուցանէր Աստուծոյ վասն ամենայնի, եւս եւ յաղագս ծանունց վըտաց իւրոց. որովք հանդիպեալն էր այնպիսում ընդունելութեան, եւ ասէր. Եթէ նուազ էի հէք, ոչ յուզէին ընդ իս գութք հիւ-

ընկալուին իմոյ: Եւ քուն խակ անկեալ զարտեւանամբ նորին՝ ոչ երարձ ի նմանէ զբարեբաստութեանն զգացումն: զի երազք ախորժականք ի կերպս կերպս ընծայէին նմա: Մերթ զհայր իւր թուէր նմա տեսանել, եւ մերթ զխանդաղատելի կերպարանս մօրն. էր զի թուէր նմա զինքնակալին ինքեան լսել զբարբառ, եւ էր զի այլ իմն պատկեր երեւեալ միգապատ՝ չներքրտեցանել յստակ զտիպս կերպարանաց նորա, եւ ոչ ի միտ անուշաղիւս զլր ի սիրտ իւր զարթուցանէր:



### ԱՂԹՔ ՄԱՆԿԱՆ ԶԱՐԹՈՒՑԵԼՈՅ

Աղածրի, հարգալ	Արեգ, արե
Յիւղ, տեսէ զ ըստ	Գապ, բարբ, ար
Խախան, խնայ, զէ՛ հանդէ	Մորիմ, ( զաբէն )
Անհասական, անհարմար	Տխեղծ, անլուր, ար

Ո՛վ հայր, զքեզ խմբս պաշտէ հայր,  
 Քեզ ծուներ ածէ մահացուն.  
 Քաղցր եւ ահեղ անուանդ իմ մայր  
 Երկըրպագէ եռանդուն:  
 Ասեն թէ՛ այս արեգ պայծառ  
 Խաղ իմն է քո առաջի,  
 Եւ ընդ ոտիւք քովք անդադար  
 Իբր ըզկանդեղ տատանի:  
 Ասեն թէ՛ դու եւ ճընձղըկաց  
 Տաս ի դաշտի ծընանել,  
 Եւ աղածրի մանրիկ մանկանց  
 Հողի՛ ըզքեզ ճանաչել:  
 Ասեն թէ՛ դու ետ որ սըլճնես  
 Ըզբուրաստան ծաղկաւէտ,  
 Եւ ոչ առանց քո տայ պարտէզ  
 Ախորժ պըտուզս ի մեր պէտ:  
 Ի քո պարգեւըս փեղերք  
 Առ հասարակ վայելէն,  
 Եւ ոչ զեռուն զըրկի երբէք  
 Յայսմ ի բնութեան խրախճանէն:



Գառն ի ճարակ առնու զծոթրին ,  
Ուն ի ցըրդին ճըգտի դիւտ ,  
Ճանճ ի շըրթունքս պընակին  
Ձիւնց կաթին ծըծէ հիւթ :

Ձամբ արտուտին ետուր ըզկուտ ,  
Ձոր սերմանող տայ հողմոց .  
Ճընճղուկն ի կալ դիմէ անձկոտ ,  
Տըղայն ի մօրն իւր ի ծոց :

Եւ իւ առնումք օր ըստ օրէ  
Ձանհատական քո պարգեւս .

Ա. յգուն՝ յերեկս՝ ի միջօրէ  
Աղերսելով ցանգ ըզքեզ :

Աստուած , եւ ես թոթով ի բան  
Կարգամ զանունդ ահաւոր ,  
Բարէ , եւ ձայն արխեզճ մանկան  
Խառնի ի նուագ երկնաւոր :

Ասեն թէ դու , Տէր , ախորժես  
Ձաղերս անզօր մանկըտւոյն ,  
Ձի պարզամիտք են քաղցր եւ հեզ ,  
Թէպէտ ի միտ ոչ առնուն :

Ասեն թէ մեր պաշտօն խոնարհ  
Քեզ հեշտալուր ընծայի ,  
Եւ թէ զուարթնոց յերկինս է պար  
Եւ մեք հրեշտակք եմք յերկրի :

Օն թէ լըսես յայնչափ բարձանց  
Ձուխտ մեր սըրտից եռանդուն ,  
Ես հայցեցիք ջերմ ի թախանճ  
Ձախեզերաց պէտս համբուն :

Տուր , Տէր , աղբերց յըստակ ըզլուր ,  
Եւ ըզիետուր ճընճղըկին ,  
Գառանց զըզաթ սուրբ եւ մաքուր  
Դաշտաց ըստուեր ցողազին :

Տուր հիւանդին բըժըչկութիւն  
Եւ մուրացկին հաց յազուրդ  
Տուր բնակարան ողորմ սրբոյն ,  
Եւ գերեւոց արձակուրդ :

Բագմածընունդ արա ըզտուն

Հօր առ ի քէն երկիւղած .  
Տուր ինճ լինել զքօն ու խնաստուն ,  
Ձի մայրս իցէ անկասկած :

Ձարգարութիւն տընկեա՛ յոգիս ,  
Ճըջմարտութիւն ի շըրթունս ,  
Պըտղաբերցէ բանդ ի սըրտիս  
Ձերկիւղ՝ ըզբարքս քաղցունս :

Լամարցից



Դրուսիւի , Գալեոպ  
Արհի , Գէ , պարսպար

Յայլոյ խելս լինել , Եւ Եւ Եւ Եւ Եւ  
Կայթ ձեռաց , Ծախահարսնէն

Ի վաղիւ անդր թնդիւնք հրետից անընդհատք վասն կենաց ինքնակալին , դափիւնք թմբկաց եւ աղաղակ ցնծութեան համօրէն ժողովրդեան աւետաւորէին զօր հանդիսին : Ելխաբեթ զհիւրընկալութի կնոջն արկեալ զանձամբ զհանդերձս ի փոխ , եւ զբարերարի առնն կարեալ զճեռանէ , խառն ի խուռն ընդ եկաւորս զհետ ինքնակալին եմուտ յեկեղեցին վերափոխման՝ ուր Ալեքսանդր թագաւանն էր : Ձահլիք աւելի քան զհագար լուսազարդեալ տաճարն սուրբ՝ փայլէր ակնախտիդ . բազմէր ինքնակալն ի գահ գեղանշոյլ ընդ ճոխ հովանեաւ , եւ զչխոյ նորահարսն առ նմա՝ զգեցեալ երկաքանչիւր հանդերձս պայծառս գեղեցիկս յոյժ , որպէսզի գերաշխարհիկս երեւել տեսողաց : Դչխոյն ի ծուեր իջեալ առաջի փեսային , ընդունէր ի ձեռաց նորա պսակ կայսերական , եւ զպարկեշտ ճակատ նորա անլոյծ միութեան իւրեանց պատէր պերճ առհաւատչեայ : Հանդէպ նոցին արհի պատրիարքն Մոսկովայ Պլատոն ի բարձուէ սրբոյ բեմին յու առնէր ինքնակալին ճոխաբան եւ հողեշարժ ճառիւ զպարտս թագաւորաց , եւ զհամարն սոսկալի՝ զոր ի նոցանէ պահանջելոց է Աստուած , փոխանակ փառացն եւ զօրութեան նոցա : Ի մէջ անբաւ բազմութեանն՝ որով լի էր եկեղեցին , ցուցանէր նմա զՔամէեաքեցիս՝ որ հարկս ածէին զմաշկս շընջըրեաց որսացելոց յԱլեքսանդրեան կղզիս հուպ յամբրիկեանն ցամաք , եւ զվաճառականս՝ որ գային յԱրքանճեկեայ , բերելով մեծութիւնըս՝ զորս նաւք նոցա զնան ինդրել ի ծայրս ճովուց Եւրոպայ :

Յուզանէր նմա զՄամոյետա եկեալա ի բերանոյ զետոյն Ենիսեայ՝ ուր տիրէ ձմեռն յաւերժական, անծանօթ են անդ ձկուռք եւ ոչ երբէք ընծիւղէ ցորենահատ: Յուզանէր եւ զՄարգուլթս, առ որս են ձմերուկը հասունք եւ թղենիք, եւ որթոյ բերք քաղցունք՝ որ մատուցանեն զինի ազնիւ: Առաջի առնէր դարձեալ եւ զբնակիչս Սեաւ եւ կասրից ծովուն, եւ մեծին Սկիւթիոյ՝ որ թեւակոխէ ի Պարսս եւ ի ձենս եւ ի սահմանս ինքնակալութեան Մոզորաց, եւ մոխց ի յելս արեւու տարածանի՝ բովանդակեալ զկէս աշխարհին, եւ ի բեւեռ անդր գրեթէ հասանէ: Եւ յաւելոյր. Ընդարձակագոյն ինքնակալութեան երկրի տիրապետեալ մեծութեան քո, եւ հանդերձեալ երգումն տալ ի բարեբախտութիւն հինգերորդի մասին երկրի, յուշի կալ անմոռաց՝ զի համար տալոց ես Աստուծոյ զբիւրուց բիւրաւորաց մարդկան. եւ զի անիրաւութիւն ինչ միում ի փոքրկանց անտի գործեալ՝ զոր մարթ էր քեզ խափանել, համարեսցի քեզ ի մեզս: Ի բանից աստի թուէր շարժեալ սաստկապէս սիրտ պատանուց ինքնակալին. բայց յեկեղեցւոջ անդ գոյր եւ միւս այլ սիրտ ոչ ինչ նուազ շարժեալ, եւ էր այնորիկ՝ որ մատչէրն խնդրել շնորհս ի նմանէ հօր իւրում:

Յերդնուլ անդ Ալեքսանդրի նուիրել զկեանս իւր ի բարեբաստութիւն ժողովրդոց իւրոց, թուէր Ելիսարեթի լսել զձայն ողորմութեան խղերոյ զկապանս տառապելոց ամենեցուն, եւ ոչ եւս կարաց նա հանդարտել. երկնայնով իմն զօրութեամբ բացեալ իւր ի խռան անդ ուղի, եւ թափ ընդ ցանկ զօրականին անցեալ, զիմեաց ի գահ անդր գոչելով. Շնորհք, շնորհք: Բարբառն այն խափանեաց զարարողութիւն հանդիսին, եւ յարոյց չչուկ. մատեան զօրականք, ձգեցին զօրիորդն արտաքոյ եկեղեցւոյն ընդդէմ աղաչանաց եւ ձգանց պանդոկապետին. բայց ինքնակալին լուեալ զբարբառն զայն, ոչ կամեցաւ յայնպիսում բարենշան աւուր մերժել զաղերս հէք օրիորդին. հրամայեաց միում ի պաշտօնէիցն տեղեկանալ զոր ինչ խնդրէրն: Եւ արտաքս պաշտօնեայն լուաւ զձայն պաղատանաց հիքի՝ որ ձգնէրն ընդդէմ զինուորաց, եկն, եհաս, ետես, ծանեաւ եւ գոչեաց. Նա ինքն է, Ելիսարեթ է: Չկարէր օրիորդն հաւատալ այնքանոյ բարեբաստութեան. չկարէր կարծել գտանելոյ անդ պատանուոյն Սմուգիի առ ի փրկել զհայր իւր. այլ ձայն նորա եւ նորին ինքեան էր կերպարան, չէր մարթ ըմբռնել նմա ի ստորանս. հայէր ի նա անբարբառ, կարկառէր առ նա զբազուկս իւր՝ իբր այն թէ գայր նա բանալ իւր զլըրունս

երկնից: Դիմեաց առ նա պատանին յայլոյ խելս լեալ, աջ ի յաջ յեռեալ, եւ յերկուացեալ իմն ընդ տեսիլ աչաց, ասէ. Դո՞ւ իցես, Ելիսարեթ, ուստի գաս հրեշտակդ երկնացեղիկ: Օրիորդն ասէ. Ի թողուքեայ գամ: Պատանին ասէ. Դո՞ւ ի թողուքեայ, միայնակ, հետի: Եւ յասելն զայս դողալը ի յուզելոյ սրտին: Օրիորդն ասէ. Այո, գամ միայնակ, գամ հետի, խնդրել շնորհս հօր խնում, եւ վարեն զիս ի գահոյից այտի ի բաց, խլեն զիս յերեսաց ինքնակալին: Իսկ պատանին լի խնդութեամբ ասէ. Եկ, եկ, Ելիսարեթ, ես ինքն յանդիման կացուցից քեզ ինքնակալին. եկ, լու՛ նմա զբարբառ քո. եկ, մատո նմա զաղերս քո, ոչ մերժեսցէ նա զայն: Եւ մինչդեռ ի բաց արարեալ զգինուորս ածէր զնա յեկեղեցին, գային գաւառաւորք ինքնակալին ի դուրս ընդ աւագ դուռն եկեղեցւոյն, յերեւել ինքնակալին՝ յառաջ մատեաւ Սմուգի կալեալ զձեռանէ օրիորդին, անկան երկրքեան ի միասին առ սոս նորա, եւ ասէ պատանին. Յիս տէր, լուր ձայնի տառապելոյս այսորիկ, լուր ձայնի առաքինութեան, Սթանիսլաւի փոթովքեայ դուստր կայ առաջի մեծութեանդ քո. գայ նա յիսքիմեան անապատէ, ուր յերկոտասան ամաց հետէ հիւծին ծնողք նորա յաքսորս. գայ անտի միայնակ անօգնական, հետի եւ մուրիկ զամենայն ճանապարհն հատեալ. յանձն առեալ զմերժումն, զարկածս, զմրրիկս եւ զամենայն ձիւքն եւ վտանք, առ ի գալ անկանել յոտս ինքնակալիդ՝ խնդրել շնորհս հօր իւրում: Իսկ օրիորդն բազկատարած աղերսաւոր կրկնէր. Շնորհս հօր խնում: Շչունջ հիացման զնայր ընդ ամբոխն. ինքնակալն ինքնին հիացեալ կայր. եւ թէ պէտ բազում ինչ լուեալ էր հակառակ փոթովքեայ, այլ յայնժամ ցրեցաւ ամենայն ի մտաց նորա, զի ասէր. Դստեր այսպիսոյ առաքինուոյ չէ իսկ մարթ թէ վնասապարտ լեալ իցէ հայր. այլ թէ իցէ իսկ լեալ, ներէ նմա Ալեքսանդր. եւ ասէ ցօրիորդն. Ազատ է հայր քո, շնորհեալ քեզ: Ի լուր շնորհաց ցնծութիւն այնպիսի զեղաւ ի սիրտ օրիորդին, զի նուազեալ անկաւ անզգայ ի վերայ բազկաց պատանուոյն. եւ բարձեալ տանէին զնա ընդ մէջ անթիւ բազմութեան ամբոխին՝ որ ճանապարհ առնէր նմա կայթիւք ձեռաց եւ դրուատեօք. առաքինութեան վեհազն օրիորդին եւ զթութեան ինքնակալին:





եալ՝ այլ քաղցր արտասուս : Թուէր նմա տեսանել ուրախացեալ  
յերկինս բարւոյ կրօնաւորին ընդ բարեբաստութիւն իւր , եւ ի բա-  
րեգութ զսրտի նորա յաւելեալ ինչ յամենակատար երանութիւնն՝  
զոր վայելէն յԱստուած՝ ի տեսիլ երջանկութեան իւրոյ :

Ոչ կամեցաւ նա կանխել ազդ առնել ծնողաց իւրոց զգարձ իւր.  
լուաւ զողջունէ նոցա ի Թոպոլք , զնոյն եւ ի Սայխքա հաստատ-  
եալ . կամէր յանկարծ երեւել նոցա , ոչ զոք առեալ ընդ իւր՝ բայց  
միայն զպատանին Սմոլոֆ : Ո՛հ , զիմորդ բաբախէր սիրտ նորա յան-  
ցանել իւրում ընդ անտառն , ի մօտել յեղերս լճին , եւ ի ձանաչել  
զմի մի ի մայրեաց , զմէն մի ի Ժայռից : Նշմարէր զհիւզն հայրենի ,  
գիմէր անդր . . . այլ զկայ էառ . ի սաստիկ յուզմանէ սրտին պակեաւ ,  
ընկրկէր ի կարի հրճուանացն : Ո՛վ աղետից մարդութեան . ահա  
լրումն նորին . ցանկաձք բարեբաստութեան , կամիմք զայն ծայրա-  
լիր , եւ ծայրալիր բարեբաստութիւն մահառիթ եղանի մեզ , չկա-  
րեմք ժուժկալել այնմ : Ելիսարեթ անկեալ ի վերայ բազկաց պա-  
տանւոյն , ասէ . եթէ լիցի ինձ գտանել հիւանդ զմայր իմ . . . Այս  
երկիւզ ազգեալ ի սիրտ նորա , մեղմեաց զազգումն բարեբաստու-  
թեան՝ որ ընկճէրն զնա , եւ գարծոյց ի նա զգորութիւն իւր : Բն-  
թացաւ , կոխեաց ի սեամս հիւզոյն , լուաւ զձայն իւրոցն եւ ծան-  
եաւ . սիրտ նորա նուաղէր . միտք իւր ծփային , անուանէր զծնօ-  
ղըս իւր : Բացաւ դուռնն , ետես նա զհայր իւր , ձայն երարձ , ե-  
հաս մայր նորա , եւ ի գրկախառնելն ընդ նոսա՝ գոչեաց Սմոլոֆ ,  
Ահա աւետարեք ազատութեան ձերոյ , յազթեաց ամենայնի , ըն-  
կալու զամենայն : Այլ բանք պատանւոյն ոչինչ յաւելին ի խնդու-  
թիւն նոցա , թերեւս չլուան իսկ զբանս նորա , զմայլեալք ի տե-  
սիլ դատերն իւրեանց . զգային եւ եթ զգալուստ նորա զի տեսա-  
նէին զնա , ի մոռացօնս եղեն նոցա՝ թէ իցեն յաշխարհի այլ ինչ  
բարիք : Բնկզմեալ կային ժամս ձիգս ի զմայլման անդ իբր անըզ-  
գայք , այլ ոչ զիտէին զոր ինչ ասէինն . ի զուր խնդրէին յայտնել  
որ ինչ կրէրն ի նոսա , ոչ գտանէին բանս զկիրան բացատրելոյ . լա-  
յին , հառաչէին , եւ զօրութիւն նոցա նուաղեալ էր ընդ մոռացն  
յառաւել խնդութեանն :

Յայնժամ անկեալ առ ոտս նոցա պատանին , ասէ . Ո՛հ , ոչ մի  
որդի է ձեր , ցարդ եղբայր իւր կոչէր զիս Ելիսարեթ՝ այլ արդ առ  
ոտս ձեր ներեսցէ թերեւս ինձ ցանկալ այլում իմիք անուան : Եւ  
օրիորդին ձեռս ի ձեռս խառնեալ ծնողացն , եւ հայելով ի պա-  
տանին , ասէ . Առանց սորա չլինէր թերեւս ինձ դառնալ այսրէն .

սա ած զիս յոտս ինքնակալին , սա բարեխօս եղեւ վասն իմ , սա  
խնդրեաց ի նմանէ շնորհս վասն ձեր եւ ընկալաւ , սա դարձուցա-  
նէ զձեզ ի հայրենիս , սա ինքն տայ զդուստր ձեր ձեզ , սա ած զիս  
ի գիրկս ձեր : Արդ ասա ինձ մայր իմ , զի՞նչ շնորհս պարտ է ինձ  
մատուցանել սմա . ուստ ինձ հայր իմ , զո՞ր շնորհակալիս մատու-  
ցանել սմա : Աստանօր փեղորայ ողջագուրեալ զդուստր իւր , ա-  
սէ . Շնորհակալութիւն քո լիցի սէր , որով սիրեմ ես զհայր քո : Եւ  
Սփրինձեր յաւել հրճուանօք . Նուէր սրտի քոյումը նմանոյ լիցի  
ի վեր քան զամենայն բարերարութիւնս . այլ Ելիսարեթ չհամարի  
գոլայնուիկ առատաձեռն : Իսկ օրիորդին առեալ զձեռն պատանւոյն  
եւ տուեալ ի ձեռս ծնողացն , կարմրագեղ զխօք եւ ցածութեամբ  
ասէ . Խոստանամ չմեկնիլ ի սոցանէ : Յայնժամ պատանին ասէ ընդ  
ինքն . Բարէ , արդեօք այլ ընդ այլոյ ինչ լուայ , արդեօք շնորհե՞ն  
զնա ինձ ծնողք իւր , արդեօք հաճի՞ նա ընդ իս : Եւ ոչ կարաց-  
եալ կատարել զբանս իւր , խոնարհեալ զերեսս իւր ողողեալս ար-  
տասուօք առ ոտս Ելիսարեթի , յերկինս իսկ չհամարէր թէ գուցէ  
երջանկութիւն առաւել քան զիւրն . զմայլումն մօր՝ որ զդուստր իւր  
տեսանէր վերստին , խանդաղատելի պարծանք հօր՝ որ վասն ազա-  
տութեան իւրոյ շնորհապարտ գտանէր արիութեան դատերն ,  
անձառ խնդութիւն վեհագին եւ բարեկրօն օրիորդի՝ որ յայգուէ  
կենաց իւրոց լցեալ զսրբազնագոյն պարտոս իւր , եւ ի ծայր իւր ա-  
ռաքինութեան էր ժամանեալ , պարառութիւն այս ամենայն բար-  
եաց թուէր պատանւոյն ի ստորեւ քան զբարեբաստութիւնն՝ զոր  
մատուցանէր նմա սէր :

ԵՐԿԻՆՔ ՊԱՏՄԵՆ ԶՓԱՌՍ ԱՍՏՈՒԾՈՅ

Համապարփակ , անբան պարանայ | Պարուակ , Կամար , Երևան

Այո՛ Տէր , չեւ ծընեալ էր մարդ ի յաշխարհ ,  
Գոյր արեգակն եւ լուսին .  
Եւ արուսեակն ետես նախ զիւր ձանապարհ :  
Զաշխարհակալ դու զմէզն ի լոյս փոխեցեր ,  
Համապարփակ ի վրէժն  
Ի գոյ ածեալ զերկիր ըզձով եւ զեթեր :

Քեւ բազմամբոխ թեւաւորաց հոյլք ըզմին,  
 Ըզնա երամբ լուզակաց,  
 Չորքոտանեաց աղինք ըզմիւսըն լըցին.  
 Որպէս զի մարդն հաստեալ քոյին ի պատկեր,  
 Աստուածութեանըդ վըկայս  
 Գըտցէ զձեռաց քոց ըզհաստուածս առնթեր:  
 Այլ բարձրագոյն յոյժ վըկայեալ ի գոչիւն,  
 Երկինք ըզքո պատմեն փառս  
 Ճաճանչադեղ լուսնին ի լոյս եւ արփւոյն:  
 Ո՛ր ըզՄիհր ի դմա պաշտես դու Արիդ,  
 Եւ դու տիկնոջն երկնից դէս՝  
 Որ ի լուսինդ յայդ նըկատես զՄնահիտ,  
 Դարձիր հայեաց յարարչապետն ի դոցին.  
 Եւ հաստուածոյն ի գեղըյ  
 Ըզդեղ ի միա առ ըզվըսեմ հաստողին.  
 Եւ զգորութիւն հըզօր աջոյն այնորիկ,  
 Որ ըզդոսա ընդ երկին  
 Արկ իբր ըզգունդ ինչ մանկըտոյ խաղալիկ:  
 Որք գիշերոյ նոյնք եւ տուընջեան տընօրէն  
 Ճեմին ընդ դաշտ եթերին,  
 Որպէս հըսկայք դարձաւորք յաղթք ի մարտէն:  
 Այլ զաչացու է տեսութիւն մահացուաց,  
 Եւ էքս անտեսք ի նմանէ  
 Դընեն ի նոյն թաղեալ խաւար միգամեմ.  
 Եթէ ոչ դու, Տէր, այլ արեւ եւ լուսին  
 Ճառագայթեալ ի բարձանց,  
 Չաչըս մըտաց լուսաւորես ըզնոցին:  
 Ո՛հ, երանի որք ճանաչեն ըզքեզ Տէր,  
 Այլ առաւել երանի՛  
 Որոց պաշտեն ըզքեզ եւ կեան ի քո սէր:  
 Տեսից զերկինս ըզքոց մատանցդ ըզվաստակ.  
 Տեսից գարեւ եւ զլուսին  
 Պայծառացեալ յիւրաքանչիւր պարունակ:  
 Չամենագօր քո տէրութիւնդ յանդիման  
 Տեսեալ յաւերժ ի նոսա,  
 Քեզ բոլորով եղէց սըրտիւ խոստովան:

2. Յ. Հիւրմիզեան

# Պ Օ Ղ Ե Լ Վ Ի Ր Գ Ի Ն Ի Ս

## Ա

Ջօրել յոսրնկելիս , Կարենու արտէնէ  
 Հոլանի , Էրէ , Բայ  
 Պաւսել , Կարապետ  
 Փայսաւ , Կոչի  
 Ուղերձել , Կարէն

Սսածիչ , Կարապետ  
 Սրճուցն , Կարապետ Կար  
 Երկայնագ , Բեւեր երկայն  
 Պարզել (Եզուի) , ( Երկայն ) Բայստէն  
 Ջարգուն , Կարապետ

Նորանչան իմն էր տղայոցն անդտօրն ընդ միմեանս սիրելու-  
 թիւն . ի լալ Պօղայ՝ շատ էր ցուցանել նմա զՎիրգինիս , եւ զը-  
 ուարթանայր անդէն յերեսաց նորա եւ հանդարտէր . եւ զվիշտս  
 Վիրգինեայ ի ճիչ մանկանն Պօղայ զգային մարքն . իսկ դասորիկն  
 նազելի թագուցանէր զվիշտ իւր խոյն , առ ի խնայելոյ զնա ի  
 վշտակցութենէ : Դեռ այն ինչ գօրելով նոցա յոտընկելիս , տե-  
 սանէի միշտ զնոսա ի դալ խնում այր ձեռն ի ձեռն խառնեալ թեւ  
 ի թեւ տուեալ՝ Հոլանիս ըստ սովորութեան երկրիս , որպէս երկ-  
 ուորեակքն կենդանակերպք նկարին : Եւ գիշեր իսկ ոչ մեկնէր ըզ  
 նոսա ի միմեանց , յաճախ ի նոյն որորոց՝ այտ ի յայտ , լանջ ի  
 լանջս յարեալ , եւ ձեռս զպարանոցաւ իրերաց արկեալ , գիրկընդ-  
 խառն ննջէին :

Ի պարզել լեզուի նոցա՝ նախկին առ միմեանս բարբառ էր եղ-  
 բայր եւ քոյր . զի մանկութիւն , ճարտարամիտ ի գգուանս սիրոյ ,  
 չգիտէ անուն այլ քաղցրագոյն : Դաստիարակութիւն յաւել զնո-  
 ցին առ իրեարս սէր , յօգնականութիւն իրերաց ուղերձեալ զայն :  
 Տակաւ Վիրգինեայ լինէր յանձն անտեսութիւն , հոգ առտնին  
 մաքրութեան , եւ պաշտել զճաշն անպաճոյճ . եւ յանձանձանաց  
 այսր ամենայնի համբոյրք եղբօրն եւ դրուատիք զհեա գային հա-  
 նապաղ : Իսկ Պօղ անդուլ ի վաստակոց՝ մերթ մշակէր ի պարտիղի  
 ընդ Դոմինիկեայ , եւ մերթ փայտատն փոքրիկ ի ձեռին՝ գնայր  
 ընդ նմա յանտառս . եւ ի տեսանել ուրեք յերթալն ծաղիկ չքնաղ ,  
 կամ միք աղնիւ , կամ բոյն թռչնոյ , ի ծայրս իսկ ծառոց սողոս-  
 կեալ ի վեր՝ առնոյր բերէր զայնտիկ առ Վիրգինեա : Միուսն ի

նոցանէ հանդիպեալ ուրուք, ոչինչ երկբայէր մօտիկ անդանօր գտանել եւ զմիւսն:

Որպէս այդ գեղածիծաղ գեղեցկագունի տուրնջեան աւետաւոր, այսպէս նոցա այն ինչ ի սկզբնաբոյս տիոց ի պատանեկութիւն թեւակոխեալ՝ սկսանէին վաստակակիցս մարցն լինել ի յանձանձանս առտնին իրաց: Յազգել հաւախօսին զդարձ այգուն՝ յարուցեալ վիրգիներայ գնայր զՂրոյ ի մօտակայ ակբիւրն, եւ դառնայր պատարաստէր նախաճաշ: Յոսկեզօծել սպա արիւոյն զկատարս բլրոց շուրջանակի՝ գայր Մարգարիտ հանդերձ որդւոյն առ Լադուր տիկին, եւ միաբան ամենեքին յաղօթս կացեալ՝ առնուին զնախաճաշիլն, յաճախազոյնս ի դալարուոյ առ դրան ընդ հովանեաւ սանանեաց, որք զհիւթեղ պտուղան առձեռնպատրաստ ընծայէին նոցա ի ճաշակ, եւ զլայն եւ գերկայն սաղարթսն ի ծածկոյթ սեղանոյ: Առատ եւ ստածիչ կերակուր արագ արագ աճուամս պատանեկացն պատրաստէր, եւ քաղցրահամբոյր դաստիարակութիւն հրճուանս եւ ամբօժութիւն հոգւոյ ի դէմս նոցա նկարէր:

Վիրգիներա յերկոտասանամեկի սակաւ ինչ ընդհատ ի զարգուն տիոց բերէր կերպարան. վարսք երկայն խարտեչազեղ զգլխով նորա, կապուտակ ականողիք, եւ շրթունք իբրեւ զլար կարմիր, յաւելուին գեղ սիրայորգոր ի դէմս նորա: Աչք նորա համայն ընդ խօսս գեղածիծաղք. իսկ ի լուին երկնահայեացք բնաւորեալ ըզդիւրազգայ սիրտ նորա եւ զթեթեւ ինչ թախճութիւն սրտին ի յայտ ածէին: Նոյն եւ Պօղ ընդ շնորհս պատանեկութեան բերէր յանձին զնկարագիր առն ի չափ հասելոյ. բարձրահասակ քան ըզվիրգիներա, թխազոյն քան զնա, եւ արճուունգն. բիրք աշաց նորա սեւաթոյր, խրոխտք իմն գոգցես, բայց երկայնատէգ յօնիցն ճառագայթածեւ զնոքօք փայլմամբ քաղցրացեալք: Յար ի շարժման կայր, այլ ի տեսանել զքոյրն՝ հանդարտէր բազմէր առնթեր. եւ ի ճաշելն իսկ սովոր էին լսիկ կալ, որպէսզի ի լուսութիւն նոցա եւ ի բնական դրոյն տեսիլ՝ եւ ի բոկանի ոտիցն վայելչութիւն՝ թուէին կիցք իմն անդրեաց քանդակ վաղեմի ի կիճ սպիտակ, ըզնիտրեայ որդւոցն յանդիման առնելով զպատկեր: Այլ ի հայեցուածս նոցա՝ որ իրերաց խնդրէին հանդիպել, եւ ի քաղցր ժպտ՝ զոր միմեանց փոխադարձէին, թուէին զուարթունք երկից կամ հոգիք երանաւէտք՝ որոց բնութիւն իսկ է սէր առ միմեանս, եւ չեն ինչ նոցա սէտք ձեւովք զզգացմունսն բացատրելոյ եւ բանիւք զսիրելութիւն:

Ո Ր Բ Մ Ա Ն Կ Ո Ւ Ն Ք

Ամսնոր, նոր Գործ	Հալիլ, Բուր
Թախիծ (ամ.) Գործ, Գործ	Շախլու, Յայն Կարոյ՝ զհնոց կայն
Մնչել, Գեղ Կերպով երգել	Վիստատիլ, Գոր Կորել
Ապառուս, Գոր Կեր, Կերպ	Պիւրկ, Կերպած՝ Կերպ

Դաշտք կան պաղեալ, անցին աւուրք գեղապանծ.  
 Վայ արքատին ոյր չիք տուն,  
 Այլ մահ մընայ լքեւլում,  
 Հանգոյն երկրի թէ սիրաք իցեն սառնամած:  
 Ամանորայ հասեալ գիշերն առաջին,  
 Ամբօս մարդկանն եկեալ յաւուրն հանդիսից՝  
 Ճեպէր ի դարձ բերկրալից.  
 Եւ խուն ինչ բաղդ եւս այց առնէր հիւղեկին:  
 Նըստեալ մատրանն առ սեմովք  
 Տըզայք երկու, կէս մերկը՝ գունատք եւ թախիծ,  
 Գութ արկանեն անցաւորաց խիստ սըրտից՝  
 Մընչեալ մըրմունջ տըրտմահոգ:  
 Ձաղէտս նոցին լապտեր առ ոտս յայտ առնէր՝  
 Փոխան հեղուվ իբր հայցուած:  
 Եղանակէր լալով կըրտսերն ի յերեր.  
 Միւսըն ճըզէր ձեռս ապառուս մեծատանց:  
 «Մեր երկոցունցըս մանկանց չիք այլ եւս մայր.  
 Մեռաւ յերէկն. առ մեզ տալով զիւրն ըզհաց,  
 Եւ կայ՝ ուր մեր նընջէ հայր.  
 Տո՛ւք, զի հաշիւք սովալըլուկ, ցըրտամած:  
 Օտարն ասէ. երթո՛ցք, իմ գոն ընտանիք  
 Ո՞ զհոգը ընկեաց յիմ վերայ:  
 Տեսաք զի իւր լայր դըստրիկ.  
 Այլ մեռանիւք մեք ահա»:  
 Եւ ձայնն ողորմ ողբարար  
 Խուլ բարբառով կսմէր զօր.  
 Անմըտադիր ամբօսն ի ձեպ ընթանայր,  
 Մինչ ոչ մընաց ոք անցորդ:  
 Ըզդուուրն սուրբ բախէին,

Ձի մայրն ասէր՝ եթէ Տէր ոչ մուռնայ .  
Սոսկ արձագանդ պատասխանէր տաճարին .

Հուպ մտալուտ հասեալ մահ  
Դեռ լոյս վառէր լապտերին ,  
Եւ տըխրածայն ըզկէս դիչեր ժամն ազդեաց :  
Հեռուսս դռայր շաչիւն ածնիցըն կառաց .

Այլ ձայնն հատաւ լալազին :  
Առաւօտուց քահանայն

Յերթալն յաղօթս յեկեղեցին յայգուն լոյս :  
Տեսեալ զնոսա զվիման անկեալ ձիւնասոյգ .  
Ձայն արկանէր արտատուելով . . . անշարժ կան :  
Ա՛հ , փարեւոցն , եղնւկ , զանձամբք գիրկ ընդ գիրկ  
Ձան էր անշուշտ պահել զնըշխար ջերմութեան .  
Եւ դարկահար վիմատուեալ երկօքեան՝

Դեռ ճրգեն ձեռս պաղեալ սիրկ :  
Երէցն՝ յեղբայրն հովանացեալ կիտովի ,  
Ձձեռն իւր արկեալ ունէր նորին ի բերան ,  
Իբր յարգելուլ ըզվայրապար ողբս հայցման ,  
Եւ ցուցանել թէ զթուծիւն չիք յերկրի :  
Նընջեն յաւերժ , այլ դեռ լապտերն անդ հըսկէ .  
Ողբան մարդիկ , քան ի նըպաստ՝ կազմք ի լաց ,  
Անդր ամենուստ խընեալ ի կոծ արտատուաց .

Այլ չէր որ գայր յերկկէ :

Պելմնոյէ



Պանանի , արտաբնիկ  
Սփածանելի , ( Գեղեցիկ )  
Ասպականի , արտաբնիկ , արտաբնիկ  
Գեսամոյն , գեղեցիկ մեջ խեղդարտած  
Կցայօն , յօնտերն կից  
Գեղձանիկ , գեղեցիկ ( Գոմարտ )  
Նփրիլ , անօթն-թիւն մարել  
Երեսս առնել , արտաբնիկ արտաբնիկ

Կոպիւն , մանր բարձր խորտառած  
Հարկանել զգաւաւ , Զարուլ անցանել  
Որակ , արտաբնիկ  
Երիթ , ( Կիւր ) փայտէ զնստած  
Խառնիչ , արտաբնիկ  
Պսոսկիւն , լոյս արտաբնիկ  
Կրկոս , խոտ , լոյս փայտ  
Վ.թիս , Կիւր

Բայց բարերոյս բնաւորութիւն մանկացն օր ըստ օրէ գայր յե-  
րեւան . յաւուր միում կիւրակէի ընդ այգն , մինչդեռ մարք նոցա

Երթեալ էին ի նախկին պատարագն յեկեղեցուջ ի Բամբուլուս , կին  
ոմն խափշիկ լեռնաբնակ եկն եկաց ընդ պանանեօք՝ որ շուրջ կա-  
յին զհիւլիւն , եւ էր նիհար մեռելատիպ , եւ փոխանակ հանդեր-  
ձից կապերտ զմիջով ամեալ սփածանելի : Անկաւ առ ոտս Վիր-  
գինեայ , մինչդեռ նա զնախաձաջ ընտանեացն պատրաստէր , եւ  
ասէ . Յիս , օրիորդիկ , գթա ի ստրուկս հէք եւ փախտական , յառ-  
սօրեայ աւուրց շրջիմ թափառական ի լերինս յայտոսիկ կիսամահ  
ի սովոյ , եւ յասպականեաց հալածական . յերեսաց Տեառն խնց  
փախուցեալ եմ , յուժմնէ ի ճոխից գետափնեայց Սեաւ գետոյ .  
նա ինքն հասոյց զիս յայս աղէտս : Եւ զայս ասացեալ ցուցանէր  
զկապուտակ հարուածս գանից ի մարմնի իւրում , եւ զսպիս վիրացն ,  
եւ յաւել . Գետամոյն խորհէի զանձն իմ կորուսանել . այլ իբրեւ  
գիրտացի զի դուք աստ բնակէք , ասեմ . Չեւ եւս մեռայց , եւ ասս  
սպիտակք բարեգորովք : Վիրգինեայ գալարեցան ազկք , եւ զձա-  
չիկն՝ զոր ընտանեացն պատրաստէր՝ մատոյց նմա , եւ ասէ . Քա-  
ջալերեաց , եղկելի դու , կեր եւ արբ . եւ ի սպառել Հնդկին իս-  
կոյն զկերակուրն եւ ի զօրանալ , յաւել Վիրգինիա . Ես եկից հաշտ  
առնել զատէր քո ընդ քեզ , եթէ կամիս՝ հէք աղքատիկ՝ ամեալ զիս  
առ նա , յերեսաց աղետիցդ շարժեցի նա ի գուլթ : Եւ Հնդկին  
ասէ . Հրեշտակդ ինձ երկնառաք , եկից ընդ քեզ ուր եւ կամիցիս :  
Յայնժամ կոչեաց Վիրգինիա զՊօղոս , եւ աղաչեաց զնա գալ ընդ  
իւր , եւ Հնդկին առաջնորդէր նոցա ընդ անտառս եւ ընդ բարձ-  
րարեքձ լերինս՝ ընդ որս բազում ձգամբ ի վեր մագլէին , եւ ընդ  
լայնածաւալ գետս՝ ընդ որս հետի անցանէին , մինչեւ հասին ըզ  
միջաւուրք ի ստորոտ լերին միոյ յեզր Սեաւ գետոյ , ուր էր տուն  
գեղեցկաչէն եւ ծառատունի ընդարձակ , եւ ամբոխ գերեաց յազ-  
գի ազգի վաստակս պարապեալ : Տանուտէրն ի միջի անդ ծխել-  
եառն ի բերանի եւ եղէզն հնդիկ յաջում ձեռին զգնայր , այր  
բարձրահասակ , վտիտ մարմնով եւ թխատիպ , խորակն եւ կցայօն ,  
սեւաթոյր յօնիւք : Վիրգինիա զընդանի հարեալ եւ զձեռանէ կալ-  
եալ Պօղոս , մատեաւ առ այրն եւ աղաչէր զնա , վասն սիրոյն Աս-  
տուծոյ ներել գերեոյն՝ որ անդ փոքր մի ի բացէ կայր : Նորա  
յաղքատին զգեստս մանկանցն վեր ի վերոյ ահնարկեալ , ոչինչ ի  
սկզբան անդ երեսս արար նոցա . այլ ի նկատել զջընաղագեղ դէմս  
Վիրգինեայ , եւ զընդձանիկ ընդ կապուտակ քօլովն անկեալ  
խոսովիս , եւ ի լուր քաղցրածայն բարբառոյ նորա՝ որ ընդ բոլոր  
անձինն դողդոջէր , արկ զծխիչն ի բերանոյ , եւ ի վեր առեալ ըզ

ցուպն եղեգնեայ, երդուաւ երդումն զարհուրելի, եւ ասէ. Ոչ  
 ի սէր Աստուծոյ՝ այլ ի սէր քոյին ներեալ աղախնոյդ: Յայնժամ  
 Վիրգինիա ակնարկեալ գերւոյն մատչել առ տէր իւր, խոյս ետ  
 ինքն ի բաց, եւ զհետ նորա Պօղ: Եւ դարձ արարեալ նոցա ընդ  
 զառ ի վեր լերինն՝ ընդ որ իջեալն էին, իբրեւ ի կատար անդր  
 հասին, վաստակարեկ նքթեալ եւ ծարաւի նստան ընդ ծառով,  
 զի աւելի քան զհինգ փարսախ արտրեալ էր նոցա յեւրոյ արեգա-  
 կան անուաղ: Յայնժամ Պօղ ասէ ցՎիրգինիա. Վաղ իսկ օրս ընդ-  
 միջեցաւ, քոյր իմ, եւ դու քաղցեալ եւ ծարաւի ես, եւ չիք ինչ  
 աստ ի ճաշակ, ե՛կ իջցուք անդրէն առ տէր գերւոյն, խնդրել ի  
 նմանէ կերակուր: Պատասխանի ետ Վիրգինիա եւ ասէ. Ո՛հ մի,  
 եղբայր իմ. ահաբեկ արար զիս այրն այն. յիշեա զոր մայրիկն մեր  
 ասէ. որ ուտէ զհաց անդգամին, լցցի բերան նորա կոպճով: Կրկի-  
 նեալ անդրէն պատանեակն ասէ. Եւ զի՛նչ գործիցեմք, պտուղք  
 ծառոցս անպիտանք են ի կերակուր, չիք աստ դաման, չիք կիտրոն  
 առ ի զովացուցանել զպապակ քոյին: Եւ Վիրգինիա յաւել. Որ  
 կերակրէն զճագս թռչնոց՝ որ կարդան առ նա, ոչ թողցէ զմեզ:  
 Եւ զոյգ ընդ բանին լսելի եղեւ խոխով Չուրց գահալիժեւրոյ. եւ  
 ընթացեալ անդր հարին զպատուք յականակիտ արեաց անտի, եւ  
 որ զեղբրք Չուրցն աճեցեալ էր ջրկոտեմ, քաղեալ եւ ճաշակե-  
 ցին զայն: Այլ մինչդեռ հաստատագոյն ինչ կերակրոյ ի խնդիր  
 զաչս ամէին, ետես Վիրգինիա ի ծառս անտառին մատաղատունկ  
 ինչ հանգոյն արմաւենեոյ՝ որ ի մէջ սաղարթուց ի գագաթանն բերէ  
 պտուղ կաղամբաձեւ ասորժ ի ճաշակ: Բայց բուն ծառոյն, ոչ  
 ինչ ստուարագոյն քան զարունս, այլ բարձր էր աւելի քան ըզ  
 վաթսուն ոտնաչափ. եւ թէպէտ որակ փայտին յազրնաձեւ թելից  
 յօդեալ, այլ կարծրամէջ եւ անտեղիտալի սայրասուր տապարաց:  
 Իսկ Պօղ, ոչ ունելով ընդ իւր եւ ոչ դանակ, մտաբերեաց հուր  
 հարկանել զծառոյն, այլ եւ այն դժուարին, զի ոչ գոյր նորա  
 հրահան, եւ ոչ յապաւածուտ կղզոյն կայծքար ուրեք է գտա-  
 նել: Բայց հարկ ի հնարս դրդէ զհանձար, եւ յուրժք ի պիտանե-  
 ցոյն գիւտից կարօտութեան են արգասիք: Խորհեցաւ նա ըստ  
 օրինակի հնդկաց վառել հուր. եւ առեալ ընդ ոտիւք ոստ ծառոյ  
 գօսացելոյ, ծակ ի նմա գործեաց սրածայր քարիւ, եւ սայրիւ  
 նորին տաչեալ երիթ յայլասեռ ծառոյ, մոեաց զայն ի ծակ ոստոյն՝  
 որ ընդ ոտիւքն էր, եւ արագ արագ շրջըջեալ զայն ընդ ամի՝  
 որպէս ոք որ զխառնիչ յեռալ չոքոլաթին պտուտիէ, եւ ահա

ծուխ ընդ ծակն ելանէր, եւ թօթափէին անտի կայծակունք:  
 Յայնժամ քաղեալ խուր եւ կրկուտ ցամաք՝ եւրոյց հուր զարմամբ  
 ծառոյն, եւ ահագին ճարճատմամբ կործան տնկաւ արմաւենին:  
 Նովին հրով եւ պտուղ ծառոյն ի փշալից եւ ի սաղարթապատ ի  
 կարծր պատենիցն կեղեւեալ, զկէս նորին կերան անեփ, եւ զմիւս  
 կէսն մուրկ ընդ մոխրով, երկոքին եւս ասորժ ի ճաշակ. եւ առա-  
 ւօտին բարեբարութեանն իւրեանց յիշատակ յաւելոյր բերկրանս  
 ի կերակրիկն: Բայց բերկրութիւն նոցա աղմկէր յածել զմտաւ ըզ  
 հոգս մարցն ընդ յամեցումն դարձի իւրեանց ի տուն, զոր Վիր-  
 գինիա յեղ յեղէր ստէպ, իսկ Պօղ զօրացեալ կերակրովն, հան-  
 դարտէր զնա եւ ասէր. Հուպ ընդ հուպ հասեալ ի տուն, սիո-  
 փեսացուք զնոսս:

ՅԱՐԴԱՐՆ ԴԱՏԱՓԵՏԵԱԼ

Մախաւս, Կախաւս  
 Դովիել, Գրու զ-րեւ թեթել  
 Վայրկեան (ամ.) Կայրիքնախա  
 Պեղել, Կրեւ

Յեցուղ, ցուք, սրբաւ  
 Պեկել, Եւել ծաւել  
 Պանպանակ, պահպանող Կորթիւ  
 Սուեւաւ ամել, անպայանել

Ո՛վ արտասոււց անմեղութիւն արժանի,  
 Ըզքեզ ողբամ, սիրտ իմ ի քեզ գեղանի.  
 Դու ընդ երկնաւ հեծես միշտ  
 Երբէք դու ոչ կեսս անվիշտ:  
 Քեզ մտխառնէր աշխարհ լարէ միշտ թակարդ,  
 Քեզ խորխորատ պեղէ անդուլ անհանդարտ.  
 Ո՛հ, միշտ բարւոյն փոխարէն  
 Այս կըլտեսցի ի բախտէն:  
 Դու ի նախնուժ հովուին անմեղ գառն եւ հեզ,  
 Եղբայրպարաւ ձեռին մատեար ողջակէզ,  
 Ի քեզ մահուն նախ ժանիք  
 Լոյծ ըզմեղաց դատակնիք:  
 Սիրեցելոյ հօրն ի վաճառ անմեղին  
 Գերի գնացեր նրժգեհակից ընդ նրմին.  
 Նրմին ի խորն յայն ի գուր  
 Եւ ի բանտին եղեր հուպ:



Ընդ Յիսուսի դու բըռնամահ ի խաչին,  
Անյիշաչար կափուցեր զաչըս քոյին.

Ո՛հ, միթէ ոչ դու եւ ցարդ  
Դատափետիս տարապարտ:

Այլ զաչացու է, այլ անմիտ է նախանձ,  
Առաջարկեալ ըզձիցն ի յելս անթափանց,  
Վնասել կարծէ՛ այլ փառաց  
Յօրինէ քեզ յաւելուած:

Առանց փայլման է ձոյլ ոսկւոյն Սովիերայ,  
Թէ ոչ ուռանց դուինն բոմբիւնք ի վերայ.

Այլ ի հարուած չարատանջ,  
Սըփուէ նըշոյլ եւ ճաճանչ:

Թէ բըռնացի աշխարհ ըզքեւ առ սուղ ինչ,  
Մի կարծեսցէ ամեալ ստուերած քեզ անջինջ.  
Փարատեսցի այն ընդ փոյթ  
Դարձցիս անդրէն յերեւոյթ:

Այսպէս զերկինք տիրէ վայրկեան մառախուղ,  
Արփիահան չողիցն ապա յորդ ցընցուղ  
Թափի յերկիր անարգել  
Ծառոց ծաղկանց ի պըտիել:

Է պահպանակ տըկար, եւ դիւր բեկանի  
Ասպար լանջացըն ծանրաբեռն հովանի.  
Դու թէ զմարդոյ ծածկես կուրծ,  
Չերծ ի չարեաց է հանուրց:

Ո՛վ երջանիկ սիրա, ում դու կաս աքընթեր.  
Վնասապարտից մինչ ծըփին սիրտք ի յերեր,  
Խաղաղութիւն անդ անլոյծ  
Ճեմի ընդ քեզ միալուծ:

Հ. Յ. Հիւրմիւզեան



Երեսուրեան, Երեւնոսար սանեցող  
Լայիւծ, սահեցող  
Հարկիլ, սրբապատէլ  
Յողկեցի, սեպուղ Բոյս (Գըրեայագ)  
Տրեխ, (Կըրեթ)  
Բառաջ, Բայնան  
Նսեմալ (մկ.) Բայն սրբն

Չեւ, պու  
Անուր, օգլէ (Բամա)  
Երեթմանի, Երեւնոսար սանեցող  
Խանձող, վաստ փայր  
Քախար, անասախարան իմերեղէն  
Ի սիս լինել, Կոթակալ շէլ  
Գանաւորակ, (Բեթկերե)

Եւ յարուցեալ ի ճաշոյն առ ի գնալ, վարանէին զի չէր ոք նոցա ուղեցոյց, այլ Պօղ, որ ոչն երբէք վհատէր, ասէ. ի միջօրեայ արեւն կոյս հանդիպի հիւզա մեր, պարտ է մեզ անցանել ընդ լեռանդ երեքսարեան՝ ընդ որ իջաքն յառաւօտուս. հնազա, ընթացուք, քոյր իմ: Այն էր լեռան Եռաստին, յերեցունց սարիցն ձեւոյ առեալ զանուանակոչութիւն: Եւ իջեալ ի լեռնէ անտի Սեաւ գետոյ ընդ հիւսիսակողմն, եւ ժամաւ չափ ուղեւորեալ, հասին յեզր լայնածաւալ հեղեղատի՝ որ հատանէր զանցս նոցա: Կողմն այն կղզւոյս, ընդարձակ եւ անառախիտ՝ ցարդ իսկ անձանօթ է, եւ յուրովից ի գետոց եւ ի լեռանց նորա չիք իսկ անուն. իսկ հեղեղատն յոր հասին՝ խաղայ ընդ ժայռս յորձանահոս: Ի խոխոջ ալեաց նորա երկուցեալ վիրգիլնեայ, չիշխէր հետեւակել ընդ հունն. յայնժամ Պօղայ ստանձնեալ զնա, անց բեռամբն հանդերձ ընդ լայրծ ապառաժս՝ աներկիւղ ի յորձանացն, եւ ասէր ցվիրգիլնիս. Մի երկնչիր, հզօր եմ քեւ, եթէ չէր տանուտեառնն ներեալ աղախնոյն, մենամարտէի ընդ նմա: Եւ վիրգիլնիս ասէ. Դու ընդ հըսկային ընդ այնմիկ չարի. տես յոր վտանգ ամի դքեզ, ո՛հ, քանի՛ դժուարին է բարերարել, չիք ինչ դիւրին քան զչար գործել: Եւ իրբեւ հասին ի ցամաք, դեռ եւս պատանին բարձեալ բերէր ցվիրգիլնիս. եւ կամէր ընդ լեռանն իսկ Եռաստին, որ կէս փարսախաւ հեռի էր անտի, ելանել բեռամբն. այլ ոչ եւս յերկարեալ ի տոկ, հարկեցաւ զնել զնա յերկիր, եւ բազմեալ առ նմա հանդչէր: Յայնժամ ասէ ցնա վիրգիլնիս. Օրս խոնարհի, եղբայր իմ, դու տակաւին յուժի կաս, այլ իմ սպառեաց զօրութիւն. թո՛ղ զիս աստ, եւ փութա դու ի տուն՝ հանգուցանել զսիրտ ծնողացն մերոց: Պատասխանի ետ Պօղ եւ ասէ. Մի՛ լիցի ինձ այդ, ոչ թողից զքեզ. եթէ գիշեր ի վերայ հասցէ մեզ յանտառիս, լուցից հաւր, հարից միւս եւս արմաւենի, զպտուղ նորա կերիցես, եւ սաղարթիւքն

յորինեցից քեզ տաղաւար: Էր անդ զգետեզերքն ծառ վաղեմի, եւ ի կոճեղ նորա աճեցեալ տերեւք երկայնք ցողկենւոյ . իբրեւ փոքր մի զօրացաւ Վիրգինիա, քաղեալ ի տերեւոց անտի՝ արար իւր տրեխըս ոտիցն վիրաւորելոց ընդ քարուտս, զի առ հապճեալ փութոյ ի բարերարել, մոռացեալ էր ագանել կօշիկս: Եւ ի զովանալ ոտիցըն ի տերեւոց անտի, ոգի առեալ եհատ ի հնդիկ եղեգանց իւր ցուպ, եւ յուղի անկաւ՝ յեցեալ միով ձեռամբն ի Պօղ, եւ միւսովն ի ցուպն եղեգնեայ: Գնային հանդարտաքայլ յանտառին, բայց մայրիք բարձրաբերձք եւ սաղարթախիտք ծածկեցին յաչաց նոցա զլեառնն Եռաստին՝ յոր դէմ եղեալ էր նոցա, եւ զարեգակն՝ որ ի մուտս խոնարհէր: Եւ ի դնալ փոքր միւս եւս յառաջ, մոլորեցան տակաւ յարահետ ձանապարհէն, եւ անկան ի բաւիղ անել անտառախիտ եւ ապառաժուտ: Յայնժամ նստոյց անդ Պօղ զՎիրգինիա, եւ ինքն խռովեալ այսր անդր ընթանայր խնդրէր եւ ի մացառախիտ անտառէն, այլ ի զուր: Եւ նա ի կատար միոյ ի ծառոց բարձանց, դիտել տեսանել զլեառնն, բայց գագաթունս եւեթ մայրեաց տեսանէր շուրջանակի ի նշոյլս մտից արեւուն փայլեալ: Վազ իսկ ստուերք լերանց ձգտեալ երկայնեալ՝ ծածկէին զանտառս ընդ հովիտս, եւ ի հողմախաղաղ հանդարտել երեկոյն խոր լուսթիւն պատէր զվայրսն անմարդիս, ոչ այլ ինչ լսելի լեալ բայց բառաջ եղջերուաց ի հեռաստանէ դիմելոց ի դադարս իւրեանց: Խորհեցաւ Պօղ զի թերեւս ոք յորսորդաց լուիցէ, եւ գոչեաց ուժգին. Եկայք հասէք յօգնութիւն Վիրգինեայ: Այլ արձագանդք եւեթ անտառին կրկնեալ եւ երեքկնեալ զնոյն անդրէն ձայն տային Վիրգինիա, Վիրգինիա: Իջեալ ապա պատանուոյն ՚ի ծառոյ անտի խոնջ եւ տխուր, խորհէր զիչերթեալ առ տեղեաւն, այլ ոչ գոյր անդ, ոչ աղբիւր, ոչ արմաւենի, եւ ոչ փայտ չոր ի հուր, եւ զփորձ առեալ զի ամենայն հնարիւքն եւ ձգամբք չէր իմիք ձեռնհաս, սկսաւ լալ: Յայնժամ Վիրգինիա ասէ. Մի՛ լար, եղբայր իմ, եթէ ոչ կամիս ընկճել ինձ ի վշտաց. ես իսկ եմ պատճառք տառապանաց քոց, եւ մարցն մերոց՝ որ հոգան արդ զմենջ. ահա չէ պարտ եւ բարերարել իսկ անհրաման ի ծնողաց. ո՛հ, զի անմտացայ յոյժ: Եւ զայս ասացեալ սկսաւ եւ ինքն լալ. եւ ապա յաւել. Այլ եկ, Պօղ. յազօթս կացցուք, զի ողորմեսցի մեզ Տէր: Եւ մինչդեռ զազօթսն կատարէին, հաջել շան լսելի եղեւ, եւ ասէ Պօղ. Ասպակհանւոյ է ձայնդ, թերեւս ոք յորսորդաց դիմէ նսեմաւ ի վերայ եղջերուաց: Եւ ի յաճախել կաղկանձելոյ շանն, ասէ Վիրգի-

նիա. Հաջիւն շան մերոյ թուի ինձ այդ. այո՛ հաջիւն Հաւատարմին. ծանօթ է ինձ ձայն նորա, մօտ ուրեմն իցեմք ի հիւղ մեր եւ ի լեռնոտն մեր հասեալք: Վայրիկ մի, եւ ահա եհաս շնիկն, եւ փարեալ զտուրք նոցա՝ հաջէր կաղկանձէր եւ քծնէր: Եւ ի հիանալ նոցա ընդ այն, եւ ահա տեսին զի դիմեալ գայր Դոմինիկ (սպասաւոր տանն). որ իբրեւ եհաս առ նոսա արտասուելով այրն տիրասէր ի խնդութենէն, յարտասուս հարան եւ ինքեանք՝ կացեալք լուռ եւ անբարբառ: Եւ ապա Դոմինիկ ի հանդարտելն՝ ասէ. Տեարք իմ պատանեկիկք, քանի՛ հոգս յաւելիք մարց ձերոց, որպէս տառապեցան նոքա ՚ի չգտանելն զձեզ ի տան ի դառնալ իւրեանց ընդ իս յեկեղեցոյ: Մարիամ յանկեան ուրեք պարապեալ ի գործ՝ անգիտանայր ո՛ւր երթեալն էիք: Այսր անդր ընթանայի, ոչ գիտելով յո՛ դիմել ՚ի խնդիր. եւ ապա առեալ զցնցոտիս ձեր մատուցի ի հոտոտելիս շնկանն. եւ նորա իմացեալ զոգոցես զմիտս իմ, սկսաւ իսկոյն հետազօտել զձեզ. եւ յուղի անկեալ, յար զձետն տատանելով, ած զիս մինչեւ ի Սեաւ գետ: Անդ ոմն ի բնակչաց պատմեաց ինձ, զի զաղախին նորա փախստական առ նա ինքն դարձուցեալ է ձեր, եւ նորա ի շնորհս ձեր, ներեալ աղախնոյն. այլ ներումն որպիսի՛. եցոյց ինձ զեղկելին ոտնակապեալ ի կոճեղս, եւ անուր երեքժամի ի պարանոցին: Անտի շնիկն, անբաղար ի հետազօտելոյ, ած զիս ի լեառն՝ որ առ Սեաւ գետով, եւ զկայ առեալ անդ, հաջէր ուժգին առ միով յարմաւենեաց որ տապալեալ կայր, եւ ծխէին խանձողք առ նովաւ. ապա առաջնորդեաց ինձ այսր ի ստորոտ Եռաստին լերինս, ոչ ինչ հեռի ի բնակութենէս մերմէ քան զչորս փարսախս: Եւ եղեալ առաջի նոցա քաքար եւ միրգս, եւ հադաղակ լի օշարակաւ, զոր մարց նոցա պատրաստեալ էր, զինի շաքար կիտրոն եւ ընկոյզ հնդիկ ջրախառնեալ, կազդուրել զնոսա եւ զովացուցանել, ասէ. Կերայք, արբէք, զօրացարուք: Վիրգինիա ընդ յիշատակ հէք աղախնոյն եւ տառապանաց մարցն իւրեանց յոգւոց եհան, եւ կրկնէր եւ երեքկնէր. Ո՛հ, քանի՛ դժուարին է բարերարել: Եւ մինչդեռ նոքա ճաշակէին, հուր ելոյց Դոմինիկ, եւ խնդրեալ ի ժայռս անդ բեւեկն՝ որոյ դալար իսկ ոստք վառին բոցածաւալ, արար ջահ ի լոյս, քանզի դիչեր էր: Այլ իբրեւ յուղի անկան, մեծ եւս տագնապ տարակուսի հասանէր նմա վասն ոչ եւս կարելոյ մտնկանցն հետեւակել, զի ուռուցեալ էին ոտք նոցա եւ կարմրացեալ: Ձիւնչ առնել էր նմա. ելանել ի խնդիր օգնակաւութեան, թէ անդ ընդ նոսա կալ զգիչերն զայն. եւ ասէր. Ո՞

տայր ինձ զաւուրս՝ յորս ի միասին զձեզ ի գիրկս տանէի. այլ արդ  
 դուք ի տիս եղեալ, եւ ես ծերացեալ եմ: Եւ մինչդեռ ի վարանան  
 կայր, գունդ լեռնաբնակ հնդկաց անցանէր ի բացէ իբր քայլս քը-  
 սան, եւ սարագլուխ նոցին մատուցեալ առ մանկունսն ասէ. Ազ-  
 նիւ սպիտակիկիք, մի երկնչիք, տեսաք մեք զձեզ յառաւօտուս մինչ  
 անցանէիքդ ընդ կնոջ ումեմն սեւազետացոյ՝ խնդրել նմա չնորհս  
 ի ժանտ տեսանէն. եւ մեք արդ, փոխանակ բարերարութեանդ  
 ձերոյ, բարձեալ տարցուք զձեզ ի տուն ձեր: Եւ յակնարկել նորա  
 առ հնդիկան, չորք ոմանք ի կորովեաց կազմեցին դահաւորակ յոս-  
 տոց ծառոց, եւ նստուցեալ ի վերայ զմանկունսն՝ բարձին յուս  
 իւրեանց. եւ Դոմինիկեայ ջահ ի ձեռին առաջնորդեալ նոցա, գնա-  
 յին ի ձայն ցընծութեան՝ հնդկացն առ հասարակ կարգալով նոցա  
 օրհնութիւնս: Յայնժամ Վիրգինիա փձղկեալ սրտիւ ասէ ցՊօղ.  
 Տեսանե՞ս եղբայր իմ, զի ոչ թողու Տէր անվարձ զգործս բարիս:  
 Ի մէջ գիշերի հասին ի ստորոս բնակութեան իւրեանց, ուր ի կա-  
 տար լերինն խիտ առ խիտ վառէին խարոյկք. եւ ի դիմել նոցա ընդ  
 զառ ի վերն, լուան զբարբառ մարցն իւրեանց՝ որ ասէին. Դո՞ւք էք,  
 որդեակք մեր: Եւ ետուն հնդկօքն հանդերձ պատասխանի. Այո, մեք  
 խկ եմք: Եւ ահա տեսին զնոսս եւ զՄարիամ (զաղախին տանն) զի  
 ջահիւք ընդ առաջ գային. եւ տիկինն լաղուր (մայրն Վիրգինեայ)  
 ասէ. Որդեակք չարաբաստիկք, ուստի՞ գայք. ո՛հ, յորպիսի՜ տառա-  
 պանս արկէք զմեզ: Պատասխանի ետ Վիրգինիա եւ ասէ. Ի Սեաւ  
 դետոյ դամք. ընկալաք անդ ներուամ աղախնոյ ումեմն փախստէի ի  
 տեսանէ իւրմէ. նմա եւ զնախաճաշիկ մեր տուեալ էր առաւօտին,  
 զի մեռանէր հէքն սովալուկ. նմին իրի հնդիկք լեռնաբնակք բարձ-  
 եալ բերին զմեզ: Յայնժամ տիկինն լաղուր գիրկս արկեալ դքստերն,  
 եւ չկարէր բարբառել. խկ Վիրգինիա ի թանալ մայրենի արտաս-  
 ուացն զղէմս իւր, ասէ. Փոխարինես դու ինձ, մայրիկ, զամենայն  
 փշտս իմ զոր կրեցի: Եւ Մարգարիա (մայրն Պօղայ) զմայլեալ  
 խնդութեամբ, փարեալ զորդեական՝ ասէր. Եւ դու, որդեակ իմ,  
 առաքինացար եւ դու: Եւ հասեալ ի տուն որդւովքն հանդերձ,  
 ետուն ճաշ հնդկացն. որք ապա ի դառնալն իւրեանց՝ մաղթէին  
 նոցա զամենայն յաջողութիւն:

### Ի ՍԿՐՏՈՒԹԻՒՆ ԹՈՒՆԵԿԻՆ

ՀԱՒՆ ԱՌ ՄԱՆԿԻԿՆ

Դուժ, Բարբարոս	Որդան կարմիր, (Կերճ)
Արուսեակ, Էլիսա Դիւսայ	Ջաւուկ, (Ճարլ)

Շնորհաց Հոգւոյն երկն ամբիժ,  
 Թոռնեակ քաղցրիկ, ասա ինձ,  
 Հի՞մ իբր յախտէ մահառիթ՝  
 Ի զբզուանաց քո հաւիդ  
 Շըրջես խոժոռ զդէմս ի բաց  
 Ըզտարփալին հրեշտակաց:  
 Զի՞ հեկեկես շընչատապառ,  
 Յողուց հանես անդադար.  
 Շողջողելով շըրջատփիւ  
 Ըզթերաբաց բըբացդ հիւ:  
 Ո՛հ, զի է քեզ վըշտակիր  
 Բնութեանն ազլման նախկին ձիր.  
 Եւ նախընծոյ հոգւոյդ շարժ  
 Ընկձէ զմարմնոյդ ջիւս անվարժ:  
 Քեզ վերընկալ լինիմ արդ  
 Յաւազանէն լուսազարդ,  
 Առնել զըստրիկ գեղանի  
 Ըզքեզ հրեշտակ արփենի:  
 Զի՞ զդա սլըրկես, ո՛ դայեակ,  
 Իբր յանցաւոր անազգակ.  
 Դէ՛պք յեղակարծ, ո՛ ապուշ,  
 Է՞ր ծածկես զունին ըզքընքուշ:  
 Դու աւաղիկ մայրդ անգութ,  
 Եւ կամ վարձկան դու ըստընտուդ,  
 Չիցե՞ս արդեօք յուեգոյն  
 Քան զհոյս Սրաք կանանոյն,  
 Եւ քան ըզդուժ Սինուհին,  
 Որ ճընէ զտան որդեկին,

կամ որ ի դրոշմ եւ ի տառ  
 ներկէ զնորին մորթ դաւար:  
 Ոչ խընդրէ քաղցր իմ թոռենակ  
 Օղ գեղափայլ եւ մանեակ .  
 Են ծոց եւ ծնօտք իւր մատաղ  
 Որդան կարմիր եւ չըքնաղ:

Թերի այլ ինչ գեղոյդ չիք,  
 Ո՛հ հրաշագեղ իմ դըստորիկ .  
 Վեզ գիրկս ածել սըրբազանն  
 Ահա սպասէ աւազան:  
 Եկ ի բաղուկս իմ աղէ,  
 Դիմել քեզ այսր ի ճահ է:  
 Եւ զի՞ է քեզ, երկընչի՞ս  
 Թանալ ի ցուրտ ի յալիս,  
 Թերեւս ի քոյդ անձկութիւն  
 Դոքա եւ ե՛ւս յաւելուն:  
 Եւ զմաքրափայլ կըստաւիտդ  
 Ընդէ՛ր քըրքրես անհանգիստ .  
 Մի՛ զսուրբ խորհուրդն անպատիւ  
 Առնես անաստ քո ճըչիւ:

Թէ յորրանոց քեզ այժմէն  
 Հեստել կրօնից կամք իցեն,  
 Եւ ընդ ըմբոստ ունել դաս  
 Արուսեկին աղախնայս:

Արդ տղէ լեր, լեր դու զգօն  
 Նախահօր քում լուր ինձ ծն .  
 Ընդէ՛ր փակես, աղէ բաց  
 Ըզքոյին սեաւ բիրս աչաց:  
 Այլ, ո՛հ, անլուր դու խրատուս  
 Ջատուկդ ի ճիչ յաւելուս .  
 Յորրանս սպա առ մայրիկդ  
 Աճեմ ըզքեզ աւաղիկ:  
 Ի մայրենին անդ համբոյր  
 Եւ ի միակ գրգուռում իւր,  
 Լիցիս հըլու եւ խոնարհ,  
 Ընկճեալ ըզքոյդ արհամարհ,

Շընչեալ զեփրու հեղասիք  
 Հանդարտեսցէ զքոյդ մըրրիկ .  
 Դարձայց յայնժամ անձկապէս  
 Գըզուել ի գիրկս իմ ըզքեզ:

ՀԵՐՈՆԻՄՈՍ ՈՐԹԻ  
 (Թարգ. Հ. Ս. Հիւրմիւզ)



Հանգրուան , հանգրուան  
 Բոֆոյ , Հեթի ընկալի  
 Ջարխոս , (պարտք քորա) խոր  
 Սեղն , հեւ սոր  
 Շահոգրաւ , (քորանջիւ) ծաղի  
 Դարապղպեղ , (պահ պիտեւ)  
 Պասից , կեղ (արտեաց)  
 Այիֆ , զբարեբան  
 Ապրասամ , բաւանի բայս  
 Լիւն , Արեֆիան պարտքի բայս  
 Մայրաձաւալ , ընտրածս

ձայել , դեռի՛ն հոգս  
 Յին , (շալի)  
 Պեկալ , Պեկալի իւրան հե  
 Միրանահաւ , Կարդենալ իւրան  
 Պապկայ , իւրան  
 Լասանի , դեռի՛ն հոգս  
 Նախնիք , արեֆիան  
 Հասեսայ , իւրեղեն  
 Մանկ , հանգիլի պարտք  
 Անան , Հեթից դեռի՛ն հոգս  
 Փսիպ , (խոր)

Բայց քան զամենայն վայրս շրջապատիս սիրելի էր անուանեալն  
 Հանգրուան վիրգիլեայ : Ի ստորոտ ժայռին , որ կոչէրն Դիտարան  
 սիրոյ , է խոռոչ՝ ուստի աղբիւր բզիսեալ յօրինէ ի մարգագետնի  
 անդ աւազան : Ի ծնանել Պօղայ՝ ետու մօր նորա ի նուէր քըքոյ  
 մի հնդիկ , պարգեւեալ ինձ յայմէ . եւ տնկեաց նա զայն յեզր աւազանին , զի որ անտի բուսեալն ծառ՝ ցուցցէ զտիս որդեկին :  
 Ըստ նմին օրինակի տնկեաց անդ եւ Լազուր տիկին միւս այլ՝ նո՞վին խորհրդով ի ծնանել վիրգիլեայ : Յերկոցունց մրգաց աստի բուսան քըքենիք կրկին ի դիւանազիր ազգաբանութեան երկոցունց տոհմիցն . մի ի ծառոց անտի կոչէր յանուն Պօղայ , իսկ միւսըն վիրգիլեայ , եւ ըստ աճել տղայոց տերանցն իւրեանց՝ աճէին եւ նոքա խուռ ինչ ընդհատք ի միմեանց բարձրութեամբ : Այլյետ ամաց երկոտասանից ելին բարձրացան քան զհիւզս , եւ ուղէք նոցա խառնեալ ընդ միմեանս՝ օղկոյք քըքոյից երախայրիք զաւազանաւ աղբերն կախէին : Բաց ի ծառոց աստի չէր ինչ յաւելեալ ի ծոց անդր ժայռին , թողեալ զայն ինքնազարդ՝ որպէս էրն ի բնէ , ուր զխոնաւուս եւ թխատիպ կողիւքն փայլէին աստեղածեւ ձարխտաք լայնատերեւք կանաչ եւ սեւ , եւ ստեղունք ցողկենուց սա-

ղարթաւորք կախեալ ընդ օդս հողմաշարժ ծածանէին հանդոյն ծիրաներին կանաչագեղ նարտից: Մերձ առ տեղեաւն անէին կուսածաղիկք կարմրորակ՝ ոչ աննմանք շահողբամի, եւ դարապղպեղք որոց պատիճք արեւներանգ փայլեն քան զբուստ: Ի հոտ անոյշ բուրեյր զվայրօքն սրտածեւ ի տերեւս ավրասամ, բուրեյր ռահան մեխակահոտ: Լիանք ի բարձուէ լերինն կերպասածեւ անկեալ ՚ի կախ տատանէին, սրահակս դալարագեղ զկողիւք ժայռիցն ծայրածաւալ յօրինելով: Հաւք ծովայինք ի խաղաղաւէտ վայրաց հրաւիրեալք, գային այսր երեկօթեւ, եւ էր տեսանել ընդ երեկս ճախր առեալ զծովօտիամբք զճայեկն եւ զարտուտ, զբարձրաթուիչ ցին սեւափետուր, եւ զհաւն սպիտակ յեղոյեղակային, որք ընդ օրակշիռ աստեղն յանապատից հնդկին Ովկիանու խոյս տուեալ դային: Սիրելի էր վիրգիւնեայ հանգչել անդ առ աղբերքն, որ վայրենի զարդուքն շքեղազարդէր: Անդր ընդ հովանեաւ քոքենեացն գնայր յաճախ լուանալ զկտաւիս իւրեանց, եւ մերթ եւս զայժեւրամակն անէր արածել անդ. եւ ի գործել ի կաթանէ նոցին պանիր՝ գրօնայր ի գնին ճարակելոյ նոցա զճարխոտ, զի վերամբարձք ընդ օդս կային զսեպագեալ կողիւք ժայռին, յեցեալք ի մի ի քուռոց նորին իբր ի խարսիս: Տեսեալ պատանւոյն զի հաճոյ էր վայրն այն վիրգիւնեայ, ան անդր հոյլս ազգի ազգի թռչնոց ի շրջակայ անտառաց, եւ հարք եւ մարք նոցա զհետ ձագուցն եկեալ, գաղթական նոր անդ բնակեցին: Վիրգիւնիա ջամբէր նոցա երբէք երբէք որիզ եւ կորեակ եւ եգիպտահատ, եւ ընդ երեւել նորա անդ՝ սարեակք ի սոյլ, պենկալք ի դայլայլիկս, եւ ծիրանահաւք հրանշոյլ փետրովք ելեալ ի մացառաց, պտպկայք կանաչագեղք ի գոյն զմրիտոյ՝ իջեալ շուրջ ի լատանեաց, եւ կաքաւք ընդատք ի ներքուտ դալարեաց, խառն ի խուռն ի միասին հանդոյն վառեկաց առ ոտս նորա դիմէին: Իսկ ինքն ընդ Պօղայ հրճուէր ի գնին խաղուց նոցա եւ ճարակելոյ՝ եւ սիրատարի համբուրից:

Այսպէս դուք, որդեակք սիրելիք, յանմեղութեան զսկզբնաբոյս տիս ձեր անցուցիք ի բարբերարել: Քանիցս ձեզ աստ զիրկս արկեալ մարք ձեր օրհնէին զՏէր, որ ի սիրտիմանս արեաց իւրեանց զձեզ պատրաստէր, եւ բարենշան զայգ կենաց ձերոց տնօրինէր: Քանիցս աստանօր ընդ քուովք վիմացս եղէ հացակից ընդ նոսին եւ ընդ ձեզ յանպաճոյճի ճաշ, ուր չէին երբէք նախճիրք կենդանեաց: Անդ տաշտ կաթնալից, ձու այն ինչ անեալ, հաստեայք բրնձիք արկեալ ի տերեւս ոստոց պանանեաց, եւ սակառի

լի ի գետնախնձոր ի մանկ ի նարինջ ի նուռն ի պանան յարմաւ յանանաս մատուցանէին ճաշ առողջարար՝ հաճոյ ի տեսիլ եւ ախորժահամ:

Հանդոյն կոչնոցն էին եւ զրոյցք նոցա քաղցուէք եւ ամբիճք, դաւօրեայ եւ զվաղորդայն վաստակոց սովոր էր Պօղ խօսել, ՚ի պիտոյս ընտանեացն խորհելով հանապաղ. ուրեք հեշտաքայլ յարդարել զուղիս, այլուր զբազմոցս ճահաւորել, ուր չէր բաւական ծառոց հովանի, եւ յորում տեղւոյ մարթ էր վիրգիւնեայ լաւ եւս հանգչել: Յանձրեւային եղանակս կային ի միասին զօրն ի բուռն ՚ի տան տեարք եւ ծառայք պարապեալք ի հիւսել փախաթ ի սիզոյ եւ սակառիս ի հնդկի եղեգանց: Էր անդ տեսանել կարգաւ առ որմովք բահս եւ բրիչ, կային եւ մանգաղ, եւ առ կահս մշակութեան զարգասիս նոցին զարդիւնս երկրի, պարկս բրնձոյ, որայս ցորենոյ եւ լիպպտուղ ոստս պանանեաց, ընդ առատութեան եւ գեղեցկաշար: Իսկ վիրգիւնիա, ուսեալ ի մօրէն եւ ի Մարգարտայ առնէր օշարակ եւ այլ բմպելիս հիւթով կիտրոնի եւ շաքարաբուղիս եղեգան խառնեալ

Գիշերոյ ի վերայ հասեալ, բազմէին յընթրիս ի լոյս ճրագի, եւ մի ի տիկնայց պատմէր անցս ինչ զուղեւորաց մուրերլոց ի զիշերի յաւազակուտ անտառս Եւրոսլայ, կամ գնաւաց խորտակելոյ՝ վարեալ ի միրկի ի քարաժայռս անբնակ կղզեաց: Եւ ի լուր արկածիցն յուզէին գուրթք մանկանցն դիւրագործովք, եւ ինձրէին յերկնից շնորհել ինքեանց դէպս ասպնջականելոյ զոք յայնպիսեաց: Եւ ապա մեկնեալ զնային երկաքանչիւր ընտանիք հանգչել ի հիւզս իւրեանց, ըղձիւք տեսանելոյ դարձեալ միմեանս ի վաղորդայն: Էր զի շառաշիւն ուղիսից անձրեաց՝ որ անկանէին ի յարկս նոցա, եւ էր զի դարձեալ միմաւ արեաց բեկելոց զախամբք հասեալ առ նոսա ի թեւս հոլմոց, լինէին նոցա հրաւիրակք ի քուռն, եւ զհեռաւոր վտանգս այլոց անեալ զմտաւ, եւս առաւել վասն անձանց իւրեանց սպահովութեան օրհնէին զՏէր:

18  
ՄԱՅՐ ԵՒ ԴԱՏՐԻԿ

Արեգիւմ, արեւելան ի սլոն եղալ	Խաղապաշիլ, փախիւսիւ
Մարմանդ, ընթրցումի տեղ (օվա)	Ուսաբանց, ստերեի փելոցո՞
Ջառամ, շեր, հիւնցո՞	Եղերեդ, սլոք
Գարեաւոյ, զարս ի վայր տեղ	Ակնարկիլ, նայաստո՞

Մերձ յարեգդէմն յայն ի մարմանդ,  
Ուր ըզբրախտին աւանդեն վայր,  
Բազմազըւարձ էր դարեւանդ.

Եւ ի ստորոտ նորին խըրճիթ  
Հիւանեալ նոճիւք էր վաղեմի,  
Զոր շուրջ թանայր վըտակ վըճիւս:

Արտասուածոր ուռեաց կողերք  
Մինչ ի յալիս անդ վայրահակ,  
Յօրինէին լուռ եղերերդ:  
Ըզհովուական անդ երջանիկ  
Կէին կենցաղ ի միասին  
Որք եւ այրի՝ մայր եւ դստրիկ.

Ի խանդակած միսեանց ի սէր  
էր ըստփուռն երկաքանչիւր,  
Դըստերն ի մօր, մօրն ի դըստեր:  
Յաճախ զերկայն գիշերն ի բուն  
Դըստրիկն ի լուր եւ ի հարցուած  
Առաւօտէր ընդ մօրն անքուն:

Դ Ո Ւ Ս Տ Ր Ն

Ասա ինձ, մայր իմ սիրելի,  
Յառաջագոյն մինչ ես ծընայ  
Եւ ի յորրանս յորժամ էի,  
Մեր անդաստանս այս էր կալուած՝  
Որ ըզբըլրաւս ընդարձակի,  
Թէ բախտն յետոյ այս ըզմեղ ած:

Մ Ա Յ Ր Ն

Վաղ հայրենին մեր աստ էր հիւզ,  
Եւ աստանօր ընդ հոյլս եղբարց  
Մընայ ի մեղր ես եւ ի յիւզ.  
Այլ յորժամ հարսն եղէ քում հօր,  
Այլուր եղեն մեզ անդաստանք,  
Որ ոչ աստի էր հեռաւոր:  
Զարտեւանունս ապա զնորին,  
Ո՛վ յիշատակ դառնակըսկիծ,  
Մինչ կախուցի արտասուագին,

Դըստրիկ իմ, այս արարաք դարձ.  
Այս եւ զաճիւն նորին անաք,  
Հանգուցանել ի շիրիմս հարց:  
Յօրմէ հետէ զնա աշխարեմ,  
Ամբ են տասնեակ, ծածկէ՛ զշիրմին  
Նորա զառամ բաղեզն ըզվէմ:  
Վիշաք ըզվըշտաց հասին ըզհետ,  
Որպէս ալիք մըղեն զալիս  
Կոճեալ ի ծով մըրըրկաւետ:

Դ Ո Ւ Ս Տ Ր Ն

էր ինձ, գիտեմ, եղբայր մանկիկ  
Քեզ սիրելի հաւասար ինձ՝  
Զոր կորուսի վաղամեռիկ.  
Այլ արդեօք նա էր միայնակ  
Ինձ հարազատ սիրակըցորդ,  
Թէ քեզ եւ այլ գոյին որդեակք:

Մ Ա Յ Ր Ն

Ո՛հ, մի դու զսիրտ իմ կարեվէր,  
Դըստրիկ իմ, մի աղիողորմ  
Դարձեալ հարցնամբդ այդ կեղեքեր...:

Դ Ո Ւ Ս Տ Ր Ն

Զի՞ լաս, մայրիկ իմ, դու զի՞ լաս.  
Մի եւս լըռեր, սիրտ իմ ճըմիլի  
Ընդ լըռութիւն քս ընդ անհաս:  
Եւ ընդէ՛ր աչք քս կողկողին  
Ի համր ի կոճըղ ձիթ ենւոյդ.  
Ասա ինձ, մայր, ըզվիշտ քոյին:

Մ Ա Յ Ր Ն

Զիք ի յէից համր եւ անխօս  
Առ սիրտ թաղճեալ, դուստր իմ եւ դետք  
Թըլին նըմա արտօսարհաս:  
Ինձ ամայի եւ անբընակ  
Յամաց հետէ թըլին ի սոպառ  
Շէնս այս եւ վայրք առ հասարակ:  
Մինչ աստ երբեմն ես ձեմէի,  
Մանկուք զինեւ շուրջ սրարէին

Խաղապատեալ յիս մի առ մի .

Եւ մայրակոչք ինձ լինէին ,  
Խանդաղատեալ զունկն իմ ի լուր ,  
Որպէս բարբառ շըրթանց քոյին :

ԴՈՒՍՏՐՆ

Ուրեմն եւ այլք ինձ հարազատ  
Քորք սիրուհիք եւ այլ եղբարք  
էին, աւա՛ղ, միոյն ի զատ :

ՄԱՅՐՆ

Արդ միայնակ դու ինձ մնացեր,  
Եւ ստաքանց եղէ ես ծառ ,  
Թողեալ յերկր յողբ եւ յեղեր :

Եւ լըռեցին երկաքանչիւր .  
Այլ ակնարկիք նոցին յիրեարս  
Կողկողագինք ոչ կային լուռ .

Աղիողորմ նոցայն էր սուգ ,  
Չանկարեկիր գեւուին սիրտ  
Աչաց նոցա յորդ արտասուք :

Հ. Ծ. Հիւրմիւզեան



Իմաստախրական , Գրքապահ , Կնէրու , Լպիրձ ,

Ընդ Բիրսն գալ , Թալուկ , Յեղեղումն , Յղիւրքիւն ,

Մանկանցն երկոցունց ոչ ժամացոյցք էին, ոչ տունարք, ոչ ժամանակագրութիւնք, եւ ոչ պատմական եւ ինաստասիրական մատեանք, այլ պարագայք կենաց նոցա բնութեանն կարգօք չափէին . զժամս տուրնջեան ի ստուերաց ծառոց ճանաչէին, զեղանակս տարւոյ ի ծաղկանց եւ ի սողոց, եւ զամս ի հնձոց եւ ի կթոց : Աստի եւ ատորժ պարբանութիւնք յաւելուին զեղեցիութիւն յոյժ ի խոսս նոցա . այսպէս Վիրգիլիս առ իւրան ասէր . Ժամ է արդ ճաշոյ , զի ստուերք՝ պանանեաց կարճեալ ամիրոյնն առ արմին իւրեանց : Մերձենայ գիշեր, զի զտերեւս իւրեանց կձկեն դամանիք : Եւ ի հարցանել ուրուք ի դրացեաց թէ երբ գայցէ յայց, պատասխանէր .

Ի կութս քաղցրիկ շաքարեղեգանց : Իսկ օրիորդքն կրկնէին . Եւ քան զայնոսիկ քաղցր եւ սիրելի մեզ գալուստ քոյին : Եւ ի հարցանել ուրուք զտիս Պօղոյ կամ զնորայն, պատասխանէր . Հասակակից քո քենույդ մեծի՛ որ զաղբերդ կայ է եղբայրն իմ, իսկ ես փոքրկանն . եւ կրկին վեցեակ կութք են մանկենեաց, եւ քառիցս վեց փթիթք նարնջեաց յորմէ հետէ ես գալ եկի՛ ի լոյս : Եւ կեանք նոցա, զողջես իմն որպէս Փաւոնայցն եւ Դրիադից յաւերժհարսանց, ի ծառս անդ հաստատեալ էին . ոչ գիտէին այլ ինչ թուական բայց զմայրենի կենացն, ոչ ժամանակագրութիւնն այլ՝ բայց ըզձեռատնկոց իւրեանց, եւ ոչ այլ ինչ խնամասիրութիւնն՝ բայց բարերարել ամենեցուն, եւ կամայն Աստուծոյ հպատակել :

Ըստ այսմ օրինակի աճէին մանկունքն երկուքին դայեկեալք ի բնութենէ, ոչ կնճիւռն երբէք ի ճակատս նոցա անկեալ ի հոգոց, ոչ յլիութեան զարիւն նոցա ապականեալ, եւ ոչ սիրտ նոցա յախտից զառածեալ, սէր անմեղութիւն եւ բարեպաշտութիւն յաւելուին օր ըստ օրէ անճառահրաշ շնորհս ի գեղեցիութիւն հոգւոյ նոցա եւ դիմաց եւ զնացից եւ շարժուածոց : Ի սկզբնաբոյս հասակին զառողջութիւն տիոց լի բովանդակ յանձին բերէին, որպէս անդ ուրեմն յեղեմական դրախտին նախածնօղքն մեր այն ինչ յարարչական ձեռաց ի լոյս ածեալ, ակնարկեալ ի միմեանս, մատուցեալ առ միմեանս, եւ որպէս քոյր ընդ եղբօր խօսակից լեալ : Վիրգիլիս հանգոյն նախամօրն քաղցր համեստ եւ ընդել . իսկ Պօղ ի տիպ նախահօրն ընդ առնածեւ հասակին զպարզմտութիւն մանկականի տիոց կցորդեալ :

Պատմէր ինձ Պօղ, զի ի դառնալ իւրում երբեմն ի վաստակոց՝ խօսէին ընդ Վիրգիլեայ առանձինն, եւ ասէր ցնա . Տեսիլքո հանգիստ է վաստակելումն . յորժամ ի բարձուէ ակնարկեմ ի քեզ ի խորս հովտիս, վարդ դեռակիթիթ երեւիս դու ինձ ի ծառաստանի : Ի հիւզ մայրենի թէ դիմեալ գնաս, կերպ քո դեղանի քան զկաքաւոյ՝ որ առ ճագս իւր գայ գեղեցիկաճեմ, եւ թեթեւընթաց իսկ քան զնորայն են ընթացք քոյին : Թէ ի մէջ ծառոց զօղեալ ծածկիցիս, ոչ ինչ է ինձ հարկ տեսանել զքեզ առ ի գիւտ քոյին . թուլուս ինչ զքո անթարգմանելի ընդ հետս ուղւոյդ՝ ընդ որ անցանես, եւ ի դալարւոջ՝ ուր բազմեալ հանգչիս : Թէ մատչիմ առ քեզ, յախտակես զիս, քան զկապուտակն երկնից գեղեցիկ են աչկունք քոյին, ճայնք քո քաղցրաւոր քան զպենկալաց, եւ ծագիւ մատին թէ ի քեզ հպիմ, կայտիւք ցնծութեան զոսկերօքս գան : Յիշեա զօրն զայն,

յորում ընդ լավրժ քարուտս գետոյ Եռաստին լերին անցաք երկուքին . զի յեզր գետոյն հասի սարաստեալ, այլ իբրեւ բարձի գլեզ ըստ անձին՝ թուէր ինձ առնուլ թեւս ի տիւղ թռչնոյ: Այլէ դու ասա, որո՞վ հմայիւք զիս կախարդեցեր. եթէ հանձարով, սակայն մարց մերոց քան զիմ եւ զքոյդ յաւելու հանձար. եթէ գգուանօք, այլ յաճախագոյն եւս քան զքեզ գգուեն նոքա զիս: Բարութիւն սրտի քո անշուշտ է այն՝ որ զիս կախարդէ. լիցի ինձ յիշել միշտ զայն անմուռաց իբր դու բոկոտն ուղեւորեցար մինչեւ ի Սեաւ գետ, խնդրել թողութիւն վասն փախստեայ թշուառ աղախնոյն: Քոյր իմ, առ ընկալ զձաղկաթիթ ոստս կիտրոնի՝ զոր առ քեզ բերեմ հատեալ յանտաւէ, զի՛ր զայդ առ մահձօք քովք ի գիշերի, զխորիս մեղու՝ զոր բարձր ի վիմէն առի վասն քո՝ կեր զդա այլ նա՛մ հանգիւր ի գիրկս իմ, զի քեւ զօրացայց:

Իսկ Վիրգիլիս զայս պատասխանէր. Ոչ այնպէս արեւ ի բարձանց ժայռից, եղբայր իմ, ընդ այգն ածէ ինձ բերկրանս՝ որպէս քոյդ տեսիլ: Սիրեմ յոյժ զիմ մայր, սիրեմ եւ զքոյդ. այլ եւս առաւել սիրեմ զնոսա յորժամ սրդեկոչ լինին նոքա քեզ. թէ գգուեն զքեզ, առաւել զգամ քան թէ ես ինձէն գգուեալ ի նոցունց: Խնդրես զվասնէր սիրոյ քո առ իս. այլ ո՞չ զիտիցես զի անդակիցք սիրեն զվիտեանս, տես զի եւ թռչունքս մեր համասունք ինմին բունկան՝ են իբրեւ զմեզ սիրելիք միտեանց, լուր իբր առ իրեարս ծառ ի ծառոյ ձայն տան եւ կրկնեն. հանգոյն իմն եւ ես, յորժամ արձագանգ զերգս սրնդի քո ածեն առ իս ի բարձուէ լերին, զնոցին անդրէն կրկնեմ զբարբառ ի խորս հովտիս: Սիրելի դու ինձ, եւ առաւել յոյժ յորմէ հետէ մարտ ընդ տեառն գերեոյն կամէիր վասն իմ տալ անդ ի Սեաւ գետ. զի այնուհետեւ ասեմ ցիս ստէսլ. Ո՛հ զի այսպիսում թէ չէր իմ եղբոր բարեոյ վիճակեալ, վաղ իսկ յերկիւղէ ի մահ մատնէի: Ազօթեմ առ Տէր վասն մօր իմոյ, եւ վասն քոյունդ հանապազօր, եւ սպասաւորաց մերոց եղիլեաց, այլ յորժամ զքեզ յազօթս իմ յիշեմ, թուի յաւելուլ եռանդն ի յիս. բոլորով սրտիւ խնդրեմ ի Տեառնէ պահպանել զքեզ յամենայն չարէ: Եւ ընդէ՛ր գնաս դու այդչափ հեռի եւ ի բարձրաբերձ վայրս ի քաղել միրգս ինձ եւ ծաղկունս. չիցեն իսկ մեզ աստ հերիք ի դրախտիս. տես իբր աշխատեալ եւ ընդ քիրան գաս: Եւ զայս ասելով՝ սրբէր զգէմն նորա եւ զձակատ սպիտակ թաշկինակաւն, եւ համարէր զնա ստէսլ:

Այլ յաւուրց հետէ զգայր Վիրգիլիս յանձին այլայլութիւն իմն

անձանօթ. ի գեղ կապուտակ աչաց նորա բիծք իբր ի մարմարիոնի թխատիպք երեւէին. դէմք նորա գեղնեալ, եւ թալուկ զբոլոր անձամբն գայր. ոչ եւս ի ձակատուն միահարթ պարզութիւն, եւ ոչ ժպիտ ի չրթունան երեւէր մերթ զուարթանայր առանց ուրախութեան, եւ մերթ տխրէր առանց ինչ վշտաց: Խոյս տայր յիւրոց անմեղաբար խաղուցն, եւ ի զուարճալի վաստակոց, եւ յերեսաց ընտանեացն սիրելեաց. չրջէր միայն առանձին ի վայրս ամայիս շուրջ գրեակութեամբն, խնդրէր հանգիստ, եւ ոչ ուրեք դտանէր: Ի տեսանելն զՊօղ էր զի գիմէր սու նա խայտալով, եւ էր զի ի մօտեն սու նա՝ խոովէր յանկարծ, դէմք իւր գունատեալք կարմրէին հրափայլ, եւ չիչխէր հայել համարձակ յաչս նորա: Իսկ Պօղ առ ի տիտիւլ զնա, ասէր. Քոյր իմ, սքնին գալարագեղ ժայռք շուրջանակի, թռչունք մեր երգեն ի տեսիլ քոյին, եւ ամենայն ինչ զուարթ է զքեւ, դու միայն տխուր: Եւ զայս ասացեալ՝ զիրկս արկանէր զնովաւ. այլ նորա չրջեալ գերեսս ի բաց, եւ զքոյրանի հարեալ, առ մայր իւր խուսէր. զի ի գգուանաց պատանւոյն յառնէր աղմուկի սրտի հէք օրիորդին. իսկ պատանին չկարէր հասու լինել նորանչան յեղյեղմանցն:

19

ԿԵՆՅԱԼ ՄՇԱԿԱՑ

Շուկ, վայելչութեան	Կիցոց, (Կեփփ)
Հասկաբուռ, հասկերով և	Բաղակաձեւ, բաղիկ նման
Ոն, ցորենին ցողանել	Խաժ, կոպոյր
Վալիանակ, հասունացած (ցորեն)	Տարդիկ, լեռնային Բուլան
Կամն, (հարման)	Երախան, բաղնիքի, ժողով
Կասուլ, հիւսել	Խէչ, նեցուկ (բայանագ)
Առուամէլ, ջրանց	Կայրս հաղակնել, պարել, ցարիւլ
Յօսոց, յարմարեալ՝ հեղիւրելու քորձիք	Գարնադարձ, զիւր ցարիւլ
Սծ, (ֆիթան, ֆիլիլ)	Սարի, այն քայրէ՛ որոյ վրայ քործասած
Յակիթ, կայայր (եագսուլ) քար	Կրտուց կէ քաթիկն (սալիկ)
Երիկց, փռացած հորթ	Որոնել, քորել
Խազմուլ, նոր փիփ (լեբա)	Սեպ, քործայր քայր (լեւի)

Չեւ դառնաչունչ աշնայնոյն բուք  
 Ըզպտղաբեր ծառաստանաց  
 Կապտեալ ի բաց վարսագեղ շուք,  
 Զրգեալ հուժկու ի յերբնջոց



Տաժանաւոր ահօս ի խոր ,  
 Հաւատարիմ երկրին ի ծոց  
 Ըզսերմն ատոք տային յաւանդ ,  
 Ըզհանդերձեալ ամին պարէն  
 Հընձոցն ի յոյս ամբարեալ անդ :  
 Նախ պարարէր ըզնա անձրեւ ,  
 Եւ գիշերոյ եղեամբն ցուրտ  
 Հալեալ ի տուէ ի ջերմն արեւ .  
 Ապա սպիտակ ձրմեռն ի ձիւն  
 Վերանըստեալ ի յարտորայն ,  
 Պատրաստէր զայն բիւրաբեղուն :  
 Իսկ այլ երկիրն , յորժամ գեփիւռ  
 Կակղէր ըզկոշտ ի գարնայնի ,  
 Արօրադիր յայնժամ առնիւր :  
 Հեծէր արջառն արօրաձիգ ,  
 Յըզկեալ փայլէր խոփն ի յակօս ,  
 Աւանդէին անդ սերմանիք :  
 Ապա ցորեանն ի հասկաթուռ  
 Կանգնէր ի յոճ դալարագեղ ,  
 Եւ հատն ի հիւթ կաթին ուռնոյր :  
 Մինչ յոսկեփունջ ապա ի հունձ  
 Ծածկեալ երկիրըն ծածանէր՝  
 Յայտեալ արիւոյն ցոլք ըզնոցունց ,  
 Արկեալ մանկափն զայն ի մանդալ ,  
 Եեղջեր հանդէպ միջօրէի  
 Զորայն ի գիրկ կապեալ չըքնալ :  
 Ի վայր ապա ի յընդարձակ  
 Սըփռեալ ըզչեղջըս բարդ ի բարդ ,  
 Կասոյր ըզհասկըն վահանակ :  
 Եւ մինչ ըզկամն ի կալորայն  
 Ի դարձադարձ բազմահոլով  
 Առոյգ ի շուրջ ածէր ձիւն ,  
 Ճուրջէր անիւն ի գալն ի գիւլ ,  
 Պարէր սղայոց հոյլ ի սայլին ,  
 Հասկահասուն ի ձեռին ծիլ :  
 Զողբարձիկ շուրջ այգեստանք

Զարտորէիւքն եւ յառուամէջս  
 Կանաչագեղ գործէին ցանկ :  
 Եւ մշակին ի թեք յատոց  
 Հատեալ նուածէր այգեստանոյն  
 Բազմաշըռայլ աճուամն ուռոց :  
 Աստ ըզճապուկ ուռն ընդ երկրաւ  
 Թաղէր մշակն , եւ խիտ առ խիտ  
 Տընկադործէր ածս ընտրանաւ .  
 Անդ ըզմատաղ որթս ի կընձնիս  
 Ի սկզբնաբոյս տիոցն հիւսեալ ,  
 Յենոյր ի խէչս անդ յերկձըղիս ,  
 Եւ յամբառնալ կընձնոյն ի վեր ,  
 Յեցեալն ի նմա որթ ընդ նըմին  
 Սողէր ի ծայր անդր հասանէր :  
 Ապա ի բլուրս անդ արեգվեր  
 Եւ ի մարմանդս այգեստանեսոյս  
 Մինչ յակընթեայ ողկոյզն եփէր ,  
 Մըշակք ի կութս ի հընձանին ,  
 Պըսակաւորք յուռոց ըզկայթ  
 Կարմիր սոխեքն հարկանէին :  
 Հընչէր երգոց հովիտն ի ծայն ,  
 Եւ արձագանդ շուրջ ի լերանց  
 Փոխանակաւ կըրկնէին զայն :  
 Փըրփրէր խազմուզն ի սըրուակին ,  
 Եւ ծաղկահամ ի յօշարակ  
 Լըցեալ թակոյկըն գեղուին :  
 Բայց յարտորէս անդ միշտ մըշակք  
 Եւ աստ հովիւք ի դալարիս  
 Պարապէին յիւրեանց վաստակ ,  
 Հարսուէքն ի վրանս անդ նոցին ժիրք ,  
 Իբր ընդ իրեարս քորք սիրուհիք ,  
 Կային գրաղեալ յերկս անձանձիրք :  
 Ճարտար սանտերք ոմն ընդ առէչ  
 Նուրք կըտաւոյն , առ ստորեաւ  
 Բազմեալ , գործէր յար ելեւէջ :  
 Զերկայն վաստակն ի նուագս երգոց  
 Միւսն ըսփոփէր մեղմ ի մըրմուռնջ ,

Զիւրն յերթեւեկ արկեալ ի կըկոց:

Այլ ոմն ըզգառն արկեալ ի յեփ,

Բոց ի ներքոյ արծարծանէր,

Շերտս ի մայրոյ հերձեալ ի սեպ:

Ի յորձնեռանդ սանին յալեաց

Ասնոյր այլ ոմն տերեւովք

Ըզճենճերոտ փըրփուրն ի բաց:

Այլ ոք յալեաց լըճին ի ճաշ

Բաւղակածեւ ցանցիւք վարմէր

Ըզկարմրախայտ ձուկն եւ ըզխած:

Կէսք միրգս յոստոց քաղէին թարմ,

Այլ ոք կաքաւս առ ի խորտիկ

Յիւր ի լարեալն սրոնէր վարմ,

Եւ ըզգըտեալն ի նմա սրտիկ

Այլք ի դալար շամիրեալ յուղէ՛

Ճենճերէին ի բոց յուշիկ:

Շուրջ ըզջրարբի արմառ ուսեաց

Հանդերձէր ճաշն, ուր հովանի

Նոցին սըփուէր լայնատարած:

Կարկաշահոս ընդ գաս ի վայր

Բըլրոյն վըտակ ականակիտ

Ընդ վէմս ողորկս իջանէր գայր:

Թըռչունք ի թուփս անդ երգեցիկք,

Եւ մացառուս ի յանտառին

Ճըճուէր ճընճղուկըն ծիծեռնիկ:

Հընչէր տատրակ քաղցր ի մընչիւն,

Չայնէր տորդիկն անդ ի կընճիտ,

Ճարնչէր ճըպուռն անխանջ յերգոյն:

Շուրջ ընդ ստիւք նոցա ի գլըր

Գնային անկեալ ընդ դալարիս


Ծիրան եւ դեղձ տանձ եւ շըլր:

Անդ ամենայն ինչ զախորժակ

Երախանին արծարծանէր

Յորդորագոյն առ ի ճաշակ:

Հ. Ե. Հիւրժիւզեան



Կելո ի գագարան կալ, շէշէրտի գլխան  
 Գեղ դալար, — — — — — [վրայ կենալ  
 Սղոխ, շահէ, շփի  
 Շառագոյն, քոյ կարփը գոնալ  
 Ծիր, շըշտի, հրեզն  
 Եմակ, ծախ, շոտ րեղ  
 Մղձկուս, խոլոսի

Ի կողմն լինել, ընդամենէլ (եան գալ)  
 Ի յունակի, լուսն եղած արեւ  
 Թողաճալ, խոլու, սոխալու գլլու  
 Սերկեան, յոսոսան օրս  
 Վարսել, գեղեղ րիկել, խոլել  
 Աղամոզ, շէշի, խառն է խառն  
 Լիւ արկանել, — — — — — լեցանել

Ամառն տօթակէզ, որ երբէք երբէք առչորէ զմիջասահմանս երկուց  
 յեղյեղակաց, եհաս եւ այսր հրդեհէլ գերկիր: Ի վերջիցս դեկ-  
 տեմբերի, յորժամ արեգակն հասեալ յայժեղջիւր՝ կշիւ զգագա-  
 թամբ կայ կղզւոյս Գաղղիոյ՝ հրակիւղեւով զսա եօթնեակս երիս,  
 դադարեաց ի սպառ հողմն հարաւոյ՝ որ զամս ողջոյն չնչ աս-  
 տանօր, եւ ամպրոպք փոշոյ երկայն ընդ ուղիս ի վեր միրկեալ՝ ընդ  
 օդս կային. ամենայն ուրեք հերձուտէր երկիր, այրէր դեղ դալար.  
 Ի կողից լերանց սըլիք ջերաջերմք վերածխէին, եւ ուղիք ի նո-  
 սա գրեթէ ի սպառ էին ցամաքեալ: Ոչ եւս ընդ ծով ամալ ինչ ե-  
 րեւէր, բայց միայն ի առեւ շոգի շառագոյն անդ ի դաշտորայս ՚ի  
 վեր դիզացեալ, եւ ընդ արեւմուտս սրպէս հրդեհաց բոցք երեւե-  
 ին, եւ գիշեր ինքնին ոչ մեղմէր զապա տօթակէզ օդոց: Գունդ  
 լուսնի հրակերպ եւ ստուարացեալ ընդ մառախլապատ ծիրն երկ-  
 նից յառնէր: Խաշինք զգետնեալք յեմակս բլրոց, եւ զպարանոց  
 ընդ երկին ձգտեալ առ ի ծուծ օդոց, ի ախուր բառաշ լնուին  
 զձորս, եւ կափրատտանիկն հովիւ նոցին ընկողմնեալ յերկիր խնդ-  
 րէր զովանալ, բայց երկիր եռայր ամենայն ուրեք, եւ մղձկուտ  
 սյերք հնչէին յաղօտ բզզանս ճճեաց, որ զծարաւ իւրեանց խնդրէին  
 բուժել յարենէ մարդկան եւ չորքոտանեաց:

Ի մի ի հրատապ գիշերաց անտի առաւելագոյն նեղեալ Վիրդի-  
 նեայ, մերթ յառնէր ի նիստ, մերթ դարձեալ անդրէն ի կողմն լի-  
 նէր, ոչ իւրք գտեալ ոչ քուն ոչ հանդիստ: Եւ ապա յաղբիւր իւր  
 ի լուսնակի. եւ տեսեալ զի ջնուր յերաշտի իսկ անդ հոսէր արծա-  
 թափայլ ի թխատեսիլ կողաց ժայլին, եմուտ յաւազան անդր արի-  
 նածիր ի խնկաւէտ բուսոց. եւ կենդանոցան անդէն սգիք իւր,  
 եւ բիւր յիշատակք ախորժք զարթեան ի միտս նորա: Նշմարէր յա-  
 լիս անդ անկեալ զստուերս երկուց քաքենեացն համատից իւր-

եանց, որոց ուղէչք կանաչագեղք եւ երախայրիք ի համբոյր եկեալ խառնէին յիրեարս զգլխով իւրով. եւ մտախոհ ի սէր Պօղայ՝ որ քան զանուշահոտ բուրմունս խնկոց քաղցրագոյն էր նմա, սուրբ քան զաղբերաց ալիս, եւ հզօր քան զարմաւենիս գրկախառնեալս, յողոց եհան. խորհէր ի գիշերն, ի միայնութիւն իւ, եւ հուր ի ներքուստ տոչորէր զնա: Յայնժամ զարհուրեալ ի վտանգաւոր հովանեաց անտի եւ ջուրց՝ որ քան զարեգակն այրեցահանի գօտեոյն կիզանողագոյնք էին, եւ ի բաց ոստեաւ, զիմեաց առ մայր իւր՝ փախստեայ յանձնէ: Եւ ըստ իմ անգամ կամեցեալ յայտնել նմա զվիշտ իւր. եւ ուժգին զձեռանէ նորա կալեալ, այն ինչ զՊօղայ կամէր տալ զանուն սիրտ իւր գեղանէր, թողանայր լեզուս. եւ զերեսս իւր ի գիրկս մօրն հանգուցեալ՝ արտասուէր եւ եթ: Իսկ աիկինն Լաղուր, թէպէտ գուշակէր զպատճառս անձկութեան դատերն իւրոյ, այլ չիշխէր ինքնին խօսել զայնմանէ, խրատէր միայն զնա, եւ ասէր. Տեառն Աստուծոյ, դատրիկ իմ, զքեզ յանձն արա. նորա է շնորհել զառողջութիւն եւ զկեանս. փորձէ նա զքեզ ի սերկեան, առ վարձատրել զքեզ ի վաղիւ. յուշ լիցի քեզ զի՛ յայս իսկ եկեալ եմք յաշխարհ, առ ի գործել զառաքինութիւն:

Իայց ի տօթոյն սաստիւութենէ գողորչի բազում յովկիական ալեաց ամբարձեալ, սաւառնէին զկողբաւս որպէս հովանի լայնատարած եւ ի կատարս լերանց ժողովեալ, շանթք ակօսածեւ ի միգազատ ծայրից անտի երբէք երբէք հատանէին: Ընդ հուպ եւ որոտընդոտ ահագին ճայթմունք ընդ մայրիս անտառաց ընդ դաշտ եւ ընդ ձոր գոռմամբ հնչէին, եւ անկանէին յերկնից տարալիք հեղեղասաստք, եւ ուղիւք փրփրաղէզք ի կողաց աստի լերինս դահաւիթէին: Խորածոր հովտիս ծովացեալ ի ջուրց, սարահարթ բլրոյդ՝ յորում հիւղքդ կան՝ երեւէր կղզեակ ի ծովամիջի, եւ սահանաբայք ի մուտս հովտիդ, ընդ որ խառն ի խուռն արտաքս հոսէին ընդ ալեաց գոշիւն ժայռք կոճեղք եւ հող:

Ահիւ եւ գողութեամբ յազօթս կային ամենեքեան առ Լաղուր աիկնոջ, յարկ նորա ի բանութենէ հովանց ճարձատէր զարհուրելի, եւ թէպէտ դրունք եւ պատուհանք ամրափակեալ, սակայն ի խիտ առ խիտ փայլառակմանց ընդ ծերպս՝ ակներեւ ամենայն ինչ ի ներքս անդ երեւէր: Իսկ Պօղ աներկիւղ, առեալ ընդ իւր զԴովնիկ, ի զայրագին մերկի անդ զնայր հիւզ ի հիւզէ. ուրեք նեցուկ ընդ որմ հաստատէր, այլուր ցից վարսէր, եւ առ ի քաջալերել եւ

եթ զիւրօն ի յոյս հանդարտելոյ հուպ ընդ հուպ օդոց՝ դառնայր առ նոսա: Եւ արդարեւ ընդ երեկս դադարեցին անձրեւք, դարձաւ հողմն հարաւոյ, եւ ընդ արեւմուտս հիւսիսոյ վարեալ ամպոց՝ ծագեաց արեւ մերձ ի մուտս իւր:

Վիրգինեայ կամեցեալ ՚ի հանգրուան իւր նախ այց առնել, մատեաւ առ նա Պօղ կասկածագին՝ աջ տալ նմա ի գնացս. եւ նորա ընկալեալ զուարթագին զաջ պատանւոյն, ելին երկիւքեան ի միասին ի տանէ: Զով էին օդք եւ պարզ, ամպք սպիտակք վերանային ի դադաթանէ լերինդ, ուր ուղիւցն դադարելոց փրփուրք ազամուղք աստ անդ երեւէին: Իսկ պարտէզն եղծեալ իսպառ. յահագին հեղեղաց, յուղիք ի պողպտեր ծառոց խլեալ արմատաքի, եւ աւազակոյտք ծածկէին շուրջանակի վարօտս, լիւր արկեալ եւ յաւազան անդր: Իայց քոքենիքն երկոքին կային դալարագեղք, ոչ արօտք զնքօք, ոչ հովանիք, եւ ոչ թռչունք. պենկալք եւ եթ ոմանք ի ծայրս շրջակայ ժայռից զխորուստ ձագուցն եղերերդէին:

### ՀՈՎՈՒԱԿԱՆ ԿԵՆՑԱԸ

Քննու, քաքսէ	Կոհակ, ալէ+
Ծայրաքե, ծայրէ ծայր	Բոյլ, Խաթէ. քազն-իկն
Գոգեալ, Խաւաւաւ, քաքսէ	Յորպարք, Խաթ արաթ

Չեւ արեւուն ճառագայթից  
 ի դադաթունս հարեալ լերանց,  
 Ըզհօտըն ընդ դաշտըս ծաղկալից՝  
 Յօղատարափ ի դալարիս  
 Հովիւքն ամեալ ճարակէին  
 Եւ ի յարօտս անդ ի ջրարբիս:  
 Ոմն ալեւոր հըմուտ ի սրինգ,  
 Յեցեալ ի ցուպ իւր ծայրաթեք,  
 Որպէս հովիւք նկարին հինք,  
 Աշխարելի հընչէր նըւագ,  
 Ճարակաւոր խաշինն ի դէտ,  
 Մինչ արածէրն ըզնա ցըլապ:

Այլուր խարտեաչ հովուին մանուկ  
Օցեալ գառանցն ըզհետ դիմէր,  
Ճօճեալ ըզցուպն իւր ըզճապուկ:

Այլ ոմն այլուր հեղ պատանեակ  
Բազմեալ յարօտ ի սեպ վիմին,  
Զմայլէր ի յերգ զիւրն երամակ:

Ի ջերմանալ ապա երկնի,  
Մինչ արձակէր ի ծիրանւոյն  
Ճըպուռն ըզճիչ իւր անյեղլի,  
Ըզհօտն ի յուսպ կէսք առ լըճիւ,

Այլք առ ջըրհորքս ասնէին,  
Ուր յամր ի հիւ ճըրնչեալ անիւ,  
Զուր ի գոգեալ զեղըր մայրիս.

Այլք ի յեղալւորքս սիզաւէտ,  
Եւ հեզասահ կէսք ի յալիս:

Ի հովանւոտ ապա յարօտ  
Արած էին ըզմիջաւուրք

Եւ ի ծըմակ անտառս ըզհօտ:

Եւ գովագին մինչ երեկոյն  
Մեղմէր տակաւ ի բացավայրն

Ըզյորդարորք տապ արեւուն,  
Ածեալ յարբումըն վերքատին՝

Խաչն ի ճարակ դառնայր անդրէն  
Մինչեւ ի ցօղ երեկոյին:

Իսկ ըզճըմեռն ի գոմ քընքուչ  
Ճարակէր խաչն յարկածածուկ

Ի բլքայոյղ շընչմանց ըզգոյշ,  
Մինչեւ ի դարձ ամայրայնոյն.

Եւ պատրաստել ճարակ խաչին  
Դաւարագեղ յարօտս ի նոյն:

Ընդ գիշերոյն ապա նըսեմ  
Մինչ աստեղաց ճաճանչաւէտ

Նըշողէին բոյլք երկնածեմ,  
Խաչն ի փարախ դառնայր ի կիթ,

Լիոց ի ստեանցըն կաթնարուղիս  
Զեղլով կաթինըն շիթ առ շիթ:

Փայտեայ ի մէջ ամեալ պընակ,  
Բուռն ըզպըտկանց հարեալ խաչին

Բուռն ըզպըտկանց հարեալ խաչին  
Կըթէր ըզկաթն հովիւն երագ:

Մանուկ մատաղ զանաստ եղջիւր  
Նուածէր զայծուռն, եւ բառաչէր

Կաթնարուծիկ դառն ի ջամբ իւր:  
Սպիտակ կաթին փըրփուր ի վեր

Իբր ըզկոհակըս ճիւնեղէն  
Բարդեալ ի գուշըն դիզանէր:

Հ. Յ. Հիւրմիւզեան



Առ վայր մի, քիչ քիչ արեւ  
Ածել ի նկար, նկարագրել, քիչել  
Աղօսալսն, աղբ լայն սահեցող

Գրգալ, գորգորու (Բունց)  
Հրոս, երեւ, խորոյ  
Մահանալ, քիչել

Մինչ այս մինչ այն՝ եղև ժամ ընթրեաց, եւ նստան ի սեղան. այլ իւրաքանչիւր ոք յայլ եւ այլ կրից յուզեալ, սակաւ ինչ ճաշակեցին լուռ եւ անբարբառ: Վիրգինիա կանխեալ յարուցեալ ի սեղանոյ, նստաւ աստ՝ ուր կամքս. զհետ նորա յարեաւ եւ Պօղ, եւ անցեալ առ նմա բազմեցաւ, եւ լուռ եւ կիթ կային առ վայր մի երկաքանչիւր: Այն գիշեր մի յայնցանէ էր, որ ընդ կրկին յեղյեղակս սովորակի պատահէն, զուարճալի յոյժ՝ զորոյ չէ մարթ ձեռին ճարտարի ամեւ զգեղ ի նկար: Ի բարձունս երկնից կայր լուսին սքօղեալ ամպովք՝ որ տակաւ ի ճառագայթից նորա փարատէին, եւ զաղօտաջահ լոյս իւր ծագէր ընդ լերինս՝ որոց սարք դաւարագեղք փայլէին արծաթագօծք: Լուէին հողմք, եւ ընդ անտառս եւ ընդ ծործորս եւ ընդ կատարս ժայռից լսելի լինէին ճռուողել ճագուց եւ քաղցր մրմունջ գրգալց թռչնոց ի բոյնս իւրեանց, զըւարճացելոց ի հողմխաղաղ պայծառ գիշերոյն. եւ բնաւ իսկ շունչ, մինչեւ ի ճճին, բզզայր խլրտեալ անդ ընդ դաւարեօք: Աստեղք ի կամարն երկնից շողողեալ՝ ճառագայթարձակք ի ծուփս ծովուն, եւ պատկերք նոցին դողդոջք ի յալեաց անդրէն ցոլային:

Յայնժամ վիրգինեայ գաշս շուրջ ամեալ ընդ լայն եւ ընդ նսեմ ոլորտս ծավուն՝ որ շառագոյն հրատիւք ձկնորսացն որոշր յափանց կըզգուցն, ետես ի մուտս անդ նաւահանգստին լոյս ստուերախառն. եւ այն էր լապտեր եւ ողնափայտ նաւուն՝ որ հանդերձեալն էր ամեւ զնա յեւրոպա, կազմ եւ պատրաստ ի շնչել հողմոյ՝ խարխիս

ի վեր առնուլ, պարզել զառագաստս: Խոսովեցաւ օրիորդն, եւ դարձոյց զաչս իւր ի բաց, թագուցանել զարտասուս իւր ի պատանւոյն: Փոքր մի ի բացէ բազմեաք եւ մեք անդ ընդ պանանեօք, տիկնայքն երկոքին եւ ես. եւ ի լուութեան գիշերոյ լսեաք զխօսս նոցա, զորս յիշեմ անմոռաց: Սկսաւ ասել Պօղ. Լսեմ օրիորդիկ, զի յերկր աւուր մեկնիս ի մէնջ՝ գնալ զխմազբաւ վտանգաց ծովու, յորմէ զարհուրիսդ: Օրիորդն ասէ. Պարտ է ինձ հնազանդել ծնողաց, եւ ընում զպարտս իմ: Պատանին ասէ. Թողուս դու ըզմեզ առ սէր ազգականի ուրուք հեռաւորի, զոր չիք իսկ քո տեսեալ: Օրիորդն ասէ. Ո՛հ զի կամէի ես կալ աստ մինչեւ ցմահ, այլ մայր իմ ոչ կամի, եւ խոստովանհայրն իմ ասէ զի այս են կամքն Աստուծոյ՝ մեկնել ինձ աստի, եւ զի փորձութիւն են կեանք մարդոյ... եւ փորձութիւն, ո՛հ, քանի՛ դժնդակ: Պատանին ասէ. եւ իցե՞ն իսկ պատճառքդ այդոքիկ այնպէս հզօրք ի յորդորել զքեզ ի չու, եւ ոչ մի ի հակառակաց առ ի կալ եւ մնալ. ո՛հ, իցեն արդեօք այլ պատճառք՝ զորս թագուցանես դու յինչն. հզօրք են հրատարյրք մեծութեանց, եւ գտցես զոք այլուր ընդ հուպ՝ զոր եղբայր քո փոխանակ իմ անուանեսցես, եւ գտցես յարժանաւորաց քեզ տոհմի եւ ճոխութեամբ՝ զոր չունիմ ես ընծայել քեզ: Այլ ո՛ւր այլ ուրեք լիցիս երջանկագոյն. յո՞ր երկիր երթայցես, որ քան զվայր ծննդեան քո իցէ քեզ սիրելի. ո՛ւր գտցես կենակիցս սիրելիս քան զորս սիրենն զքեզ. կարիցե՞ս իսկ կեալ առանց մայրենի գգուանաց, յորս սովորեալն ես. զի՞նչ իսկ լիցի մայր քոյին, որ ի պառաւել է արդ, ի չտեսանելն զքեզ առ իւր ի սեղանի առանին եւ ի գնալ ի ճանապարհի՛ ուր ի քեզն յենոյր. զի՞նչ եւ մայր իմ, որ հաւասար քոյուսիք սիրէ զքեզ. ի՞բր կարացից սփոփել զերկաքանչիւր ի լալ նոցա առ անձուկ քոյին: Լուեմ զինչն, ո՛ անկարեկիր, եւ զի՞նչ եղէց ես ի չտեսանելն զքեզ աստ այգուն այգուն, զի՞նչ եւ ի դարձ երեկորին՝ յորժամ գտեղի քո խնդրեցից յակմբի մերում, յորժամ զզոյդ քոքնեացն տեսից զհասակակիցս մեր եւ զբազմամեայ սիրելութեանս մերոյ վկայս: Եթէ առ անձուկ նորոյ բաղդի ընտրես լինել ասարաշխարհիկ, եւ զվաստակըս ձեռին իմոյ ընդ օտար գոյից փոխանակել, ո՛հ, թող եւ ինձ գալ ընդ քեզ, քաջալերեցից զքեզ ի նաւի ի յառնել մրիկաց, յորոց ի ցածաքի իսկ զարհուրեալ դողաս, եւ ի Գաղղիա, ուր գնասդ ի խնդիր բաղդի եւ ճոխութեան, ծառայեցից քեզ իբրեւ զմի՛ ստրկաց, բերկրեցայց ընդ բարբառաստութիւն քո յապարանս, ուր

տեսից մեծարեալ զքեզ եւ սպասաւորեալ, եւ համարեսցի ինձ մեծութիւն եւ ազնուականութիւն՝ մատուցանել քեզ զմեծագոյն քան զամենայն նուէրս, առ ոտս քո մահացեալ: Եւ գայս ասացեալ, գեւաւ բարբառ նորա ի հեկեկանաց: Յայնժամ լուաք զի պատասխանէր Վիրգինիա հեղձամիճուկ ի հառաչանաց. Առ սէր քո ուղեւորիմ, առ սէր քո՝ որ ընկճիտդ հանապազ ի վաստակոց առ ի կերակրել զերկաքանչիւր տկար ընտանիքս. առ սէր քո տեղի տամ յուսոյ մեծութեանց, առ ի փոխարինել վաստակոց քոց բերապատիկ. եւ կայցէ՞ իսկ մեծութիւն հաւասար սիրոյդ: Զի՞նչ իսկ զազգէ քումն ի սոսիս ինձ, եթէ էր ինձ ընտրել զոք եղբայր. զո՞ իսկ քան զքեզ մեծարէի. ո՛հ Պօղ, իսն Պօղ, առաւել ես դու ինձ յոյժ քան զեղբայր: Քանի՛ ծանր էր ինձ մերժել զքեզ ի բաց. կամի զի օգնէիր ինձ առ ի խուսել եւ յանձնէ, մինչեւ երկինք օրհնեսցեն զվութիւն մեր: Արարից արդ զոր կամիսդ, կալ կամ մեկնել, կեալ կամ մեռանել. յաղթեցի զգուանաց, այլ վշտաց քոց ոչ եւս զօրեմ յաղթել՝ վերջացեալ յառաքինութենէ:

21

Ի ՄԱՆ ՏԻԿՆՈՋՆ ԿՈՒԵՆՏԱԼԻՆԱՅ ՊՈՐԿԵԶԻ

ԵՂԵՐԵԳՈՒԹԻՒՆ

Ձուգորդ , հասարակ	Վիսկոս , արքայապետ
Արժարագին , արհաւիրք	Ապերասուն , անասն
Թարաւուլ , լեցան	Խանդ , երանք , իւր

էր նա ծաղիկ չըքնաղազեղ  
 Գերաշխարհիկ լուսոյ նըշոյլ.  
 Էր նա հրեշտակ՝ յոր բազմագեղ  
 Հաճեցան շնորհս երկինք զեղուլ:  
 Այնպէս անբիծն իւր կերպարան  
 Գեղազարդեալ ի չուք ցածուն,  
 Զի զժրպրհութիւն ապերասան  
 Յաղթահարեալ առնէր նրկուն:  
 Եւ ի չըքնաղ աչաց իւրոց  
 Այնպէս վըճիտ եւ գեղանի  
 Ամբիծ սիրոյն հատանէր բոց,  
 Որ ի սուրբ խանդ ճըգէր զհոգի:

Ձիք ի կանայս նըմին զուգորդ ,  
Քառից հընգից ամաց անխորձ  
Գուլով դեռ եւս ինքն օրիորդ ,  
Հըզօր ի խրատ է եւ ի գործ :

Այլ իբր ասեւ այժմիկ կարեմ  
Ձիւրդ համայն է Հոովմ ի սուգ ,  
Եւ յորպիսի կոծ տըխրադէմ  
Հեղուն յաջացն իւր արտասուք :

Արդ ցուրտ մահուն ծածկէ գչըքնաղ  
Հարսինն , աւաղ , ըզկերպարան .  
Որ անարատ վարեաց կենցաղ  
Ի սուրբ հըսկմունքս մըշտական :

Այրին անոք եւ անտէրունչ ,  
Որ գհեա նորին արտասուալից  
Գընայր մանկամբըն թաթաւուչ ,  
Յիշէ այժմիկ յոգնաթախիծ :

Քանի սիրով նա բարեխնամ  
Պատըսպարան լինէր նոցին ,  
Եւ յաղքատին իւր իբր ի սեամ  
Նըպաստըն խկոյն հասանէին :

Որքն եւ զառամ աւասիկ ծեր  
Յիշեն ի յողբըս տըխրադին ,  
Ձիւրդ ինքեանց նա աղախնէր  
Իբր ըզնաթիշտ արծաթագին :

Ես ինքն եղէ ախանատես ,  
Ձի մուրացիկք երամովին  
Ծերք եւ տըլայք իբր եւ սրպէս  
Ըզգագաղաւ խըռնեալ նորին ,

Եւ գտիրելոյ ասեալ ըզկոծ ,  
Հանգիստ նըմա պաղատէին  
Նըւաղաւոր ձայնիւ երգոց  
Աղիողորմ եւ աըխրադին . . .

Ո՛ օրիորդք եւ նոր հարսունք ,  
Կացցէ ի սիրտ ձեր անմուտց  
Քաղցր յիշատակըն միշտ նորուն ,  
Եւ ուսարուք լինել գըթած :

Արհամարհեալ ըզվեհաղուն  
Ազգատոհմին շուք հայրենի ,  
Զորոյ կըրէրն յինքեան զարիւն ,  
Իւ պանծան վէպք Այրիոնի :

Ի դիւրութեանց շուրջ ասեալ պար  
Եւ ի գանձուց բազմամթեր ,  
Որ են վիսկոտ մուտայման մայր ,  
Զայլոց ի յուշ զաղէտս անէր :

Եւ յամայի ի սեամա յաւէտ  
Անարգ հիւղից յաճախելով ,  
Ուր չըքաւորն ի բազմաղէտ  
Հեծէ ի վիշտս հիւծի ի սով :

Հնարէր գտարդեւս իւր բարերար  
Ծածկել ի վայրս անդ խաւարչուտ ,  
Խոնարհութեամբ իւրով ճարտար ,  
Կենցաղական գովից անխոյթ :

Ո՛վ երջանիկ դու ոչ մեաւր ,  
Կեաս ի բնաւից դու ի սըբախ .  
Դու ի յերկնից կեաս ի կամար  
Երանաւէտ եւ լուսարիխ :

Հ. ԱՆՏԱՆ ՊԱՆՔԻԻԿԱՅ

(Թարգ. Հ. Յ. Հիւրմիւզ)



Թարսւմախի , Գեալ ի հնրի յարմարի (?)  
Ուր ուրեմն , վերջապէս  
Սպայ , Մարտ քեր

Յօղւածոյ , Էրեւան  
Ընդարդս , Բնախն , Բնախն  
Գեղծիմ , Էրեւան

Յարեաւ Պօղ ընդ առաւօտն դառնալ ի բնակութիւն իւր , եւ նախ առաջին ետես զաղախինն հնդիկ՝ զի կայր հայէր ի բարձուէ Ժայռին ի խորս ծովուն . եւ ձայնարկեալ ի բացուստ՝ ուստի հաղիւ զնա աչք նըմարէին , գոչեաց . Ո՞ւր է նա , ո՞ւր է վիրգինիա : Իսկ աղախնոյն շրջեալ զաչս ի տէր իւր պատանեակ , սկսաւ լալ : Յայնժամ Պօղ խեղայեղեալ , յեաս անդրէն ի նաւահանգիստ անդր դիմեաց , եւ դիտացեալ զկանխել մտանել վիրգինեայ ընդ այգն

ի նաւ , եւ զնաւուն առագաստել իսկոյն եւ անտես լինել, դարձաւ այսրէն ի բնակութիւն իւր, եւ անց գնաց առանց խօսելոյ ինչ ընդ ումեք :

Ի բարձուէ կղզւոյն նշմարէր Պօղ զնաւ Վիրգինեայ անդր եւս քան զտասն փարսախ որպէս կէտ ի ծովու սեւանիչ, եւ հարուստ մի ժամ կայր անդ ի գնին, եւ զվազ իսկ անտեսն լեալ յաջաց՝ դեռ եւս կարծէր տեսանել : Իսկ իբրեւ մէք ընդ ոլորտս ծածկեաց զայն ի սպառ, նստէր նա ի վայրի անդ՝ ուր յարակոծեալ ի հողմոց տատանին անդադար գազարթունք արմաւենեաց եւ թաթամաքեաց, եւ սօսաւիւն նոցա եւ խուլ մանչիւն որպէս երգիոն հնչեալ ի հեռուստ՝ ազդէ ի սիրտ խորին տխրութիւն :

Անդ գտի զՊօղ, յեւրոյ արեւու շրջեալ զհետ նորա . եւ գտի զնա զի կայր երկրապիշ՝ յեցեալ գազարթամբ ի մի ի ժայռից, եւ յոյժ աշխատ եղէ մինչեւ հաւանեցուցի զնա իջանել առ իւրան : Դարձաւ ուր ուրեմն ընդ իս ի տուն, եւ նախկին ազդումն ի նա, ՚ի տեսանել զտիկինն Լադուր, եղեւ դառն բողբ զխարկանացն : Բայց տիկինն պատմեաց մեզ, զի յառաւօտուն պահու ի շնչել հողմոյ եւ ի կազմել նաւուն ի չու՝ եկեալ քաղաքապետն Պուրտոնէ սպայիւք ումմբք՝ հանդերձ երիցամբն ի խնդիր Վիրգինեայ, եւ դեսպակ ընդ իւր ածեալ, ոչ աղերսական բանից զատերն լուեալ, եւ ոչ արտասուաց իւրոց եւ Մարգարտայ երեսս արարեալ, իւրովքն առ հասարակ աղաղակելով՝ զի այն էր ամենեցուն մեզ ի բարի, առեալ տարեալ էր զնա կիսամեռ : Յայնժամ ողբս առեալ Պօղայ, ասէր . Եթէ գէթ տուեալ էր իմ նմա ողջոյն հրաժարական, սփոփէր սիրտ իմ : Ասէի նմա . Գոյր իմ, եթէ երբէք վշտացուցի զքեզ յորմէ հետէ կեամքս ի միասին, մինչչեւ մեկնեալ քո անդարձ՝ ասա ինձ թէ ներես : Ասէի նմա . Ողջամբ երթիչիւր, սիրեցեալդ իմ Վիրգինիա, ոչ եւս լիցի ինձ տեսանել զքեզ, կելով կեցցես դու հետ յինէն գոհ եւ երջանիկ : Եւ ի տեսանել զմայր իւր եւ զտիկինն Լադուր զի լային, ասէ . Մի՛ եւս զիս, զայլ ոք խնդրեցէք առ ի սրբել զարտասուս ձեր : Եւ թողեալ զնոսա ողբովք եւ հեկեկանօք, շքրջէր թափառական ընդ վայրս սիրելիս Վիրգինեայ . եւ այժուց նորա եւ ուրից՝ որ զհետ գային բառաչելով, ասէր . Ձի՛ խնդրէք յինէն, ոչ եւս տեսանիցէք ընդ իս՝ որ ավով իւրով ջամբէր ձեզ ճարակ : Եւ երթեալ ի Հանդրուանն Վիրգինեայ, ի տեսանել անդ զթոչունս՝ որ շուրջ թեւածէին, եւ ցնտա ասէ . Եղբւկ դուք, ոչ եւս ընդ առաջ զնայցէք բարեգութ գայեկին ձերում : Եւ տես-

եալ զչնիկն Հաւատարիմ՝ որ հոտոտելով զնայր հետազօտ, ասէ հառաջանօք . Ո՛հ, զի ոչ եւս դացես զնա : Եւ ապա բազմեալ ՚ի ժայռին՝ ուր յերէկն խօսեցեալ էր ընդ նմա, եւ հայեցեալ ընդ ծով՝ ուր էր նա նորին անտես լեալ, հեզոյր ուղիս արտասուաց :

Բայց մեք ամենայն ուրեք զհետ նորա շրջաք, թէ գուցէ ՚ի յոյզս կրիցն յաղէտս ինչ մտաբերեսցէ : Աղաչէին զնա մայր նորա եւ տիկինն Լադուր գողարիկ գգուանօք, մի՛ ցաւս ի վերայ ցաւոց իւրեանց յաւելուլ յուսահատութեամբն, մինչեւ յաջողեաց Լադուր տիկնոջ փոքր մի սփոփել զնա՝ տալով նմա անուանա զարթուցիչս յուսոյ ի նա, կոչելով զնա որդի իւր եւ փեսայ, եւ ըզգուստր իւր՝ հարսն նորա . եւ բռնադատեաց զնա մտանել ի տուն, եւ ճաշակել ինչ : Եկն նստաւ ընդ մեզ ի սեղան մերձ ի տեղին Վիրգինեայ . եւ առ իւր զնա համարելով բազմեալ, խօսէր ընդ նմա, եւ մատուցանէր նմա յախորժեկեացն ի ճաշակ . եւ ապա ՚ի զգաստ լինել ցնորիցն սկսանէր լալ : Ի վաղիւ անդր ամիտփեալ որ ինչ Վիրգինեայ ի կիր արկեալն էր, եւ զյետին փունջս ծաղկանց յորինեալս ի նմանէ, եւ զըմպանակն քրքնի՝ որով սովորն էր ըմպել, զայն ամենայն նշխարս սիրուհւոյն իւրոյ որպէս սրտուականագոյն քան զամենայն գանձս համբուրէր եւ կրէր ի ծոցին : Ձի՛ ոչ այնպէս ակն բազմագունի բուրէ անուշահոտ որպէս յոր ինչ ձեռին սիրելւոյ հպեալ : Բայց իբրեւ ետես զի ՚ի վըշտաց իւրոց յաւելուին եւ եւս միշտք մօրն եւ Լադուր տիկնոջ, եւ զի առ ի ընուլ զպէտս ընտանեաց՝ հարկ էր վաստակել, ձեռն էարկ անդրէն օգնականութեամբն Դոմինիկեայ մշակել զպարտէզն :

Աւուրք ինչ ի վերայ անցեալ, եւ ահա պատանին՝ որում ըստ գաղթականաց Եւրոպացւոց չէր ինչ փոյթ երբեմն զանցից քաղաքականաց՝ խնդրէր ուսանել յինէն զպրութիւն, առ ի կարող լինելոյ թղթակցել ընդ Վիրգինեայ, աշխարհագրութիւն՝ առ ի գիտել ՚ւր նայն նաւարկէր, եւ սրտմութիւն՝ առ ի ճանաչել ըզբարս մարդկան, ընդ որս պարտ էր նմա կեալ : Սիրելի եւս էր նմա ընթեռնուլ վէսլս յօղուածոյս, որոց առաւելագոյն ազդեցութիւն է ի սիրտ եւ ի միտս, եւ ինչ ինչ հանդոյն կրիցն իւրոց գտանէր ի նոսա . վասն սրոյ ախորժելի քան զամենայն գիրս էին նմա վէսլք Տելեմաքայ, վասն որ ի նմա նկարագրութեանցն զեղջկային կենաց եւ ընդաբոյս կրից մարդկեղէն սրտի : Հատուածս ի նմանէ, ազդողագոյնս ի սիրտ իւր, ընթեռնոյր ի լուր մօրն եւ Լադուր տիկնոջ, եւ յընթեռնուլ անդ՝ գեղձեալ գորովական յիշատակօք,

գելոյր ճայն նորա, եւ արտասուք քամէին յաչացն: Բայց եւ խոռ-  
վէր յոյժ յընթերցմանէ այժմուցս հնարակերտեալ վիպաց, յորս  
յաճախեն զեղծմուսնք բարուց եւ իմաստից, եւ գիտացեալ որ 'ի  
նոսա նկարագիրքն էին՝ ընծայէին զտիպս բարուց եւ բողոքական  
ժողովրդոց, անկանէր ի կասկած ոչ իսկ տարապարտ, թէ գուցէ  
զեղծեալ անդ վիրգիներայ՝ ոչ եւս յիշեսցէ զինքն: Մանաւանդ  
զի ամ եւ կէս ի վերայ անցեալ, եւ չեւ եւս հասանէր զրոյց առ  
Լադուր ատիկին, ոչ ի դատերէ իւրմէ եւ ոչ ի հօրաքերէ: Բայց մի-  
այն զի զողջամբ հասանել դստերն գիտացեալ էր նորա յայլոց:

ՀՈՎԻԻ ԵՒ ՀՈՎՈՒՈՒՅԻ

Քիւ, (սուտ)  
Յոյր, քեր  
Որսուսոյս, կը պոսոսու  
Խեւ, յանդուսն, ըմբաս  
Խանն, կայ, կու  
Անկանել արտի, քերտ կուրել  
Անգուսել իսեմել, կուրել կուրել

Յանկարծ, երտի՛ թե  
Թիւմ, քերտի՛ մը ծաղի՛՛ զը մեզստ ին  
Օգսել, հօրէն քուրս ելնել [ քերտի  
Յոյր, կու  
Բուժանել, անացանել  
Փոքրել, կուրել, պարկէցանել  
Միոս, քայրի՛ եզեքան կուր, (արեւի)

ՀՈՎՈՒՈՒՅԻՆ

Թող զերամակդ, հովիւ բարի,  
ի գալարուջ այդր ի վայրի.  
Եւ ընդ քրուս եկ ընդ վիմիս  
Հանգիր վայրիկ մի աստ առ իս:  
Ձի ձմեռն էանց, անձրեւք անցին,  
Ծաղիկք յարօտըս մեր վրթթին,  
Ձայն ի յոստոց շուրջանակի  
Հընչէ ի յուսկն իմ տատրակի.  
Անուշահոտ ծաղիկն այգիք,  
Գեղեցկագոյն ամն է այժմիկ.  
Եկ, զի ոչ ինչ է ինձ հաճոյ,  
Եզրօրրդեակ իմ, առանց քո:

ՀՈՎԻՒՆ

Ինձ, քոյր իմ հարսն, յոյժ տըխրական

Չըքնաղագեղդ է տեսարան,  
Չեւ զկորուսեալն իմ ոչխարակ  
ի մերս այսրէն ամեալ ի բակ:  
Բուժի ըզնա ի կաթն առատ  
եւ ի ստենէ այն ինչ անջատ  
Արածէի զնա ընդ օդիս  
Պարարտարօտ ի գալարիս,  
Եւ առ վըճիտ վըտակս ի յուճոյ  
Ածէի զնա խաչանցս ընդ խուճի:  
Եւ ընդ արօտն յորժամ գիշեր  
Ըզցըրտագին ստուերսն ամէր,  
Առ ի գայլոց զերձ ի փարախ  
Ըզնա ի ներքս առնուի նախ:  
Ո՞ արդ յարօտն ամցէ ըզքեզ  
Ո՞ ի վըտակ ոչխարդ իմ հեզ,  
Արդ անտերուսն լեառն ըզլեռնայն  
Յածեալ շըրջիս թափառական,  
Ըզհէա հովուիդ բառաշեւով,  
Մայրից լերանց արկեալ գորով:

ՀՈՎՈՒՈՒՅԻՆ

Մի՛ ընդ կորուստ անկցի միոյդ  
Սիրտ քո, հովիւ ըզ բարեգութ.  
ի ծաղկաւէտ աստ ի յարօտ  
Քեզ բազմերամ թափառի հօտ,  
Եւ երկուորեակ գառինք ի ծուժ  
Սպառեն ըզյոյր ըստինս այժուց:  
Փարթամք ի կաթն եմք ձիւնեղէն,  
Եւ ի կողուց ձուրք ի պարէն.  
Իսկ յորժամ հուսնձք հասցեն կըրկին,  
Մեզ խաչն յողով անդրէն երկին  
Փոխան միոյս տացէ այժմիկ՝  
Որ ի հօտէդ կորեաւ այժմիկ:

ՀՈՎԻՒՆ

Աւար արդեօք ժանեաց գայլուն  
Անկաւ ոչխարն իմ ձեռասուն,  
Ում աթիակէզ եւ ցըրտաբեկ  
Հըսկէի պայգե եւ ըզցերեկ:



Ո՞չ խակ յիշես, յորժամ դետոյդ  
 Յորդեալ ալիքն ուրտապտոյտ՝  
 Գոմոյն ի հետ ըզհօտ խաշին  
 Խեռ յորձանօքըն վարէին,  
 Ո՞րպէս ըզգառնըն կաթնաբոյծ  
 Սատակմանէն ի ջրահեղձոյց  
 Աձի ի ծայր անդր ի բլրոյս՝  
 Բարձեալ ըզքաղցր բեռն ի յուս:  
 Եւ յանրզգոյշ ի մանկըտուոյն  
 Մինչ խանձ մայրւոյն անկեալ ի բուն,  
 Ընդ իւզաթուրմ արմին կեզեւ  
 Պատեալ զանխուլ հուրն ի ստորեւ՝  
 Սողոսկեցաւ ապա ընդ սոտս  
 Ի ճարձատիւն որոտընդոտս,  
 Եւ ճարակեալ յազլթող բոցոյն  
 Մինչ հըրդեհէր զանտառն ողջոյն,  
 Բարդեալ ի բարձր ի յամպս ըզձուխ  
 Ըզկըսարային ճենճերով թուխ,  
 Ո՞չ յիշես իբր ըզնա ի դերծ  
 Աձի յայնժամ խաշամբն հանդերձ:

ՀՈՎՈՒՌՈՒԶԻՆ

Ձիօ՞րդ կարեմ մուսանալ զայն.  
 Քեզ յոյժ ամիկն էր սիրական:  
 Նըմա ի գեղմն իւր գեղանի  
 Աձեր ըզգըռչմն ծիրանի,  
 Եւ ստէպ տայիր ինձ զանասնեակն  
 Առ ի գնորայն փոքրել գիսակ.  
 Չըքնաղ ի շուրթն անդր ի սանտեր  
 Սպիտակ կարմիր ասրըն խառնէր:  
 Ո՞հ, ոչխարակն ընդէ՞ր կորեաւ...  
 Այլ դու սփոփեաց յուսով բարեաւ:  
 Աստ, ուր ուռեաց ոստք խիտ առ խիտ  
 Կախին ըզջուրըս ականակիտ,  
 Բազմեալ բլրոյս դու ի ստորոտ,  
 Երգեա ի նուրբ քոյին ծըղօա.  
 Ծանօթ ճայնիդ թերեւս ի լուր  
 Դարձցի ոչխարն առ հովիւ իւր:

ՀՈՎԻՒՆ

Յանկարծ դտանել եթէ ինձ գոյր  
 Ըզքեզ ոչխարդ իմ ճիւնաթոյր,  
 Չըւարթ ըզքէն յորինեալ տօն,  
 Չքեզ Անմահին տայի ի ձօն:  
 Դու քաղցրագոյն հովուիդ ես քոււմ,  
 Քան քեզ արօտ եւ մեղուաց թիւմ.  
 Թողեալ ըզհօտն իմ, վըշտակիր  
 Ծըրջիմ ըզհետ քո ի խընդիր:

ՀՈՎՈՒՌՈՒԶԻՆ

Ահա զպատկեր նորին վըճիտ  
 Հայիմ ի խորս ալեաց լըճիդ.  
 Ահա բլրոյդ նա բարձր ի սեպ  
 Կացեալ ի վայր ակնարկէ ստէպ.  
 Հայեաց ի վեր, ուրախ լեր արդ,  
 Հովիւըդ քաջ, գըտեր զոչխարդ:

ՀՈՎԻՒՆ

Մեծ է ինձ յոյժ, եթէ ստուգիւ  
 Ինձ անձկալին այն ծագէ տիւ,  
 Յորոււմ տացի գըզուել դարձեալ  
 Ինձ զոչխարակն իմ կորուսեալ:  
 Ո՞ հարսնուհիդ բարեաց դուշակ,  
 Կեցցես յանկէա դու պարունակ.  
 Դու հովուուհեաց ի մէջ հարսանց  
 Գոս այնքանիցըս գերազանց,  
 Որչափ դսճար վարդ կարմիրովեան  
 Քան ըզձաղիկըս դաշտական,  
 Եւ քան զամուլ փայտս անտառի  
 Որքան չըքեզ է խընձորի:  
 Յըլեա՛ հրաւէր շուրջ առ դրացիս,  
 Գայցեն ուրախ լինել ընդ իս,  
 Չօրհներգութեան առեալ նըւագ,  
 Ձի գտի զօցսեալն իմ ոչխարակ:  
 Բարձեալ ի յուս ամից յօժար  
 Ի տէրունին զայն ի տաճար.  
 Երբին ի նարօտ ոսկեգիսակ,  
 Գեղապաճոյճ ծաղկատըրսակ,

Կեցցէ Հաստչին ձօնեալ ի նուէր  
Անդ անկորուստ ոչխարակ մեր:

Հ. Ե. Հիւսմիւզեան

ՆԱՍԱԿՆ ՎԻՐԳԻՆԵԱՅ

Վարժեալ, Կարգաբեր, Գրչոյցի  
Հեծելութիւն, Յի հեծնալ  
Հաւանակ, ( Կարգաբեր )  
Չանձախարիք (ամ.), Կարգաբեր

Սիրելի եւ անձկալի մայրիկ.

Գիրս յոգունս գրեցի քեզ իմով իսկ ձեռամբ. այլ չեւ եւս ընկալեալ ի քէն պատասխանի, կասկածեմ զի չիցեն հասեալ առ քեզ. բայց սա յուսամ զի հասցէ, ի կիր արկեալ իմ զամենայն զգուշութիւն առ ի տալ քեզ զրոյցս զինէն եւ ընդունել զքոյսդ: Բազում արտասուս հեղի յօրէ մեկնեւոյ իմոյ ի ձէնջ, որ ընդ այլոց աղէտս եւ եթ սովորեալն էի արտասուել: Հօրաքոյր մեր ի հասանել իմում այսր զարմացաւ յոյժ. քննեալ եւ տեսեալ զի անգէտ եմ զըզրութեանս. եհարցց զիս թէ զի՞նչ ապա ի մանկութենէ հետէ ուսեալ իցեմ: Եւ ի պատասխանել իմում՝ զառտնին իրաց յանձանձանս եւ հպատակել մօր, յաւել զի զդաստիարակութիւն աղախնոյ ընկալեալ իցեմ: Ի վաղիւ անդր եղ զիս ի վարժ ի կուսաստանի ուրեք մերձ ի Բարիլ, յորում ամենայն ազգի ազգի վարժից են ուսուցիչք, եւ ընդ այլ վարժեարս՝ ուսուցանեն ինձ զպատմութիւն, զաշխարհագրութիւն, զքերականութիւն, զգափական գիտութիւնս եւս եւ զհեծելութիւն. այլ այս ամենայն սակաւ ինչ օգնեսցեն ինձ, առ ի չդոյց յիս բաւականութեան. ձանաչեմ զտկարութիւն մտաց իմոց, որպէս եւ վարժապետքս ինձ տան ի միտ անուել: Հանդերձ այսու ամենայնիւ հօրաքոյր մեր ոչ դադարէ ի խնամոց. հանդերձանի նոր ըստ եղանակս տարւոյ պարգեւէ ինձ. կայոյց ինձ ի սպառ նաժիշտս երկու, որ հանդոյն տիկնայց զգեցեալ են. եւ մեծարանաց անուամբ տայ կոչել զիս կոմսուհի, այլ երբձ յինէն գնականուս իմ Լազուր՝ որ սիրելին է ինձ որպէս եւ քեզ վասն վշտացն կրելոց ի հօրէ իմմէ առ ի պսակելոյ ընդ քեզ, որպէս պատմելին . . .

Ի մեծութեան կեամ. այլ չեմ դանկի եւս միով տէր. զի հետեւանըս շարեաց կասկածեն անտի. հանդերձից իսկ իմոց իշխեն նաժիշտք իմ, եւ յախշտակեն յիրերաց չեւ իմ թողեալ զայնսով ի բաց, չքաւորագոյն ի ձօնութեան աստ գտանիմ քան առ քեւ, զի չունիմ ինչ՝ զոր թէ տալ ումեք կարիցեմ: Եւ տեսեալ իմ, զի գիտութիւնք բարձունք՝ զորս ուսանիմս՝ չօգնեն ինձ առ ի բարերարել ումեք, յասեղն իմ դարձեալ եղէ սպաստան՝ յոր ըստ բախտի վարժեալ գտանիմ իքէն. եւ ահա յղեմ դուրպայս բազումս ձեռագործս իմ քեզ եւ կնքամօր իմում Մարգարտայ. զգալ ցայգանոց Գոմինիկեայ, եւ մի ի կարմիր թաշկինակաց իմոց՝ Մարեմայ: Յաւելում ի ծրար անդր կորիցս մրգաց՝ ի նախաձաշիցս իմոց պահեալ, եւ հատս ազգի ազգի ծառոց՝ ի ժամ գրօսանաց իմոց ի պարտիզի աստ վանացս քաղեալ: Յաւելում եւ սերմանս ծաղիկանց, մանուշակ, մարգարիկ, հրանունի եւ այրեծաղիկ, ի դաշտաց ժողովեալ. զի յարօտս աստ ծաղկունք գեղեցիկք քան ի մերսն գտանին, անտեսք լեալ: Ոչինչ երկրայիմ զի ծրարս այս հաճոյ եւս թուեսցի քեզ եւ կնքամօր իմում քան զպարկն դրամոց, բաժանման մերոյ ի միմեանց եւ իմոցս արտասուաց առիթ: Ուրախ եղէց յոյժ ի վաշկել ձեր յաւուր միում ի տեսիլ ինձորենեաց անելոց ընդ պանանիս, եւ ոստոց կազնեաց խառնելոց ընդ քոքենիս. թուեսցի քեզ յայնժամ կալ ի նորմանտիս, զոր յոյժն սիրես: Պատուիրեցեր ինձ գրել առ քեզ զխնդութիւնս իմ եւ զվիշտս. յորմէ հետէ մեկնեալս եմ ի ձէնջ, չեղեւ ինձ երբէք խնդալ. իսկ ի վիշտս իմ սիրովիմ, անեալ զմտաւ զի ուր կամս՝ կամօքն Աստուծոյ եւ հրամանաւ քով կամ: Այլ դառնագոյն ինձ այն է, զի ոչ ոք ինձ ասոյ յիշէ գրեզ, եւ ոչ ընդ ումեք լինի խօսել ինձ՝ գրէն. աղախնայք իմ, զի մի ասացից հօրաքեռն մերոյ՝ որում աղախնեն քան ինձ, ի խօսել իմում զիրաց՝ որ առաւել սիրելի են ինձ, ասեն. Յուշ լիցի օրիտրդիդ՝ զի ի Գազլիս կաս, պարտ է քեզ զաշխարհս վայրենիս ի մոռացօնս արկանել: Այլ ինձ լիցի իսկ մոռանալ զանձն քան զերկիր՝ ուր ծնեալս եմ, եւ ուր դուքդ կայք. երկիր վայրենի այս է ինձ՝ ուր կեամս անտէրունչ, եւ չունիմ զոք՝ որում կարացից յայանել գտերն, սրով սիրեմս գրեզ եւ սիրեցից մինչեւ ցմաշ,

Մայր իմ սիրելի եւ անձկալի  
Հնազանդ եւ կաթողին դուստր քո  
ՎԻՐԳԻՆԵԱ ԼԱԳՈՐ

Յանձն առնեմ բարեգութ մօրդ իմում զՄարիամ եւ զԴովինիկ,  
որ այնչափ խնամ կալան ինձ ի մանկութենէ. գգուեսջիր յինէն  
զչնիկն Հաւատարիմ, որ եգիտն զիս յանտառի:

Ջարմացեալ կարկեալ կայր Պօղ, զի Վիրգինեայ յիշատակեալ  
զամենեսին, մինչեւ զչնիկն եւս, եւ չասէր ինչ տակաւին զինքե-  
նէ. բայց սովորութիւն է կանանց զխրեւադայն իմաստս թողուլ  
ի վերջ երկարագունից խկ թղթոց: Վիրգինիա յաւելոյր յետ գրու-  
թեան՝ յանձնել առաւելապէս ի խնամս Պօղայ զսերմանս մանու-  
շակի եւ զայրեծաղկին, տայր նմա տեղեկութիւնս զերկաքանչիւ-  
րոցն, ցուցանէր զվայրս զխաղտ սերմանցն արկանելոյ, եւ ասէր.  
Մանուշակն է ծաղիկ փոքրիկ ի գոյն ձանձախարիթ, սիրէ ծած-  
կել մացառաղօլ, այլ բուրումն անուշահոտ յայտնէ զնա փութով:  
Եւ ասէր սերմանել զայն յեզր աղբերն, առ արմին քոքենուոյ իւ-  
րոյ, եւ ապա յաւելոյր. Ա. յրեծաղիկն զեղեցիկ է, եւ ի թուխ  
կարմիր սպիտականիչ՝ գոգցես զսուգ զգեցեալ, վասն որոյ եւ այր-  
ւոյ ծաղիկ անուանի. սիրէ նա զքարուտ եւ զհողմակոծ վայր:  
Եւ ասէր սերմանել զայն ի քարածայռ բլրին՝ ուր ի վերջնումն զի-  
շերի խօսեցեալն էր ընդ նմա, եւ աղաչէր՝ առ սէր իւր զքարա-  
ծայռն զայն կոչել Վէմ հրաժեշտի: Եւ սերմանքն էին ամբոփեալ  
ի քօսակ հիւսիէն անսպաճոյձ, այլ կալաւ զայն Պօղ որպէս գանձ  
անդին՝ ի տեսանելն զնովաւ զսկզբնատառս անուան իւրոյ եւ զօ-  
րիորդին Պ եւ Վ խառն ընդ միմեանս հիւսեալ հերովք. զորս ՚ի  
զեղոյն ծանեաւ՝ զի էին ի վարսից Վիրգինեայ: Ի լւար գրեւոց ա-  
ռաքինի եւ բարեգորով օրիորդին ամենայն ընտանիք նորա յար-  
տասունս չարժեցան. եւ գրեաց մայր նորա յանուն ամենեցուն  
պատասխանի, առնել որպէս եւ հաճոյ թուի նմա, կալ անդ կամ  
դառնալ, եւ ասէր՝ զկարեւոր մասն բարեկենդանութեան իւրեանց  
կարուսեալ ամենեցուն ի մեկնել նորա, եւ զի ինքն առաւել քան  
զամենեսին տառապէր անմխիթար:

Կ Ի Ի Ր Ո Ս Ե Ի Վ Ի Է Ն

Հօրան, խալանց հօր  
Կրոց, կէտաւան (սէւ)  
Սեղիւ, կտորոք պարտալ (Յայն)  
Հագնի, քարոյ ծառ  
Քիս, ցորենի կամ քարոյ հասին փուլը

Վէս վէս, (բալէս բալէս)  
Կոփիւն, վահանաց զարնաւելս Յայն  
Սնդոյր, հանգիստ, խաղալ  
Շկանիւն, օրին ճեղքելու Յայն  
Յուկապ, (հիանապ) պրօպոն

Կ Ի Ի Ր Ո Ս

Յանկարծ եւ ես էի հովիւ  
Ընդ աղքատին բնակեալ հիւղիւ,  
Եւ զգեղմնաբարձ ուրից հօրան  
Արած էի հովուացոյ ի վրան,  
Կամ թէ զհասուն ընդ ձեզ ողկոյզ  
Ժողովէի կըթոց ի յուս,  
Եւ ի յանտառս հովանախիտ  
Ի կարկաջ ջուրց սկանակիտ  
Բազմեալ անհող գոհ եւ անտենչ,  
Որպէս ըզմի հովուացոյ ի ձէնջ,  
Ընդ վարսագեղ կաղամախիւք  
Նըւագէի ի ծղօտ գեղջուկ,  
Եւ ի կերկեր ճըպուանց ի ճռինչ  
Հանգչէի քաղցր ընդ ձեզ ի նինջ:

Վ Ի Է Ն

Սակայն ուստի ի քեզ այդքան  
Իղձք ընդ կենցաղս այս հովուական.  
Իցէ՞ երբէք առեալ քո զփորձ,  
Հովիւ եղեալ կամ երկրագործ:

Կ Ի Ի Ր Ո Ս

Ա. յապէս փութով, Վրէն, դու զմեզ  
Ի բաց յուշոյ քումնէ մերժես.  
Ո՛չ աշնայնոյն ըզցօղաւոր  
Ժողովէաք ընդ քեզ խընձոր,  
Եւ զկարմրորակ նուռն ի յիրեար  
Ընդ ծաղիւտէտ գլխաք դալար.  
Եւ վաղեմի հաղնոյն ի ծերպ,  
Որ ամբառնայրն առ գետեղբր,  
Ո՛չ դու ի նմա դարանէիր  
Չըգել զյունապ յիս ըզկարմիր.  
Եւ զչազանակըս կաթնալից  
Ի բարձրուղէչ կողերց ծայրից  
Ո՛չ ի ճապուկ հարեալ մահակ  
Եւ կամ քարամբք թօթափէաք:  
Եւ ծերունուոյ ընդ հօր քոյին  
Մինչ հովուէաքն ի միասին,

Չէ՛ւ իսկ, Վըրէն, գայ քեզ ի յուշ  
Զի բազմէաք յարօտ քընքուշ.  
Նա քաղցր ի նուրբ երգէր ի սրինգ,  
Եւ կայթս ըզմեօք տային խաշինք:

Վ Ր Է Ն

Ո՛ հովուակիրցդ իմ եւ եղբայր,  
Որ արդ պաշտիս բախտին ի ծայր,  
Ոյր եւ ի հիւզըս մեր գըձուձ  
Հընչէ համբաւ յազթող զինուց.  
Ըգքեզ Երասիս ըզքեզ, Կիւրէ,  
Շօշ եւ Բարեւ արդ մեծարէ.  
Եւ զի՞ թողեալ քո զարքունիս,  
Ի մէջ հովուաց աստ դեգերիս:

Կ Ի Ի Ր Ո Ս

Ըզխաշն հովուել դէթ սուղ ինչ ժամ  
Ի դալարսոյն ընդ քեզ ցանկամ.  
Ըզձեռանէ իմնէ զաջոյ  
Ունեւ երկնից եղեւ հաճոյ,  
Եւ ամբառնալ զիս բարձր ի գահ,  
Ի Բարեւոն հորդել ինձ ոահ:  
Սակայն բարձաւ յինէն հանգիստ,  
Զոր անդք ծածկեալք յատօք ի քիստ՝  
Եւ հօտք ըզմեօք շուրջ պարաւոր  
Յօրինէին մեզ աստանօր:  
Ի ստուեր նոճեացըս բարձրուղէչ,  
Զոր յարքունիս յիշեմ յաւէժ,  
Աղէ սկզբիր երգեւ դու ինձ,  
Ես ըզխաշինսրդ զիտեցից:

Վ Ր Է Ն

Զոր ի դալար նոճոյս ի բուն  
Քանդակեցի նըւադ ինչ խուն,  
Զայն փորձեցայց աւնուլ ի յերդ.  
Ոչ իսկ սաս խուլ են մեզ այերք,  
Վերածայնեն լերինք եւ բլուրք,  
Եւ անտառին ծառք թաւամուրք:

Կ Ի Ի Ր Ո Ս

Ո՛հ, ծերունին թէ կեայր մեր հայր,

Զիմ բախտ ի սրինդն ընդ քեզ ողբայր.  
Նա ի կապելն ինձ թաք ի գլուխ,  
Յողով եհեղ արտասուաց ուղիս:

Վ Ր Է Ն

Աւաղ փառաց անցաւորի.  
Որպէս վըտակ ընդ դալարի  
Վէտ վէտ ալեօքըն սողալով,  
Վաղ վաղ ի ձեմ դիմէ ի ծով:  
Իցի՛ւ չէին լեալ լըսելի  
Ուռնադըղորդ կարծր ի սալի  
Կոփիւնք զինուց արիւնհեղ,  
Եւ ոչ փողոց հընչումն ահեղ:  
Ո՛վ երջանիկ դու անապատ,  
Որ ի շխամանց զինուց ազատ,  
Ըզմըշակին դիւր եւ խաղաղ  
Եւ ըզհովուին գործես կենցաղ:  
Սաղարթախիս թուփք գեղանի,  
Լերուք խաշանցս իմ հովանի.  
Նոցունց ի բաց չիք այլ ինձ հօդ,  
Եւ ոչ քան զիս բարերախտ ոք:

Կ Ի Ի Ր Ո Ս

Զիք, եւ կարի իսկ յերաւի,  
Զիք քան ըզքեզ ոք ի յերկրի  
Երանաւէտ, թէպէտ ի վեհ  
Գերածայրեալ բախտին նըսեհ:  
Նոճիք բարձունք դուք ինձ վըկայք,  
Աղբերք վըճիտք դուք եւ վըտակք.  
Յորմէ հետէ թողի ըզձեղ,  
Ալէկոծիմ հօգս ի պէսպէս.  
Եւ ոչ երբէք յանդոյր ի նինջ  
Եղեւ հանդչել ինձ վայրկեան ինչ:  
Երգուեալ յարեւդ, հովուիկ Վըրէն,  
Միշտ անմոռաց հօգամ ըզքէն.  
Այլ հայրենիդ ի տաղաւար  
Վասն այսր ըզքեզ թողի ցայս վայր:

Վ Ր Է Ն

Շատ իսկ սիրոյդ ինձ աներկրայ

Ետուր, Կիւրէ, գառհաւատչեայ .  
 Դու զգանկապատըս զայս անձուկ  
 Ընդարձակեալ արտորէ իւք,  
 Եւ ըզբըլրակս իմ եւ զարօտ  
 Դու ծածկեցեր խաչանց ի հօտ .  
 Շուրջ թափառին զինեւ գառինք  
 Յոր վայր հովուիս լլսի սըրինք .  
 Լընուն պարարտ կաթամբ ըզտաշտ  
 Ճարակաւոր արջառքս ի դաշտ .  
 Ձեղուն ի բերս որթոց հընձանք,  
 Եւ արմատեօք ինձ անդաստանք :

Կ Ի Ի Ր Ո Ս

Թէ նուազագոյն սուղ ինչ բոպէ  
 Հող արքունեաց զիս տաղնապէ,  
 Ձնախիկ կենացս ի պարտէզն իմ  
 Ըզտիպ ի յուշ ամեալ սփոփիմ . . . :  
 Բայց է արդէն մեզ երեկոյ,  
 Դառնայ ազատ եզն ի լըծոյ .  
 Երինջք ըզխոսին ահա փայլուն  
 Դանդաղաքայլ ամեն ի տուն,  
 Եւ երկայնին ըստուերք լերանց .  
 Քանի՜ փութով մեզ պահս էանց :  
 Բարեաւ մնա . ահա մեկնիմ,  
 Այլ ոչ իքէն մեկնի սիրա իմ :

Վ Ր Է Ն

Ողջամբ, Կիւրէ, դու միշտ կեցջիր .  
 Թէպէտ ի մէնջ դու տարագիր,  
 Այլ յարքունիս կեցեալ հովիւ,  
 Ձբախտին անչարժ կալցիս զանիւ :

Հ. Ս. Հիւսիսեան



Լիսր, Էփ Է  
 Զգլխեալ, Խաչաժ ցնորժ  
 եւրապարձ, փշ Լարժուլ յաղեալ

Անցուցանել (գնրագ), (հրաշ) հարել  
 Բակ, ԷՆԷԽԻ  
 Պարտել, Ինձիւլ, Կարել

Յամին 1744 ի քսաներորդի չորրորդի աւուր ամսեանն դեկտեմբերի, յարուցեալ Պօղոյ ընդ առաւօտն՝ ետես դրօշակ սպիտակ ՚ի լեառնն Դիտարան, նշանակ գալտեան նաւու : Եւ ընթացեալ ՚ի քաղաք անդր՝ առնուլ զրոյց, եկաց անդ մինչեւ ի գարձ վերակացուի նաւահանգստին՝ որ երթեալն էր ըստ սովորութեան յայց եկաւորի նաւուն : Որոյ դարձեալ ընդ երեկս, պատմեաց քաղաքապետին՝ զի երեւեալն այն նաւ էր Սէնժէրան, որ տանէր լտերս 140 բիւր, զի նաւապետին անուն էր Ոպէն, զի չորիւք փարսախօք կայր ի բացեայ, եւ զի ՚ի շնչել աջողակ հողմոյ՝ ի վաղիւ անդր ընդ երեկս մարթ էր նմա մտանել ի նաւահանգիստն Լուգովիկեան . այլ հանդարտութիւն էր յայնժամ հողմոց : Նա ինքն եւ զնամականին, զոր բերէր նաւն այն ի Գազդիոյ, ետ քաղաքապետին . յորս էր եւ առ Լադուր տիկին գրեալ ի վիրդինեայ : Ընկալաւ զայն Պօղ, եւ համբուրեալ հրճուանօք եղ ի ծոցին, եւ դիմեաց ի տուն . եւ ի նշմարել ի հեռուստ զընտանիսն՝ որ մնային դարձի նորա ի վէմն հրաժեշտի, ամբարձ զթուղթն ի վեր՝ ոչ կարելով բարբառել . յայնժամ փութացան ամենեքին առ Լադուր տիկին, լսել զբանս թղթոյն : Եւ զբէր վիրդինիս առ մայր իւր՝ որ ինչ ի հօրաքեռէն կրեալ տառապանս . քանզի բռնի զնա կամեցեալ հարսնացուցանել, եւ ի չառնուլ նորա զայն յանձն՝ անժառանգեալ էր զնա, եւ նոյն հետայն յուզարկեալ յետս, որով հարկ լեալ նմա ի մըըրկալից եղանակի հասանել ի կղզի անդր : Ձի ընդունայն լեալ էին ամենայն ազերսական բանք իւր առ ի համողել զնա՝ յանդիման առնելով նմա զկարօտութիւն մօրն օգնականութեան իւրում, եւ զայլազգ կեանսն՝ յոր սովորեալն էր ի մանկութենէ : Ձի յիմար յաչս նորա թուէր եւ զգլխեալ յընթացմանէ՝ առասպելեաց . զի ցնձայր ընդ բախտ իւր տեսանելոյ վերստին զընտանիսն եւ գիրկս արկանելոյ նոցա . եւ զի առօրին զանձուկ սիրոյն մարթ էր նմա լընուլ, եթէ նաւապետին ներեալ էր նմա իջանել ի մակոյկ վերակացուի նաւահանգստին . այլ նաւապետին չէր թողացուցեալ նմա զայն վասն հեռաւորութեան իւրեանց ի ցամաքէ, եւ վասն երբազարձ խորոց ծովուն ի հանդարտել իսկ հողմոց :

Ի լուր բանից գրոյն՝ ընտանիքն առ հասարակ ձայն բարձին հըր-  
 ձուանօք, տերանց եւ ծառայից գիրկս արկեալ միմեանց՝ թէ ահա  
 եհաս Վիրգինիա: Յայնժամ Լադուր տէգին ասէ ցՊօղ. Ե՛րթ,  
 որդեակ իմ, ազդ արա դրացեաց զգալուստ Վիրգինեայ: Եւ Դո-  
 մինիկ ընդ նմա ոստ բեւեկնեայ ջահ ի ձեռին՝ յուղի անկեալ գա-  
 յին առ իս: Էր ժամ իբր տասներորդ երեկոյին, եւ իմայն ինչ ան-  
 ցուցեալ զճրագն եւ ընկողմանեալ՝ տեսանէի լոյս յանտառին ընդ  
 ծերպս հիւղին. եւ լուայ անդէն զձայն պատանեոյն՝ որ կոչէրն  
 զիս: Յարեայ առժամայն, եւ չեւ իմ զգեցեալ՝ դիմեաց նա առ իս,  
 եւ անկեալ զսարանոցաւ խմով շնչասպառ եւ խեղայեղեալ, ասէ.  
 Արի՛ եկ ընդ իս, զի ահա եհաս Վիրգինիա. երթիցուք ի նաւա-  
 հանդիստ անդր, ուր ի ծագել այգուն մտցէ նաւն խարխալ ար-  
 կանել: Վաղվաղակի անկաք յուղի, եւ յանցանել ընդ լեռունն Եր-  
 կայնանիստ ի ճանապարհին՝ որ ի Բամբլումուսէ՝ զնայ ի նաւահան-  
 դիստն, լուայ սոնածայն ի յետուստ՝ զի գայր հնդիկ ոք ձեպըն-  
 թաց: Եւ իբրեւ եհաս, ասեմ. Ուստի՞ գաս, եւ ո՛ւր գնաս տագ-  
 նապաւ: Ասէ. Գամ ի Բուտրբտոր թաղէ, եւ գնամ առ քաղաքա-  
 պետն ազգ առնել՝ զի նաւ մի գաղղիական խարխալ արկեալ առ  
 Ամպր կղզեաւ, հրետս արձակէ, խնդրէ օգնութիւն: Եւ զայս ա-  
 սացեալ, անց գնաց ձեպով: Յայնժամ ասեմ ցՊօղ. Երթիցուք անդր  
 ի Բուտրբտոր ընդ առաջ Վիրգինեայ, զի երկուք եւեթ փարսա-  
 խօք հեռի է աստի: Գնայաք ընդ հարաւակողմն կղզւոյս, եւ էր  
 տօթ հեղձամղձուկ. լուսին ի բարձու ի բակ մթին եռապատիկ  
 պարուրեալ. եւ երկինք աղջամղջին ահարկու. ի նշոյլ խիտ առ խիտ  
 փայլատականց՝ երեւէին ամպք երկայնածիփքք թանձուներք եւ նսեմք  
 զի գային սրբնթացք ի ծով ընդ խոնարհ, թէ եւ ոչ չնչեր հողմն  
 լ՛ցամաքի, եւ դիզանային ի մէջ կոյս կղզւոյս: Թուէր մեզ լսել  
 եւ սրտածայն ի գնալս մերում. այլ ուչ եգեալ ծանեաք, զի էին  
 բոմբիւնք հրետից կրկնեալք յարձագանգաց: Ի ձայնէ անտի, եւ  
 տեսիլ մրրկին ընդ ծով, զգողանի հարեալ՝ ոչ եւս տարակուսէի զի  
 ի վտանգի կայր նաւն ի ծովու մերձ ի կորնչել: Վայրիկ մի անցեալ  
 իբր կիսաժամու, եւ ոչ եւս լսելի լինէին ձայնք հրետից. բայց  
 լուսթիւնն այն ահաւոր եւս քան զթնդիւնսն էր: Ձեպէաք յըն-  
 թացս անշունջք, ոչ իշխելով երկաքանչիւր զտագնապ սրտից մե-  
 րոց յայանել իրերաց, եւ ի մէջ գիշերի ի ծովեզր անդր հասաք ՚ի  
 Բուտրբտոր ընդ քիրտն թաթաւեալք: Գային անդր արիք եւ խոր-  
 տակէին ահեղ շառաչմամբ, ծածկելով զխիճ եւ զժայռ ի սպիտա-

կախայլ փրփուր ակնախտիղ, եւ ի լուսաբեր կայծս՝ յորոց ի նշոյլ  
 նշմարէաք ի խաւարի անդ զմահոյիս ձկնորսաց արկեալ ի ցամաք  
 քաջ ի բաց ի ծովէ:

### ԾԵՐՈՒՆԻ ՍԵՐՁ Ի ՍԱՀ, ԵՒ ԸՆՏԱՆԻՔ ԻՒՐ

Կակաչ, (լու) Զուգեթի | Յամա յամպր, երկու Գրգիէր  
 ձապաղիք, արեւոս Գրգիէր | Ակաղձուն, Էթ Էցաւոս

#### ԾԵՐՈՒՆԻՆ

Որդեակ առ Բնչ գաս, տակաւին է մեզ տիւ,  
 Ընդէ՛ր եւ ս՛ւմ թողուս ըզխաշն անհովիւ:

#### ՈՐԴԻՆ

Դարձ ի խըշտեակ քո, ընդ յարկաւդ հանգիր, հայր,  
 Արեւն ահա արդ խոնարհի յիւրն ի մայր.  
 Ճարակաւոր ի ծաղկաւէտ դալարիս  
 Թափաւի խաշն առ գետեզերքն ի հովտիս,  
 Ուր ըզլրարբի թուփն ի մատաղ եղեգնուտ  
 Ծածկէ երասիս մանուածաւալ ի պըտոյս:  
 Յարդ ըզնտսին արածէի ընդ արօտ,  
 Նըւագս ի նուրբ գաշնակելով ի ճըզօտ.  
 Թողեալ մանկանն իմ զերամտին արդ ի խնամ,  
 Ըզքէն ի հոգս այսըր կանխեալ առ քեզ գամ:

#### ԾԵՐՈՒՆԻՆ

Բիւրս ինձ, որդեակ իմ, բիւրս ինձ տամ երանի,  
 Ձի այգախոտմդ եղէ որդւոյ արժանի.  
 Ում մըտադիւր թողում ըզցուսս հովուական,  
 Մերձեալ կենացս իմ աւասիկ ի վախճան:  
 Բայց հոյք խաշինն եւ արջառոց զիտրդ կեան,  
 Ծաղկէն այգիք, պըտղարերք՝ անդաստան.  
 Ձի զջօրութիւն յինէն աւար հարին ամբ,  
 Ոչ եւս ի յայց շըրջել նոցին զօրեն կամբ:

#### ՈՐԴԻՆ

Յուէրժ մայրեաց յաւելցին, հայր, ամբ ըզքեւ,  
 Եւ մի տեսցեն որբ ի քէն աչք իմ զարեւ:

Այլ ըզխաշանց եւ զանդոց ինձ թող ըզհոգ ,  
 Եւ մի՛ , հայր , սիրտ քո հաշեացի ըզնոքօք .  
 Հունձք աւելի են քան հընդեակը հընդերկր ,  
 Հովուեմ ընդ քեզ , վարեմ զակօս ընդ երկիր .  
 Չեմ ինչ համբակ , ոչ անհըմուտ ինչ ի գործ ,  
 Ի հայրենիդ վարժեալ հրահանգս եւ ի փորձ :  
 Գու զանդաստանս այս յօրիներ գեղանի ,  
 Որ չէրն ի հերկ յառաջագոյն պիտանի  
 Ոչ ի յարօտ խաչին եւ ոչ յայգեստան ,  
 Այլ անջըրդի ամուլ անբեր եւ խոզան :  
 Գու զարմրտիս փոխան փըշոց բուսուցեր ,  
 Քեւ ծածանին անդքս ի յորայս հասկաբեր .  
 Ծածկեն զարօտս հօտք համասփիւս եւ նախիր ,  
 Ուր գարանէր աղուէսն եւ խլուրդ երկրաբիր .  
 Ծիրանեփայլ կակաչք , շուշանք ձիւնաթոյր  
 Չքքնաղագեղ սըճնեն ըզդաշտ եւ ըզլուր .  
 Ձեղուն գինւոյ եւ արմտեաց մեզ մըթերք ,  
 Եւ ըզսեղան մեր ընդոճինք լընուն բերք :

ԾԵՐՈՒՆԻՆ

Այլք թիակօք ըզկոյր անդունդըս յուզեն ,  
 Ի հուր մատնեն կէսք ըզքաղաքս եւ ի զէն ,  
 Ջի յսակեկուս յականակալ ի բաժակ  
 Ըզձաղկահամ արբցեն գոլթնեան զանասակ :  
 Այլք գիմադրաւ կըուռին ընդ խուրթ եւ ընդ խոչ ,  
 Առ ի նընջել ի ախրացի ծիրանուջ ,  
 Կէսք շընչասպառ պեղեն ի բովըս զոսկին ,  
 Ի ճապաղիս այլք ի յարեան ներկանին ,  
 Այլք տարագէմ փոխեն ըզսեամս ընտանիս ,  
 Եւ ընդ օտար երկնաւ խընդրեն հայրենիս .  
 Իսկ ըզպարէն իւր ժիր մըշակն ի յերկիր  
 Փայլուն խոփոխըն պատրաստէ լիալիր ,  
 Եւ անդըստին ըզմանկըտեակն իւր տածէ ,  
 Աներկեւան առ ի սովոյն արկածէ .  
 Հանգչի անհոգ ընդ հովանեաւ քաղցր ի նինջ ,  
 Եւ առ նմա խաչն եւ արջառ եւ երինջ :  
 Նա թագաւոր է ի սըրտին մեծայաղթ ,  
 Եւ ոչ ըզնուստս զիւրն ընդ նորայն փոխէ զբաղդ :

ՈՐՈՒՆ

Ահա մանկիկն ընդ հօտն այսրէն հատեալ գայ ,  
 Եւ մայրն ըզհետ նորին ոչինչ ի բացեայ .  
 Ծաղկամբ հովուիկըն պըսակեալ դալարեաւ ,  
 Եւ հովուհւոյն լըցեալ ցօղով վարաքըն սեաւ :  
 Խաչն ի փարախ ահա դառնայ կըշտապինդ ,  
 Արժաթմախայլ ի շող լուսնին առեալ թինդ .  
 Եւ ծանրաբեռն ըստեամբք ի յոյր կաթանէ ,  
 Արջառն ընդ սեամս հագիւ գոմոյն մըտանէ :  
 Որդեակ իմ , սրկ մի մի զբոսս ի համար ,  
 Գուցէ գըտցէ զսք արտաքոյ գազան չար .  
 Տես զի մի այծն ըզքեզ ի կորն ի վրիժակ  
 Հարցէ , ի բակ գաւթիդ վարեալ դըժկամակ :  
 Հովուիկըք քաջ , ըզքեւ մայրիք եւ լերինք ,  
 Ըզքեւ աստեղք հովանասցին եւ երկինք ,  
 Խաղապտտին ըզքեւ գառինքդ աւադիկ ,  
 Եւ ճանաչէ զձայն քո ստընդեայն դեռ ամիկ :  
 Աճեաց , բուսակ չըքնալ , բուսակ բարբրասս .  
 Լիցին երկինք քեզ զօրավիզն եւ նըպաստ .  
 Եւ հովուեսցես քեզէն խաչինդ հուս ընդ հուս ,  
 Ձհայրենաւանդն իմ ժառանգեալ քո ըզցուս :

ՀԱՐՍՆ

Չայն ինձ սըընգի էած գեփիւս քաղցրաշունչ ,  
 Մինչ հաւսքեալ յօրինէի ես ի փուռջ  
 Ըզխրոխտ կակաչ , ըզյակընթեակ երփնագոյն ,  
 Եւ զմանուշակ անուշահոտ եւ ցածուն :  
 Իջի առ խաչն , եւ իբր հովիւ մի հըմուտ  
 Ահա նուագէր մանկիկն ի ծղօտ բեկանուտ .  
 Քաղցր ի հովախ երգեն սոխակ եւ սարիկ ,  
 Այլ քաղցրագոյն երգէր որդեակն իմ հովուիկ :  
 Տեսի զչըրթանցըն շարժել մեղմ ի բեկբեկ ,  
 Եւ ընդ ծակտին զմատաղ մատանցն երթեակ .  
 Արկի նըմա գիրիս եւ համըոյր մայրենի ,  
 Ձծաղիւսնսն ի հիւս վարսիցն ածեալ գեղանի ,  
 Եւ զհօտն արկեալ ի ցանկափակն ի գաւթի ,  
 Արդ գամք ի տես քո , երջանիկ ճերուենիդ :  
 Այլ իբր , աւաղ , խաբեաց զիս յոյս յեղյեղուկ ,

Մերթ ցընծութիւն մերթ պատրաստեալ ինձ ըզուուզ :

ԹՈՌՆԵԱԿՆ

Հայր ես ըզքէն նըւագէի երդ թախիժ ,  
Աղերս արկեալ լերանց բըլրոց եւ մայրից ,  
Ձի շնորհեսցեն ըզծերունիդ իմ ինձ հայր ,  
Կեալ ընդ ծնողացս եւ ընդ թողինդ յամս յամայր :

ՈՐԴԻՆ

Յանկա՛րժ երկնից թէ լըսելի լինէին  
Աղիողորմ իղձք եւ աղերս անմեղին ,  
Եւ զկայ քո , հայր , առնոյր կենացդ երեկոյ .  
Ձի ցանկալի մեզ քան զարեւ են կեանք քո :

ՄԵՐՈՒՆԻՆ

Շատ խակ կեցի . ընդ երկնաշուն օյժմ ընդ ուհ  
Ուղեւորեւ է ինձ , որդեակ իմ , ի ճահ :  
Կեցի յերկար , յերկարագոյն զիմ կենցաղ  
Յօրինեցին ամք երջանիկք եւ խողաղ :

Որդի եւ հարսն ինձ ըստ սըբտի եւ թողնեակ  
Ետուն երկինք , ծածկեն զարօտս իմ անդեսայք .  
Ոչ լիագոյն քան զիմս հընձովք ակաղձուն  
Աձեն երկնձք ումեք յանդոյ զսայլ ի տուն :

Անփորձ ցաւոց կեցեալ ի հիւզս յայս նըսեմ ,  
Յօժար ըզյամր օրհաս մահուս ուղունեմ :  
Լեր դու , որդեակ , հաստչին քում փոյթ ի պաշտօն ,  
Վաստակատէր իբր ըզմեղու եւ գործօն .

Մի՛ զհայրենի թողուր կենցաղդ եւ ըզլաշա ,  
Երկինք յաւէրժ լիցին այսպէս ընդ քեզ հաշա :  
Ի հանգըրուանս յայս եւ յանձուէլ ցանկապատ  
Յաշխարհածուփ ալեաց կեցի ես ազատ :

Աստ ընկալայ , եւ աւանդեմ շունչ զիմ աստ ,  
Աստի յարեսայց յերկնահրաւէր փողոյն ազգ :  
Եկ արդ , որդեակ , զարտեւանունս իմ կախօ .  
Ողջամբ մընա , զածիւնն իմ աստ տուր հողայ :

ՀԱՐՍՆ

Չարմանալի ինձ քո ամբիժդ էր կենցաղ ,  
Արդ զարմանամ ընդ մահ քո նոր եւ չըքնաղ .  
Յերկրէ յերկիր թըռչիս թեթեւ ի կամար ,  
Աղաւնակերպ փոխեալ եւեթ ըզդադար :

ՈՐԴԻՆ

Ըզքեզ լերինք ինձ ողբակիցք եւ անտառք ,  
Ըզքեզ լացցեն ընդ իս խաչինք եւ արջառք .  
Վիմակաւոց քեզ կանգնեցից աստ շիրիմ ,  
Եւ մի եղծցէ զայն ժամանակն ոխերիմ .  
Տըխուր զնովաւ արկցեն նոճիք հովանի՝  
Քոց վերնածեմ ըզձիցդ ի տիպ գեղանի :  
Եւ ցորչափ խաչն արածեսցի ընդ արօտ ,  
Եւ ընդ հովիտ բուրէ շուշան քաղցրահոտ ,  
Մեղուք ի թիւմ , ճըպուունք ի ցօղ պարարին ,  
Դու յիշեսցիս միշտ առ թողունքս քոյին :

Հ. Ս. Հիւրմիւզեան

ՄԱ

Կուսակ , Կամար , Գմբէթ	Մնոս , շրեանտ , Եզէր
Պղնձաւոր , Բայ պղնձի քոյն	Խուր , Իսկան Խարը Ժայս
Ծաղրիկ , Իսկան Խուշան մը արտաբանի	Քեւել , Կովն մոսին Երեւալ
Հողամաղ , ( Գարս պլանտ )	Տեղ , Կարտ ( Կարտանտ )
Կարկաչել , Խաչայ Կան հանել	Կուկոնեալ , վերաբերեալ
Տախսապարեալ , Կարտ ինչ	Կոմակ , Կարտ արտ
Մարուխ , պարտ , հարտ	Նահանջել , Եր երեւալ
Խուճել , Խաչել , Կարտ	Կայկայիլ , հարտարտ

Եւ արդարեւ ամենայն ինչ մտաւրուտ մրրկի էր գուժկան . ամպը  
զիւտտախօք երկնից մթինք ի ծոցի ի մուսլ ահարկու , եւ յեզերսն  
պղընձաւորթք . ծաղրիկք եւ հողամաղք եւ երամք ազգի ազգի հա-  
ւուց ծովայնոց ընդ խաւարչտին օգս կարկաչելով , թուուցեալ  
չուրջանակի յամենայն կողմանց ի կզզի այսր զիմէին ապաստանել :  
Եւ զինն ժամաւ առաւօտուն հնչէին ի ծովէ ձայնք ահագինք որ-  
պէս հեզեղաց խառն ընդ որտընդոստ ամպրոպս հասեւոց ի լե-  
րանց բարձանց . յայնժամ զոչեցին ամենեքեան՝ թէ ահա մրրկի : Եւ  
մրրկի ահեղ փարատեաց իսկոյն զմէզն՝ որ զԱմար հանդերձ կըր-  
ձին պարածածկէր , եւ նաւն բազմութեամբ նաւորդաց եկն յե-  
րեւան . կայնք եւ թեւք առաջաստից տախտապարեալ , եւ դրօ-  
շակն խոնարհեալ , քառեակ մալխօք յառաջակողմն կուսէ , եւ միւ-  
սով յետուսէ պարաւանդեալ : Եւ կայր նա ընդ Ամար եւ ընդ  
ցամաք խարխախ արկեալ յայսկոյս ժայռից՝ որ զկզգեաւս կան չըր-



Չապատ, եւ մտեալ անդր ընդ խորամաս՝ ընդ որ ուրուք ի նաւաց յառաջ քան զնա չէր երբէք անցեալ: Առաջ նորա կայր դէպ ուղիղ ընդդէմ ալեաց՝ որ ի խորոց ծովուն դիմէին անդր, եւ ի խուժեւ նոցին ի կիրճ անդր՝ ամբառնայր վեր ի վեր, եւ ողնափայտն ողջոյն ընդ օդս երեւէր. իսկ խելք նաւուն յալիս անդր յայնժամ ընկզմեալ վայր ի վայր՝ ծնօտիւքն չափ կորնչէր յաչաց իբր ի սպառ խորասուզեալ: Այսպէս հողմոյն եւ ալեաց յերկիր զնա մղելով, ոչ դառնալ յետ կարէր ուստի եկեալն էր, եւ ոչ խզեալ զպարանըս՝ յաւազուտ անդր խրել, ուստի զնա խորք եւ խուժք անջրպետեցին: Որք ի ծովեզր այսր գային խորտակել ալիք, անդր եւս մինչեւ ի խորչս ներքինս մրմռելով դիմեալ՝ արկանէին զխիճս ի բաց ցլխուն ստանչափ, եւ յընկրկելն անդրէն՝ թողուին ցամաք զյատակ ծովուն ցմեժ հեռաստան, թաւալեալ գլարինս ի միասին՝ ի կերկերածայն մանչիւն ահեղ: Լեռնանայր ծովն հողմուռոյց, եւ կիրճն ողջոյն՝ որ ընդ Ամպր եւ ընդ ծովեզր կղզւոյս, համակ սպիտակ ի փրփուր, կոհակս ուրեք ուրեք ի խոր թխատիպս ածէր ի տեսիլ, եւ հողմ՝ զփրփուրան, որ ի խորչս անդ դիզանային ցվեց ստանչափ, քերեալ զնօքօք՝ առնոյր տանէր ընդ զառ ի վեր ափանց ծովուն անդր քան զփարսախս եւ կէս ի բաց, եւ տեղ սպիտակ ՚ի ցայտից նոցին հասանէր հողմավար մինչեւ ի ստորոտս լերանց չուրջանակի, որպէս ճիւղնարեք ամբարձեալ ի ծովէ: Ամենայն ինչ ի ծիրս երկնից սպառնայր մրրիկ երկարատեւ. ծով ընդ երկինս խառնեալ, ամպք ահարկուք անդադար ի վեր երեւէին, կէսք արագաթոռիչք հանդոյն թռչնոց սլացեալ զմեօք, այլք զօրէն ժայռից կայկայեալ: Ոչ եւս երկնից կապուտակ ուրեք մասն ինչ երեւէր, ի լոյս լրթագոյն եւ թխատեսիլ երեւեալ աղօս էլիցս ընդ երկիր ընդ ծով եւ ընդ օդս:

Արկածքն, յորմէ խիթայաք, պատահեցին. ի սաստկակոծ բաղխմանէ ալեաց՝ առաջակողման նաւուն խզեցան պարանք, եւ միովն եւեթ յետիւտէ կալեալ՝ հարաւ ընդ ժայռս հեռի ի ցամաքէ իբր վաթսուն դրկաչափ: Յայնժամ գոյժ բարձաք ամենեքին, եւ Պօղ ի ծով անդր դիմէր. այլ բունն հարեալ իմ զնմանէ, ասեմ. կամիցիս, որդեակ, զնալ ի կորուստ: Իսկ ինքն գոչէր. Թող երթայց օգնել նմա կամ մեռանել: Եւ զի խելայեղէր առ յուսահատութեան, Դոմինիկ եւ ես պարան երկայն զգօտույ նորին խորհեցաք կապել, եւ կալեալ զծայրէն՝ թողաք նմա զնալ ընդ ալիս. եւ երթայր նա մերթ ի լող, եւ մերթ ընդ ժայռս քաջալերեալ երբէք

երբէք մատչել ի նաւ անդր: Բանգի ծով ի սաստիկ մրրկի անդ՝ էր զի նահանջեալ թողոյր զնաւն գրեթէ ի ցամաքի, մինչեւ մարթեւ հետեւակել շուրջ զնովաւ, եւ էր զի անդրէն զայրագին եւս դարձ արարեալ՝ ծածկէր զայն լեռնածեւ ալեօք, եւ զառաջակողմն նորին յօդս ամբառնայր. եւ զհէք պատանին քաջ ի բաց յետս ի ծովեզր անդր ընկենոյր կիսահեղձոյց, արիւնաթաթաւ ոտիւք եւ լանջիւք կոշկոճելովք: Այլ այն ինչ ոգի առեալ, դիմէր նա անդրէն արիագոյնս ի նաւ անդր որ սկսանէրն փեռեկել յահագին ալեկոծմանէն: Յայնժամ նաւորագոյն յուսահատեալ ի կենաց՝ ընկեցին զանձինս ի ծով, որ ի կայմս, որ ի տախտակս, որ ի կարասի, եւ որ ի տակառս բունն հարեալ: Անդ էր տեսանել աղէտս արժանի անսպառ մարմնքանաց. օրիորդ մատաղ ի խելս նաւին բազկատարած առ տարիպիլն իւր՝ որ ոգւով չափ ճգնէրն հասանել նմա յօղնականութիւն, զի յարիւթենէ անտի նորա ծանեաւ զնա Վիրգինիա: Ի տեսիլ սիրելի օրիորդին, որ յահագին վտանգի անդ կայր, վիշտ եւ յուսահատութիւն զսիրտս մեր կեղեքէին. իսկ ինքն վեհ եւ անվեհեր դիմօք նշանացի առնէր մեզ ձեռամբ, իբր ողջ ջունելով ի հրաժեշտ անդարձ: Նաւորագոյն առհասարակ խուժեալ ի ծով, մի եւ եթ ի նոցանէ կայր դեռ եւս ի նաւին. որոյ մատուցեալ պատկառանք առ օրիորդն, եւ խոնարհեալ առ ոտս նորա, տեսանէք զի հնարէր ի բաց առնուլ ի նմանէ ըզհանդերձան. այլ նորա մերժեալ սաստիւ զայրն, շրջէր զաչս իւր ի բաց: Իսկ որք ի զնին արկածիցն կային, զաղաղակ բարձին. Ապրեցս զդա, մի թողուր: Եւ ահա լեռնածեւ կոհակ ահագին դիմեալ ընդ Ամպր եւ ընդ ծովեզր, գայր մրմռեալ ի նաւ անդր, եւ լրթագոյն ի կողս, փրփրադէզ ի դագաթն, սպառնայր կլանել զնա: Յորմէ զահի հարեալ առնն, ընկէց զինքն ի ծով. իսկ Վիրգինիա ի տեսիլ անհրաժեշտ մահուն՝ աջովն զհանդերձան ամիսփեալ, ահեակ զսրտին, եւ զաչս ամբիծս ի վեր ամբարձեալ, թուէր մի ի գուարթնոց, ՚ի թռիչս ահա ընդ երկինս պատրաստեալ:

Օր աղիողորմ, աւաղ, կորեաւ ամենայն ինչ անդնդասոյց:

Դ Ա Շ Տ Ի Կ Ն Յ Ա Ի Ա Ր

Ե Ղ Ե Ր Մ Շ Ա Կ Ի

Նեկսար, աստիճանակներ  
 Յուսրի, պարսկեր  
 Փորձ (ած), փորձարար  
 Կոնչել, նյութ հանել  
 Պահանգ, պատի հիմ (հանել)  
 Տաւարալ, (արտաբերում)  
 Թաղկել, փայտել, փայտեցնել  
 Թաւուս, անտառ  
 Կվել, ծառել  
 Երիզուս, փայտեցնող փայտեցնող  
 Ծորել, փայտեցնել, վազանել

Խաւարս, ընդհանր, բանալի  
 Բանցել, փրցանել, խել  
 Ահառուս, արհառ ճգնաժ, պետք  
 Փապ, փայտ, անձամբ  
 Հոս, աստիճանակ փայտեցնող  
 Առ եւ ապուռ, աստիճանակ  
 Յեկից մարզ, արեւելեան փայտեցնող  
 Ձեղ, նման, քննարկ  
 Վանգ, նյութ, փայտեցնող  
 Դարաս, փայտեցնող  
 Տաւարալի լինել, փայտեցնող խել

Երկիր էր այն ըստ հարաւոյ  
 Մարդագետին յուռթի անդոյ,  
 Այլ անայի եւ անտերունջ՝  
 Ճըզուանց եւ եթ հընչէր մըրմունջ:  
 Չըքնաղաղեղ տեսեալ զայս զաշտ  
 Արդ, հայր, ասեմ, երկինք են հաշտ.  
 Հար ի գետին ըզըրոյն ցուպ,  
 Քեզ ծերունեոյդ հանգիստ է հուպ.  
 Թէ այս է գեղ վայրիս բնատուր,  
 Ձի՞նչ մըշակի տայցէ արիտուր:  
 Աստ ծերունին զցուպըն կառոյց,  
 Ծուրջ ըզվայրօքն աշտ դարձոյց,  
 Սիրեաց ըզըրիսն եւ զիմ ըզխրատ,  
 Եւ ժըպիտ քաղցր ընդ իւր ճակատ:  
 Ո՛վ հայր — զիմեմ եւ տամ համբոյր—  
 Դու ինձ խրատուռ նիստ աստ անդոյր.  
 Քեզ տաղաւար հարից հեշտեաւ,  
 Հանգչել ընդ քաղցր իւր հովանեաւ.  
 Այգուռն այգուռն իմ աղեղամբ  
 Յորսոց վայրի բերից քեզ ջամբ.  
 Ալեաց տեղոյս կարկաճ անոյշ


Քան զից նեկտար տացեն քեզ ոյժ:  
 — Քաջ է, ասէ, որդեակ սիրուն,  
 Ի սոյն վայրի լիցի մեզ տուն:  
 Տեղիս չըքնաղ պարարտարօտ,  
 Այլ մըշակի ձեռնին կարօտ.  
 Թէ ժիր լինիս ի ջան բարեոք,  
 Մըշակեսցուք լինել ատօք:  
 Արդ զ՛ն արա դու ձեռն ի գործ,  
 Ես խնաստից խորհուրդ տամ փորձ:  
 Ի գործ անկաք ի վայրն ամիտի,  
 Կըռընչեցին արօք ընդ խոտի.  
 Ակօս ակօս հողն արգաւանդ.  
 Ձիւրըն բերրի բանայր արգանդ:  
 Բողբածիր ամրախիտ ցանդ  
 Ածեալ ըզմեօք նիգ եւ պահանդ,  
 Գունեան ծաղկանց եւ ցորենոյ  
 Սերմանս ի փոխ տըւաք անդոյ.  
 Եւ տաշտաթաղ տընկոց ուղչչ  
 Անուշահոտ ի միրգ ու ի խժ:  
 Այգիք ի բլուրս եւ ի մարմանդ  
 Եւ տապախանն ի դարեւանդ.  
 Այգ բանջարոց պէս պէս պարարտ  
 Անտառախիտ ի հաղար արտ...:  
 Եւ բաշխեցաք յածուս ածուս  
 Ձականակիտ ծորեալ առուս.  
 Ըմպէր երկիրըն ծարաւուտ,  
 Թաղկէր զիւրեւ աընկոց թաւուտ:  
 Ո՛վ արօտիս արգաւանդ բունձ,  
 Ձիւրդ ատօք ընծայէ հունձ,  
 Երփինեւ ծաղկանց դաշտ եւ հովիտ  
 Վէտ վէտ շուրջ ծիծաղախիտ.  
 Աղբերականց պարզեալ խոխոջ  
 Գոչէ՛նդ ծործոր լերանց խոտոջ.  
 Հեղիկ ի մարդ՝ սողոսկ ընդ դար  
 Հազիւ կըքեն ըզըեղ դաւար:  
 Պարզ եւ յըստակ օղք քաղցրասիգ  
 Բուրեն վարդից հոտ անուշիկ:

Այլ թանձրաթուփ արդեանց ել բուխ  
 Հինգերորդի ամին ի գլուխ .  
 Ծաղիկք զիւրեանց ետուն ըզհոտ ,  
 Փըթթեալ թերթից հիւսեալ նարօտ .  
 Ատոք հընձոց ոսկեթեւ քիստ  
 Ծով ծածանէր ի զեփիւռ խիստ .  
 Գիրք կաթնարուխ ունդ եւ խաւարս  
 Զօրէն մայրեաց յառնէր հըպարտ .  
 Ծաղկոսպրտակ ծառք պըտղաւէտ  
 Կայթըս տային միմեանց ի հետ .  
 Այլ թեւք քընքուչ ոչ բաւէին  
 Տանել մըրգոց ծանու բեռին .  
 Փափիկի կողերք կըքեալ յառէչ  
 Յաճառուտ բուն խնդրէին խէչ :  
 Ողկոյց կախեալ խիտ փունջ իփունջ  
 Յակինթ փայլէր օղոցն ի շունչ :  
 Քաղցրաբարբառ հաւուց երամ  
 Ոստ ի յոստոյ պարեալ յայնժամ ,  
 Կարկաջասահ խոխոջ ջրոց ,  
 Սիւք ի թըրթուել զազգ տերեւոց ,  
 Մատըն հարեալ ըստ երաժիշտ  
 Նըւագաւոր երգէին միշտ :  
 Հօտք անդէոյ սպիտակ խաչանց  
 Ընդ ծաղկաճեմ հովիտ լերանց  
 Խառնեալ բառաչ նոցին ի վանդ ,  
 Փառք անձաւաց տայր արձագանդ :  
 Ընդ հօրն եւ իմ յայն տեսարան  
 Զմայլեալ թընդայր սիրտ բերկրական .  
 Այն գեղ բուրեալ չէր երկրաւոր ,  
 Այլ քան զԱդին անձառ եւ նոր :  
 Պատրաստեցաք հընձան եւ կալ  
 Եւ շտեմարան լայնածաւալ ,  
 Յուսով թէ գուրք կըթովք զեղցին ,  
 Գողեալ մըթերք հընձովք լըցցին :  
 Սակայն աւազ եւ բիւր աղէտ  
 Ի գլուխըս մեր անկաւ ըզհետ :  
 Յեւից մարգէ դիմեալ հըրոս .

Եհատ ըզցանին եմուտ յակօս .  
 Ըզտաղաւարս ահա քանդեն ,  
 Ըզծառատունկ ցասմամբ բեկտեն .  
 Ոսկեծաւալ դաշտք հասկաթուռ  
 Սըմբակակոխ առ եւ ապուռ .  
 Իսկ մարմանդաց գեղ եւ տեսիլ  
 Զերդ փայտակոյտ կայ տաշտախիլ ,  
 Շիկնոտ ողկոյզք առ հասարակ  
 Ճըմլեալ բըլխեն արեան վըտակ .  
 Հօրանք կաթին խաչն եւ նախիր  
 Ո՛ր ի կապուտ ս՛ր ի նախճիր .  
 Միրքք եւ ծաղիկք կէսք ի կոխան ,  
 Կէսք ի փըրփուր ծըլփին արեան :  
 Զըգեալ դաստակ ես երկիւղիւ ,  
 Գունդ գունդ վիժեալ արտօսը առուիւ ,  
 Ծունը ի գետին աչք ի յեթեր  
 Ի վէս հինէն մաղթեմ նըւէր ,  
 Մի՛ դամենայն մաշել անդութ  
 Ի սուր յաւեր ի կողոպուտ .  
 Գոնէ ներել իմ ձեռասուն  
 Մատաղ տընկոց բիւրաբեղուն :  
 Նոքա ի սուր եւ ի գայրոյթ ,  
 Գըլուխ չարժեն ըստէս եւ փոյթ ,  
 Քանցել եկաք ըզսերմըն ժանդ  
 Եւ սյլ հանել ի սոյն մարմանդ :  
 Տիրեն երկրին այն բարերաստ  
 Ուր երբեմն էր փափուկ դարաստ .  
 Հանեալ գանիւ բըննի ու ի քարչ  
 Ընդ երիզուտ վարեն զիս գարչ :  
 Յիմ անձկալոյն կամ տարազիր ,  
 Ունիմ հանդէս ըզնորին դիր ,  
 Յիշատակաւ իւրով հաշիմ ,  
 Ի սէր յաղէտ միշտ ձենճերիմ :  
 Անդուլ քերեալ յիւր շըրջապատ  
 Ի նոյն մըտիցն իմ յուսահատ .  
 Դառնամ տըխուր ի հիւզ իւրթին ,  
 Կականաւոր գոյժ ի սըրտին .

Չարտեւանաց բացեալ առուք  
Յայդ եւ ցերեկ հեղձամբողձուկ  
Համբ էրէոց եւ ցուրտ ժայռից  
Գուժ արկանեմ ողորմել ինձ :

Ս. Ա. Կ. Ռագրսուռնի



Տարիստու , սերահար  
Բնակախիս , հարդաշար  
Խանդուսանդ , հագնես  
Փանակխանց , սիրտփոր

Սուկայծել , պղտու կամ հաբէլ  
Հանդես առնել , ցոյց տու  
Զգիլ գիտանա , սիրել  
Զեհուչեք , սերտփոր

Արդ ի դաշտ անդր ամի զՊող, եւ ոչ տուեալ նմա հանգիստ՝  
զցայգ եւ ցերեկ յարեւու եւ յանձրեւի շրջէի ընդ նմա, մուրթե-  
ցուցեալ զնա ընդ անտառ ընդ անդաստանս եւ ընդ դաշտորայս՝  
առ ի գրօսեցուցանել զմիտս նորա աշխատութեամբ մարմնոյն, եւ  
շրջել զխորհուրդս նորա անգիտութեամբ վայրացն՝ ուստի՝ սէր  
զնայաքն: Բայց սիրտ տարիստուի գտանէ ամենայն ուրեք զյի-  
շատակս սիրայնոյն. ոչ ախ եւ ոչ գիշեր, ոչ խաղաղութիւն ան-  
մարդի վայրաց եւ ոչ շահնդն բնակախիս շինից, եւ ոչ ժամանակ  
որ դայնքանեաց իրաց յիշատակս յախշատակեալ տանի, ոչ կարեն  
հեռացուցանել զմիտս նորա ի սիրելոյն. որպէս ասեզն շփեալ  
ընդ խանդումանդ թէ եւ շարժեցի, այն ինչ դադարեալ՝ ի բեւե-  
ռն հոյս առնէ դարձ անդրէն: Ի հարցանել խմում ի դաշտս անդ  
թէ յո՞ երթայցեմք, գտանայր ի հիւսիս եւ ասէր ցիս միշտ. Ահա  
լերինք մեր, անդր երթիցուք: Իբրեւ տեսի զի անհնար էր սիտ-  
փել զնա, եւ զի չմնայր այլ ինչ՝ բայց ճակատել զէմ ընդգէմ  
կրից նորա, բովանդակ խի գիտանաքխանց մտացս ի կիր արկեալ  
զհնարս, ասացի ցնա. Այո, ահա լերինքն՝ ուր սիրելին քո բնա-  
կէր, եւ ահա սրտիկեր քոյին՝ զոր դու ինքնին ետուր նմա, եւ  
զոր առ սրտին ի մեռանելն իւրում ունէր՝ զյետին խզն իւր քեզ  
նուիրեալ: Եւ զոյգ ընդ բանիցս մտտուցի նմա զկենդանագիրն,  
զոր առ աղբերոն քոքնեաց տուեալն էր Վիրգինեայ: Խնդու-  
թիւն մահաշջուկ ի տեսիլ սրտիկերին առկայծեաց յայս նորա.  
Ընկալաւ զայն դադարձելով ձեռին, եւ ի շրթունս իւր մատոյց.  
յայնժամ գեղաւ սիրտ նորա, եւ յարեւնուշտ աչս իւր եկաց ար-

տօսր ի հոսելոյ: Եւ յաւելի. Լո՛ւր ինձ, որդեակ իմ, որ սիրեմս  
զքեզ, եւ որ սիրէի զՎիրգինիս, եւ անդակազմ գքեզ ընդգէմ  
յեղակարծ արկածից կենաց յաճախ յարդարէի. առ ի՛նչ է քո այդ  
սուգ անհնարին, դըրլին թէ զՎիրգինեայ զգառնակս իծ աղէտս  
աշխարես: Եթէ դաղէտս քոյին, արդարեւ ծանուեք են. կորուսեր  
զցանկալին յորիորդս, որ հանդերձեալն էր լինել արժանազոյնն  
ի կանայս. նա զիւրն զամենայն փոխանակեաց ի վերայ քո, նա-  
խամեծար գքեզ արար մեծութեան՝ արժանի փոխարէն առաքի-  
նութեան իւրում գքեզ միայն համարեալ. . . :

Իսկ զՎիրգինեայ աշխարիցես դաղէտս, եւ զո՞ր, զմնճ նորին  
թէ զարդի կեանս: Հատոյց նա զհարկն, ընդ որով ազնուակա-  
նութիւն եւ գեղ եւ ինքնակալութիւնք ինքնին անկեալ դնին.  
կեանք մարդոյ, հանդերձ ամենայն ըղձիւքն իւրովք, ամբառնայ  
իրբեւ աշտարակ փոքրիկ՝ որոյ կատար մահ է: Անդասին ի ծնէ  
դատապարտեալ էր նա ի մահ, եւ բարեբախտ գտաւ՝ լուծեալ ՚ի  
կենաց նախ քան զմայր իւր եւ քան զըրդ, եւ նախ քան զքեզ,  
զի ոչ կրեաց մահունս նախ քան զյետինն: Բարի է մարդոյ մեռա-  
նել, որդեակ իմ. բազմահոգ տուընջեանս՝ որ կոչի կեանք, զի-  
շեր ի վերայ հասանէ մահ, եւ ի քուն մահու հանգչին ի սպառ  
հիւանդութիւնք ցաւք եւ արհաւիրք, որ տազնապէս զմեզ ան-  
հանգիստ ի կենցաղումս. . . :

Վիրգինիս կենդանի է տակաւին. տես ինձ, որդեակ, զի ամե-  
նայն ինչ փոփոխի յերկրի, այլ կորնչի եւ ոչինչ. չիք արուեստ  
մարդկեղէն՝ որ զկարի խի փոքրիկ մասն նիւթոյ ի չիք կարասցէ  
դարձուցանել, եւ զիւրդ հնար իցէ կորնչել այնմ՝ որ ճոխացեալն  
է բանականութեամբ, զգայութեամբ, սիրով, առաքինութեամբ  
եւ կրօնիւք, այնմ՝ որոյ անդձանելի են տարերք: Եթէ երանելի  
էր առ մեզ Վիրգինիս, երանազոյն եւս իցէ այժմիկ. համագոյք  
առ հասարակ քարոզէն, որդեակ իմ, զի է Աստուած. չիք հարկ  
ածել քեզ հաւաստիս առ այս. անզգամութիւն եւ եթ առնէ մար-  
դոյ ուրանալ զէն արդարադատ՝ յորմէ երկնչի. զգամք զնա ՚ի  
սրտի, որպէս աչք մեր զարարածս նորա տեսանեն: Արդ կարծի-  
ցե՞ս թէ թողցէ նա անվարձ զՎիրգինիս. կարծիցե՞ս զի արարիչն,  
որ ետ նմա զայն գեղ՝ յորում զաստուածային զօրութիւն նորա  
նկատէիր, չկարէր ասրեցուցանել զնա յալեաց. կարծիցե՞ս զի որ  
ի բարեբաստութիւն կենաց մարդկանս սահմանեաց օրէնս անհա-  
սանելիս, չիցէ կարող այլ իմն ազգ բարեբաստութիւն չնորհել

Վիրգինեայ՝ որում դարձեալ չկարիցեն հասու լինել միտք քո: Եթէ մարթէր մեզ խորհել մինչեւ յոչից ի գոյ ածեալ, կարեալք առնուլ ի միտ զկերպարան գոյութեանս մերոյ. եւ իբր արդ ի խաւարային եւ անցաւոր կենցաղումս կարիցեմք ի միտ առնուլ որ ինչ պատրաստեալն է մեզ յետ մահու: Միթէ իբրեւ զմարդ իցէ Աստուած, կարօտ երկրիս փոքու առ ի հանդէս առնել իմաստութեան իւրոյ եւ բարութեան. չկարիցէ՞ նա անդր եւս քան զգերեզման տալ մեզ ձգել զկեանս: Համատարած ծովուն մէն մի շիթ լի է կենդանեօք առ ի պէտս մեր, եւ չիցէ՞ ինչ վասն մեր յաստեղ՝ որ ի վերայ մեր չըջին. աստ եւ եթ առ մեօք բնակիցէ իմաստութիւնն գերարուն եւ աստուածեղէն բարութիւն, իսկ ՚ի բիւրաւոր գունդս ճաճանչագեղս եւ յանհուն ասպարէզս լուսոյ՝ որ գնոքօք պատեալ, ուր ոչ միրիկք են եւ ոչ գիշեր երբէք գնոսս մթազնէ, չիցէ՞ անդ այլ ինչ՝ բայց վիհ ունայն եւ չէքուչէք յաւիտենական: Եթէ էր մեզ իշխելի, որ չուն իմքս ինչ յանձնէ, հատանել սահման ամենակալ զօրութեանն՝ յորմէ ունիմք զամենայն, ասելի էր՝ զի յեզերս սահմանաց ինքնակալութեան նորա գտանիմք, ուր կեանք ընդ մահու եւ անմեղութիւն ընդ հարստահարութեան մաքառին: Է է ուրեք, ուր առաքինութիւն ընդունի զվարձս իւր. Վիրգինիա երջանիկ է սոյժմիկ, եւ եթէ յօթեաւնաց զուարթնոցն մարթէր նմա բարբառել առ քեզ, զսյս քեզ տայր ողջոյն հրաժարական. իմն Պօղէ, փորձութիւն են կեանք մարդոյ, պատկառ կացի օրինաց բնութեան սիրոյ եւ առաքինութեան, ծովէ ի ծով անցի՝ հնազանդեալ ծնողաց խնոց, հրաժարեցի ի մեծութեանց առ ի կալ ՚ի խոստմանս իմում, փոխանակեցի ըզկեանս ընդ համեստութեան: Զընթացս իմ համարեցան երկինք կատարեալ, եւ զերծ ուցին զիս ի սպառ յաղքատութենէ, ի զըրպարտութենէ, ի վտանգաց, եւ ի տեսանելոյ զաղէտս այլոց. ոչ եւս հասցեն ինձ չարիք ահարկուք մարդկան, եւ դու աշխարհս զիս. ես որպէս նշոյլ լուսոյ պայծառ եւ անաղօտելի, իսկ դու ՚ի գիշեր կենաց անդրէն զիս հրաւիրես: Սիրեցեալք իմ Պօղէ, յուշ լիցին քեզ աւուրքն բարութեան, յորս վաղայարոյց ընդ արեգական՝ զերկնային բերկրանաց առնուաք ընդ քեզ զճաշակ, եւ ընդ ճառագայթս նորին յանտառս ճեմեալք՝ զմայլեաք, առանց գիտելոյ զպատճառ զմայլանացս: Ամբիծք յիզձս մեր, ըզճանայաք աչս լինել ամենեւին՝ ի զին երկններանգ այգուն, հոտոտելիս բոլորովին՝ ի վայելչութիւն անուշահոտ ծաղկանցն մերոց, լսելիս համակ

ի լուր քաղցրածայն հաւուցն մերոց, եւ սիրտ բովանդակ՝ առ ՚ի զգալ զայն ամենայն բարութիւնս: Արդ ահա առ աղբերաւն զեղեցիկութեանց, ուստի հոսեն ամենայն որ ինչ յերկրի են հաճոյք՝ տեսանէ հօգի իմ, ճաշակէ, լսէ եւ զննէ ձեռամբ՝ որ ինչ հագրե երբեմն տկար զգայարանօքն զգայր ընդ աղօտ: Ո՛հ ո՞ր լեզու բաւական իցէ ի նկարագրել զմտնջենալոյս այսր արեւելից փոունս՝ յորս բնակեմ յարակայ: Որ ինչ յաստուածախնամ բարութենէն եւ յամենակալ նորին զօրութենէ ի սփոփանս հէք արարածոյ ըստեղծեալ, որ ինչ ի սիրելութենէ անթիւ էից՝ որ ի նոյն երանութիւն վայելեն՝ ի զմայլմունս նոցա ի միասին յօրինեալ ներդաշնակութիւն, ժառանգեմ բովանդակ անխառն ի ներհակացն: Քաջալերեաց ապա ի հանդէս փորձանացդ, եւ յաւելցես զերանութիւն քումդ Վիրգինեայ ի սէր անսպառ, եւ ի հարստնիս՝ որոյ կացցեն ջահք անշիջանելի: Դադարեցին յայնժամ ցաւք քո, յայնժամ ցամաքեսցին արտասուքդ: Սիրեցեալք իմ պատանեկիկ, իմն Պօղէ, ամբարձ զմիտս քո յանանցն, զի անցաւոր վշտացդ դիւրաւ կարասցես տանել:

Աստանօր առ փղձուկ սրտիս զկայ առեալ, դադարեցի ի խօսելոյ, իսկ Պօղ աղուցեալ յիս, գուժեաց մեծածայն. Ոչ եւս, ոչ եւս է նա կենդանի: Եւ ընդ ողբոցն եկաց ընդ երկար նուաղեալ, եւ ապա ուրեմն ուշաբերեալ, ասէ. Բարի է մահ, երջանիկ՝ Վիրգինիա, մեռայց եւ ես՝ առ ի կեալ ընդ նմա:

### Ի Մ Ա Ն Ս Ո Ւ Ա Կ Ի Ն

ԵՂԵՐՔ ԶՈՎՈՒԻ

Շօիկն , Յոյն , Էրֆ	Գիւր արլ , Գոգիւ
Ակմբիլ , Ժողովուրդ	Տարմ , Էրօ՛ , Խաւք
Իրասանգ , Ժողով Կոստ	Պարիկ , (Բեբէ)
Առնուլ , Բերել	Փող ; Կոլոր
Գալ ի համբոյր , Ընդանենալ	Տնուն , անհաս ծնացած
Հերկահար , ար Լուր՝ հերիւ	Հագներգու , Բանաստեղծ
Երուս , Լորուիւն , Գօթ	Սարդ , Գոգիւ
Հուր ճելի . Կոստիւ	Եռանգ հարկանել , Գոտուիւն Գալ

Աչք զեղեցիկ ցողազին  
 Լացէք ըզմահ սոխակին:

Վայ եւ եղբուկ ինձ հիքիս ,  
 Սուգ եւ ի յիմ սիրելիս .  
 Չամենեւին մի խաւար  
 Դրնէ յարտասր անդադար :  
 Մի՛ գիս մի՛ գիս ըստօրէք ,  
 Մի՛ գիւր սըրտիս տայք երբէք .  
 Ձի սէր սոխակն իմ լըռեաց  
 Սան իմ սիրուն երգասաց ,  
 Ձի սէր հաւիկն իմ մեռաւ  
 Սան իմ սիրուն անպարտաւ :

Նըզով ի սեւ օրն եւ ժամ  
 Յոր գիւր տարմին լիք երամ ,  
 Օրն եւ տեղին սեւ նըզով՝  
 Ուր տեսի զնա մտա երգով : . . .

Այն երաժիշան անտառի  
 Ուր երգ լըսէ անդ թառի .  
 Եկն ի թըփոյն տերեւ խիտ ,  
 Նըստէր երգոյն դընէր միտ ,  
 Նախանձընգդէմ կարեղէր  
 Ուռնոյր ուռնոյր եւ հեծէր ,  
 Չաչաըն խըփեալ վառէր հուրը ,  
 Ծըծէր յերկնէ ողի նուրը .  
 Ծըընձէր մեզմ ի մըրմունջ ,  
 Ծարժէր շըռինչս ի ձիգ շունչ :

Այ իմ հաւիկ հրաշագեղ ,  
 Դու զէնն օրհնես ի գեղզեղ  
 Ըզհայրըն քո եւ ըզմեր  
 Բուր բարեաց յորդ աղբեր ,  
 Դու եւ ի սէր եւ յանձուկ  
 Չըգես ի սիրաբն վրդձուկ :  
 Քերդող սիրէ գքեզ սիրուն ,  
 Ըզքեզ ծագկեալըն գարուն ,  
 Ըզքեզ սիրէ Սիսանեան  
 Սիրէ լերկին գիւրըն սան :

Օգոյն պարիկը ամենայն  
 Ծուրջ աղըմբեալ ի քո ձայն  
 Տան քեզ սըրտիւ երանի ,

Ձիք քեզ անդ ոք նըմանի :  
 Անակրէօն չէ քեզ զոյգ  
 Եւ ոչ Տիբուլ յերգառոյգ :  
 Մինչդեռ դու զսէր նըւագես ,  
 Երկինք երկիր լըռեն քեզ :  
 Թէ ամպ յորտ մըրմըռայ ,  
 Անհող սաստես դու նըմայ .  
 Հալեալ ի սէր քո չըքնաղ  
 Տարափ հեզիկ զընդէ շաղ .  
 Քո սիրուհին անբաժան  
 Չմայլի առ քեւ , վարուժան :  
 Դու քերթողին լարից տաս  
 Գեղեցկօրէն տաղից դաս :

Թէ երթայիր դու ընդ իս  
 Յիմ տուն եւ յիմ ընտանիս ,  
 Քեզ սիւնազարդ ապարանք  
 Վանդակափեղկ եւ զրասանգ  
 Յօրինէի նըկարէն՝  
 Մըթին մայրույդ փոխարէն :  
 Քեզ սիրելեաց գութ եւ սէր  
 Կամ ուղն եւ մի՛ս պակասեր :  
 Ըստ խիտ բախտին հրամանի  
 Որ մեզ յապոյց դարանի ,  
 Այսպէս սըրտիւ ես ի լալ  
 Ի սէր նորին հիացեալ ,  
 Կակուղ բարբառ ի հրապոյր  
 Արկի նմա դալ ի համբոյր՝  
 Թռիչս առեալ յիւր ճըղէն  
 Ճախր ի կամարն ամպեղէն՝  
 Վանդակագործ մուտ ի տուն ,  
 Թեւ թօթափեաց եւ տըտուն ,  
 Չազատութիւն մուսացաւ  
 Եւ զհայրենի գութ եւ ցաւ .  
 Հովտաց լերանց եւ դաշտաց  
 Մայրեաց ու աղբերց երթ տաց :  
 Մեք զմեր խոստումն արարաք ,  
 Նա փոխարէն տայր արաք .

Եղանակէր ձայն պէսպէս,  
 Հընչէր յողջոյն գեղորէս:  
 Յոլով վըրանք փեղկ բացին,  
 Հովիւ լըսէր ի բացին,  
 Լըսէր ի բլուր մայրեւոր  
 Եւ յերկանին հարսըն նոր,  
 Նաւք լըսէին ի ծովուն,  
 Լըսէր կապեալ բանտ տըքուն:  
 Կայր անմբռունչ հաւ ամէն  
 Ունկըն դընէր յերամէն,  
 Եւ նախանձոտ սեաւ սարիկ  
 Ի միտ առնոյր գողացիկ  
 Բզցանկալւոյն երգ փախուկ  
 Սուլեւ իբրեւ ծիծառնուկ:  
 Մինչ զիւր փորձէր դաղտուկ ձիչ,  
 Հոյլ երամին բարձ քըրքիջ,  
 Թէ դու ի միտ ուսանիս,  
 Նա բիւր գեղօնտ անուանիս  
 Յանթիւ տաղիցն ամբոխէ  
 Փախուկ փողով փափոխէ:  
 Սակայն ի սեաւ մանդաղէ  
 Ժըպիրճ մահուն սվ տարէ:  
 Վահ եւ եղնուկ յիշատակ,  
 Բիւր ցաւք տան յիս ասպատակ,  
 Մեռանին եզն հերկահար,  
 Գոռ մարտորոտ երիվար,  
 Վարդ եւ շուշան մեռանին,  
 Դեղձի ուննոյ թըրդենին,  
 Մեռանի սարդ հագներգուի  
 Ջերգ գիւցազին ձիթենի,  
 Մեռանի, սհ, ընդ մօտոյ  
 Եւ երկնաբուն գեղ մարդոյ:  
 Աչք գեղեցիկ ցողազին  
 Լացէք ի սէր սոխակին:  
 Էր ի յերկրին ժանտ երաշտ,  
 Հեծէր մարմանդ խաշն եւ դաշտ,  
 Արեւն ի ձեւ ծանր յԱսիւծ

Լիրեան շընչէր հուր ի հիւծ:  
 Վայրիկ մ'ելի եւ մըտի,  
 Ո՛հ, գոյժ ետուն իմ սրտի,  
 Սան իմ չերգէ դոչեցին,  
 Հատեալ էր ձայն սոխակին:  
 Ջի ի նա հուր հար եռանդ,  
 Յաջ ոտանէն էր հիւանդ.  
 Առեալ արքնէր զայն ի ներս  
 Միտանի բուն գիշերս.  
 Լխախորտիկ գէր սեղան  
 Կայր առաջի իւր խոտան:  
 Ո՛հ, մի սախպէք երկարեւ,  
 Սիրա ոչ բերէ դբանիս թեւ.  
 Այտնոյր սոխակն եւ հեծէր,  
 Քանի՛ օտար մինչ երգէր:  
 Եկն ըզսըրտիւրն թալուկ,  
 Ինքըն նըւաղ ի լըլուկ,  
 Աչերն եզեն մըթազգեաց,  
 Սպիտակ եցոյց բաց խըփեաց,  
 Բախեաց կըտուց, անկաւ վաղ,  
 Չըգոյր սոխակն, սհ, աւաղ:  
 Աչք գեղեցիկ ցողազին  
 Լացէք ըզմահ սոխակին,  
 Շողջողուն աչք աստեղաց  
 Բզսոխակին առէք լաց:  
 Շիջաւ աչացս իմ արեւ,  
 Կեանքն ապաշաւ ինձ եղեւ:  
 Լացէք թըսչունք յոտ թառամ,  
 Գոյժ եւ ի ձեր յոգներամ...:  
 Եւ դուք եղբարք սիրելւոյն  
 Երկայնեցէք սղբս ի նոյն,  
 Է յիրաւի զոր աանէք,  
 Տօհմիդ շուք մեծ էր այն հէք:  
 Աչք գեղեցիկ ցողազին  
 Լացէք ըզմահ սոխակին,  
 Աչք լուսալիր աստեղաց  
 Բզսոխակին հարէք լաց:



Յամկի կեանս , Գեղոս Բն Գեղանեկէն վերջն	Կենայ , Գարեգորիսե
Պակասել (ի կենաց) , Գեղանեկէն արեւել	Պերնակ , Էրեղանեկէն

Վճարեցաւ Պօղ ի կենաց յետ երկամեայ աւուրց մեռանելոյ սիրեցելոյն , կարգաւով անդադար զանուն նորա . եւ Մարգարտայ մօր նորա հասանէր վախճան ութ աւուրքք յետոյ քան զմահ սրղւոյն , եւ մեռանէր այնու զուարթութեամբ՝ որ առաքինութեան է պահեալ , տալով Լազուր տիկինոջ ուղջոյն հրաժարական գողարիկ եւ աղբրս բանիւք ի յոյս քաղցր եւ յաւերժ միւսանգամ ընդ միմեանս տեսութեան , եւ սաէր . Գեր ի վերոյ՝ ամենայն բարեաց է մահ եւ ցանկալի . զի եթէ պատուհաս իցեն կեանք , ցանկալի դադարումն նորին . Իսկ եթէ փորձութիւն , ցանկալի դարձեալ զի իցէ սուղ : Դոմինիկ եւ Մարիամ ոչ եւս զօրէին սպասաւորել , եւ պետութիւնն ինքնին խնամ կալաւ զնոցանէ . այլ ոչ յամեցին եւ նոքա ի կեանս յետ մեռանելոյ տիկնայցն իւրեանց : Շնիկն եւս Հաւատարիմ , ոչինչ յետոյ քան զմահ տեսան իւրոյ , պակասեր՝ հաշեալ առ վշտին հէք անտանեակն : Բայց Լազուր տիկին անպատմելի արիւթեամբ ժուժկալէր դառն աղետիցն , եւ զՊօղ եւ զՄարգարիտ ցյետին շունչ քաջալերէր՝ որպէս թէ զնոցայն եւ եթ յանձին բերելով զվիշտս : Յայնժամ ածի զնա ի բնակութիւն իմ . եւ ոչ եւս անտանելով զնոսս , հանապաղ զնոցանէ խօսէր ընդ իս որպէս զսիրելեաց առ մեզ բնակելոց : Այլ ոչինչ աւելի քան զամսօրեայ աւուրս եկեաց նա յետ մահու նոցին . . . :

Եւ թաղեցաւ Պօղ մերձ ի շամբուան առ Վիրգինեայ , եւ առ նոքօք մարք նոցա գորովագութք եւ ծառայք տիրասէրք : Զանփառունակ զերեզմանաւ նոցա ոչ ամբարձան շիրիմք կճեայք , եւ ոչ առաքինութեանց նոցա զըրոշմեցան արձանագիրք , սակայն յիշատակք նոցա ի սիրտս բարերարելոցն ի նոցանէ կան անջնջելի : Ստուերք նոցա ոչ կարօտին պերճանաց՝ յորոց խուսեցինն ՚ի կենդանութեան . այլ եթէ իցէ ինչ նոցա տակաւին յերկրաւորաց աստի ցանկալի , սիրեն ազաքէն զեզերել ի հիւզս՝ ուր բնակէ առաքինութիւն վաստակասէր , քաջալերել զազքատանին որատրեկ ի թշուառութենէ , վաս եւ բորբոք պահել ի սիրտս պոտանեաց զբոց հարսանեկան տարից , զախօթակս բարեաց բնութեան , զսէր վաստակոց եւ զերկիւղ ճոխութեան :

Ռամիկն , որ լուս եւ եթ կայ առ շիրիմս կանգնեալս ի պատիւ

թաղաւորաց , եղ անուանս ինչ վայրաց աստանօր՝ որ անմահացուցեն զյիշատակ կորստեան Վիրգինեայ : Կիրճի՞ որ ի մէջ ժայռից մերձ յԱմար կղզի՞ կոչի Սեկժերան յանուանէ նաւուն Վիրգինեայ՝ որ բեկան անդ : Հրուանդանք կարկառեալ ի ծով հեռի աստի երկւք վարասիօք , եւ կէս ի կէս ծածկեալ յալեաց , զսրով չկարաց չըջան սանուլ նաւն այն յառաջ քան զօր մրկին եւ ի նաւահանգիստ այսր մտանել , անուանի թշուառ : Եւ ի սպառուած հովտիդ ծոցդ , զոր տեսանես , յորջորջի Շիրիմ . ուր դիտկըն Վիրգինեայ գտաւ խրեալ յաւազին . կամելով իմն ալեաց ածել զայն առ իւրան , եւ զսպաս յետին մատուցանել պարկեշտութեան օրիորդին ի տեղւոյ՝ որ անմեղութեամբ նորա պատուեալն էր :

Եւ արդ , որդեակք սիրակցորդք՝ եւ մարք չարաբաստիկք , զարմցանկալի , մայրիքդ՝ որ զձեօք երբեմն հովանացեալք , աղբերք՝ որ ձեզն բղխէին , բլուրք ուր դուքդ ի միասին հանգչէիք , լան առկաւին զխորուստ ձեր : Ոչ ոք յետ մահուդ իշխէ մշակել զերկիրդ ամայել , եւ ոչ զխոնարհ հիւղսդ նորոգել . երամակ այժիցդ վայրենացեալ , եղծեալ ծառաստանք , թռչունք խուսափեալ . բազէից եւ եթ , որ բարձրաթռիչ զխորածորովք ժայռիցս ճախրեն , լինարդ կուչք : Իսկ ես վրիպեալ ի տեսոյդ ձերմէ , որպէս բարեկամ զերկ ի սիրելեաց , իբր անգաւակեալ հայր որդեկորոյս , որպէս ուղեւոր մուրեալ յերկրի , այսպէս ի կղզւոյ աստ կեամ միայնակ :

Վ Ե Ր Ջ



Մ Մ Ս Ն Ս.

Յառաջարան .....	Բ.	Եջ
1. Յակոբ և Լարան .....		1
2. Սամիսոն և Դայիրա .....		3
3. Թագաւորել Քրիստոսի ի վերայ բնաւից .....		5
4. Քրմացն Բեյայ խաբէութիւն և կոտորած .....		7
5. Իսահակ և Ռեբեկա .....		9
6. Յոյս առ Աստուած .....		11
7. Մահ Անտիոքայ բռնաւորին .....		13
8. Նաւարկել Պաւղոսի յԻսաիա .....		16
9. Գոհութիւն առ Աստուած .....		19
10. Համան .....		21
11. Ողբ Դաւրի բնոյ ման Սաւուղայ և Յովնարանու .....		23
12. Խօսք բնոյ Յիսուսի .....		23
13. Յաղքանակէ Գեղէոն բնոյղէմ Մաղիսանու .....		27
14. Անցք բնոյ ծովն կարմիր և օրհնութիւն Մովսիսի .....		29
15. Նորին Մովսիսի նոյն օրհնութիւն (ի չափս հայկականս) .....		31
16. Հոռօք .....		33
17. Մահ Հողովեռնեայ .....		36
18. Պատէ Յուդիք գյաղքանակ իւր .....		39
19. Պաւղոս յասեմին Փեսոսի .....		42
20. Հարիւրապետն Կոռնելիոս .....		43
21. Վասն ննջեցելոց .....		48
22. Պատերազմ Յովնարանու բնոյղէմ Բախոնեաց .....		50
23. Յովաս .....		53
24. Խրատ Յովիդայեայ առ Յովաս .....		56
25. Երեմիս անեկապանք Դաբեհի .....		59
26. Մահ Սիսարայ և օրհնութիւն Գեբուրայ .....		64
27. Նորին Գեբուրայ նոյն օրհնութիւն (ի չափս հայկականս) .....		67
28. Ունայնութիւն ունայնութեանց .....		70
29. Գովութիւն իմաստբան .....		75
30. Ի չարչարանսն Քրիստոսի .....		76
31. Խրատ զարդարութեան, և անմահութիւն արդարոց .....		78
32. Տրտնոցք Յոբայ .....		81
33. Նոյն բանք տրտնաց Յոբայ (ի չափս հայկականս) .....		84
34. ԵՂԻՇԷ Ա. Խորհուրդ և իր չարք Յազկետի .....		87
35. » Բ. Ուրացութիւն աւագանոյն .....		90

5. Կայինայ խղի մացն սագնայ բնոյ սպանումն եղբորն ....		93
37. ԵՂԻՇԷ Գ. Սպարապետն Վարդան խախուսէ զգօրսն .....		99
38. » Գ. Նկարագիր պատերազմին Հայոց բնոյ Պարսից .....		103
39. Իսահակ հնազանդ հօրն յամենայնի .....		106
40. ԵՂԻՇԷ Ե. Ամբաստանութիւն զՎասակայ և ման մարտնչին .....		110
41. » Զ. Տիկնայք Հայոց աշխարհին .....		114
42. Յովսէփ յայտնէ զանձն եղբարց իւրոց .....		117

Մ Մ Ս Ն Բ.

ԱՔՍՈՐԱԿԱՆՔ Ի ՍԻՊԵՐԻԱ (Ա. Էն մինչեւ ԺԳ հասուածք) 125—175	
1. Կին նաւալարին .....	126
2. Առ սոխակն .....	129
3. Առ ծիծառն երգ բանարկելոյ .....	132
4. Մեհամարս .....	133
5. Նուագ զղջական ի ժամ մահու .....	138
6. Մանուկն և հրեշտակ .....	142
7. Ամառն .....	146
8. Զմեռն .....	149
9. Գարուն. դարձեալ ի գարուն .....	152
10. Մաշեցիք որպէս սարդիոսայն զանձն նորս .....	157
11. Գերուհին .....	161
12. Աղօք մանկան զարթուցելոյ .....	163
13. Մարդոյ որպէս խոնոյ են աւուրք իւր .....	170
14. Երկինք պատմեն զԿառոս Աստուծոյ .....	173
ՊՕՂ ԵՒ ՎԻՐԳԻՆԻԱ (Ա. Էն մինչեւ ԺԳ հասուածք) .....	175—243
15. Որք մանկունք .....	177
16. Յարդարն դասալիսեալ .....	181
17. Ի միջնութիւն բոռնեկին, հաւն առ մանկիկն .....	187
18. Մայր և դստիկ .....	191
19. Կենցաղ մեակաց .....	197
20. Հովուական կենցաղ .....	203
21. Եղեբեզդութիւն ի մահ տիկնոջն Կուինսալիայ Պորկէզի .....	207
22. Հովիւ և Հովուուհի .....	212
23. Կիրոս և Վրէն .....	218
24. Մերուհի մերձ ի մահ, և ընտանիք իւր .....	223
25. Գաւթիկն յաւար, եղբր մեակին .....	232
26. Մահ Սոխակին, եղբր հովուի .....	239

Վ Ր Ի Պ Ա Կ Ք

13  
42

- Երես 3 (բառից մէջ) *հոռոյ*, պակասի նշանակութիւնն *դերձան*  
 » 6 տող 23 փոխանակ *վերոյիշեալ* ի կարգալ *վերոյեղեալ*  
 » 16 տող 18 փոխանակ *ի հարիւրապետի* կարգալ *ի հարիւրապետ*  
 » 19 տող 18 փոխանակ *եւ ի յօրանալ* ի կարգալ *եւ ի յօրանալ*  
 » 27 (1 կանոն) փոխանակ *Զերեի եւ զՍարմանայ* յասկացուցչաց վրայ դրուած է ի՛ կարգալ *զՍարմանայ* յասկացուցչին վրայ դրուած է  
 » 72 տող 15 փոխանակ *մեկնութիւն* ի կարգալ *մեծութիւն*  
 » 82 տող 19 փոխանակ *իբրեւ զմեռն* ի կարգալ *իբրեւ զմիւր*  
 » 94 տող 20 փոխանակ *ու ի կարգալ եւ*  
 » 98 տող 28 փոխանակ *Ոչընչացեալ* ի կարգալ *Անընչացեալ*  
 » 114 (բառից մէջ) *գիւնի բաժնոյ* բառէն վերջ կարգալ (*ափսոս*)  
 » 115 (1 կանոն) փոխանակ *լիկն* ի կարգալ *լիկեր*  
 » 117 տող 26 կարգալ *զեղեռան եւ ոչ զեղեռան*  
 » 148 տող 29 փոխանակ *յերիւրեղ* ի կարգալ *յերիւրեղ*  
 » 153 տող 10 կարգալ *ծիծռան ոչ ծիծռան*  
 » 156 տող 4 փոխանակ *զերծանել* ի կարգալ *զեղծանել*  
 » 171 (բառից մէջ) փոխանակ նօսրագիր *չ-չ-չ-չ* ի պիտի լինի Յաճութիւն  
 » 174 տող 24 կարգալ *դրնիկն ոչ դրնեկն*  
 » 187 տող 26 փոխանակ *ծածկեալ* ի կարգալ *ծակեալ*  
 » 224 տող 30 փոխանակ *սեւիլ* կարգալ *ի սեւիլ*



ՀՀ Ազգային գրադարան



NL0241630

8323